

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

III
399

# ԱՒԵՏԱՐԱՆ

## ԸՏԵՆԻ

208
Ա-79

17 SEP 2009

# ԱՒԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ
## ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԸՍՏ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱԽՈՒՐՑ ՅԻՆԱՆՑ· ԸՆԴ ՈՐՍ ԵՒ ՅՈՒՇԱԿ ՄԻ
ՅԱՄԵՆԱՑՆ ԱԽՈՒՐ Ի ԺԱՄ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ
ԸՆԹԵՐՑԵԱԼ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Մ· ԷՋՄԻԱԾՆԻ
Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·
ՍՐԲԱԶՆԱԴՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ· ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ
Տ· ՄԱՂԱՔԻԱՑ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Մ· ԱՔՈՌՈՑ
ՍՐՔՈՑ ՅԱԿՈՎՔԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1899—ՌՁՈՂ

20 FEB 2013

3013

8414-Ֆ6
III-399մ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Ա.ՀԵՏԱՐԱՆՆ որ ըստ Մատթէոսի գրեալ է, զի ինքն Մատթէոս աշակերտ ցեառն՝ գրեաց զԱ.ՀԵՏԱՐԱՆՆ զայս: Եւ պատմէ մեզ ի սկզբանն զըստ մարմնոյ ծնունդ փրկչին ի զաւակէ Դաւթի. վասն որոյ եւ զազգահամարն ժողովէ մինչեւ ի Քրիստոս՝ ազգս քառասուն եւ երկու: Բերէ ըստ կարգի եւ զմկրտութիւնն Յովհաննու, եւ ի լերինն ի դիւաց զփորձութիւնն, եւ նշանս եւ արուեստս մեծամեծս ի փրկչէն եղեալ. եւ զընտրութիւն աշակերտացն, եւ վասն խորհրդոյ մասնութեանն. և զկատարածն, զի մատնեցաւ Պղատոսի, և խաչեցաւ մարմնով, եւ մարմինն եգաւ ի գերեզմանի, եւ զնուաւորքն բաժանեցին զհանգերձս նորա. նոյն եւ զերրորդ աւուր յարութիւնն. եւ զպատուէր աշակերտացն՝ աշակերտել զամենայն հեթանոսս եւ մկրտել զնոսա. պատուիրեաց լինիլ ընդ նոսա զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի:

Մատթէոս գրեաց զԱ.ՀԵՏԱՐԱՆՆ իւր Յերուսաղէմ՝ քաղաքի՝ ի լեզու եբրայեցի, զինի ուր ամի համբառնալոյ փրկչին, ի խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղէմի:

# ՍԿԻԶԲՆ ՆԻՒԹՈՑ

## ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ


| | ԵՐԵՍ | ԷՋ |
|---|---|---|
| Վասն մոգուցն | 3 | 1 |
| Վասն կոտորածի մանկանցն | 4 | 1 |
| Վասն յառաջընթաց քարոզութեանն Յովհաննու Մկրտչին | 4 | 2 |
| Վասն վարդապետութեան փրկչին | 7 | 2 |
| Վասն երանութեանց | 8 | 1 |
| Վասն բորոտին | 14 | 2 |
| Վասն հարիւրապետին | 15 | 1 |
| Վասն զաքանչելի Պետրոսի | 15 | 2 |
| Վասն բժշկութեան ամենայն ցաւոց | 15 | 2 |
| Վասն՝ որ ոչ ետ հրաման երթալ զկնի | 16 | 1 |
| Վասն սաստելոյն ի վերայ ջուրցն | 16 | 1 |
| Վասն դիւահարացն | 16 | 2 |
| Վասն անդամալուծին | 17 | 1 |
| Վասն Մատթէի | 17 | 2 |
| Վասն դատեր ժողովրդապետին | 18 | 1 |
| Վասն տեառնտեսին | 18 | 2 |
| Վասն երկուց կուրացն | 19 | 1 |
| Վասն խուլ եւ համր դիւահարին | 19 | 1 |
| Վասն առաքելոցն իշխանութեան | 19 | 2 |
| Վասն առաքելոցն ի Յովհաննէ | 22 | 2 |
| Վասն գօսացելոյ ձեռին | 25 | 1 |
| Վասն կոյր եւ համր դիւահարին | 25 | 2 |
| Վասն որք խնդրեին նշանս | 26 | 2 |
| Վասն՝ առակացն | 27 | 2 |
| Վասն Հերովդէի եւ Յովհաննու | 31 | 1 |
| Վասն հինգ հացիցն | 32 | 2 |
| Վասն երթալոյն ի վերայ ծովուն | 33 | 1 |
| Վասն անցանելոյն զպատուիրանսն Աստուծոյ | 34 | 1 |
| Վասն կնոջն քանանացւոյ | 35 | 1 |
| Վասն բժշկելոյ զժողովուրդ | 35 | 2 |
| Վասն եօթն նշանակացն | 36 | 1 |
| Վասն խմորոյ փարիսեցւոցն | 36 | 2 |
| Վասն որ ի կեսարիայ հարցմանն | 37 | 1 |

| | ԵՐԵՍ | ԷՋ |
|---|---|---|
| Վասն այլակերպութեան Տեառն | 38 | 1 |
| Վասն լուսնահարին | 39 | 1 |
| Վասն խնդրելոյն զերկդրամեանն | 39 | 2 |
| Վասն հարցանելոյ Թէ ո՞րպէս ի մէնջ մեծ | 40 | 1 |
| Վասն առակի հարիւր ոչխարացն | 41 | 1 |
| Վասն Թագուհոյ զբիւր տաղանդն | 42 | 1 |
| Վասն հրամանն արձակելոյ զկինն | 42 | 2 |
| Վասն հարցանելոյ մեծաւտանն զՅիսուսէ | 43 | 2 |
| Վասն վարձուց մշակացն | 45 | 1 |
| Վասն որդւոցն Զեբեդեայ | 45 | 2 |
| Վասն երկուց կուրացն | 46 | 2 |
| Վասն իշոյն եւ յաւանակին | 47 | 1 |
| Վասն կուրացն եւ կաղաց | 47 | 2 |
| Վասն չորանալոյ Թզենւոյն | 48 | 1 |
| Վասն հարցանելոյ զՔերն քահանայապետին եւ ծերոց | 48 | 2 |
| Վասն երկուց որդւոցն առակաց | 49 | 1 |
| Վասն պտղոյ առակին | 49 | 2 |
| Վասն կոչեցելոյն ի հարսանիսն | 50 | 2 |
| Վասն դահեկանին որով փորձեցին զՔերն | 51 | 1 |
| Վասն տադուկեցւոցն | 51 | 2 |
| Վասն օրինականացն | 52 | 1 |
| Վասն Տեառն հարցմանն զիշխանութեցիսն | 52 | 2 |
| Վասն վայ տալոյ դպրացն եւ փարիսեցւոց | 53 | 2 |
| Վասն կատարածին | 55 | 2 |
| Վասն աւուրն եւ ժամուն | 57 | 2 |
| Վասն տասն կուսանացն | 58 | 2 |
| Վասն զտաղանդն տալոյ | 59 | 1 |
| Վասն գալստեան Տեառն | 60 | 1 |
| Վասն ծծելոյ զՔերն իւզով | 61 | 1 |
| Վասն զատարաւտելոյ զդասեսքն | 62 | 1 |
| Վասն կենդանւոյ խորհրդոյն | 62 | 2 |
| Վասն մատնութեան Տեառն | 63 | 1 |
| Վասն ուրացութեանն Պետրոսի | 65 | 2 |
| Վասն Յուդայի զղջմանն | 66 | 1 |
| Վասն խնդրելոյ զՔերուսաղեմական մարմինն | 69 | 1 |
| Վասն իւղաբեր կանանցն | 70 | 1 |

Ս. ՄԱՏԹԷՈՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ



# Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն
## ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա. համար 1։

*Աբեղ Ա.ետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։*

ԳԻՐՔ ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի՝ որդւոյ Աբրահամու։ Աբրահամ ծնաւ զԻսահակ, Իսահակ ծնաւ զՅակովբ, Յակովբ ծնաւ զՅուդա և զեղբարս նորա։ Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա ի Թամարայ, Փարէս ծնաւ զԵզրոմն, Եզրոմն ծնաւ զԱրամ, Արամ ծնաւ զԱմինադաբ, Ամինադաբ ծնաւ զՆաասոնն, Նաասոնն ծնաւ զՍաղմոնն, Սաղմոնն ծնաւ զՌոյս ի Հռաքեբայ, Ռոյս ծնաւ զՈվբէթ ի Հռութայ, Ովբէթ ծնաւ զՅեսսէ, Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ։

Դաւիթ արքայ ծնաւ զՍողոմոնն ի կնոջէն Ուրիայ, Սողոմոնն ծնաւ զՐոբովամ, Րոբովամ ծնաւ զԱբիա, Աբիա ծնաւ զԱսափ, Ասափ ծնաւ զՅովսափատ, Յովսափատ ծնաւ զՅովրամ, Յովրամ ծնաւ զՈզիա, Ոզիա ծնաւ զՅովաթամ։

Յովաթամ ծնաւ զԱքազ, Աքազ ծնաւ զԵզեկիա, Եզեկիա ծնաւ զՄանասէ, Մանասէ ծնաւ զԱմոն, Ամոն ծնաւ զՅովսիա, Յովսիա ծնաւ զՅեքո-

նիա և զեղբարս Նորա առ դե-
րուԹեամբն Բաբելացւոց։
Յետ զերուԹեանն Բաբելաց-
ւոյ ծնաւ Յեքոնիա զԱտալ-
Թիէլ, ՍաղաԹիէլ ծնաւ զՋո-
րաբաբէլ, Ջորաբաբէլ ծնաւ
զԱբիուդ, Աբիուդ ծնաւ զԵ-
ղիակիմ, Եղիակիմ ծնաւ զԱ-
զովր, Ազովր ծնաւ զՍադովկ,
Սադովկ ծնաւ զԱքին, Աքին
ծնաւ զԵղիուդ։
Եղիուդ ծնաւ զԵղիազար, Եղի-
ազար ծնաւ զՄատԹան, Մատ-
Թան ծնաւ զՅակովբ, Յակովբ
ծնաւ զՅովսէփ զայրն Մարիա-
մայ՝ որում խոսեցեալ զՄարիա-
մ կոյս, յորմէ ծնաւն Յիսուս,
որ անուանեցեալ Քրիստոս։
Այլ ամենայն ազգքն յԱբրա-
համ մինչեւ ի Դաւիթ՝ ազգք
չորեքտասանք, և ի Դաւիթ
մինչեւ ի գերուԹիւնն Բաբե-
լացւոց՝ ազգք չորեքտասանք,
և ի գերուԹենէն Բաբելացւոց
մինչեւ ի Քրիստոս՝ ազգք չո-
րեքտասանք։

---

ԳԼՈՒԽ Ա. 18։

Եւ Յիսուսի Քրիստոսի ծը-
նունդն էր այսպէս։
Խոսեալ զմայր Նորա Մարիամ
Յովսէփայ, մինչեւ եկեալ առ
միմեանս՝ գտաւ յղացեալ ի
Հոգւոյն Սրբոյ։
Եւ Յովսէփ այր Նորա, քանզի
արդար էր և ոչ կամէր առա-
կել զնա, խորհեցաւ լռելեայն
արձակել զնա։
Եւ մինչդեռ նա զայս ածէր
զմտաւ, ահա Հրեշտակ Տեառն
ի տեսլեան երեւեցաւ նմա՝ և
ասէ. Յովսէփ՝ որդի Դաւիթ,
մի երկնչիր առնուլ առ քեզ
զՄարիամ կին քո. քանզի որ ի
նմայն ծնեալ է՝ ի Հոգւոյն Սրբ-
բոյ է. ծնցի որդի, և կոչեսցես
զանուն Նորա Յիսուս. զի Նա
փրկեսցէ զժողովուրդ իւր ի
մեղաց իւրեանց։
Այլ այս ամենայն եղեւ, զի
լցցի որ ասացաւն ի Տեառնէ
ի ձեռն Եսայեայ մարգարէի.
Ահա կոյս յղասցի և ծնցի որ-
դի, և կոչեսցեն զանուն Նորա
Էմմանուէլ, որ Թարգմանի՝
Ընդ մեզ Աստուած։
Եւ զարԹուցեալ Յովսէփ ի
քնոյ անտի՝ արար որպէս հրա-
մայեաց նմա Հրեշտակն Տեառն,
և էառ զինքն զկինն իւր. և ոչ
գիտէր զնա, մինչեւ ծնաւ զՈր-
դին իւր զանդրանիկ, և կոչեաց
զանուն Նորա Յիսուս։

---

ԳԼՈՒԽ Բ. 1։

Ի ծննդեան Յեսուայ մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ի ծնանիլն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքային։ Ահա մոգք յարեւելից եկին Երուսաղէմ, և ասէն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղն նորա յարեւելս, և եկաք երկիր պագանել նմա։

Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա։

Եւ ժողովեալ զամենայն ըզքահանայապետս եւ զգպիրս ժողովրդեանն, հարցանէր ի նոցանէ՝ Թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոսն։

Եւ նոքա ասեն ցնա. ի Բեթղեհէմ Հրէաստանի. զի այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին։

Եւ դու Բեթղեհէմ՝ երկիր Յուդայ, ոչինչ կրտսեր ես քան զիշխանս Յուդայ. ի քէն՝ ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ։

Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և ստուգեաց ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ։

Եւ արձակեալ զնոսա ի Բեթղեհէմ, ասէ. գնացէք ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիրպագից նմա։

Եւ նոքա իբրեւ լուան ի թագաւորէն՝ գնացին. եւ ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերայ՝ ուր էր մանուկն։

Իբրեւ տեսին զաստղն, խընդացին յոյժ ուրախութիւն մեծ։

Եւ իբրեւ մտին ի տունն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմ մաւր մարըն իւրով, և անկեալ երկիրպագանէին նմա. և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս՝ ոսկի և կնդրուկ և զմուռս։

Եւ հրաման առեալ ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։

ԳԼՈՒԽ Բ. 13։

Ի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ իբրեւ գնային նոքա անտի, ահա Հրեշտակ Տեառն երեւեր ի տեսլեանն Յովսեփու և ասէր. Արի՛ առ զմանուկդ և զմայր իւր՝ և փախիր Եգիպտոս, եւ անդ լինիջիր ցորժամ ասացից քեզ. քանզի ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ։

Եւ նա յարուցեալ էառ զմանուկն և զմայր իւր գիշերի՝ և գնաց Եգիպտոս, և անդ էր մինչեւ ցվախճան Հերովդի։ Զի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մարգարէին՝ որ ասէ. Յեգիպտոսէ կոչեցից զՈրդի իմ։

Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս Թէ խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կատորեաց զամենայն մանկունսն՝ որ էին ի Բեթղեհէմ և յամենայն սահմանս նորա՝ յերկեմեանց եւ ի խոնարհ, ըստ ժամանակին՝ զոր ստուգեաց ի մոգուցն։

Յայնժամ կատարեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիայ մարգարէի՝ որ ասէ. Ձայն գուժեաց ի Հռամայ, ողբումն և լալումն և աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր, և ոչ կամէր միխիթարիլ՝ զի ոչ էին։

Եւ ի վախճանիլն Հերովդի, ահա Հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեր Յովսեփայ յԵգիպտոս և ասէր. Արի՛, առ զմանուկդ և զմայր իւր, և գնա՛ յերկիրն Իսրայելի. զի մեռան՝ որ խնդրէին զանձն մանկանդ։

Եւ նա յարուցեալ էառ զմանուկն և զմայր նորա, և եկն յերկիրն Իսրայելի։

Եւ իբրեւ լուաւ Երէ Արքելայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. և հրաման առեալ ի տեսլեան՝ գնաց ի կողմանս Գալիլեացւոց. և եկեալ բնակեցաւ ի քաղաքին՝ որ կոչէր Նազարէթ. զի լցցի բան մարգարէին, Թէ Նազովրեցի կոչեսցի։

---

ԳԼՈՒԽ Գ. 1։

Վասն մկրտութեան Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի, և ասել. Ապաշխարեցէ՛ք՝ զի մերձ ձեալէ Արքայութիւն երկնից.

զի սա է՝ վասն որոյ ասացաւ ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք ճանապարհ Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս Նորա։

Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ՚ի ստեղծ ուղտոյ, եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր Նորա էր մարախ և մեղր վայրենի։

Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք և ամենայն Հրէաստան և ամենայն կողմն Յորդանանու, և մկրտէին ՚ի նմանէ ՚ի Յորդանան գետ, եւ խոստովան լինէին զմեղս իւրեանց։

Եւ տեսեալ զբազումս ՚ի Սադուկեցւոցն և ՚ի Փարիսեցւոց եկեալս ՚ի մկրտութիւն Նորա՝ ասէ ցնոսա. Ծնունդք իժից, ո՞ եցոյց ձեզ փախչել ՚ի բարկութենէն՝ որ գալոցն է։

Արարէք այսուհետեւ պտուղս արժանի ապաշխարութեան, եւ մի՛ համարիցիք ասել յանձինս՝ Թէ ունիմք մեր Հայր զԱբրահամ։ ասեմ ձեզ, զի կարող է Աստուած ՚ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու։

Զի և առասիկ տապար առ արմին ծառոց դնի. ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի և ՚ի հուր արկանի։

Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն, բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես չեմ բաւական բառնալ զկօշիկս Նորա. նա մկրտեսցէ զձեզ ՚ի Հոգին Սուրբ եւ ՚ի հուր։

Որոյ հեծանոյն ՚ի ձեռին իւրում, և սրբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն ՚ի չտեմարանս իւր, և զչարդն այրեսցէ անշէջ հրով։

Յայնժամ գայ Յիսուս ՚ի Գալիլեէ ՚ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտիլ ՚ի նմանէ։

Եւ Յովհաննէս արգելու զնա և ասէ. Ինձ պիտոյ է ՚ի քէն մկրտիլ՝ եւ դու առ իս գաս։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Թող տուր այժմ, զի այսպէս վայելէ մեզ լնուլ զամենայն արդարութիւն. եւ ապա Թոյլ ետ նմա։

Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ՚ի ջրոյ անտի, և ահա բացան նմա երկինք, և ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ գայր ՚ի վերայ Նորա։

Եւ ահա ձայն յերկինից՝ որ ասէր. Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ։

---

ԳԼՈՒԽ Դ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ՝ ի Հոգւոյն՝ փորձիլ՝ ի սատանայէ։

Եւ պահեալ զքառասուն տիւ եւ զքառասունն գիշեր՝ ապա քաղցեաւ։

Եւ մատուցեալ փորձիչն ասէ ցնա. Եթէ Որդի ես Աստուծոյ՝ ասա՛ զի քարինքս այսոքիկ հաց լինիցին։

Նա պատասխանի ետ և ասէ. Գրեալ է՝ թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ՝ որ ելանէ՝ ի բերանոյ Աստուծոյ։

Յայնժամ առեալ՝ ածէ զնա սատանայ՝ ի քաղաքն սուրբ, եւ կացուցանէ զնա՝ ի վերայ աշտարակի տաճարին, և ասէ ցնա. Եթէ Որդի ես Աստուծոյ՝ ա՛րկ զքեզ ասի՝ ի վայր. զի գրեալ է՝ թէ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո՝ և՝ ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո։

Ասէ ցնա դարձեալ Յիսուս. Գրեալ է՝ թէ ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո։

Դարձեալ առեալ ածէ զնա սատանայ՝ ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի և զփառս նոցա, և ասէ ցնա. Զայս ամենայն քեզ տաց՝ եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ։

Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Ե՛րթ յետս իմ, սատանայ. զի գրեալ է, Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես, և զնա միայն պաշտեսցես։

Ապա եթող զնա սատանայ, եւ ահա Հրեշտակք մատեան և պաշտէին զնա։

---

Յերկուշաբթի Նախաքահի երկու շաբաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Դ. 12։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ իբրեւ լուաւ Յիսուս՝ եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ գնաց՝ ի Գալիլեա. եւ իջուցեալ զնազարեթ, եկն բնակեցաւ՝ ի կափառնաում՝ ի ծովեզերին, ՝ի սահմանս Զաբուղոնի և Նեփթաղիմայ. զի լցի բանն՝ որ ասացաւ՝ ի ձեռն Եսայեայ մար-

գարէի. երկիր Զաբուղոնի և երկիր Նեփթաղիմայ՝ ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու, Գալիլեա հեթանոսաց. ժողովուրդ՝ որ նստեր ի խաւարի՝ ետես լոյս մեծ. եւ որոց նստէին յաշխարհին և ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա։

Յայնմհետէ սկսաւ քարոզել Յիսուս և ասել. Ապաշխարեցէք՝ զի մերձեալ է Արքայութիւն երկնից։

Մինչդեռ զնայր Յիսուս ընդ եզր ծովուն Գալիլեացւոց, եւտես երկուս եղբարս զՍիմոն զկոչեցեալն Պետրոս և զԱնդրեաս եղբայր նորա՝ արկեալ ուռկան ի ծով. քանզի ձկնորք էին։

Եւ ասէ ցնոսա. Եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան։

Եւ նոցա թողեալ վաղվաղակի զդործսն՝ գնացին զհետ նորա։

Եւ մատուցեալ անտի յառաջ՝ետես այլ երկուս եղբարս, զՅակովբոս Զեբեդեայ և զՅովհաննէս զեղբայր նորա ի նաւի՝ Զեբեդեաւ հանդերձ հարքն իւրեանց, մինչդեռ կազմէին զուռկանս իւրեանց. և կոչեաց զնոսա։

Նոցա թողեալ վաղվաղակի զնաւն եւ զհայրն իւրեանց, գնացին զհետ նորա։

Եւ չրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա՝ և քարոզէր զԱւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս՝ եւ զամենայն ախտս ի ժողովրդենէն։

Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն ասորւոց. և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս և ի տանջանս, և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս, և բժշկեաց զնոսա։

Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ի Գալիլեէ և ի Դեկապոլեայ, և Յերուսաղեմէ և ի Հրէաստանէ, և յայնկոյս Յորդանանու, և բժշկեաց զնոսա։

---

Ցերկրորդում կիրակէի երեքշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Ե. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն, եւ իբրեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա. և բացեալ

զբերան իւր ուսուցանէր զնոսա, և ասէր. Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։

Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։

Երանի՛ հեզից, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։

Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։

Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։

Երանի՛ այնոցիկ՝ որք սուրբք են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն։

Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։

Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից։

Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ՝ վասն իմ. ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն՝ որ յառաջ քան զձեզ էին։

Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի՝ ի՛նչ յաղիցի. ոչ իմիք ազդիցէ այնու հետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինիլ՝ի մարդկանէ։

Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչիլ՝ որ՝ի վերայ լերին կայցէ. և ոչ լուցանեն ղճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ՝ի վերայ աշտանակի. և լոյս տայ ամենեցուն՝ որ՝ի տանն իցեն. այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է։

---

Ցերկրորդում Կիրակէի Զատիկն Յարութեան առաւն։

ԳԼՈՒԽ Ե· 17·

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ։

Ամէն ասեմ ձեզ՝ մինչեւ անցցեն երկինք և երկիր, յոտն մի՛ որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն եւ՝ի մարգարէից՝ մինչեւ ամենայն եղիցի։

Որ որ լուծցէ մի ինչ՝ի պատուիրանաց յայսցանէ՝ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից։

Իսկ որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից։

Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւելացուսցէ արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից։

Լուարուք զի ասացաւ առաջնոցն, թէ մի սպանանիցէ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։

Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար՝ պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր իւր մոռա, պարտաւոր լիցի ի գեհենի հրոյն։

Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խնդիր զքեզ, թո՛ղ զպատարագն քո առաջի սեղանոյն, և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քումմ, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո։

Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քումմ վաղագոյն, մինչդեռ ի ճանապարհի, գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի. և արկանիցիս ի բանտ։

Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչեւ հատուցանիցես զկեսին նահապարիտն։

Լուարուք զի ասացաւ՝ մի՛ շնար. բայց ես ասեմ ձեզ, թէ ամենայն որ հայի ի կին՝ մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում։

Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ՝ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն։

Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ՝ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի ի գեհեն։

Ասացաւ, եթէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նըմա զարձակմանն. բայց ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա շնալ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ։

Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն, մի՛ երդնուս-

ցուս սուտ. բայց հատուսցես
Տեառն զերդմունս քո։

Ա՛յլ ես ասեմ ձեզ՝ ամենեւին
մի՛ երդնուլ, մի՛ յերկինս՝ զի
աթոռ է Աստուծոյ, և մի՛ յեր-
կիր՝ զի պատուանդան է ոտից
նորա, և մի՛ յԵրուսաղէմ՝ զի
քաղաք է մեծի Արքային. և մի՛
ի գլուխ քո երդնուցուս, զի
ոչ կարես մազ մի սպիտակ առ-
նել կամ թուխ։

Ա՛յլ եղիցի ձեր բան, այոն՝
այո, և ոչն՝ ոչ. զի աւելին քան
զայն՝ ի չարէն է։

Լուարուք զի ասացաւ, ակն
ընդ ական, և ատամն ընդ ա-
տաման. այլ ես ասեմ ձեզ,
մի՛ կալ հակառակ չարի։

Ա՛յլ եթէ ոք ածիցէ ապտակ
յաջ ծնօտ քո՝ դարձո՛ նմա և
զմիւսն։

Եւ որ կամիցի ոք դատել և
առնուլ զշապիկս քո, թող՛ ի
նա և զբաճկոն քո։

Եւ որ տարապարհակ վարիցէ
զքեզ մղոն մի, երի՛ ընդ նմա
և երկուս. որում խնդրէ՛ ի
քէն՝ տո՛ւր, և որ կամի փոխ
առնուլ՝ի քէն՝ մի՛ դարձուցա-
ներ զերեսս։

Լուարուք ապաքէն զի ասա-
ցաւ, սիրեսցես զընկեր քո, և
ատեսցես զթշնամին քո։

Ա՛յլ ես ասեմ ձեզ, սիրեցէ՛ք
զթշնամիս ձեր, օրհնեցէ՛ք զա-
նիծիչս ձեր, բարի արարէ՛ք ա-
տելեաց ձերոց, և աղօթս ի՛
վերայ այնոցիկ՝ որ լկենն զը-
ձեզ և հալածեն. զի եղիջիք
որդիք Հօր ձերոյ՝ որ յերկինս
է. զի զարեգակն իւր ծագէ
ի՛ վերայ չարաց և բարեաց,
և անձրեւ ի՛ վերայ ար-
դարոց և մեղաւորաց։

Զի եթէ սիրիցէք զայնոսիկ
որ սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք
իցեն. ո՞չ ապաքէն և մաքսա-
ւորք զնոյն գործեն. և եթէ
տայցէք միայն ողջոյն բարեկա-
մաց ձերոց՝ զի՞նչ աւելի առ-
նէք. ո՞չ ապաքէն մաքսաւորք
և մեղաւորք զնոյն գործեն։

Այդ եղերո՛ւք դուք կատա-
րեալք, որպէս և Հայրն ձեր
երկնաւոր կատարեալ է։

---

Յերկրորդում Կիւրակէի Հրեղաբեթի առաքն։

ԳԼՈՒԽ Զ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Զգո՛յշ լերուք ողորմութեան
ձերոյ՝ մի՛ առնել առաջի
մարդկան, որպէս թէ ի՛ ցոյց
ինչ նոցա. գուցէ և վարձս ոչ
ընդունիցիք ի՛ Հօրէն ձերմէ՛
որ յերկինս է։

Ա.Յլ յորժամ առնիցես զողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս և ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ։

Ա.մէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։

Ա.յլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո՝ զինչ գործէ աջ քո. որպէս զի եղիցի ողորմութիւնն քո ի ծածուկ, և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։

Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն, զի սիրեն ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երեւեսցին մարդկան։

Ա.մէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։

Ա.յլ դու յորժամ կայցես յաղօթս, մո՛ւտ ի սենեակ քո՝ և փակեա՛ զդուրս քո, և կայ յաղօթս առ Հայր քո ի ծածուկ. և Հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։

Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք իբրեւ զհեթանոսս. զի համարին եթէ ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին. արդ մի՛ նմանիցէք նոցա. զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչեւ ձեր խնդրեսէ զինչ իցէ ի նմանէ։

Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթս. Հա՛յր մեր որ յերկինս ես, սո՛ւրբ եղիցի անուն քո, եկեսցէ Ա.ր քայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի, զհա՛ց մեր հանապազորդ՝ տո՛ւր մեզ այսօր, և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն. զի քո է Ա.ր քայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր։

Ա.պա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, եւ ոչ Հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր։

Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն տրտմեալք. որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան՝ թէ պահիցեն։

Ա.մէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա։

Ա՛յլ դո՛ւ՝ յորժամ պահիցես, օ՛ծ զգլուխ քո՛ և լո՛ւա զերեսս քո. զի մի՛ երեւեսցիս մարդկան իբրեւ զպահող. այլ Հօրն քումմ՛ի ծածուկ. և Հայրն քո՛ որ տեսանէ՛ ի ծածուկ, հատուսցէ քեզ:

Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք ական հատանեն և գողանան:

Ա՛յլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ոչ ուտիճ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողանան. զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին:

---

Յերկրորդում Պետրոսի ընթերցուածն:

ԳԼՈՒԽ Զ. 22:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Դրաց մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի. ապա թէ ակն քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի:

Իսկ արդ՝ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչափ եւս:

Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ՝ եւ զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և Մամոնային:

Վասն այդորիկ ասեմ ձեզ. Մի՛ հոգայք վասն ոգւոյ ձերոյ՝ զինչ ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք, և մի՛ վասն մարմնոյ ձերոյ՝ թէ զինչ ագանիցիք. ո՞չ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ եւ մարմին քան զհանդերձ:

Հայեցարո՛ւք ի թռչունս երկնից, զի ոչ վարեն և ոչ հնձեն, և ոչ ժողովեն ի շտեմարանս, և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ո՞չ ապաքէն գուք առաւելք քան զնոսա:

Իսկ արդ ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի:

Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք. հայեցարո՛ւք ի շուշանն վայրենի՝ որպէս աճէ. ոչ ջանայ և ոչ նիւթէ. ասեմ ձեզ, զի եւ ոչ Սողոմոն յամենայն ի փառս իւրում զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ:

Իսկ եթէ զխոտն ի վայրի, որ այսօր է՝ և վաղիւն ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ, որչափ եւս առաւել զձեզ, թերահաւատք:

Մի՛ այսուհետեւ հոգայք՝

եւ ասիցէք , զինչ կերիցուք կամ զինչ արբցուք, կամ զինչ զգեցցուք. զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն . քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ Թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն :

Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն Թիւն նորա , և այդ ամենայն յաւելցի ձեզ :

Մի՛ այսուհետեւ հոգայցէք վասն վաղուին , զի վաղիւն վասն իւր հոգասցի . շատ է աւուրն՝ չար իւր :

---

Ցերկրորդում կիրակէի Շաբաթի աւուրն :

ԳԼՈՒԽ Է. ՝ :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ :

Մի՛ դատէք՝ զի մի՛ դատիցիք . զի որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք . և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ :

Ձի՞ տեսանես զչիլ յականեղբօր քոյ , և ՚ի քում ականզգերանդ ոչ տեսանես . կամ զիա՞րդասես ցեղբայր քո, Թո՛ղ Հանից զչիլդ յականէ քումմէ , և ահաւադիկ ՚ի քում ականդ գերան կայ :

Կեղծաւոր , հան նախ զգերանդ յականէ քումմէ , և ապա հայեսցիս հանել զչիլն յականէ եղբօր քոյ :

Մի՛ տայք զսրբութիւն՝ շանց , և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց , զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա , և դարձեալ երդիծուցանիցեն զձեզ :

Խնդրեցէ՛ք՝ և տացի ձեզ , հայցեցէ՛ք՝ և գտջիք , բաղխեցէ՛ք՝ և բացցի ձեզ . զի ամենայն որ խնդրէ՝ առնու , և որ հայցէ՝ գտանէ , և որ բաղխէ՝ բացցի նմա :

Ո՞իցէ ՚ի ձէնջ մարդ՝ որ խընդրիցէ որդի իւր հաց , միթէ քա՞ր տայցէ նմա . և կամ խնդրիցէ ձուկն , միթէ օձ՞ տայցէ նմա :

Արդ՝ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց , ո՞րչափ եւս աւաւել Հայրն ձեր՝ որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրենն զնա :

Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ Թէ արասցեն ձեզ մարդիկ , այնպէս արարէ՛ք և դուք նոցա . զի այս իսկ են օրէնքն և մարգարէք :

Մտէ՛ք ընդ նեղ դուռն . քանզի ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի ՚ի կորուստ . եւ բազո՛ւմք են որ մտանեն ընդ նա . քանզի

անձուկ է դուռն՝ եւ նեղ ճանապարհն՝ որ տանի ի կեանս. եւ սակաւք են որ գտանեն զնա։

Զգո՛յշ լերուք ի սուտ մարգարէից՝ որ գան առ ձեզ հանդերձ ոչխարաց, եւ ի ներքոյ են գայլք յափշտակողք. ի պտղոց նոցա ծանիջի՛ք զնոսա։

Մի՛թէ քաղի՞ցեն ի փշոց խաղող կամ ի տատասկէ թուզ։ Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, եւ ծառ չար՝ պտուղ չար առնէ։

Ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել, եւ ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել։

Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի. հատանի եւ ի հուր արկանի։

Ապա ի պտղոց նոցա ծանիջի՛ք զնոսա։

Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ Արքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է։

Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ, Տէր Տէր, ո՞չ յանուն քո մարգարէացաք, եւ յանուն քո դեւս հանաք, եւ յանուն քո զօրութիւնս բազումս արարաք. եւ յայնժամ առացից ցնոսա՝ եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. ի բաց կացէ՛ք յինէն ամենեքեան՝ որք գործէիք զանօրէնութիւն։

Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ եւ առնէ զսոսա, նմանեսցի առն խմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի. իջին անձրեւք՝ եւ խաղացին գետք, շնչեցին հողմք՝ և բաղխեցին զտունն, և ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր։

Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և ոչ առնէ զսոսա, նմանեսցի առն յիմարի, որ շինեաց զտուն իւր ի վերայ աւազոյ. իջին անձրեւք, յարեան գետք, շնչեցին հողմք, հարին զտունն և անկաւ. և էր կործանումն նորա մեծ յոյժ։

Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա. զի իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր, և ոչ որպէս դպիրքն և փարիսեցիքն։

---

Այլ իբրեւ էջ ի լեառնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք։

Եւ ահա մատուցեալ բորոտ մի՝ երկիրպագանէր նմա և ասէր.

Տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել։

Զգեաց զձեռն իւր և հասոյց ի նա Յիսուս և ասէ. Կամիմ, սրբեա՛ց։ Եւ վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն։

Եւ ասէ ցնա Յիսուս. Զգոյշ լեր՝ մի ումեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանայ մին, եւ մատո՛ զպատարագն զոր հրամայեաց Մովսէս՝ ի վկայութիւն նոցա։

Եւ մտեալ ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա և ասէր. Տէր, մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ։

Ասէ ցնա Յիսուս. Ես եկից և բժշկեցից զնա։

Պատասխանի ետ հարիւրապետն և ասէ. Տէր, չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմ մտցես. այլ ասա՛ բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ. քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ զինուորս. ասեմ սմա՝ երթ՝ և երթայ, և այլում՝ եկ՝ և գայ, եւ ծառայի իմում՝ արա՛ զայս՝ և առնէ։

Իբրեւ լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝ որ զհետն երթային. Ամէն ասեմ ձեզ և ոչ Իսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք։

Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարեւելից և յարեւմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Իսահակայ և ընդ Յակովբայ յարքայութեան երկնից. և որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճտել ատամանց։

Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. Երթ, և որպէս հաւատացեր՝ եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նորա յաւուրն յայնմիկ։

Եւ եկեալ Յիսուս ի տունն Պետրոսի, ետես զի զբաղեալ նորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմն. յոտն եկաց և պաշտէր զնոսա։

Իբրեւ եղեւ երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, եւ եհան զգոյսն բանիւ, և զամենայն հիւանդսն բժշկեաց։

Զի լցցի բանն՝ որ ասացաւ ի Եսայեայ մարգարէի. Նա՝ զհիւանդութիւնս մեր վերայ ցոյց, և զցաւս մեր եբարձ։

——

Յերրորդում Ակբակէի աւուրն։

ԳԼՈՒԽ Ը· 18։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զիւրեա, հրամա-
յեաց երթալ յայնկոյս։
Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. Վարդապետ, եկից և ես զկնի քո՝ յոր վայր և երթիցես։
Ասէ ցնա Յիսուս. աղուէսուց որջք գոն, և թռչնոյ երկնից բոյնք, յալ Որդւոյ Մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր։
Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ ցնա. Տէր, տուր ինձ հրա-
ման՝ զի երթայց նախ թաղե-
ցից զհայր իմ։
Ասէ ցնա Յիսուս. Ե՛կ զկնի իմ, և թո՛ղ զմեռեալսն թա-
ղել զմեռեալս իւրեանց։
Եւ իբրեւ եմուտ ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա. և ահա շարժումն մեծ եղեւ ի ծովուն, մինչ նաւին ծածկիլ յալեաց անտի. եւ
ինքն ննջէր։
Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն. Տէր, փրկեա՛ զմեզ՝ զի կորնչիմք։
Եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր վատա-
սիրտք էք, սակաւահաւատք։
Յայնժամ յարուցեալ սաս-
տեաց հողմոյն և ծովուն, և
եղեւ խաղաղութիւն մեծ։
Եւ մարդիկն զարմացան՝ եւ
ասէին. Ո՞րպիսի որ իցէ սա,
զի և հողմք և ծով հնազան-
դին սմա։
Եւ իբրեւ եկն յայնկոյս լե-
կրն գերգեսացւոց, պատա-
հեցին նմա դիւահարք երկու՝
ելեալք ի գերեզմանացն չա-
րաչարք յոյժ. որպէս զի չէր
հնար անցանել ումեք ընդ
այն ճանապարհ. եւ ահա ա-
ղաղակեցին և ասեն. Ջի՞ կայ
մեր եւ քո, Յիսուս Որդի
Աստուծոյ, եկիր տարաժամ
տանջել զմեզ։
Եւ էր հեռագոյն ի նոցանէ ե-
րամակ մի խոզից արօտական։
Եւ դեւքն աղաչէին զնա և ա-
սէին. Եթէ հանես զմեզ աս-
տի, հրամայեա տուր մեզ երթալ
յերամակ խոզից։
Եւ ասէ ցնոսա, երթա՛ք։
Եւ նորա ելեալ գնացին յե-
րամակն խոզից. եւ դիմեաց
ամենայն երամակն ի գարէ
անտի ի ծով, եւ մեռան ի
ջուրսն։
Եւ խոզարածքն փախեան, և
երթեալ ի քաղաքն պատմեցին
զամենայն, և զերս դիւահարացն։

Եւ ահա ամենայն քաղաքն եւ ընդ առաջ Յիսուսի, իբրեւ տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ ի սահմանաց նոցա։

---

Եւ մտեալ ի նաւ էանց յայնկոյս, եւ եկն ի քաղաք իւր։

Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի՝ որ դնէր ի մահիճս։

Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թո՛ղեալ լիցին քեզ մեղք քո։

Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս. Հայհոյէ դա։

Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ընդ դէր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր։

Զի՞նչ դիւրին է. ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝ արի՛ և շրջեաց։

Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. Արի՛, առ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո։

Եւ յարուցեալ գնաց ի տուն իւր։

Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան. եւ փառաւորեցին զԱստուած զտուեալն այնպիսի իշխանութիւն՝ մարդկան։

---

Ցկիրակէ Կիսակէ երկուշաբթի աւուն։

ԳԼՈՒԽ Թ. 9։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ անցեալ ընդ այն Յիսուս,ետես այր մի զի նստէր ի մաքսաւորութեան՝ Մատթէոս անուն, և ասէ ցնա, Եկ զկնի իմ. Եւ յարուցեալ գնաց զկնի նորա։

Եւ եղեւ իբրեւ բազմեալ էր նա ի տանն, և ահա բազումք մաքսաւորք եւ մեղաւորք եկեալ եւ բազմեալ էին ընդ Յիսուսի եւ ընդ աշակերտս նորա։

Իբրեւ տեսին փարիսեցիքն, ասեն ցաշակերտս նորա. Ընդէր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր։

Իսկ Յիսուս իբրեւ լուաւ՝ ասէ ցնոսա. Ոչ է պիտոյ բժիշկ կարօղաց՝ այլ հիւանդաց։

Երթայք, ուսարուք՝ զի՞նչ է՝ Ողորմութիւն կամիմ, և ոչ զպղտ. զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։

Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհաննու և ասեն,



III-399 աաց 1941 - 2

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-ԱՌՄ ԳՍՐ
им. А. Мясникяна

Ընդէ՞ր մեք և փարիսեցիքն պաս հեմք յաճախ, եւ քո աշակերտքդ ոչ պահեն։

Ասէ ցնոսա Յիսուս. Միթէ մարթ ի՞նչ իցէ մանկանց առնել գաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ, այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն։

Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առնու ելանէ զլրուծթիւն նորա ի հանդերձէն, և եւս չար պատառումն լինի։

Եւ ոչ արկանեն գինի նոր՝ ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն պատառին, և գինին հեղցի, և տիկքն կորնչին. այլ արկանեն գինի նոր ի տիկս նորս, և երկոքին պահին։

---

Յերրորդամ Կիրակէի երկրաչափի աւուրն։

ԳԼՈՒԽ Թ. 18։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր. Դուստր իմ արդ եւս վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն քո ի վերայ նորա և կեցցէ։

Յարեաւ Յիսուս՝ եւ գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ։

Եւ ահա կին մի տեառատես երկոտասանամեայ, մատուցեալ յետոյ մերձեցաւ ի դրօշակ հանդերձի նորա. քանզի ասէր ի միտի ի բուռմ, թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա՝ փրկիմ։

Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ՝ եւ ետես զնա, ասէ. Քաջալերեա՛ց, դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ։

Եւ փրկեցաւ կինն ի ժամէն յայնմանէ։

Իբրեւ եկն Յիսուս ի տունն իշխանին, եւ ետես զփողահարսն եւ ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. Ի բաց գնացէ՛ք. զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ։

Եւ ծաղր առնէին զնա։

Եւ իբրեւ ել ամբոխն ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն։

Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն։

---

Յերրորդում Նիւթակի Զորեքշաբթի առաւօտ։

ԳԼՈՒԽ Թ։ 27։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին եւ ասէին . Ողորմեա՛յ մեզ, որդի Դաւթի։

Եւ իբրեւ եկն ի տուն, մատուան առ նա կոյրքն։

Եւ ասէ ցնոսա Յիսուս. Հաւատա՞ք, եթէ կարող եմ առնել ձեզ զայդ։

Ասեն ցնա . Ա՛յո Տէր։

Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա եւ ասէ . Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ։

Եւ բացան աչք նոցա . և սաստեաց նոցա Յիսուս եւ ասէ . Զգո՛յշ կացէ՛ք՝ մի՛ ոք գիտասցէ։

Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։

Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար . և յելանել դիւին՝ խօսեցաւ համրն։

Եւ զարմացան ժողովուրդքն՝ և ասեն . Ի՛ե և ոչ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ Իսրայէլի։

Իսկ փարիսեցիքն ասէին, Թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս։

---

Յերրորդում Նիւթակի Հինգշաբթի առաւօտ։

ԳԼՈՒԽ Թ. 35։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գեօղս. ուսուցանէր ի ժողովուրդս նոցա, եւ քարոզէր զԱւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս ի ժողովրդեանն։

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա , զի էին աշխատեալք եւ ցրուեալք իբրեւ զոչխարս՝ որոց ոչ իցէ հովիւ։

Յայնժամ ասէ ցաշակերտս իւր . Հունձք բազումք են՝ եւ մշակք սակաւ. արդ աղաչեցէ՛ք զՏէր հնձոց՝ զի հանցէ մշակս ի հունձս իւր։

---

Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, եա նոցա իշխանութիւն՝ այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս։

Եւ Առաքելոցն երկոտասանից
էին անուանք այսոքիկ. առա-
ջին Սիմոնն՝ անուանեալն Պետ-
րոս, և Անդրեաս եղբայր նորա.
Յակովբոս Զեբեդեայ, և Յով-
հաննէս եղբայր նորա. Փիլիպ-
պոս և Բարթուղիմէոս. Թով-
մաս, և Մատթէոս մաքսաւոր.
Յակովբոս Ալփեայ, և Ղեբէոս՝
որ անուանեցաւն Թադէոս.
Սիմոնն Կանանացի, և Յուդա
իսկարիովտացի՝ որ եւ մատ-
նեաց զնա։

Զնոսա երկոտասանեսին առա-
քեաց Յիսուս, պատուիրեայ
նոցա եւ ասէ. Ի ճանապարհ
հեթանոսաց մի երթայցէք,
և ի քաղաքս Սամարացւոց մի
մտանիցէք. այլ երթայք առա-
ւել առ ոչխարսն կորուսեալս
տանն Իսրայելի։

Եւ իբրեւ երթայցէք՝ քարո-
զեցէ՛ք և ասացէ՛ք, թէ մեր-
ձեալ է Արքայութիւն երկնից։
Զհիւանդս բժշկեցէ՛ք, զբո-
րոտս սրբեցէ՛ք, զդեւս հանէ՛ք.
Ձրի առէ՛ք՝ և ձրի տուք։

Մի՛ տանայք ոսկի, և մի՛ ար-
ծաթ, եւ մի՛ պղինձ ի գօտիս
ձեր. մի՛ պարկ ի ճանապարհ,
եւ մի՛ երկուս հանդերձս. մի՛
կօշկիս, մի՛ ցուպ, զի արժանի է
մշակն կերակրոյ իւրում։

Յոր քաղաք մտանիցէք կամ
ի գեօղ, հարցանիցէք՝ թէ ո՞ է
ի նմա արժանի, և անդ լինիջիք՝ մինչեւ ելանիցէք անտի։
Եւ իբրեւ մտանիցէք ի տունն,
ողջոյն տացէք նմա՝ և ասասջիք,
Ողջոյն տանս այսմիկ, եթէ իցէ
տունն արժանի, եկեսցէ ող-
ջոյնն ձեր ի վերայ նորա. ապա
թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն
ձեր առ ձեզ դարձցի։

Եւ որ ոչ ընկալցի զձեզ, և ոչ
լսիցէ բանից ձերոց, իբրեւ
ելանիցէք ի քաղաքէն յայնմա-
նէ, թօմս ափեսջիք զփոշին յո-
տից ձերոց։

Ամէն ասեմ ձեզ, դիւրագոյն
լինի երկրին սոդոմացւոց և գո-
մորացւոց յաւուրն դատաս-
տանին՝ քան քաղաքին այնմիկ։

---

Ցերկրորդում Ախթակի Ուրբաթի առաւօտեան։

ԳԼՈՒԽ Ժ԰։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ա հաւասիկ ես առաքեմ զը-
ձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց. եղերուք այսուհե-
տեւ խորագէտք իբրեւ զօձս,
և միամիտք իբրեւ զաղաւնիս։
Զգուշ լինիջիք ի մարդկանէ. զի
մատնեսցեն զձեզ ժողովուրդս իբրեւանց

տանջեսցեն զձեզ. եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցեն զձեզ վասն իմ, ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց։

Այլ յորժամ մատնիցեն ըզձեզ, մի հոգայցէք՝ թէ որպէս կամ զինչ խօսիցիք. զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք. զի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ՝ որ խօսիցի ի ձեզ։

Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, և հայր՝ զորդի. և յարնիցեն որդիք ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա, և եղիջիք ատելեաւք յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ։

Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ. և եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք ի միւսն. ամէն ասեմ ձեզ, ոչ սպառեսջիք զքաղաքս իսրայելի մինչեւ եկեսցէ Որդի մարդոյ։

Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ, եւ ոչ ծառայ քան զտէր իւր, շատ իցէ աշակերտին՝ եթէ եղիցի իբրեւ զվարդապետ իւր, և ծառային՝ իբրեւ զտէր իւր։

Եթէ զտանուտէրն Բեեղզեբուղ կոչեցին, ո՛րչափ եւս առաւել զընտանիս նորա։

Մի այսու հետեւ երկնչիցիք ի նոցանէ. զի ոչինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի։

Զոր ասեմ ձեզ ի խաւարի՝ ասացէք ի լոյս, եւ զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք ի վերայ տանեաց։

Եւ մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել։

Այլ երկերիւք դուք առաւել յայնմանէ՝ որ կարող է զոգի և զմարմին կորուսանել ի գեհենի։

Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ։

Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. և արդ մի՛ երկնչիցիք, զի լաւ էք քան զբազում ճնճղուկս։

Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է։

Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է։

Մի համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր. քանզի եկի բաժանել զայր ի հօրէ իւրմէ, և զդուստր ի մօրէ իւրմէ, և զհարսն ի սկեսրէ իւրմէ. և թշնամիք առն՝ ընտանիք իւր։ Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանի։

Եւ որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս, չէ ինձ արժանի։

Եւ որ ոչ առնու զխաչ իւր՝ և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի։

Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։

Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։

Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ վարձս մարգարէի առցէ, և որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ վարձս արդարոյ առցէ։

Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանացս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ՝ միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր։

---

Յերրորդում Կիրակէ Շաբաթի առաջ։

## ԳԼՈՒԽ ԺԱ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զպատուէր երկոտասանից աշակերտացն իւրոց, գնաց անտի քարոզել և ուսուցանել ի քաղաքս նոցա։

Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ ի բանտին զգործս Քրիստոսի, առաքեաց ի ձեռն աշակերտաց իւրոց, և ասէ ցնա. Դո՞ւ ես՝ որ գալոցն ես, եթէ այլոյ ակնկալեցուք։

Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. գնացէ՛ք պատմեցէ՛ք Յովհաննու՝ զոր լուայք և տեսէք։

Կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յառնեն, և աղքատաց աւետարանին. և երանելի է՝ որ ոչ գայթակղեսցի յիս։

Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել ցժողովուրդն զՅովհաննէ. Զի՞նչ ելէք տեսանել յանապատին. եղէգն շարժեալն ի հողմոյ. այլ զի՞նչ ելէք տեսանել. մարդ ի հանդերձս փափկութեան զարդարեալ։

Ա. հաւանիկ որ զխախուտն լըցեալ են՝ ի տուն Թագաւորաց են։

Ա. յլ ինչ եղեք տեսանել. մարգարէ՞. այո՛ ասեմ ձեզ, և առաւել եւս քան զմարգարէ։

Զի նա է՝ վասն որոյ գրեալն է. Ա. հա ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, որ պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո։

Ա. մէն ասեմ ձեզ. չէ յարուցեալ՝ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ. բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա։

Բայց յաւուրսն Յովհաննու Մկրտչի մինչեւ ցայժմ՝ արքայութիւն երկնից բռնագատի, եւ բռնաւքն յափշտակեն զնա։

Քանզի ամենայն օրէնք եւ մարգարէք մինչեւ ցՅովհաննէս մարգարէացան. Եւ եթէ կամիք ընդունել, նա է Եղիա՝ որ գալոցն է։

Որ ունիցի ականջս լսելոյ լսիցէ։

Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. նման է մանկտւց՝ որ նստեալքն՝ի հրապարակս, կարգացեալքն զընկերս իւրեանց, և ասեալքն. Փող հարաք ձեզ՝ եւ ոչ կաքաւեցէք, ողբացաք ձեզ՝ և ոչ կոծեցարուք։

Եկն Յովհաննէս, ոչ ուտէր և ոչ ըմպէր, և ասեն, դեւ գոյ՝ի նմա։

Եկն Որդի մարդոյ, ուտէ եւ ըմպէ, և ասեն, ահա այր կերող եւ արբեցող, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց. և արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց։

Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նորա, և ոչ ապաշխարեցին։

Վա՛յ քեզ՝ Քորազին, վա՛յ քեզ՝ Բեթսայիդա. զի եթէ՝ի Տիւրոս և՝ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ՝ի ձեզ եղեն, վաղուց եւս արդեօք խորգով և մոխրով ապաշխարեալ էր։

Բայց ասեմ ձեզ, դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի եւ Սիդոնի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ։

Եւ դու, Կափառնաում, միթէ մինչեւ յերկինս բարձրասցիս, այլ մինչեւ՝ի դժոխս իջցես. զի եթէ՝ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն՝ի քեզ, ապաքէն կային եւս մինչեւ ցայսօր։

Բայց ասեմ ձեզ, եթէ երկ-

րին Սոդոմացւոց գիւրագոյն լինի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ։

Ձ Ր Ր Դ Ա Մ Ն Ա Կ Ի Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ն։

ԳԼՈՒԽ ԺԱ. 25։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յայնմ ժամանակի պատասխանի եւ ասէ. Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնի եւ երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց. այո՛, Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։

Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ։

Եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, եւ ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի, եւ ում Որդին կամիցի յայտնել։

Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ, եւ ուսարուք ինէն՝ զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոյկ։

Ձ Ր Ր Դ Ա Մ Ն Ա Կ Ի Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ն։

ԳԼՈՒԽ ԺԲ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորայն նոցա ի շաբաթու. եւ աշակերտքն նորա քաղցեան, եւ սկսան հասկ կորզել եւ ուտել. փարիսեցիքն իբրեւ տեսին՝ ասեն ցնա. Ահաւասիկ աշակերտքն քո գործեն, զոր ոչ է արժան գործել ի շաբաթու։

Եւ նա ասէ ցնոսա. Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն՝ եւ որ ընդ նմայն էին. զիա՞րդ եմուտ ի տունն Աստուծոյ՝ եւ հեղեր զհացն զառաջաւորութեան. զոր ոչ էր օրէն նմա ուտել, եւ ոչ՝ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից։ Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յօրէնս, զի ի շաբաթի քահանայքն ի տաճարին պղծեն զշաբաթն, եւ անմեղք են. բայց ասեմ ձեզ, զի մեծ քան զտաճարն է աստ։

Եւ եթէ գիտէիք զինչ է՝ Ողորմութիւն կամիմ եւ ոչ զզոհ, ապա ոչ դատապարտէիք դուք զանպարտսն։

Չի տէր է շաբաթու Որդին մարդոյ։

Եւ գնացեալ անտի Յիսուս՝ եկն ի ժողովուրդն նոցա։

Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալէր. հարցին զնա՝ և ասեն. Արդեօք պարտ իցէ ի շաբաթու բժշկել զի չարաբասեսցեն զնմանէ։

Եւ նա ասէ ցնոսա. Ո՞վ իցէ ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն ի խորխորատ ի շաբաթու. միթէ ոչ ուշիցի եւ յարուցանիցէ զնա. իսկ արդ ո՞րչափ եւս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է ի շաբաթու բարիս գործել։

Յայնժամ ասէ տայրն. Ձգեա զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղեւ ողջ իբրեւ զմիւսն։

Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ որպէս կորուսցեն զնա։

Եւ Յիսուս իբրեւ գիտաց, մեկնեցաւ անտի։

Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զամենեսեան։

Եւ սաստեաց նոցա՝ զի մի յայտնեսցեն զնմանէ ումեք. զի լցի որ ասացաւն ի ձեռն Եսայեայ մարգարէի. Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զհոգի իմ ի վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց պատմեսցէ. ոչ հակառակեսցի և ոչ աղաղակեսցէ, և ոչ ոք լուիցէ ի հրապարակս զձայնբառս նորա։

Զնդեղգն ջախջախեալ ոչ փշրեսցէ, և զպատրոյգն առկայծեալ ոչ շիջուսցէ, մինչեւ հանցէ ի յաղթութիւն զդատաստանն. եւ յանունն նորա հեթանոսք յուսասցին։

---

Զորրորդում կիրակէի երկքսաթեի աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԲ. 22։

Ա՛ռ աչերն մեր Յիսուս Քրիստոս։

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր, եւ բժշկեաց զնա. որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ։

Զարմացան ամենայն ժողովուրդքն և ասէին. Միթէ սա՞ իցէ Քրիստոսն՝ որդի Դաւթի։ Բայց փարիսեցիքն իբրեւ լսեւան՝ ասեն. Ոչ իւիք հանէ դա զդեւս՝ եթէ ոչ Բէեղզեբուղաս իշխանաւն դիւաց։

Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ա-

մենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի, և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ. և եթէ սատանայ զսատանայ հայի հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա։

Եւ եթէ ես բնեղբեւղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։ Ապա եթէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ուրեմն հասեալ է ի վերայ ձեր Արքայութիւն Աստուծոյ։

Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել ի տուն հզօրի՝ և զգործիսն նորա յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն, և ապա զտունն նորա յափշտակիցէ։ Որ ոչ ընդ իս է՝ հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ։

Վասն այդորիկ ասեմ ձեզ. Ամենայն մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկան. բայց զՀոգւոյն հայհոյութիւնն մի՛ թողցի։ Եւ որ ոք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց որ զՀոգւոյն Սրբոյ ասիցէ՝ մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի և մի՛ ի հանդերձեալսն։

Կամ արարէք զծառն բարի՝ և զպտուղ նորա բարի, կամ արարէք զծառն չար՝ և զպտուղ նորա չար. քանզի ի պտղոյ անտի ծառն ճանաչի։

Ծնո՛ւնդք լծից, զիա՞րդ կարիցէք բարիս խօսիլ՝ որ չարքդ էք. քանզի ի յաւելուածոյ սրտի խօսի բերան։

Մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս. և մարդ չար՝ ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս։

Բայց ասեմ ձեզ, թէ ընդ ամենայն դատաւոր բանի զոր խօսիցին մարդիկ՝ տացեն համար յաւուրն դատաստանի։

Զի ի բանից քոց արդարասցիս, և ի բանից քոց պարտաւորեսցիս։

---

Զորոգդամ Վարակի Զոհրաբեանի աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԲ. 38։

Ա՛ւ տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք ի գրոց և ի փարիսեցւոց՝ և ասեն. Վարդապետ, կամիմք նշան ինչ տեսանել ի քէն։ Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. Ազգ չար և շնացող

նշան խնդրէ, և նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովհաննու մարգարէի։

Զի որպէս էր Յովհան՝ի փոր կխին զերիս տիւս և զերիս գիշերս, նոյնպէս եղիցի և Որդի մարդոյ՝ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս։

Ապք Նինուէացիք յարիցեն՝ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա, զի զղջացան՝ի քարոզութեան Յովհաննու։

Եւ արդ առաւել մեծ քան զՅովհան է աստ։

Դիւղոյն հարաւոյ յարիցէ՝ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ եւ դատապարտեսցէ զսա, զի եկն՝ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի։

Եւ ահա մեծ քան զՍողոմոն է աստ։

Ապ յորժամ այն պիղծ ելանիցէ՝ի մարդոյ՝ջրկի ընդ անջըրդին տեղիս, խնդրէ հանգիստ՝ և ոչ գտանէ։

Յայնժամ ասէ. Դարձայց՝ի տուն իմ՝ուստի ելի. և եկեալ գտանէ պարապուրդ, մաքրեալ և յարդարեալ։

Յայնժամ երթայ՝ և առնու ընդ իւր եօթն այլ այս չարագոյնս քան զինքն, եւ մտեալ բնակի անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ՝ չար քան զառաջինն։

Այնպէս եղիցի և ազգիս այսմիկ չարի։

Մինչդեռ նա ընդ ժողովրդեան խօսէր, ահա մայր նորա և եղբարք նորա կային արտաքոյ՝ և խնդրէին խօսիլ ընդ նմա։

Եւ ասէ ոմն ցնա. Ահա մայր քո և եղբարք քո կան արտաքոյ, և խնդրեն խօսիլ ընդ քեզ։

Նա պատասխանի ետ այնմիկ՝ որ ասացն ցնա, և ասէ. Ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք։

Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտան ասէ. Ահաւասիկ մայր իմ և եղբարք իմ. զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է, նա է իմ եղբայր՝ և քոյր՝ և մայր։

---

Ձերդդեամ Վարդանի Հինգշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԳ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս՝ի տանէն՝ նստաւ առ ծովեզերն. և ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչեւ մտանել նմա՝ի նաւն եւ

նախիլ. և ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն։

Եւ խօսէր ընդ նոսա բազում առակօք և ասէր. Ահա ելանէ մանահան սերմանել. և ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ, եւ եկին թռչունք երկնից և եկեր զնա։

Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում, եւ վաղվաղակի բուսաւ. առ ի չգոյն հիւթոյ երկրին՝ ի ծագել արեւուն տապացաւ, և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ։

Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղձուցին զնա։

Եւ այլն անկաւ յերկիր բարի, և տայր պտուղ. էր որ հարիւրաւոր, և էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր։

Որ ունիցի ականջս լսել՝ լսէ։

Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա. Ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նոսա։

Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. Քանզի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս Աստուածութեան երկնից, եւ նոցա չէ տուեալ։

Զի որ գուցէ՝ տացի նմա և յաւելցի. և որ ոչն գուցէ՝ և զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ։ Վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա. զի տեսանեն՝ և ոչ տեսանեն, և լսեն՝ և ոչ լսեն, և ոչ առնուն ի միտ։

Եւ կատարի առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ՝ որ ասէ. Լսելով լսիջիք՝ և մի՛ իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի՛ տեսջիք. զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, ևականջօք իւրեանց ծանրաւնա լսեան. և զաչս իւրեանց կափուցին, զի մի՛ երբեք տեսցեն աչօք, և ականջօք լսիցեն, և սրտիւք իմասցին, և դարձին՝ և բժշկեցից զնոսա։

Բայց ձեր երանի է աչացդ՝ զի տեսանեն, և ականջայ ձերոց՝ զի լսեն։

Ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և ոչ լսեան։

Եւ արդ լուարուք դուք զառակ սերմանացանին. Յամենայնէ՝ որ լսէ զբանն արքայութեան և ոչ առնու ի միտ, գայ չարն և յափշտակէ զսերմանեալն ի սիրտ նորա. այն է որ առ ճանապարհաւն սերմանեցաւ։

Եւ որ յապառաժին սերմանեցաւ, այն է՝ որ իբրեւ լսէ զբանն, և վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա. բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է, ի լինիլ նեղութեան և հալածանաց վասն բանին՝ վաղվաղակի գայթակղի։

Իսկ որ ի մէջ փշոյն սերմանեցաւ, այն է՝ որ իբրեւ լսէ զբանն, և հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն, և լինի անպտուղ։

Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ, այն է՝ որ իբրեւ լսէ զբանն և ի միտ առնու, և տայ պտուղ. է որ հարիւր, և է որ վաթսուն, և է որ երեսուն։

---

Զպղպզդամ Ախթակէի Ներքաթի աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԳ. 24։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ա՛յլ առակ էարկ առ նոսա և ասէ. Նմանեցաւ Արքայութիւնն երկնից առն՝ որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում. եւ ի քուն լինիլ մարդկան՝ եկն թշնամի նորա, և ցանեաց ի վերայ ոլոմն ի մէջ ցորենոյն՝ և գնաց. և իբրեւ բուսաւ խոտն և արար պտուղ. ապա երեւեցաւ և որոմնն։

Մատուցեալ ծառայք՝ տուն նուա տեառնն ասեն ցնա. Տէր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քումմ, արդ ուստի՞ ունիցի զորոմնն։

Եւ նա ասէ ցնոսա. Այր թշնամի արար զայն։

Ասեն ցնա ծառայքն. Կամի՞ս զի երթիցուք քաղիցուք զայն ի բաց։

Եւ նա ասէ ցնոսա. Մի՛. գուցէ մինչ քաղիցէք զորոմնն, և զցորեանն ընդ նմին ի բաց խլեցէք. Թոյլ տուք երկոցունց աճիլ ի միասին մինչև ի հունձս, և ի ժամանակի հնձոց ասացից ցհնձողսն. քաղեցէք նախ զորոմնդ, և կապեցէք զայդ խրձս առնս ի յայրել, և զցորեանն ժողովեցէք ի չտեմարանս իմ։

Այլ առակ արկ առ նոսա և ասէ. Նման է Արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ սերմանեաց յագարակի իւրում. որ փոքր է քան զամենայն սերմանիս, և յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս, եւ լինի ծառ՝ մինչև գալ թռչնոց երկ-

նից, և հանդիպիլ յոստոս նորա։
Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Նման է Արքայութիւն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ թագոյց ի գրիւս երիս ալեր՝ մինչեւ. ամենայն խմբեցաւ։

Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն, և առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա. զի լցցի ասացեալն ի մարգարէէն. Բացից առակօք զբերան իմ, բղխեցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի։

---

Ձորրորդում Կիրակէի Եաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԳ. 36։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յայնժամ թողեալ Յիսուս զժողովուրդսն՝ եկն ի տուն. մատեան առ նա աշակերտքն և ասեն. Մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի։

Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. Որ սերմանէ զբերմն բարի՝ է Որդի մարդոյ, և ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են, որ որդիքն արքայութեան են. իսկ որոմն որդիք չարին են։

Եւ թշնամին որ վարեաց զայն՝ սատանայ է, և հունձքն կատած աշխարհիս է, և հնձողքն՝ Հրեշտակք են։

Որպէս ժողովի որոմն եւ ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարած աշխարհիս. առաքեսցէ Որդի մարդոյ զՀրեշտակս իւր, եւ ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս՝ եւ զանօրէնսն։

Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ և կրճտել ատամանց։

Յայնժամ արդարքն ծագեսցին իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ։

Դարձեալ՝ նման է Արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդ՝ թագոյց. և ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, և գնէ զագարակն զայն։

Դարձեալ՝ նման է Արքայութիւն երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։

Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, եւ գնեաց զայն մարգարիտ։

Դարձեալ՝ նման է Աքքայու-
թիւն երկնից ուռկանի արկե-
լոյ ի ծով և յամենայն ազգս
ժողովելոյ. զոր իբրեւ լցաւ,
հանեալ ի ցամաք և նստեալ՝
ժողովեցին զբարի բարին յա-
մանս, և զխոտանն ի բաց ըն-
կեցին։

Այնպես եղիցի ի կատարած
աշխարհիս. ելցեն Հրեշտակք՝
եւ մեկնեսցեն զչարս ի միջոյ
արդարոց. և արկցեն զնոսա ի
հնոց հրոյն. անդ եղիցի լալ և
կրճտել ատամանց։

Ասէ ցնոսա Յիսուս. Իմացա-
րո՞ք զայս ամենայն. ասեն ցը-
նա. Այո՛, Տէր։

Եւ նա ասէ ցնոսա. Վասն այ-
սորիկ ամենայն դպիր աշակեր-
տեալ արքայութեան երկնից,
նման է առն տանուտեառն՝ որ
հանէ ի գանձէ իւրմէ զնոր և
զհին։

---

Հինգշաբթում Վարակի առաքն։

ԳԼՈՒԽ ԺԳ. 53։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ իբրեւ կատարեաց
Յիսուս զառակս զայսոսիկ՝
փոխեցաւ անտի։

Եւ եկեալ ի գաւառ իւր ու-
սուցանէր զնոսա ի ժողովր-
դեանն նոցա. մինչեւ զարմա-
նալ նոցա և ասել. սմա ուստի՞
էր այս իմաստութիւն և զո-
րութիւնք։

Ո՞չ սա է հիւսանն որդի. ո՞չ
մայր սորա կոչի Մարիամ, եւ
եղբարք սորա Յակովբոս եւ
Յովսէս և Սիմոն և Յուդա.
և քոյր սորա ո՞չ ամենեքեան
առ մեզ են. արդ ուստի՞ է սմա
այս ամենայն։

Եւ գայթակղէին ի նա։
Եւ Յիսուս ասէ ցնոսա. Զի՛ք
մարգարէ անպատ՝ եթէ ոչ յի-
րում գաւառի եւ յիւրում
տան։

Եւ ոչ արար անդ զօրութիւնս
բազումս վասն անհաւատու-
թեան նոցա։

---

Հինգշաբթում Վարակի երկուշաբաթի առաքն։

ԳԼՈՒԽ ԺԴ. 1։

Վասն գլխատման Մկրտչի տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի։

Յայնմ ժամանակի լուաւ Հե-
րովդէս չորրորդապետ զլ-
լուր Յիսուսի, և ասէ ցծառայս
իւր. Նա է Յովհաննէս Մկըր-
տիչ, նա յարեաւ ի մեռելոց,
և վասն այնորիկ զօրութիւնք
լինին նովաւ։

Քանզի Հերովդէս կալաւ զՅ

Յովհաննէս, կապեաց զնա եւ եդ ՚ի բանտի վասն Հերովդիայ կնոջ փիլիպպոսի եղբօր նորա, զի ասէր ցնա Յովհաննէս. չէ արժան քեզ ունել զդա։

Եւ կամէր զնա սպանանել, բայց երկնչէր ՚ի ժողովրդենէ անտի. քանզի իբրև զմարգարէ ունէին զնա։

Եւ իբրեւ եղեն ծնունդք Հերովդէի, կաքաւեաց դուստրն Հերովդիայ ՚ի մէջ բազմականին. և հաճոյ թուեցաւ Հերովդէի. ուստի եւ երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ եւ խնդրեսցէ։

Եւ նա յառաջագոյն խրատեալ ՚ի մօրէ իւրմէ, տո՛ր ինձ, ասէ, այսր ՚ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի։

Եւ տրտմեցաւ թագաւորն, բայց վասն երդմանցն և բարձակացն՝ հրամայեաց տալ նմա։

Եւ առաքեաց գլխատեաց ըզՅովհաննէս ՚ի բանտի. և բերաւ գլուխ նորա սկտեղ՝ և տուաւ աղջկանն, եւ տարաւ առ մայր իւր։

Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն եւ թաղեցին, եւ եկեալ պատմեցին Յիսուսի։

—

Հիգերորդում Նախակի երեքշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԳ. 13։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ իբրեւ լուաւ Յիսուս, գնաց անտի նաւու յանապատ տեղի առանձինն։

Իբրեւ լուան ժողովուրդքն, գնացին զհետ նորա հետի՝ ՚ի քաղաքաց անտի։

Եւ իբրեւ ել՝ եառնս ժողովուրդ բազում. գթացաւ ՚ի նոսա, և բժշկեաց զհիւանդս նոցա։

Իբրեւ ընդ երեկս եղեւ, մատեան առ նա աշակերտքն և ասեն. Տեղիս անապատ է, և օրս տարաժամեալ, արձակեա՛ զժողովուրդսդ՝ զի երթիցեն շուրջ ՚ի չէնան, գնեսցեն իւրեանց կերակուրս։

Եւ ասէ Յիսուս. Ոչինչ պիտոյ է դոցա երթալ. դուք տո՛ւք դոցա ուտել։

Եւ նորա ասեն ցնա. Ոչ ինչ ունիմք աստ, բայց հինգ նկատնակ և երկուս ձկունս։

Եւ ասէ ցնոսա. Բերէ՛ք այսր զայն։

Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդն ՚ի վերայ խոտոյ. և առեալ զհինգ նկանակն

և զերկուս ձկունն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց. և եբեկ և ետ յաշակերտան զնկանականն, և աշակերտքն ժողովրդեան։ Կերան ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս կոտրըցն երկոտասան սակաւի լի։ Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ հինգ հազար, Թող զկանայս և զմանկտիս։

---

Չհիշերորդում Կիրակէի Զատիկն առաւն։

ԳԼՈՒԽ ԺԴ. 22։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ստիպեաց վաղվաղակի զաշակերտան մտանել ի նաւ և յառաջել յայնկոյս, մինչ ինքն զժողովուրդն արձակիցէ։ Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդն, ել ի լեառն առանձին կալ յաղօթս։ Եւ իբրեւ ընդ երեկս եղեւ, անդ էր միայն։ Եւ նաւն մեկնեալ էր ի յամաքէն բազում ասպարիսաք՝ ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն։ Եւ ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով ի վերոյ ծովուն։ Իբրեւ տեսին զնա աշակերտքն զի գնայր ի վերոյ ծովուն՝ խըռովեցան, և ասեն՝ Թէ առ ա չջ ինչ իցէ. և առ ահին աղաղակեցին։

Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ. Քաջալերացարուք, ես եմ, մի երկնչիք։ Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ. Տէր, եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ ի վերայ ջրոցս։ Եւ նա ասէ, Ե՛կ։ Եւ իջեալ ի նաւէն Պետրոս՝ գնաց ի վերայ ջրոցն, եւ եկն առ Յիսուս։ Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ. եւ իբրեւ սկսաւ ընկղմիլ՝ աղաղակեաց և ասէ. Տէր, փրկեա զիս։ Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա և ասէ. Թերահաւատ, ընդէր երկմտեցեր. և իբրեւ ելին ի նաւն՝ հանդարտեաց հողմն։ Եւ որ ի նաւին էին՝ մատեան երկիր պագին նմա եւ ասեն. Արդարեւ Որդի Աստուծոյ ես դու։

Եւ անցեալ եկին ի ցամաք ի Գեննեսարէթ. և իբրեւ ծանեան զնա արք տեղոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն և ածին առ նա զամենայն հիւանդս։

Եւ աղաչէին զնա , զի գոնէ միայն ՚ի քզանցս հանդերձի նորա մերձենալոյ. և որ միանգամ մերձենային՝ փրկեցան։

---

Հինգշաբաթի Վերակի Հինգշաբթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԵ. 1։

Ա. տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յայնժամ մատեան առ Յիսուս՝ որ յԵրուսաղեմէ վարդապետք և դպիրք և ասեն. Ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն , զի ոչ լուանան զձեռս յորժամ հայ ուտեն։

Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. Խակ դուք ընդէ՞ր անցանէք զպատուիրանաւն Ա. տուածոյ՝ վասն ձերոյ աւանդութեանդ։

Զի Աստուած ասաց. Պատուեա՛ զհայր քո և զմայր. և որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մահու վախճանեսցի. և դուք ասէք. որ ասիցէ ցհայր իւր կամ ցմայր իւր, Թէ պատարագ է՝ զոր ինէն օգտիցես, և ոչ պատուիցէ զհայր իւր եւ զմայր իւր. և խոտեք զբանն Աստուածոյ վասն ձերոյ աւանդութեանն։

Կեղծաւորք, բարւոք մարգարէացաւ ՚ի վերայ ձեր Եսայի և ասէ. Ժողովրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն, զուր պաշտեն զիս. ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս։

Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն՝ ասէ ցնոսա. Լուարուք և ՚ի միտ առէք. ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ. այլ որ ինչ ելանէ ՚ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ։

Յայնժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն ցնա. Գիտե՞ս՝ զի փարիսեցիքն իբրեւ լուան զբանն գայթակղեցան։

Նա պատասխանի ետ նոցա և ասէ. Ամենայն տունկ՝ զոր ոչ տնկեաց Հայր իմ երկնաւոր, խլեսցի։

Թոյլ տուք նոցա. կոյրք են՝ կուրացս առաջնորդք. կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալի, և երկոքին ՚ի խորխորատ անկանին։

Պատասխանի ետ Նաեփրոս և ասէ. Մեկնեա՛ մեզ զառակս զայս։

Ասէ Յիսուս. Տակաւին և դուք անմիտք եք, և ոչ իմանայք՝ ե-

Թէ ամենայն որ մտանէ ի բերան, յորովայն երթայ և արտաքս ելանէ. իսկ որ ելանէ ի բերանոյ, ի սրտէ անտի գայ, և այն պղծէ զմարդ։

Զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք, սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք. այս ամենայն է՝ որ պղծէ զմարդ, այլ անլուայ ձեռօք ուտել՝ ոչ պղծէ զմարդ։

---

Հինգերորդում կիրակի Սրբոյն Մատթէի աւետարան։

ԳԼՈՒԽ ԺԵ. 21։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ելեալ անտի Յիսուս գնաց ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի։

Եւ ահա կին մի քանանացի ի սահմանաց անտի նոցա՝ ելեալ, աղաղակէր եւ ասէր. Ողորմեաց ինձ, Տէր, որդի Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի։

Եւ նա ոչ ետ նմա պատասխանի։

Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին. Արձակեա զնա, զի աղաղակէ զհետ մեր։

Եւ նա պատասխանի ետ և ասէ. Ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի։

Եւ նա մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր. Տէր, օգնեա ինձ։

Պատասխանի ետ նմա և ասէ. Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։

Եւ նա ասէ. Այո, Տէր, քանզի և չունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց։

Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս, և ասէ. Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո. եղիցի քեզ որպէս և կամիս։

Եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու։

---

Հինգերորդում կիրակի Շաբաթի աւետարան։

ԳԼՈՒԽ ԺԹ. 29։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն ի ծովեզերն գալիլեացւոց. և ելեալ ի լեառն նստէր անդ։

Մատեան առ նա ժողովուրդք բազումք՝ որ ունէին ընդ իւրեանս կաղս, կոյրս, համերս, վիակոտմանիս, և այլս բազումս.

և ընկեցին զնոսա առ ոտս նո-
րա, և բժշկեաց զնոսա։

Մինչեւ զարմանալ ժողովուր-
դոցն՝ որ տեսանէին, զի հա-
մերքն խօսէին, կաղք գնային,
միակողմանիք բժշկէին, կոյրք
տեսանէին, և փառաւորա առ-
նէին զԱստուած Իսրայելի։

Եւ կոչեցեալ առ ինքն Յիսու-
սի զաշակերտսն՝ ասէ. Գթամ
ի ժողովուրդդ, զի արդ երեք
աւուրք են՝ զի կան առ իս, և
ոչ ունին զինչ ուտիցեն. և ար-
ձակել զդոսա նօթիս չկամիմ,
գուցէ նքթիցեն ճանապար-
հայն։

Ասեն ցնա աշակերտքն. Իսկ
արդ մեզ յանապատի սատ ուս-
տի իցէ այնչափ հաց՝ մինչ կա-
գեցուցանել զայսչափ ժողո-
վուրդ։

Եւ ասէ ցնոսա Յիսուս. Քանի
նկանակ ունիք։

Եւ նոքա ասեն. Եօթն, և սա-
կաւ ձկունս։

Եւ հրամայեաց ժողովրդեանն
բազմիլ ի վերայ գետնոյ. և
առեալ զեօթն նկանակն եւ
զձկունսն՝ գոհացաւ և եբեկ,
և ետ ցաշակերտսն, և նոքա
ժողովրդեանն։

Ակերան ամենեքեան և յագե-
ցան. և բարձին զնշխարս կո-
տորացն՝ եօթն զամբիւղ լի։
Եւ որք կերանն՝ էին իբրեւ
արք չորք հազարք, թող զկա-
նայս և զմանկտիս։

Իբրեւ արձակեաց զժողո-
վուրդսն՝ ել ի նաւ, և եկն ի
սահմանս Մագդաղեայ։

---

Եւ մատուցեալ փարիսեցիքն
և սադուկեցիքն փորձելով
խնդրեին ի նմանէ՝ նշան յերկ-
նից ցուցանել նոցա։

Նա պատասխանի ետ և ասէ
ցնոսա. Ադգ չար եւ շնացող՝
նշան խնդրէ, և նշան մի՛ տացի
նմա, բայց նշանն Յովնանու
մարգարէի. եւ եթող զնոսա
և գնաց։

Գնացին և աշակերտքն յայն-
կոյս, և մոռացան առնուլ հաց։

Ասէ ցնոսա Յիսուս. Տեսէք և
զգուշ լերուք ի խմորոյ սադու-
կեցւոցն և փարիսեցւոց։

Նոքա խորհէին ընդ միմեանս
և ասէին, թէ հաց ոչ բարձաք։

Գիտաց Յիսուս եւ ասէ. Զի՞
խորհիք ի միտս ձեր, թերահա-
ւատք, եթէ հաց ոչ ունիք.
տակաւին չիմանայք և ոչ յի-
շէք զհինգ նկանակն ի հինգ
հազարսն, եւ քանի՞ սակաւ
բարձէք. և ոչ զեօթն նկանակն

'ի ջուրս հազարան, և քանի՞ զամ բիւղս բարձէք · արդ զի՞արդ ոչ իմանայք՝ եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ՝ զգոյշ լինիլ 'ի խմորոյ սադուկեցւոցն եւ փարիսեցւոց։

Յայնժամ 'ի միտ առին, եթէ ոչ ասաց զգուշանալ 'ի խմորոյ, այլ յաղանդոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց։

---

Վկայաբերեալ ներքակի առաքն։

ԳԼՈՒԽ ԺԶ · 13։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեալ Յիսուս 'ի կողմանս Փիլիպպեայ Կեսարիայն, հարցանէր ցաշակերտսն և ասէր · Զո՞ր ազ ասեն զինէն մարդիկն՝ Թէ իցէ Որդի մարդոյ։ Եւ նոքա ասեն. Ոմն զՅովհան նէս Մկրտիչ, և այլք զԵղիա, և կէսք զերեմիա, կամ զմի ոք 'ի մարգարէիցն։

Ասէ ցնոսա Յիսուս. Իսկ դուք զո՞ր ասէք զինէն Թէ իցեմ։ Պատասխանի ետ Սիմոն Պետրոս և ասէ ցնա. Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Երանի՛ քեզ Սիմոնի՝ որդի Յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայրն իմ որ յերկինս է։

Եւ ես քեզ ասեմ, զի դու ես Վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեսցէ զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն։

Եւ տացէ քեզ փականս Արքայութեան երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս։

Յայնժամ սաստեաց աշակերտացն, զի մի ումեք ասիցեն՝ Թէ նա է Քրիստոսն։

Յայնմ հետէ սկսաւ Յիսուս յայտնել աշակերտացն, Թէ պարտ է նմա երթալ Երուսաղէմ, և Թէ բազում չարչարանս չարչարիլ 'ի քահանայապետից, և 'ի դպրաց և 'ի ծերոց ժողովրդեանն, և սպանանիլ, և յերիր աւուր յառնել։

Եւ առեալ զնա Մեկուսի Պետրոս, սկսաւ կապել ընդ նմա եւ ասել. Քաւ լիցի քեզ Տէր, մի եղիցի քեզ այդ։

Եւ նա դարձեալ 'ի Պետրոս՝ ասէ. Երթ յետս իմ, սատանայ, գայթակղութիւն իմ ես. զի ոչ խորհիս զԱստուծոյն, այլ զմարդկանց։

Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտան իւր. Եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն, և առցէ զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ։

Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։

Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրում։

Զի գալոց է Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ Հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր։

Ամէն ասեմ ձեզ, զի իցեն ումանք ի սոցանէ որ աստ կան, որք ոչ ճաշակեսցեն զմահ՝ մինչեւ տեսանիցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով։

---

Եւ յետ վեց աւուր առնու Յիսուս զՊետրոս և զՅակովբոս եւ զՅովհաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն. և պայկերպեցաւ առաջի նոցա. և լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձք նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս։

Եւ ահա երեւեցան նոցա Մովսէս եւ Եղիա՝ որ խօսէին ընդ նմա։

Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅիսուս. Տէր, բարւոք է մեզ աստ լինիլ. եթէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս. մի ՓԵԶ, և մի Մովսիսի, և մի Եղիայի։

Եւ մինչդեռ նա խօսէր. ահա ամպ լուսաւոր հովանի եղեւ ի վերայ նոցա. ձայն եղեւ յամպն և ասէ. Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ. դմա լուարուք։

Իբրև լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց՝ և երկեան յոյժ։

Եւ մատուցեալ Յիսուս բոլոր եհար զնոսայանէ և ասէ. Յոտն կացէք և մի երկնչիք։

Ամբարձին զաչս իւրեանց, և ոչ ոք տեսին՝ բայց միայն զՅիսուս։

Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս և ասէ. Մի ումեք ասիցէք զտեսիլդ, մինչեւ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։

Հարցին ցնա աշակերտքն եւ

ասեն. Ջիա՞րդ դպիրքն ասեն, եթէ Եղիայի նախ պարտէ գալ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Եղիա գայ, և հաստատեսցէ զամենայն. այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա եկեալ իսկ է. և ոչ ծանեան զնա, այլ արարին ընդ նա զոր ինչ կամեցան. նոյնպէս և Որդի մարդոյ չարչարելոց է ի նոցանէ։

Յայնժամ ի միտ առին աշակերտքն, թէ վասն Յովհաննու Մկրտչի ասաց ցնոսա։

---

Վերջերգում Ալէլուիա երկուշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԷ. 14։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ իբրեւ եկին ի ժողովուրդն, մատեաւ այր մի՝ ի ծունր իջանէր և ասէր. Տէր, ողորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի ի հուր, եւ երբեք ի ջուր. և մատուցի զնա աշակերտացն քոց. և ոչ կարացին բժշկել։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ո՛վ ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ ցերբ իցեմ ընդ ձեզ. մինչեւ ցերբ անսայցեմ ձեզ. ած զնա առ իս։

Եւ սաստեաց ի նա Յիսուս, և ել ի նմանէ դեւն, և բժշկեաց մանուկն ի ժամէն յայնմանէ։

Յայնժամ մատեան աշակերտքն առ անձինն՝ և ասեն ցՅիսուս. Մեք ընդէր ոչ կարացաք հանել զնա։

Եւ նա ասէ ցնոսա. Վասն թերահաւատութեան ձերոյ. ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անդր, և փոխեսցի. և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ։

Բայց այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահովք։

---

Վերջերգում Ալէլուիա երեքշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԷ. 21։

Ընդ ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ մինչդեռ շրջէին նոքա ի Գալիլեա, ասէ ցնոսա Յիսուս. Մատնելոց է Որդի մարդոյ ի ձեռս մարդկան, և սպանցեն զնա, և յերիր աւուր յարիցէ. և տրտմեցան յոյժ։ Իբրեւ եկին նոքա ի Կափառնաւում, մատեան որք զերկդրամեանն պահանջէին՝ առ Պետրոս, եւ ասեն. Վարդա-

պետն ձեր ոչ տայ զերկդրա-
մեանն, և ասէ. Այո՛:
Եւ իբրեւ եմուտ ՚ի տունն՝
յառաջեաց քան զնա Յիսուս
եւ ասէ. Ջիա՛րդ Թոմա քեզ,
Սիմո՛ն. Թագաւորք ազգաց
յումմէ՞ առնուն զհարկս կամ
զհասն, յորդւոց իւրեանց՝
թէ յօտարաց:
Եւ իբրեւ ասաց թէ յօտա-
րաց, ասէ ցնա Յիսուս. Ապա
ուրեմն ազատ են որդիքն:
Բայց զի մի գայթակղեացուս-
ցուք զնոսա, երթ ՚ի ծով՝ և
ընկեա կարթ, եւ զառաջին
ձուկնն որ ելանիցէ՝ առ, եւ
բաց զբերան նորա, եւ գտա-
նիցես սատեր. և զայն առեալ
տացես նոցա ընդ իմ և ընդ քո:

---

Յայնմ աւուր մատեան ա-
շակերտքն առ Յիսուս և
ասեն. Ո՞վ իցէ ՚ի մէնջ մեծ
Ա՛ՒՐԲԱՅՈՒԹԵԱՆ երկնից:
Եւ կոչեաց առ ինքն Յիսուս
մանուկ մի, կացոյց զնա ՚ի մէջ
նոցա, եւ ասէ. Ամէն ասեմ
ձեզ, եթէ ոչ դարձջիք և եղիջ
ջիք իբրեւ զմանուկս զայս,
նա է մեծ Ա՛ՒՐԲԱՅՈՒԹԵԱՆ
երկնից:
Եւ որ ոք ընկալցի մանուկ մի
այսպիսի յանուն իմ, զիս ընկ-
դուներ:
Եւ որ ոք գայթակղեցուցէ
զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ
յիս հաւատացելոց, լաւ է
նմա՝ եթէ կախիցի երկան իշոյ
ընդ պարանոց նորա՝ և ընկղղ-
միցի ՚ի խորս ծովու:
Վա՛յ աշխարհի գայթակղու-
թեանց, հարկ է գալ գայթակ-
ղութեանց. բայց վա՛յ մարդոյն
այնմիկ՝ որոյ ձեռն գայցէ գայ-
թակղութիւն,
եթէ ձեռն քո կամ ոտն գայ-
թակղեցուցանէ զքեզ, հատ
զնա և ընկեա ՚ի քէն. լաւ իցէ
քեզ միաձեռանի կամ կաղ
մտանել ՚ի կեանս, քան թէ
երկուս ձեռս և երկուս ոտս
ունիլ, եւ անկանիլ ՚ի հուր
յաւիտենական:
Եւ եթէ ակն քո գայթակղե-
ցուցանէ զքեզ, խլեա զնա
և ընկեա ՚ի քէն. լաւ իցէ քեզ
միականի մտանել ՚ի կեանս,
քան երկուս աչս ունիլ և ան-
կանիլ ՚ի գեհենն հրոյն:

---

Վկայութիւն Ախտակէի Զօրքապետի առնըն։

ԳԼՈՒԽ ԺԸ. 10։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Զգոյշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ. զի հրեշտակք նոցա յերկինս՝ հաւնապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ որ յերկինս է։

Զի եկն Որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալն։

Զիա՞րդ թուի ձեզ. եթէ լիներ մարդոյ հարիւր ոչխար, և մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն եւ զիննոչխարսն ի լերինս, և երթիցէ խնդրիցէ զմոլորեալն. և եթէ լինիցի գտանել զնա, ամէն ասեմ ձեզ՝ զի ուրախ լինի ի վերայ նորա, առաւել քան ի վերայ իննսուն եւ իննուննցն՝ որ չէին մոլորեալ։

Այսպէս ո՞չ են կամք առաջի Հօր իմոյ որ յերկինս է, եթէ կորիցէ մի ի փոքրկանցս յայսցանէ։

Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա՝ յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լսիցէ քեզ, շահեցար զեղբայրն քո։

Այլ թէ ոչ լսիցէ քեզ. առ ընդ քեզ մի եւս կամ երկուս, զի ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան։

Իսկ եթէ և նոցա ոչ լսիցէ, ասասջիր յեկեղեցւոջ։

Այլ թէ և եկեղեցւոյն ոչ լսիցէ. եղիցի քեզ իբրև զհեթանոս և զմաքսաւոր։

Ամէն ասեմ ձեզ. զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։

Դարձեալ՝ ասեմ ձեզ. եթէ երկու ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, զինչ եւ խնդրեսցեն՝ եղիցի նոցա ի Հօրէ իմմէ՝ որ յերկինսն է։

Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա։

Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս և ասէ. Տէր, քանի՞ցս անգամ թէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչեւ եւթն անգամ։

Ասէ ցնա Յիսուս. Ո՛չ ասեմ քեզ՝ թէ մինչեւ եւթն անգամ, այլ մինչեւ եւթանասնեկին եւթն։

Վասն այսորիկ նմանեցաւ Արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնել ընդ իւր ծառայից իւրոց։ Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ։ Իբրեւ ոչ ունէր հատուցանել տէրն նորա՝ եւ զկին նորա եւ զորդիս եւ զամենայն զոր ինչ եւ ունէր՝ եւ հատուցանել։ Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա եւ ասէր. երկայնամիտ լեր առ իս՝ եւ զամենայն հատուցից քեզ։ Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա, եւ զպարտեսն եթող նմա։ Եւ ելեալ ծառայն այն, եգիտ զմի ընդ ի ծառայակցաց իւրոց՝ որ պարտէր նմա հարիւր դահեկան, եւ կալեալ զնա՝ խեղդէր եւ ասէր. հատո՛ ինձ զոր պարտիսդ։ Արդ անկեալ ծառայակիցն առ ոտս նորա՝ աղաչէր զնա եւ ասէր. երկայնամիտ լեր առ իս՝ եւ հատուցից քեզ։ Եւ նա ոչ կամէր. այլ չոքաւ արկ զնա ի բանտ՝ մինչեւ հատուսցէ զպարտսն։ Իբրեւ տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն՝ տրտմեցան յոյժ. եւ եկեալ յուցին տեառն իւրեանց զամենայն որ ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր եւ ասէ. ծառա՛յ չար, զամենայն զպարտսն եթող քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս. իսկ արդ ո՞չ էր պարտ եւ քեզ ողորմիլ ծառայակիցին քումմ, որպէս եւ ես քեզ ողորմեցայ։ Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց, մինչեւ հատուսցէ զամենայն ըզպարտսն։ Նոյնպէս եւ Հայր իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում՝ ի սրտից ձերոց զյանցանս նոցա։

---

Վերադարձ Ախտակի Հիդէսքաթի առաքն։

ԳԼՈՒԽ ԺԹ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զբանս զայսոսիկ, փոխեցաւ ի Գալիլէէ՝ եւ եկն ի սահմանս Հրէաստանի՝ յայն կոյս Յորդանանու։ Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, եւ բժշկեաց զնոսա անդ։

Եւ մատուցեալ առ նա փա-
րիսեցիքն, փորձէին զնա և ա-
սէին. Արէ արժանի իցէ ումեք
արձակել զկին իւր, ըստ ամե-
նայն ձևոյս։

Պատասխանի ետ նոցա և ասէ.
Զիա՞նչ ընդ ելաց ձեր՝ թէ որ
հաստատեացն ի սկզբանէ՝ ա-
րու և էգ ստար զնոսա և ա-
սէ. վասն այսորիկ թողցէ այր
զհայր եւ զմայր՝ եւ երթիցէ
զհետ կնոջ իւրոյ, և եղիցին
երկոքեան ի մարմին մի։

Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ
մի մարմին. Արդ զոր Աստուած
զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ։

Ասեն ցնա. Իսկ Մովսէս ընդէր
պատուիրեաց մեզ տալ թուղթ
մեկնելոյ՝ և արձակել։

Ասէ ցնոսա. Մովսէս վասն
խստասրտութեան ձերոյ հրա-
մայեաց ձեզ արձակել զկանայս
ձեր, այլ ի սկզբանէ ոչ եղեւ
այնպէս։

Բայց ասեմ ձեզ, զի ամենայն
որ արձակէ զկին իւր՝ և ոչ վասն
պոռնկութեան, եւ առնիցէ
այլ ընդ, եւ որ զարձակեալն
առնէ՝ շնայ։

Ասեն ցնա աշակերտքն իւր.
Եթէ այդպէս ինչ ինայ իցէ
ընդ այր եւ ընդ կին, լաւ է
չամուսնանալ։

Եւ նա ասէ ցնոսա. Ոչ ամենե-
քեան բաւական են այդմ բա-
նի, այլ որոց տուեալ է։

Զի են ներքինիք՝ որ յորովայնէ
մօր իւրեանց ծնան այնպէս.
եւ են ներքինիք՝ որ ի մարդ-
կանէ եղեն ներքինիք, եւ են
ներքինիք՝ որ զանձինս իւրեանց
արարին ներքինիս վասն Աքքա-
յուքեան երկնից. որ կարող
է տանել՝ տարցի։

Յայնժամ մատուցան առ նա
մանկտի, զի ձեռն դիցէ ի վե-
րայ նոցա և աղօթս արասցէ.
և աշակերտքն նորա սաստէին
նոցա։

Ասէ Յիսուս. Թոյլ տուք ման-
կտւոյդ՝ և մի արգելուք զդոսա
գալ առ իս, զի այդպիսեացդ է
Աքքայուքեան երկնից։

Եւ եդեալ ձեռս ի վերայ նո-
ցա՝ գնաց անտի։

---

Վերծանեցաւ կիրակի Ութերեքի առաւօտեան։

ԳԼՈՒԽ ԺԹ. 16։

Առ տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ահա մատուցեալ ոմն
առ նա՝ ասէ. Վարդապետ
բարի, զի՞նչ բարի գործեցից՝
զի ընդունիցիմ զկեանն յա-
ւիտենականս։

Եւ նա ասէ ցնա. Զի՞ հարցաս նեա զիս զբարւոյ, մի է բարի. եթէ կամիս ի կեանսն յաւիտենական մտանել, պահեա զպատուիրանսն։

Ասէ ցնա. Ո՞րս։

Ասէ ցնա Յիսուս. Զմի՛ սպանանիցես, և մի՛ շնար, և մի՛ գողանար, եւ մի՛ սուտ վկայեր. պատուեա՛ զհայր քո և զմայր, և սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո։

Ասէ ցնա պատանին. Զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ. արդ ի՞նչ իւիք պակաս իցեմ։

Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիս կատարեալ լինիլ, երթ վաճառեա՛ զինչս քո և տո՛ւր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ։

Իբրեւ լուաւ պատանին զբանն, գնաց տրտմեալ զի ունէր ստացուածս բազումս։

Ասէ Յիսուս ցաշակերտսն. Ամէն ասեմ ձեզ, զի դժուարաւ մտցէ մեծատունն յԱթբայութիւն երկնից։

Դարձեալ ասեմ ձեզ, դիւրին է մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան յԱթբայութիւն Աստուծոյ մտանել։

Իբրեւ լուան աշակերտքն՝ զարմացան յոյժ, և ասեն. Ով ո՞ կարիցէ ապրիլ։

Հայեցաւ ի նոսա Յիսուս եւ ասէ. Ա՛ւ ի մարդկանէ այդ անկար է, այլ աւ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր։

Յայնժամ պատասխանի եւս Պետրոս և ասէ ցնա. Ա՛ւ ասիկ մեք թողաք զամենայն և եկաք զկնի քո, արդ ի՞նչ լինիցի մեզ։

Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ. զի դուք որք եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք և դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգս Իսրայէլի։

Եւ ամենայն որ թողոյ զտունս, կամ զեղբարս՝ կամ զքոյրս, կամ զհայր՝ կամ զմայր, կամ զկին՝ կամ զորդիս, կամ զագարակս վասն անուանն իմոյ, հարիւրապատիկ առցէ՝ և զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ։

Բազումք եղիցին առաջինք՝ յետինք, եւ յետինք՝ առաջինք։

---

Քանզի նման է Աբթայու-
թիւն երկնից առն տա-
նուտեառն, որ ել ընդ առա-
ւօտս ՚ի վարձու ունիլ մշակս
յայգի իւր. և արկ վարձս մշա-
կացն աւուրն դահեկան, և ա-
ռաքեաց զնոսա յայգի իւր։

Եւ ելեալ զերրորդ ժամու՝ ե-
տես այլս զի կային դատարկք
՚ի հրապարակս, ասէ և ցնոսա.
երթայք և դուք յայգի իմ, և
որ ինչ արժան իցէ՝ տայց ձեզ.
գնացին և նոքա։

Եւ դարձեալ ելեալ զվեց ժա-
մու, եւ զինն ժամու՝ արար
նոյնպէս։

Եւ զվեցասաներորդ ժամու
ելեալ, եգիտ այլս՝ զի կային
դատարկք, և ասէ ցնոսա. ընդ
ի՞ր կայք աստ զօրս ցերեկ
դատարկք։

Ասեն ցնա, զի ոչ ոք կալաւ
զմեզ ՚ի վարձու. ասէ ցնոսա.
երթայք և դուք յայգին, և որ
ինչ արժան է՝ առնուցուք։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, ասէ
տէր այգւոյն ցգաւառապետ
իւր. կոչեա զվշակսն՝ և տուր
նոցա վարձս, սկսեալ ՚ի յետ-
նոցն մինչեւ ցառաջինան։

Իբրեւ եկին որք զվեցասա-
ներորդ ժամուն, առին մի
դահեկան. եկեալ եւ առա-
ջինքն՝ համարեցին թէ աւելի
առնուցուն. և առին մի-
դահեկան և նոքա։

Իբրեւ առին՝ արտընջեցին զտա-
նուտեառնէն և ասէին. թէ
դորա յետինքդ մի ժամ գոր-
ծեցին, և հաստարակորդս մեզ
արարեր զդոսա, որ զծանրու-
թիւն աւուրն բարձաք և զո-
տօթ։

Եւ պատասխանի ետ միում
՚ի նոցանէ և ասէ. ընկեր, չը-
զրկեմ զքեզ. ո՞չ դահեկանի
միով սակ արկեր ընդ իս. առ
զքոյդ և երթ. եթէ կամիցեմ
յետնոցս տալ՝ որպէս և քեզ,
եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն
յինոս առնել զինչ և կամիմ,
կամ թէ ակն քո չար է՝ զի ես
առատս եմ։

Այսպէս եզիցին յետինք՝ ա-
ռաջինք, և առաջինք՝ յետինք.
զի բազումք են կոչեցեալք՝ և
սակաւք են ընտրեալք։

---

Վերջերումն Պարակի Շաբաթի առաւօտն։

ԳԼՈՒԽ Ի. 17։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Իբրեւ ելանէր Յիսուս Ե-
րուսաղէմ, առ զերկոտա-
սանսն առանձինն, և ՚ի ճանա-

պարհին ասէ ցնոսա. Ա՛հաւասիկ ելանեմք Երուսաղէմ, և Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն՝ և դպրաց, և պատապարտեսցեն զնա ի մահ. և մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել և հարկանել և ի խաչ հանել, և երրիր աւուր յարիցէ։

Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ՝ որդւովքն իւրովք հանդերձ, երկիր պագանէր՝ և խնդրէր ինչ ի նմանէ։

Եւ նա ասէ ցնա. Ջի՞նչ կամիս։ Ասէ ցնա. Ասա՛ զի նստցին սոքա երկու որդիքս իմ՝ մի ընդ աջմէ քումմէ և մի ընդ ահեկէ քումմէ յարքայութեան քումմէ։

Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ. Ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն՝ զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիլ։

Ասեն ցնա. Կարող եմք։ Ասէ ցնոսա Յիսուս. զբաժակն իմ ըմպիցէք, եւ զմկրտութիւնն՝ զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք. բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց տուեալ է ի Հօրէ իմմէ։

Եւ լուեալ տասանցն, բարկացան ի վերայ երկուցն և զբարցն Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, և ասէ. Գիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն նոցա, և մեծամեծքն իշխեն նոցա։

Ոչ այնպէս իցէ և ի ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինիլ՝ եղիցի ձեր պաշտօնեայ. եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինիլ՝ եղիցի ձեր ծառայ։

Որպէս Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել, եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։

---

Նոյնիսկ ուրբաթի առաջին։

ԳԼՈՒԽ Ի· 29։

Ընդ սեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ յելանելն նոցա Յերիքովէ՝ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք։

Եւ ահա կոյրք երկու նստեալ առ ճանապարհաւն. իբրեւ լսեան թէ Յիսուս անցանէ, աղաղակեցին և ասեն. Ողորմեաց մեզ, Յիսո՛ւս որդի Դաւթի։

Եւ ամբոխն սաստէաց նոցա՝ զի լռեսցեն. և նորա եւս առաւել ագաղակէին և ասէին. Տէր, ողորմեա՛ մեզ, որդի Դաւթի։

Չտեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա եւ ասէ. Զինչ կամիք զի արարից ձեզ։

Ասեն ցնա. Տէր, զի բացցին աչք մեր։

Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա. և վաղվաղակի տեսին, և գնացին զհետ նորա։

Իբրեւ մօտ եղեն Երուսաղէմ, եւ եկին ի Բեթփագէ՝ մերձ ի լեառն Ձիթենեաց, յայնժամ Յիսուս արձակեաց երիւս յաշակերտացն իւրոց, եւ ասէ ցնոսա. Երթայք ի գեօղդ՝ որ առաջի ձեր է, եւ անդէն գտանէք էշ կապեալ և յաւանակ ընդ նմին, լուծէք և ածէք ինձ։

Եւ եթէ որ ասիցէ ինչ ձեզ, ասասջիք՝ եթէ Տեառն իւրեանց պիտոյ են. եւ վաղվաղակի առաքեսցէ զնոսա։

Բայց այս ամենայն եղեւ՝ զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ. Ասացէք դստեր Սիովնի. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ եւ հեծեալ էշէ եւ ի յաւանակի իշոյ։

Գնացին աշակերտքն, և արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս. և ածին զէշն և զյաւանակն. և արկին զնոքօք ձորձս, և նստաւ ի վերայ նոցա։

Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց ի ճանապարհին, եւ այլք հատանէին ոստս ի ծառոց և տարածանէին ի ճանապարհին։

Եւ ժողովուրդքն որք առաջի և զկնի երթային՝ աղաղակէին և ասէին. Օրհնութիւն՝ որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն. օրհնութիւն ի բարձունս։

Եւ ի մտանելն նորա Երուսաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն. և ասէ. Ո՞վ իցէ սա։

Եւ ժողովուրդքն ասեն. Սա է մարգարէն Յիսուս՝ որ ի Նազարեթէ գալիլեացւոց։

Եւ եմուտ Յիսուս ի տաճարն, և եհան արտաքս զամենեսին որ վաճառէին եւ գնէին ի տաճարի անդ. եւ զսեղանս հատավաճառացն կործանեաց եւ զաթոռս աղաւնեվաճառացն։

Եւ ասէ ցնոսա. Գրեալ է՝ տուն իմ տուն աղօթից կոչեսցի, և դուք արարէք զդա պարս աւազակաց։

Եւ մատեան առ նա կոյրք և կաղք ի տաճարին, և բժշկեաց զնոսա։

Իբրեւ տեսին քահանայապետքն եւ դպիրք զբանչելիսն՝ զարս արար, եւ զմնկտին՝ որք աղաղակէին ի տաճարին եւ ասէին՝ Ովսաննա, օրհնութիւն որդւոյ Դաւթի. բարկացան եւ ասեն ցնա. Լսե՞ս զինչ ասեն դոքա։

Ասէ ցնոսա Յիսուս. Այո՛. չէ ձե՞ ընթերցեալ ձեր՝ թէ ի բերանոյ տղայոց եւ ծնդիեայց կատարեցեր զօրհնութիւն։

Եւ թողեալ զնոսա՝ ել արտաքոյ քաղաքին ի Բեթանիա, եւ անդ ագաւ։

---

Եօթնեբորդամ Ուրբաթի երկուշաբթի աւուրն։

ԳԼՈՒԽ ԻԱ. 18.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ այգուցն իբրեւ դարձաւ անդրէն ի քաղաքն՝ քաղցեաւ. եւ տեսեալ թզենի մի ի վերայ ճանապարհին՝ եկն ի նա, եւ ոչինչ եգիտ ի նմա՝ բայց միայն տերեւս։

Եւ ասէ ցնա. Մի այսուհետեւ ի քէն պտուղ եղիցի ի յաւիտեան։

Եւ ա՛ւ ժամայն չորացաւ թզենին։

Իբրեւ տեսին աշակերտքն՝ զարմացան եւ ասեն, թէ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս՝ եւ ոչ երկմտիցէք, ոչ միայն թզենւոյդ առնիցէք, այլ թէպետ եւ լերինդ ասիցէք՝ բարձիր եւ անկիր ի ծով, եղիցի։

Եւ զամենայն զինչ՝ զոր եւ խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք։

Եւ իբրեւ եկին ի տաճարն, մատեան առ նա՝ մինչդեռ ուսուցանէր՝ քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն՝ եւ ասեն. Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Հարցից և ես ընձեզբան մի. զոր եթէ ասիցէք ինձ, եւ ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։

Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր, յերկնից՝ թէ ի մարդկանէ։

Եւ նոքա խորհէին ընդ միմս և ասէին. եթէ ասեմք՝ յերկնից, ասէ ցմեզ. իսկ ընդդէմ ոչ հաւատայէք նմա. և եթէ ասեմք ի մարդկանէ՝ երկնչիմք

'ի ժողովրդենէն . զի ամենեքին վճռհանենէս իբրեւ զմարգարէ ուներին։
Պատասխանի Եսուն Յիսուսի և ասեն . Ոչ գիտեմք։
Ասէ ցնոսա և Նա . Եւ ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։
Բայց զիարդ թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք . և մատուցեալ առ առաջինն՝ ասէ . Երթ այսօր գործեա յայգւոջ։
Նա պատասխանի ետ և ասէ . Երթամ Տէր, և ոչ չորաւ։
Մատեաւ և առ միւսն, և ասէ նոյնպէս . Նա պատասխանի ետ եւ ասէ , ոչ կամիմ. բայց յետոյ զղջացաւ՝ եւ չորաւ յայգին։
Արդ՝ ո՞յերկոցունց արար զկամն հօրն . Ասեն՝ Յետինն։
Ասէ ցնոսա Յիսուս . Ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք եւ պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յԱթոռսութիւն երկնից։
Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան , և ոչ հաւատացիք նմա . և մաքսաւորք եւ պոռնիկք հաւատացին նմա , և դուք տեսիք՝ և ոչ զղջացայք յետոյ հաւատալ նմա։

---

Եմմաուսդում Աբրահամի երեքշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԻԱ. 33։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Այլ առակ լուարուք . Այր մի էր տանուտէր , որ տնկեաց այգի , և ցանգով պատեաց զնա , և փորեաց 'ի նմա հնձան , և շինեաց աշտարակ . և ետ զնա գմշակս , և գնաց 'ի տար աշխարհ։
Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ , առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա . և կալեալ մշակսն զծառայս նորա , զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։
Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, և արարին նոցա նոյնպէս։
Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր, և ասէ . Թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։
Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին , ասեն ընդ միմս . սա է ժառանգն . եկայք սպանցուք զսա , և կալցուք զժառանգութիւն նորա։
Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին , և սպանին։
Արդ յորժամ եկեսցէ տէր

այգեւոյն՝ զինչ արասցէ մշա-
կացն այնոցիկ։
Ասեն ցնա . Ջէարան՝ չարաւ
կորուսցէ , եւ զայգին տացէ
այլոց մշակաց, որք տացեն նմա
զպտուղս ի ժամու իւրեանց։
Ասէ ցնոսա Յիսուս. Չիցէ՞ երբ
բէք ընթերցեալ ձեր ի գիրս.
Զվէմն՝ զոր անարդեցին շինողք,
նա եղեւ գլուխ անկեան . ի
Տեառնէ եղեւ այս, և է սքան-
չելի յաչս մեր։
Վասն այսորիկ ասեմ ձեզ՝ զի
բարձցի ի ձենջ Աստուածոյ, և տացի ազգի՝ որ
առնիցէ զպտուղս նորա։
Եւ որ անկցի ի վերայ վիմիս
այսորիկ՝ փշրեսցի, և յոյր վերայ
անկցի՝ հոսեսցէ զնա։
Իբրեւ լուան քահանայապետ-
քըն՝ և գպիրք՝ և փարիսեցիք
զառակս զայս, գիտացին՝ Թէ
վասն նոցա ասաց։
Եւ խնդրէին զնա ունելւ բայց
երկեան ի ժողովրդոցն, քանզ
զի իբրեւ զմարգարէ ունէին
զնա։

Եսայեայ մարգարէի Նախադասի Զատիկ շաբաթի առաւօտ։

ԳԼՈՒԽ ԻԲ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Պարձեալ պատահանի ետ
Յիսուս, և ասէ ցնոսա ա
ռակօք. Նմանեցաւ Արքայու-
թիւն երկնից առն թագաւո-
րի, որ արար հարսանիս որդւոյ
իւրում։
Եւ առաքեաց զծառայս իւր
կոչել զհրաւիրեալսն ի հար-
սանիս. և ոչ կամեցան գալ։
Դարձեալ առաքեաց այլ ծա
ռայս և ասէ. ասացէք հրաւի-
րելոցն, ահաւասիկ զճաշ իմ
պատրաստեցի. զուարակք իմ
եւ պարարակք զենեալք են,
և ամենայն ինչ պատրաստ է,
եկայք ի հարսանիս։
Եւ նոքա յուշացեալ գնացին՝
ումն յագարակ իւր, և ումն ի
վաճառ իւր, եւ այլք կալան
զծառայս նորա , թշնամանե-
ցին և սպանին։
Իսկ թագաւորն իբրեւ լուաւ՝
բարկացաւ , և առաքեաց զը-
զօրս իւր՝ և սատակեաց զսպա-
նողսն զայնոսիկ, եւ զքաղաքս
նոցա այրեաց։
Յայնժամ ասէ ցծառայս իւր.
Հարսանիքս պատրաստ են, և
հրաւիրեալքն չէին արժանի։

Արդ՝ երթայք յանցս ճանապարհաց, եւ զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիս։

Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս, ժողովեցին զամենեսեան զորս եւ գտին՝ զչարս եւ զբարիս, եւ լցան հարսանիքն բազմականօք։

Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականաւքն, ետես անդ այր մի՝ որոյ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց. և ասէ ցնա. ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց. և նա պապանձեցաւ։ Յայնժամ ասէ ցսպասաւորսն. կապեցէք զդորա զոտս և զձեռս, և հանէք զդա ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճտել ատամանց։ Զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք։

---

Եօթներորդում Կիրակի Հինգշաբթի առաւն։

ԳԼՈՒԽ ԻԲ. 15։

Վասն Ցառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յայնժամ գնացեալ փարիսեցիքն՝ առին խորհուրդ ընդնմանէ, թէ արտասէս դնիցեն նմա որոգայթ բանիւք։

Եւ առաքեն առ նա զաշակերտան իւրեանց Հերովդիանոսօքն հանդերձ՝ եւ ասեն՝ վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, եւ զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես, և ոչ է քեզ փոյթ զուշիւք, և ոչ հայիս յերեսս մարդոյ. արդ՝ ասա մեզ զիա՞րդ թուի քեզ, պա՞րտ է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ։

Գիտաց Յիսուս զխորամանկութիւնն նոցա, և ասէ. Ձի՞ փորձէք զիս, կեղծաւորք. ցուցէք ինձ զդահեկան հարկին։ Եւ նոքա մատուցին նմա դահեկան մի, և ասէ ցնոսա. Ո՞ր է պատկերս այս կամ գիր. ասեն՝ կայսեր։

Յայնժամ ասէ ցնոսա. Երթայք՝ տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ։ Իբրեւ լուան՝ զարմացան, և թողին զնա և գնացին։

Յայնմ աւուր մատեան առ նա սադուկեցիքն, որք ասէին՝ թէ չիք յարութիւն, հարցին ցնա, և ասեն. Վարդապետ, Մովսէս ասաց. եթէ ոք մեռցի անորդի, արասցէ զկին նորա եղբայր իւր, և յարուսցէ զսերմունկ եղբօր իւրոյ։

Էին առ մեզ եղբարք եօթն.

առաջինն արար կին՝ և մեռաւ. և զի ոչ ունէր զաւակ, եղբօր կինն իւր՝ եղբօր իւրում: Նոյնպէս և երկրորդն, և երրորդն, մինչեւ ցեօթնեորդն. յետ ամենեցուն մեռաւ եւ կինն:

Արդ՝ ի յարուԹեան ո՞ր յեօԹեանցն եղիցի նա կին, զի ամենեքին կալան զնա կին:

Պատասխանի ետ Նոցա Յիսուս և ասէ. Մոլորեալք, ոչ գիտէք զգիրս՝ եւ ոչ զզօրուԹիւն Աստուծոյ. զի ի յարուԹեանն՝ ոչ կանայս առնեն՝ և ոչ արանց լինին, այլ են իբրեւ զՀրեշտակս յերկինս:

Բայց վասն յարուԹեան մեռելոց՝ չիցէ՞ ընԹերցեալ ձեր զասացեալն ձեզ յԱստուծոյ. Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, և Աստուած Յակովբայ. եւ չէ Աստուած՝ Աստուած մեռելոց, այլ կենդանեաց:

Իբրեւ լուան ժողովուրդքն, զարմանային ընդ վարդապետուԹիւն նորա:

Իսկ փարիսեցիքն իբրև լուան՝ եԹէ պապանձեցոյց զԱդուկեցիսն, ժողովեցան ի միասին. Եւ եհարց մի ոմն ի նոցանէ զնա՝ փորձելով, և ասէ. Վարդապետ, ո՛ր պատուիրանէ մեծ յօրէնս:

Եւ Յիսուս ասէ ցնա. Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց. այս է մեծն և առաջին պատուիրան. և երկրորդն նման սմին, սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո: Այս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան:

Եւ ի ժողովել փարիսեցւոցն՝ եհարց ցնոսա Յիսուս և ասէ. Զի՞րդ Թուի ձեզ վասն Քրիստոսի. ո՞ր որդի է:

Ասեն ցնա՝ ԴաւԹի:

Ասէ ցնոսա Յիսուս. Իսկ զի՞րդ ԴաւիԹ հոգւովն կոչէ զնա Տէր՝ և ասէ. Ասաց Տէր՝ ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց. իսկ եԹէ ԴաւիԹ զնա Տէր կոչէ, զի՞րդ որդի նորա իցէ: Եւ ոչ ոք կարէր տալ նմա պատասխանի բան մի, եւ ոչ իշխեր որ յայնմ օրէ հարցանել զնա և ոչ ինչ:

Եօթնեւրորդում Ակաքիի Ուրբաթի առաքեալ։

ԳԼՈՒԽ ԻԳ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովուրդան եւ ընդ աշակերտան իւր, և ասէ. Յաթթոռն Մովսիսի նստան դպիրքն և փարիսեցիք. զամենայն ինչ՝ զոր ասիցեն ձեզ՝ արարէք եւ պահեցէք, բայց ըստ գործոցն նոցա մի՛ առնէք, զի ասեն և ոչ առնեն։

Կապեն բեռինս ծանուցնս և դժուարակիրս, և դնեն ՚ի վերայ ուսոց մարդկան, եւ մատամբ իւրեանց ոչ կամին շարժել զնոսա։

Եւ զամենայն գործս իւրեանց առնեն ՚ի ցոյց մարդկան. լայնեն զպարսանակս իւրեանց, եւ երկայնեն զբղանցս հանդերձից իւրեանց. սիրեն զառաջադահս յընթրիս և զնախաթոռս ՚ի ժողովուրդս եւ զողջոյնս ՚ի հրապարակս, եւ կոչիլ ՚ի մարդկանէ՝ Ռաբբի Ռաբբի։

Բայց դուք մի՛ զոր կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ, եւ ամենեքին դուք եղբարք էք։

Եւ հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է Հայր՝ որ յերկինս է։

Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Քրիստոս է։

Իսկ մեծն ՚ի ձէնջ՝ եղիցի ձեր սպասաւոր։

Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։

Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան, դուք ոչ մտանէք, և որոց մտանելն՝ չթողուք մտանել։

Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի ուտէք զտունս այրեաց՝ պատճառանօք երկարէք զաղօթս՝ վասն զի աւելի դատաստան ընդունիցիք։

Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի յածէք ընդ ծով և ընդ ցամաք՝ առնել եկամուտ մի, և յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհենի կրկին եւս քան զձեզ։

Վա՛յ ձեզ, առաջնորդք կոյրք, զի ասէք՝ որ երդնու ՚ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոսկին որ ՚ի տաճարին է՝ արժան է։

Մորմոք և կոյրք, զինչ մեծ է, ոսկին՝ եթէ տաճարն՝ որ սրբէ զոսկին։

Եւ որ երդնու ՚ի սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու ՚ի պատարագն որ ՚ի վերայ նորա է՝ արժան է։

Յիմարք և կոյրք, զինչ մեծ է, պատարագն՝ եթէ սեղանն՝ որ սրբէ զպատարագն։

Ոսկ արդ՝ որ երդուաւ ՚ի սեղանն, երդնու ՚ի նա՝ և յամենայն որ ՚ի վերայ նորա է. և որ երդուաւ ՚ի տաճարն, երդնու ՚ի նա՝ և բնակիչն նորա. և որ երդուաւ յերկինս, երդնու յաթոռն Աստուծոյ՝ և յայն որ նստին ՚ի վերայ նորա։

Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի տասանորդէք զանանուխ և զսամիթ եւ զանան, եւ թողէք զծանր ծանր օրինացն՝ զդատաստան և զողորմութիւն և զհաւատս. զայս արժան էր առնել՝ եւ զայն չթողուլ։

Ա՛ռաջնորդք կոյրք, որք զմժղուկս քամէք եւ զուղտս կլանէք։

Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի սրբէք զարտաքին զբաժակին և զսկաւառակին, և ՚ի ներքոյ լի են յափշտակութեամբ եւ անխտանութեամբ։

Փարիսեցի կոյր, սրբեա՛ նախ զներքին բաժակին և զսկաւառակին, զի լինիցի և արտաքինն նոցա՝ սուրբ։

Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի նման էք գերեզմանաց բեղուց, որք արտաքոյ երեւին գեղեցիկք և ՚ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և ամենայն պղծութեամբ։

Նոյնպէս եւ դուք արտաքոյ երեւիք մարդկան արդարք, և ՚ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ։

Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի շինէք զշիրիմս մարգարէից, և զարդարէք զգերեզմանս արդարոց. և ասէք, եթէ էաք յաւուրս հարցն մերոց՝ ոչ հաղորդէաք արեան մարգարէից. ապա ուրեմն վկայէք զանձանց՝ եթէ որդիք էք սպանօղիկ՝ որք կոտորէին զմարգարէսն. եւ դուք լցէք չափ հարցն ձերոց։

Օ՛ձք՝ ծնունդք իժից, զիա՞րդ փախուցուք ՚ի դատաստանէ գեհենին։

Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս և իմաստունս և դպիրս, և ՚ի

Նոցանէ սպանանիցէք և՛ի խաչ հանիցէք, և՛ի նոցանէ տանջիցէք՛ի ժողովուրդս ձեր, և հալածիցէք՛ի քաղաքէ՛ի քաղաք։

Որպէս զի եկեսցէ՛ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ երկրի, յարենէն Աբելի արդարոյ մինչև յարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ՝ զոր սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյ. ամէն ասեմ ձեզ, եկեսցէ այն ամենայն՛ի վերայ ազգիս այսորիկ։

Երուսաղէմ Երուսաղէմ, որ կոտորես զմարգարէս և քարկոծ առնես զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո՝ զոր օրինակ ժողովէ հաւ ըզձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք։

Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ։

Բայց ասեմ ձեզ, թէ ոչ եւս տեսանիցէք զիս յայսմ հետէ, մինչեւ ասիցէք՝ օրհնեալ եկեալ յանուն Տեառն։

---

Եօթնեերորդում կիրակի Եաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԻԴ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ելեալ արտաքս Յիսուս՛ի տաճարէն՝ գնայր. և մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս տաճարին։

Եւ նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Տեսանէք զայդ ամենայն. ամէն ասեմ ձեզ, ոչ մնասցէ այդր քար՛ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի։

Եւ մինչդեռ նստէր՛ի լերինն Ձիթենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն և ասեն. Ասա մեզ՝ երբ լինիցի այդ, և կամ զինչ նշան իցէ քոյոց գալստեանն եւ վախճանի աշխարհիս։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Զգոյշ լերուք՝ գուցէ որ զձեզ խաբիցէ. զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ Քրիստոս, եւ զբազումս մոլորեցուցանիցեն։

Լսելոց էք պատերազմունս՝ և զխռովեալս պատերազմաց. ըզգոյշ լերուք՝ մի խռովեսջիք, զի պարտ է լինիլ այնմ ամենայնի, այլ չեւ է կատարած։

Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան. եւ եղիցին սովք և սրածութիւնք և սաստանութիւնք ի տեղիս տեղիս, սակայն և այն ամենայն՝ սկիզբն է երկանց։

Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւն, և սպանանիցեն զձեզ. եւ եղիջիք ատելեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ։

Եւ յայնժամ գայթակղեսցին բազումք, և զմիմեանս մատնեսցեն, և ատելիս զմիմեանս։ եւ բազումք սուտ մարգարէք յարիցեն, և զբազումս մոլորեցուսցեն։

Եւ վասն բազմանալոյ անօրէնութեանն՝ յամաքեսցի սէր բազմաց. բայց որ համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ։

Եւ քարոզեսցի Աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս՝ ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, և ապա եկեսցէ կատարած։

Արդ՝ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածին, որ ասացեալն է ի Դանիէլի մարգարէէ, զի կայցէ ի տեղւոջն սրբութեան, որ ընթեռնուն՝ ի միտ առցէ։

Յայնժամ որք ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս. և որ ի տանիս կայցէ, մի իջցէ առնուլ ինչ ի տանէ իւրմէ. և որ յանդի իցէ, մի դարձցի յետս առնուլ զձորձս իւր։

Բայց վայ իցէ յղեաց և ստընտուաց յաւուրսն յայնոսիկ։ Յաղօթս կացէք՝ զի մի լիցի փախուստն ձեր ձմերանի, և մի ի շաբաթու։

Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղեւ ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչեւ ցայժմ, և ոչ այլ լիցի։

Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամենայն մարմին. բայց վասն ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ։

Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ՝ ահաւասիկ աստ է Քրիստոս կամ անդ, մի հաւատայցէք։

Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տացեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչ մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ՝ և զընտրեալսն. ահա յառաջագոյն ասացի ձեզ։

Ապա եթէ ասիցեն ձեզ, ահաւանիկ յանապատի է, մի ելանիցէք. եւ թէ ահա ի շտեմարանս է, մի հաւատայցէք։

ԳԼՈՒԽ ԻԴ. 27.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զի որպէս փայլակն որ ելանէ յարեւելից՝ և երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։ Զի ուր գիշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք։ Ապաստակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տայ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկինից, և զօրութիւնք երկնից շարժեսցին։ Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի, և տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նոցա։

Ի թզենւոյ առեր ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։

Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն։ Բայց վասն աւուրն այնորիկ և ժամուն՝ ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից՝ և ոչ Որդի, բայց միայն Հայր։ Այլ որպէս աւուրքն Նոյի, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։ Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին և ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, մինչեւ յօրն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն. և ոչ գիտացին՝ մինչեւ եկն ջրհեղեղն և եբարձ զամենեսին, այնպէս եղիցի և գալուստն Որդւոյ մարդոյ։ Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առցի և միւսն թողցի. և եթէ երկու աղացցեն ի միում երկանս, մին առցի և միւսն թողցի։

Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ։ Զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէր՝ յորում պահու

գողգայ, հակէր՝ և ոչ տայր ա-
կան հատանել զտանն իւրոյ։
Ա՛ման այսորիկ և դուք եղե-
ր՛ք պատրաստք, զի յորում
ժամու ոչ ակն ունիցիք՝ գայ
Որդի մարդոյ։

Իսկ ա՛ւ իցէ հաւատարիմ ծա-
ռայ և իմաստուն, զոր կացոյց
տէր իւր ՚ի վերայ ծառայից
իւրոց՝ տալ նոցա կերակուր ՚ի
ժամու։

Երանի է ծառային այնմիկ՝ զոր
եկեալ տէրն գտանիցէ արա-
րեալ այնպէս. ամէն ասեմ
ձեզ, զի ՚ի վերայ ամենայն ըն-
չից իւրոց կացուսցէ զնա։

Ապա թէ ասիցէ ծառայն չար
՚ի սրտի իւրում. տէր իմ յամե-
զգալ, և սկսանիցի հարկանել
զծառայակիցս իւր, ուտիցէ
և ըմպիցէ ընդ արբեցողս, գայ-
ցէ տէր ծառային այնորիկ՝
յաւուր յորում ոչ ակն ու-
նիցի, և ՚ի ժամու յորում ոչ
գիտիցէ, և կտրեսցէ զնա ընդ
մէջ, և զբաժին նորա ընդ կեղ-
ծաւորս դիցէ. անդ եղիցի լալ
և կրճտել ատամանց։

---

ԳԼՈՒԽ ԻԵ. 1.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Յայնժամ նմանեսցի Արքա-
յութիւն երկնից տասն
կուսանաց, որոց առեալ ըզ-
լապտերս իւրեանց՝ ելին ընդ
առաջ փեսային և հարսին.
հինգն ՚ի նոցանէ յիմարք էին,
և հինգն իմաստունք։

Յիմարքն առին զլապտերան,
և ձէթ ընդ իւրեանս ոչ
բարձին։

Իսկ իմաստունքն առին ձէթ
ամանովք ընդ լապտերս իւ-
րեանց։

Եւ ՚ի յամել փեսային, ներ հե-
ծին ամենեքեան և ՚ի քուն մտին։

Եւ ՚ի մէջ գիշերին եղեւ բար-
բառ. Ահա փեսայ գայ՝ արի՛ք
ընդ առաջ նորա։

Յայնժամ յարեան ամենայն
կուսանքն, և կազմեցին զլապ-
տերս իւրեանց։

Ասեն յիմարքն ցիմաստունսն.
տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի
ահա չիջանին լապտերքս մեր։

Պատասխանի ետուն իմաս-
տունքն և ասեն. գուցէ ոչ
իցէ մեզ եւ ձեզ բաւական,
այլ երթա՛յք ՚ի վաճառականս
և գնեցո՛ջիք ձեզ։

Իբրեւ գնացին նոքա գնել՝ եկն վիճսային, և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, և փակեցաւ դուռնն։

Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն. Տէր, Տէր՝ բաց մեզ։ Նա պատասխանի ետ և ասէ. Ամէն ասեմ ձեզ, Թէ ոչ գիտեմ զձեզ։

Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամ։

Որպէս այր մի գնացեալ՝ ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր՝ և ետ նոցա զինչս իւր։

Ումեմն ետ հինգ քանքար, և ումեմն երկուս, ումեմն մի. իւրաքանչիւր ըստ իւրում կարի, և գնաց։

Ոգաւ վաղվաղակի որ առ հինգն, գործեաց նոքօք, եւ շահեցաւ այլ եւս հինգ։

Նոյնպէս և որ երկուսն՝ շահեցաւ այլ եւս երկուս։

Իսկ որ զմին էառ, գնաց փորեաց զերկիր և թագոյց զարծաթ տեառն իւրոյ։

Յետ բազում ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ, եւ առնէ համարս ի մէջ նոցա։

Եւ մատուցեալ՝ որ զհինգ քանքարն էառ, մատոյց այլ եւս հինգ քանքար՝ եւ ասէ. Տէր, հինգ քանքար ետուր ինձ, արդ աւասիկ հինգ այլ եւս քանքար ի վերայ շահեցայ։

Ասէ ցնա տէրն իւր. Ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմայ կացուցից զքեզ. մտիր յուրախութիւն տեառն քո։

Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն առեալէր, և ասէ. Տէր, երկուս քանքարս ետուր ինձ, ահաւասիկ երկուս եւս այլ քանքարս՝ զորս ի վերայ շահեցայ։

Ասէ ցնա տէրն իւր. Ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմայ կացուցից զքեզ. մտիր յուրախութիւն տեառն քո։

Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալէր, և ասէ. Տէր, գիտէի՝ զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, և ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր, երկեայ՝ գնացի եւ թագուցի զքանքարն քո ի գերկրի. արդ աւասիկ քոյդ ցքեզ։

Պատասխանի ետ տէրն և ասէ ցնա. Ծառայ չար և վատ, գիտէիր՝ եթէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, եւ ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի. պարտ էր

քեզ արկանել զարձանիդ իմ ՚ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջել զիմն։

Արդ առէք ՚ի դմանէ զբանքարդ, և տուք այնմ՝ որ ունիցի զտասն քանքարն։

Զի ամենայնի՝ որ ունիցի՝ տացի և յաւելցի, և որ ոչն ունիցի՝ եւ զոր ունիցին՝ բարձցի ՚ի նմանէ։

Եւ զծառայդ անպիտան հանէք ՚ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճտելատամանց։

Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրով՝ և ամենայն Հրեշտակք ընդ նմա. յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց. և ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք. և մեկնեսցէ զնոսա ՚ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնեսցէ զոզիս յայծեաց. և կայցուսցէ զոզիսն ընդ աջմէ իւրմէ, եւ զայծեան ՚ի ձախմէ իւրմէ։

Յայնժամ ասասցէ Թագաւորն ցայնոսիկ՝ որք ընդ աջմէն իցեն. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զԱրքայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի։

Զի քաղցեայ՝ եւ ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ և արբուցիք ինձ. օտար էի՝ և ժողովեցիք զիս. մերկ և զգեցուցիք զիս. հիւանդ էի՝ և ՚ի բանտի՝ և ոչ տեսիք զիս։

Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն եւ ասասցեն. Տէր, երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ եւ կերակրեցաք, կամ ծարաւի՝ եւ արբուցաք. երբ տեսաք զքեզ օտար՝ եւ ժողովեցաք, կամ մերկ՝ և զգեցուցաք. երբ տեսաք զքեզ հիւանդ կամ ՚ի բանտի, եւ եկաք առ քեզ։

Պատասխանի տացէ Թագաւորն և ասասցէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, որովհետեւ արարիք միում յիմոցս այսոցիկ փոքրկանց, ինձ արարիք։

Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ որ ընդ ահեկէն իցեն. Երթայք յինէն, անիծեալք, ՚ի հուրն յաւիտենական՝ որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա։

Զի քաղցեայ՝ և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ և ոչ արբուցիք զիս. օտար էի՝ եւ ոչ ժողովիցիք զիս. մերկ էի՝ եւ ոչ զգեցուցիք զիս. հիւանդ էի՝ և ՚ի բանտի՝ և ոչ տեսիք զիս։

Յայնժամ պատասխանի տացեն և նորա և ասասցեն. Տէր, երբ տեսաք զքեզ քաղցեալ

կամ ծարաւի, կամ օտար կամ մերկ, կամ հիւանդ կամ ի բանտի, եւ ոչ պաշտեցաք զքեզ։

Յայնժամ պատասխանի տացէ նոցա եւ ասասցէ. Ամէն ասեմ ձեզ. որովհետեւ ոչ արարէք միում ի փոքրկանցս յայսցանէ, եւ ոչ ինձ արարէք։

Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս, եւ արդարքն ի կեանսն յաւիտենական։

Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, ասէ ցաշակերտսն իւր. Գիտէք, զի յետ երկուց աւուրց զատիկ լինի, եւ Որդի մարդոյ մատնի ի խաչ ելանել։

---

ԳԼՈՒԽ ԻԶ. 3։

Վասն ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յայնժամ ժողովեցան քահանայապետքն եւ գպիրք եւ ծերք ժողովրդեանն ի սրահ քահանայապետին՝ որում ասէին Կայիափա. եւ արարին խորհուրդ՝ զի նենգութեամբ կալցին զՅիսուս եւ սպանցեն։ Բայց ասէին, Թէ մի՛ ի տօնի ասա՝ զի մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն։

Իբրեւ եկն Յիսուս ի Բեթանիա ի տունն Սիմոնի բորոտի, մատեաւ առ նա կին մի, որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, եւ թափեաց ի գլուխ նորա ի բազմականին։

Իբրեւ տեսին աշակերտքն՝ բարկացան, եւ ասէն. Ընդէր է կորուստդ այդ իւղոյդ. զի մարթէր էր վաճառել զդա մեծագնի՝ եւ տալ աղքատաց։

Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա. Ձի՞ աչխատ առնէք զկնդ. գործ մի բարի գործեաց գա ինձ. յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զիս ոչ համառօտ ընդ ձեզ ունիք։

Այսկանէլ դորա զիւղդ ի մարմին իմ, առ ի թաղելոյ զիս նշանակեաց։

Բայց ամէն ասեմ ձեզ, զի ուր քարոզեսցի Աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, խօսեսցի եւ զոր արար դա՝ ի յիշատակի դորա։

Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն անուանեալ Յուդաս իսկարիովտացի առ քահանայապետսն, եւ ասէ. Ձի՞նչ կամիք տալ ինձ, և ես մատնեցից զնա ձեզ։

Եւ նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի. և յայնմ հե-

տէ խնդրեր պարապ՝ զի մատ-
նեսցէ զնա նոցա։

---

ԳԼՈՒԽ ԻԶ։ 17։

Վասն ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի։

Եւ յառաջնում աւուր բա-
զարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս և ա-
սեն. Ո՞ր կամիս՝ զի պատրաս-
տեսցուք քեզ ուտել զզա-
տիկն։

Եւ Նա ասէ ցնոսա. Երթայք
ի քաղաքն առ այս անուն, և
ասացէք ցնա. Վարդապետն
ասէ, ժամանակ իմ մերձեալ է.
առ քեզ առնեմ զզատիկս ա-
շակերտօքս հանդերձ։

Եւ արարին աշակերտքն՝ որ-
պէս հրամայեաց նոցա Յիսուս,
և պատրաստեցին զզատիկն։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, կայր
բազմեալ ընդ երկոտասան ա-
շակերտան։

Եւ մինչդեռ ուտէին նոքա,
ասէ. Ամէն ասեմ ձեզ, զի մի
ոմն ի ձէնջ մատնելոց է զիս։

Եւ արամեցան յոյժ. սկսան
ասել ցնա իւրաքանչիւր ոք ի
նոցանէ. Միթէ ես իցեմ, Տէր։
Նա պատասխանի ետ և ասէ.
Որ միեաց զձեռն իւր ընդ ի
ի սկաւառակ՝ նա մատնելոց
է զիս։

Որդի մարդոյ երթայ՝ որպէս
և գրեալ է վասն նորա. բայց
վայ մարդոյն այնմիկ՝ որով ձեռն
Որդին մարդոյ մատնեսցի. լաւ
էր նմա՝ թէ չէր ծնեալ մար-
դն այն։

Պատասխանի ետ Յուդաս՝ որ
մատնելոյն էր զնա, և ասէ.
Միթէ ես իցեմ, Վարդապետ։
Ասէ ցնա. Դու ասացեր։

Եւ մինչդեռ ուտէին նոքա,
էառ Յիսուս հաց՝ օրհնեաց և
եբեկ, և ետ աշակերտացն՝ և
ասէ. Առէք կերայք, այս է
մարմին իմ։

Եւ առեալ բաժակ գոհացաւ՝
ետ նոցա և ասէ. Արբէք ի
դմանէ ամենեքին. զի այդ է
արիւն իմ նորոյ ուխտի, որ
ի վերայ բազմաց հեղանի ի
թողութիւն մեղաց։

Բայց ասեմ ձեզ, ոչ եւս ար-
բից յայսմհետէ ի բերոյ որթի
մինչև յօրն յայն՝ յորժամ ար-
բից զդա ընդ ձեզ նոր յար-
քայութեան Հօր իմոյ։

Եւ օրհնեցին, և ելին ի լեառն
Ձիթենեաց։

---

ԳԼՈՒԽ ԻԶ. 31։

Վ. ՅԱՆ ՄԱՍՆԱԼԵԱՆ ՑՆՈՒՄԱՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։

Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Ամենեքին գուք գայթակղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է՝ Եթէ հարից զհովիւն՝ եւ ցրուեսցին ոչխարք հօտին։

Եւ յետ յառնելոյն իմոյ յառաջեցից զձեզ ի Գալիլեա։ Պատասխանի ետ Պետրոս՝ եւ ասէ ցնա. Թէպէտ եւ ամենեքեան գայթակղեսցին ի քէն, սակայն ես ոչ գայթակղեցայց։ Ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ քեզ, զի յայսմ գիշերի մինչեւ հաւ ու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս։

Ասէ ցնա Պետրոս. Թէ եւ մեռանիլ հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրասցայց։ Նոյնպէս եւ ամենայն աշակերտքն ասէին։

Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի գիւղ մի՝ որում անուն էր Գեթսեմանի, եւ ասէ ցնոսա. Նստարո՛ւք այդր՝ մինչեւ երթայց կոյիս յաղօթս։

Եւ առեալ ընդ իւր զՊետրոս եւ զերկուս որդիսն Զեբեդեայ, սկսաւ տրտմիլ եւ հոգալ։

Յայնժամ ասէ ցնոսա, Տրտում է ոգի իմ մինչեւ ի մահ. կացէք աստ՝ եւ սակեցէք ընդ իս։

Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի, անկաւ ի վերայ երեսաց իւրոց, եկաց յաղօթս՝ եւ ասէ. Հայր իմ, եթէ հնարէ՝ անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս Դու։

Գայ առ աշակերտսն, եւ գտանէ զնոսա ի քուն, եւ ասէ ցՊետրոս. Այդպէս ոչ կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս. արթուն կացէք եւ աղօթս արարէք՝ զի մի՛ անկանիցէք ի փորձութիւն. հոգիս յօժար է, բայց մարմինս տկար։

Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ եկաց յաղօթս Յիսուս՝ եւ ասէ. Հայր իմ, եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակիս այսմիկ, ապա թէ ոչ՝ արբից զսա, եղիցին կամք քո։

Եւ եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ի քուն, զի էին աչք իւրեանց ծանրացեալք։

Թող զնոսա եւ գնաց եկաց յաղօթս երրորդ անգամ, եւ դարձեալ զնոյն բան ասաց։

Յայնժամ գայ առ աշակերտսն եւ ասէ ցնոսա. Ննջեցէք այսու հետեւ եւ հանգերուք. զի

ահա հասեալ է ժամ, և Որդի մարդոյ մատնի՛ ի ձեռս մեղաւորաց։ Արիք երթիցուք ասմա, զի ահաւասիկ եհաս՝ որ մատնելոցն է զիս։

Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա Յուդա՝ մի յերկոտասանից նիցն եկն, և ընդ նմա ամբոխ բազում՝ սրովք և բրօք՝ ի քահանայապետիցն եւ ի ծերոց ժողովրդեանն։

Եւ որ մատնելոցն էր զնա՝ ետ նոցա նշան եւ ասէ. Ընդ որ‌ոմ ես համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք։

Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս՝ ասէ. Ողջ եր, վարդապետ. և համբուրեաց ընդ նմա։

Եւ Յիսուս ասէ ցնա. Ընկեր, վասն որոյ եկիր։

Յայնժամ մատուցեալ արկին ձեռս ի Յիսուս, և կալան զնա։

Եւ ահա մի ոմն յայնցանէ՝ որք էին ընդ Յիսուսի, ձգեաց զձեռն և եհան զսուր իւր՝ և եհար զծառայ քահանայապետին, և ի բաց եհան զունկն նորա։

Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Դարձո՛ զսուր քո ի տեղի իւր, զի ամենեքեան որք սուր առնուցուն՝ սրով անկանիցին։

Թէ համարիցիս՝ Թէ ոչ կարեմ ապաչել զՀայր իմ, և հասուցանիցէ ինձ այսր՝ աւելի քան զերկոտասան գունդս Հրեշտակաց։

Այլ զիա՞րդ լինուցուն գիրք՝ Թէ այսպէս պարտ է լինիլ։

Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն. Իբրեւ ի վերայ աւազակի՞ ելիք սուսերօք և բրօք՝ ունել զիս. Հանապազ առ ձեզ ի տաճարին նստէի և ուսուցանէի, և ոչ կալայք զիս։

Այլ այս ամենայն եղեւ՝ զի լցցին գիրք մարգարէիցն։

Յայնժամ աշակերտքն ամենեքին Թողին զնա և փախեան։

---

ԳԼՈՒԽ ԻԶ. 57։

Վասն չարչարանաց Յիսուսի Քրիստոսի։

Իսկ նոցա կալեալ զՅիսուս՝ տարին առ Կայիափա քահանայապետ՝ ուր գրիչքն եւ ծերք ժողովեալ էին։

Եւ Պետրոս զհետ նորա երթայր բացագոյն մինչեւ ի սրահ քահանայապետին. եւ մտեալ ի ներքս՝ նստէր ընդ սպասաւորսն տեսանել վախճառածն։

Իսկ քահանայապետն և ամե-
նայն ատեանն խնդրէին սուտ
վկայութիւն ՚ի Յիսուսէ , զի
սպանանիցեն զնա . և ոչ գտա-
նէին ՚ի բազմաց սուտ վկայիցն
մատուցելոց։
Յետոյ մատուցեալ երկու սուտ
վկայք՝ Ասէին , Թէ սա ասէր՝
կարող եմ քակել զտաճարն
Աստուծոյ , և զերիս աւուրս
շինել։
Եւ յարուցեալ քահանայա-
պետն ասէ ցնա . Զոմն ինչ
պատասխանի՞ զինչ դոքա ամ-
բաստանեն զքեզ։
Եւ Յիսուս լուռ կայր։
Պատասխանի ետ քահանայա-
պետն եւ ասէ ցնա . երդմնե-
ցուցանեմ զքեզ ՚ի Աստուած
կենդանի , զի ասասցես մեզ՝
Թէ դո՛ւ ես Քրիստոս Որդի
Աստուծոյ։
Ասէ ցնա Յիսուս . Դու ասա-
ցեր . բայց ասեմ ձեզ , յայսմ
հետէ տեսանիցէք զՈրդի մար-
դոյ նստեալ ընդ աջմէ զօրու-
թեանն՝ եւ եկեալ ընդ ամպս
երկնից։
Յայնժամ քահանայապետն
պատառեաց զհանդերձս իւր,
եւ ասէ . Հայհոյեաց . զի՞ եւս
պիտոյ են մեզ վկայք . ահա
արդ լուայք զհայհոյութիւնն
դորա . զինչ հաճոյ է ձեզ։
Նոքա պատասխանի ետուն
և ասեն . Մահապարտ է։
Յայնժամ թքին ընդ երեսս
նորա , եւ կռփեցին զնա . եւ
ոմանք ապտակեցին , և ասեն .
Մարգարեաց մեզ , Քրիստոս ,
ո՞վ է՝ որ եհարն զքեզ։
Իսկ Պետրոս նստեր արտաքոյ
՚ի գաւթին . մատեաւ առ նա
աղախին մի , և ասէ . Եւ դու ընդ
Յիսուսի Գալիլեացւոյ էիր։
Նա ուրացաւ առաջի ամենե-
ցուն , և ասէ , Թէ ոչ գիտեմ
զինչ խօսիդ։
Եւ իբրև եկն նա արտաքս քան
զդուռնն , ետես զնա այլ կին
մի՝ և ասէ ցայնոսիկ՝ որք անդն
կային . Եւ սա ընդ Յիսուսի Նա-
զովրեցւոյ էր։
Եւ դարձեալ ուրացաւ երդ-
մամբ , Թէ ոչ գիտեմ զայրն։
Եւ յետ սակաւ միոյ՝ մատու-
ցեալ որք կային անդ , ասեն
ցՊետրոս . Արդարեւ և դու ՚ի
նոցանէ ես , քանզի և խօսք քո
յայտ առնեն զքեզ։
Յայնժամ սկսաւ նզովել եւ
երդնուլ Թէ ոչ գիտեմ զայրն .
և իսկոյն հաւ խօսեցաւ։
Եւ յիշեաց Պետրոս զբանն Յի-
սուսի՝ զոր ասաց , Թէ մինչեւ
հաւուս խօսեալ իցէ՝ երիցս ու-

բասցիս զնա, և ելեալ արտաքս ելաց դառնապէս։

---

ԳԼՈՒԽ ԻԷ. 1։

Վասն չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իբրեւ այդ եղեւ, խորհուրդ արարին ամենայն քահանայապետքն և ծերք ժողովրդեանն վասն Յիսուսի՝ սպանանել զնա։

Կապեցին զնա, և առին գնացին. և ետուն ի ձեռս պոնտացւոյ Պիղատոսի դատաւորի։

Յայնժամ տեսեալ Յուդայի որ մատնեացն զնա՝ թէ պարտաւորեցաւ, զղջացաւ. և դարձոյց զարծաթն առ քահանայապետսն և ծերս ժողովրդեանն, և ասէ. Մեղայ՝ զի մատնեցի զարիւն արդար։

Եւ նոքա ասեն. Մեզ ընդէ փոյթ, դու գիտես։

Եւ ընկեց զարծաթն ի տաճարին՝ եւ գնաց, եւ չոքաւ խեղդեցաւ։

Իսկ քահանայապետքն առեալ զարծաթն՝ ասեն. Ոչ է արժան ընդունիլ զայդ ի կորբանն, քանզի գինք արեան են։

Խորհուրդ առեալ՝ գնեցին այնու զագարակն բրտի ի գերեզմանս օտարաց։

Վասն այնորիկ կոչեցաւ ագարակն այն, ագարակ արեան՝ մինչեւ ցայսօր։

Յայնժամ լցաւ՝ որ ասացաւն ի ձեռն Երեմիայի մարգարէի. Եւ առին զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն, զոր արկին յորս ուսոյն Իսրայէլի, և ետուն զնա ագարակն բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր։

Եւ Յիսուս եկաց առաջի դատաւորին. եհարց զնա դատաւորն և ասէ. Դու ես Թագաւորն Հրէից։

Եւ Յիսուս ասէ. Դու ասես։

Եւ ի չարախօսիլն նորա ի քահանայապետին և ի ծերոց, ոչինչ ետ պատասխանի։

Յայնժամ ասէ զնա Պիղատոս. Ոչ լսես՝ որչափ դոքա հակառակ քո վկայեն։

Եւ ոչ ետ նմա պատասխանի՝ և ոչ բան մի՝ մինչեւ զարմանալ դատաւորին յոյժ։

Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն արձակել ժողովրդեան կապեալ մի՝ զոր կամէին։

Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում անուն էր Յեսու Բարաբբա։

Իբրեւ ժողովեցան, ասէ ցնոսա Պիղատոս. Զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձակեցից ձեզ

զՅեսու Բարաբբա՞ եթէ զՅիսուս զանուանեալն Քրիստոս։
Քանզի գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին զնա։
Եւ մինչ նստեր յատենին, առաքեաց առ նա կինն իւր՝ և ասէ. Զկայ ինչ քո և արդարոյն այնորիկ. զի բազում անգ անցի ընդէս այսօր յանուրջս վասն նորա։
Իսկ քահանայապետքն և ծերք հաւանեցուցին զժողովուրդն, զի խնդրեսցեն զԲարաբբայն՝ և զՅիսուս կորուսցեն։
Պատասխանի ետ դատաւորն և ասէ ցնոսա. Զո՞ կամիք՝ զի արձակեցից ձեզ յերկուց ասի։
Եւ նոքա ասեն. ԶԲարաբբա.
Ասէ ցնոսա Պիղատոս. Իսկ զի արարից զՅիսուս զանուանեալն Քրիստոս։
Ամենեքեան. խաչեցի։
Եւ նա ասէ. Զի՞նչ չար արար։
Եւ նոքա առաւել եւս աղաղակեին և ասէին. Խաչեցի։
Եւ տեսեալ Պիղատոսի՝ թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդոյն և ասէ. Քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, դուք գիտասջիք։
Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն և ասէ. Արիւն դորա՝ ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց։
Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբբայն, և զՅիսուս գան հարեալ՝ ետ ի ձեռս՝ զի խաչեցի։
Յայնժամ զինուորք դատաւորին առին զՅիսուս յապարանս, եւ ժողովեցին ի վերայ նորա զամենայն զգունդն. մերկացուցին զնա. և արկին զնովաքղամիդ կարմիր. և բոլորեալ պակ ի փշոյ՝ եդին ի գլուխ նորա, և եղէգն յաջոյ ձեռին նորա. ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին եւ ասէին. Ո՛ղջ եր, Թագաւոր Հրէից։
Եւ թքեալ ի նա՝ առնուին զեղէգն և ծեծէին զգլուխ նորա։
Եւ յորժամ ձաղեցին զնա, մերկացուցին ի նմանէ զքղամիդն՝ եւ ագուցին նմա զհիւր հանդերձն, և տարան զնա ի խաչ հանել։
Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի Կիւրենացի՝ անուն Սիմոն, զնա կալան պահակ՝ զի բարձցէ զխաչն նորա։
Եւ եկեալ ի տեղին անուանեալ Գողգոթա, որ է տեղի կառափելոյ, ետուն նմա ըմպել գինի ընդ լեղի խառնեալ։

եւ իբրեւ ճաշակեաց, ոչ կամեր ըմպել։

Եւ հանեալ զնա ՚ի խաչ, բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ. զի լցցի բանն՝ որ ասացաւ ՚ի մարգարէէն. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, և ՚ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։

Եւ նստեալ պահէին զնա։

Եւ եդին ՚ի վերայ գլխոյ նորա՝ գրեալ զվնաս նորա, Թէ այս է Յիսուս Թագաւորն Հրէից։

Յայնժամ հանին ընդ նմա ՚ի խաչ երկուս աւազակս, մի յաջմէ նորա և մի յահեկէ։

Եւ որք անցանէին՝ հայհոյէին զնա. շարժէին զգլուխս իւրեանց, եւ ասէին. Վա՜հ, որ քակէիր զտաճարն, և զերիս աւուրս չինէիր զնա. ապրեցո՛ զքեզ, Թէ Որդի ես Աստուծոյ՝ էջ ՚ի խաչէդ։

Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն և ծերովք և ասէին. Զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել. եթէ Թագաւոր է Իսրայելի՝ իջցէ այժմ ՚ի խաչէդ՝ և հաւատասցուք դմա. եթէ յուսացաւ Աստուծոյ. փրկեացէ այժմ զդա՝ եթէ կամի զդա. քանզի ասաց՝ եթէ Աստուծոյ որդի եմ։

Զնոյն և աւազակքն՝ որք խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա։

Եւ ՚ի վեց ժամէ աւուրն խաւար եղեւ ՚ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցինն ժամ։

Եւ զինն ժամուն գոչեաց Յիսուս ՚ի ձայն մեծ, և ասէ. Էլի, Էլի, լամա սաբաքթանի. այսինքն է, Աստուածդ իմ, Աստուածդ իմ, ընդէր Թողեր զիս։

Ոմանք յայնցանէ որք անդն կային, իբրեւ լուան՝ ասէին, զԵղիա կարդայ։

Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն ՚ի նոցանէ, էառ սպունգ լի քացախով, և հարեալ կեղեգան՝ ետ ըմպել նմա։

Եւ կէսքն ասէին. Թող տես՝ գուցէ եթէ գա՞յ Եղիա փրկել զդա։

Եւ Յիսուս գարձեալ աղաղակեաց ՚ի ձայն մեծ, և արձակեաց զոգին։

Եւ ահա վարագոյր տաճարին ցեղաւ յերկուս՝ ՚ի վերուստ մինչեւ ՚ի վայր. երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան, և գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան. եւ ելեալք ՚ի գերեզմանացն՝ յետ յարու-

Թեանն նորա մահն ի քաղաքն սուրբ, և երեւեցան բազմաց։ Իսկ հարիւրապետն՝ և որք ընդ նմա պահէին զՅիսուս, իբրեւ տեսին զշարժուածին եւ զեղեալսն, երկեան յոյժ եւ ասեն. Արդարեւ Աստուծոյ որդի էր սա։

Էին անդ կանայք բազումք, կային ի հեռաստանէ և հայէին, որք եկին զկնի Յիսուսի ի Գալիլեէ պաշտել զնա. յորս էր Մարիամ Մագդալենացի, և Մարիամ Յակովբայ և Յովսեայ մայր, եւ մայր որդւոցն Զեբեդեայ։

---

ԳԼՈՒԽ ԻԷ. 57։

Վասն Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մեծատուն Յովրիմաթեայ, որում անուն էր Յովսէփ, որ աշակերտեցաւ իսկ Յիսուսի. սա մատուցեալ առ Պիղատոս, խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն։

Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք, և եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի. եւ թաւալեցուցեալ կափարիչ գրան գերեզմանին վէմ մի մեծ՝ եւ գնաց։

Այնդ էր Մարիամ Մագդալենացի, եւ միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին։

---

ԳԼՈՒԽ ԻԷ. 62։

Վասն կնքեցման գերեզմանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթին, ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիքն առ Պիղատոս, և ասեն. Տէր, յիշեցաք՝ զի մոլորեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ։

Արդ հրամայեա՛ զգուշանալ գերեզմանին՝ մինչեւ յերից աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա. և ասիցեն ժողովրդեանն, թէ յարեաւ ի մեռելոց. եւ լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն։

Ասէ ցնոսա Պիղատոս. Ունիք զզօրականս, երթայք զգուշացարուք՝ որպէս և գիտէք։

Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին, և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն։

---

ԳԼՈՒԽ ԻԸ. 1։

*Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի, և միւս Մարիամն տեսանել զգերեզմանն։

Եւ ահա շարժումն մեծ եղեւ. զի Հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ՝ ի բաց թաւալեցոյց զվէմն՝ ի դրանց անտի, և նստէր՝ ի վերայ նորա. և էր տեսիլ նորա իբրեւ զփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրեւ զձիւն։

Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն, և եղեն իբրեւ զմեռեալս։

Պատասխանի ետ Հրեշտակն և ասէ ցկանայսն. Մի՛ երկնչիք դուք, գիտեմ զի զՅիսուս լըզխաչելեալն խնդրէք. Չէ՛ աստ, քանզի յարեաւ՝ որպէս ասաց ընդ. Եկա՛յք եւ տեսէ՛ք զտեղին՝ ուր կայր։

Եւ վաղվաղակի երթա՛յք ասացէ՛ք աշակերտացն նորա թէ յարեաւ. եւ ահա յառաջանայ քան զձեզ՝ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։

Եւ ելեալ վաղվաղակի՝ ի գերեզմանէ անտի ահիւ և խընդութեամբ բազմաւ՝ ընթացան պատմել աշակերտացն։

Եւ ահա պատահեցաւ նոցա Յիսուս և ասէ. Ո՛ղջ էք։

Իսկ նոքա մատուցեալ կալան զոտս նորա, և երկիր պագին նմա։

Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Մի՛ երկնչիք, երթա՛յք ասացէ՛ք եղբարցն իմոց՝ զի երթիցեն՝ ի Գալիլեա, եւ անդ տեսցեն զիս։

Իբրեւ նոքա գնացին, ահա ոմանք՝ ի զօրականացն եկին՝ ի քաղաքն, եւ պատմեցին քահանայապետին զամենայն՝ որ ինչ եղեւն։

Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝ արծաթի յոյժ ետուն զօրականացն, և ասեն. Ասացէ՛ք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք՝ ի քուն էաք. և եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեացուք զնա, և զձեզ անհոգս արասցուք։

Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպէս ուսանն. և եղ համբաւս այս ի Հրեից մինչեւ ցայսօր։

---

Իսկ մեսսան աշակերտքն գնացին ի Գալիլեա ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս. իբրեւ տեսին զնա, երկիր պագին նմա, եւ ոմանք երկուացան։

Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։

Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն Սրբոյ։

Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ. Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչեւ ի կատարած աշխարհի։



# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՄԱՐԿՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Ա՛ւետարանս որ ըստ Մարկոսի. գրեալ է սոյն Մարկոս աշակերտ Պետրոսի եւ ընթացակից Պօղոսի: Գրեաց զԱ՛ւետարանս զայս, եւ դնէ սկիզբն եւ ասէ. Սկիզբն Ա՛ւետարանի, ՚ի յովհաննու քարոզութենէն. եւ զմկրտութիւնն յովհաննու. եւ առնու վկայութիւն Եսայեայ մարգարէէ. նշանակէ եւ զփորձութիւնն ՚ի լերինն, եւ ոչ ասէ զփորձանսն. պատմէ եւ վասն ընտրութեան աշակերտացն. եւ նշանս ՚ևս արուեստս զոր արար. եւ զխորհուրդ մատնութեանն, եւ զկատա՛րածն. որ եւ մատնեցաւ Պիղատոսի, եւ խաչեցաւ մարմնով, եւ զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, եւ զի մարմինն եդաւ ՚ի գերեզմանի եւ յարեաւ երեքօրեայ, եւ զիջանել Հրեշտակին եւ երեւիլ կանանցն, եւ զնոյնն պատմել աշակերտացն:

Մարկոս հրամանաւ Պետրոսի Վիմի գրեաց զԱ՛ւետարանն իւր՝ յԱղեքսանդր քաղաքի ՚ի լեզու Եգիպտացի, զնի հնգետասան ամի համբառնալոյ Փրկչին:

# ՍԿԻԶԲՆ ՆԻԻԹՈՑ

## ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ


| | ԵՐԵՍ | ԷՋ |
|---|---|---|
| Վասն դիւահարին | 74 | 2 |
| Վասն Պետրոսի ղաքանչին | 75 | 1 |
| Վասն բժշկութեան պէսպէս հիւանդութեանց | 75 | 1 |
| Վասն բորոտին | 75 | 2 |
| Վասն անդամալուծին | 76 | 1 |
| Վասն Ղեւեայ մաքսաւորին | 77 | 1 |
| Վասն գօսացեալ ձեռին | 78 | 1 |
| Վասն առաքելոցն ընտրութեան | 79 | 1 |
| Վասն սերմանեացն առակի | 80 | 2 |
| Վասն սաստելոյ ջուրցն | 83 | 1 |
| Վասն լեգէովնացն | 83 | 2 |
| Վասն դստեր Ժողովրդապետին | 84 | 2 |
| Վասն տեռատեսին | 84 | 2 |
| Վասն Համարոյ առաքելոցն | 86 | 2 |
| Վասն ցովհաննու եւ Հերովդի | 87 | 1 |
| Վասն հինգ հացիցն եւ երկուց ձկանց | 88 | 1 |
| Վասն ի վերայ ծովուն գնալոյ | 89 | 1 |
| Վասն անցանելոյն զպատուիրանաւ | 90 | 2 |
| Վասն Աւրուց կնոջն փիւնիկեցւոյ | 91 | 2 |
| Վասն Համերն եւ խլին | 92 | 1 |
| Վասն եօթն հացիցն | 92 | 2 |
| Վասն խմորոյ փարիսեցւոցն | 93 | 2 |
| Վասն կուրին | 93 | 2 |
| Վասն Հարցանելոյն ի կեսարիայ | 94 | 1 |
| Վասն պլակերպութեան Ցեառն | 95 | 1 |
| Վասն լուսնահարին | 96 | 1 |
| Վասն խաբհելոյն՝ Թէ ով իցէ մեծ | 97 | 1 |
| Վասն Հարցանելոյն՝ Թէ պարտ է արձակել զկին | 98 | 2 |
| Վասն Հարցանելոյ մեծատանն զՅիսուս | 99 | 2 |
| Վասն որդւոցն Զեբեդեայ | 101 | 1 |
| Վասն Բարտիմէոսի | 101 | 2 |
| Վասն յաւանակին | 102 | 1 |
| Վասն յորանալոյ Թզենւոյն | 103 | 1 |

| | ԵՐԵՍ | ԷՋ |
|---|---|---|
| Վասն անչիշաբութեան | 103 | 2 |
| Վասն հարցանելոյ քահանայապետին զՏէրն | 104 | 1 |
| Վասն այգեւոյն | 104 | 2 |
| Վասն հարցանելոյ զդահեկանէն | 105 | 1 |
| Վասն սադուկեցւոցն | 105 | 2 |
| Վասն դպրացն | 106 | 1 |
| Վասն Տեառն հարցանելոյ զփարիսեցիսն | 107 | 1 |
| Վասն երկու լումայիցն | 107 | 2 |
| Վասն կատարածին | 107 | 2 |
| Վասն աւուրն եւ ժամուն | 109 | 2 |
| Վասն օծանելոյ կնոջն զՏէր իւղով | 110 | 1 |
| Վասն զաւակին | 110 | 2 |
| Վասն մատնութեանն մարգարէանալոյ | 111 | 1 |
| Վասն ուրացութեանն Պետրոսի | 112 | 1 |
| Վասն խնդրելոյ զՏէրունական մարմինն | 117 | 2 |
| Վասն իւղաբեր կանանց | 118 | 1 |

Ս. ՄԱՐԿՈՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ



# Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն
## ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա. համար 1.

Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի որդւոյ Աստուծոյ։

Որպէս և գրեալ է ի մարգարէս. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո։

Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղիղս արարէք զշաւիղս նորա։

Եւ եղեւ՝ ի Յովհաննէս մկրտէր յանապատի, և քարոզէր զմկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց։

Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն Հրէաստանի, եւ երուսաղէմացիք ամենեքեան, եւ մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց։

Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստեա ուղտոյ, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր նորա մարախ եւ մեղր վայրենի։

Քարոզէր և ասէր. Գայ զօրագոյնն քան զիս զինի իմ, որում չեմ բաւական խոնարհիլ լուծանել զկօշկաց նորա. ես մկրտեցի զձեզ

ջրով, և նա մկրտեսցէ զձեզ Հոգւովն Սրբով։

Եւ եղեւ՝ յաւուրսն յայնոսիկ եկն Յիսուս ի Նազարեթէ գալիլեացւոց, եւ մկրտեցաւ ի Յովհաննէ ի Յորդանան։

Եւ նոյնժամայն ընդ վերանալ ի ջրոյն, տեսս երկնիս բացեալ զերկինս, եւ զՀոգին Աստուծոյ իբրեւ զաղաւնի՝ զի իջանէր ի վերայ նորա։

Ձայն եղեւ յերկնից՝ և ասէ. Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ։

Եւ նոյնժամայն Հոգին հանէ զնա յանապատ։

Եւ էր նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ի սատանայէ. և էր ընդ գազանս. և հրեշտակք պաշտէին զնա։

---

Ցերկրորդում կիրակէի երկուշաբաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Ա. 14։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ յետ մատնելոյն Յովհաննու, եկն Յիսուս ի Գալիլեա, քարոզէր զԱւետարանն Աստուծոյ և ասէր, թէ կատարեալ է ժամանակ, և հասեալ է Արքայութիւնն Աստուծոյ. ապաշխարեցէք՝ և հաւատացէք Աւետարանին։

Իբրեւ անցանէր առ ծովեզերբն գալիլեացւոց, տեսս զՍիմովնէ և զԱնդրեաս եղբայր Սիմովնի, զի արկեալ էր նոցա ուռկանս ի ծով, քանզի ձկնորք էին։

Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք զկնի իմ, և արարից զձեզ լինել որսորդս մարդկան։

Եւ վաղվաղակի թողեալ զուռկանսն, գնացին զհետ նորա։

Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ, տեսս զՅակոբոս Զեբեդեայ՝ և զՅովհաննէս զեղբայր նորա, և զնոսա ի նաւին մինչ կազմէին ուռկանս, և կոչեաց զնոսա։

Եւ վաղվաղակի թողեալ ըզհայրն իւրեանց զԶեբեդէոս ի նաւին վարձկանօքն հանդերձ, գնացին զհետ նորա։

---

Ցերկրորդում կիրակէի երեքշաբաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Ա. 21։

Ընդ ցեաւն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ մտանեն ի Կափառնաում. և իսկ և իսկ ի շաբաթն մտեալ ի ժողովուրդն՝ ուսուցանէր զնոսա։

Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրև իշխանութեամբ՝ և ոչ որպէս դպիրքն։

Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ ոգի, որ աղաղակեաց և ասէ. Թոյլ տուր, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ, գիտեմք զքեզ ով ես, սուրբդ Աստուծոյ։

Սաստեաց ի նա Յիսուս և ասէ. Կարկեաց՝ և ել ի դմանէ։ Եւ զարկոյց զնա այն պիղծ, եւ աղաղակեաց ի ձայն մեծ, և ել ի նմանէ։

Եւ զարմացան ամենեքին, մինչեւ հցծել ընդ միմեանս եւ ասել. Ջի՞նչ է այս նոր վարդապետութիւնս, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ, և հնազանդին սմա։

Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն գալիլեացւոց։

Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն, եկն ի տունն Սիմոնի և Անդրեայ՝ Յակոբաւ և Յովհաննու հանդերձ։

Եւ զբաներ Սիմոնի դներ ջերմայեալ. և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա։

Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա, և եթող զնա տենդն, և պաշտէր զնոսա։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ ի մտանել արեգականն՝ բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս. և էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն։

Եւ բժշկեաց զբազումս հիւանդս ի պէս պէս ախտից, և դեւս բազումս եհան. և ոչ տայր խօսիլ դիւացն, զի գիտէին զնա՝ թէ Քրիստոս է։

---

Յերկրորդում Աւետարանի Ղուկաչաբաթի առաւօտեան։

ԳԼՈՒԽ Ա. 35։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ՝ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս. և գնաց զհետ նորա Սիմոնի՝ և որք ընդ նմայն էին. և իբրեւ գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ։ Եւ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ քարոզէր ի ժողովրդեանս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, և դեւս հանէր։

Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ ի ծունր իջանէր և ասէր. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել։

Իսկ Յիսուս գթացեալ՝ ձգեաց զձեռն, մերձեցաւ՝ ի նա՝ և ասէ ցնա. Կամիմ, սրբեաց։

Եւ իբրեւ ասաց ցնա, վաղ-
վաղակի գնաց ի նմանէ բորո-
տութիւնն, և սրբեցաւ։
Եւ սաստեաց նմա՝ եհան ար-
տաքս վաղվաղակի, եւ ասէ.
Զգոյշ լեր, մի ումեք ասիցես.
այլ երթ՝ ցոյց զքեզ քահանա-
յին, և մատո՛ վասն սրբութեան
քո պատարագ՝ զոր հրամայեաց
Մովսէս՝ ի վկայութիւն նոցա։
Եւ նա ելեալ սկսաւ քարոզել
յոյժ, եւ հռչակ հարկանել
զբանն. մինչ ոչ եւս կարող լի-
նիլ նմա յայտնապէս ի քաղաք
մտանել, այլ արտաքոյ յանա-
պատ տեղիս էր. և գային առ
նա յամենայն կողմանց։

---

Ցերկրորդում Կիրակէի Հիգւոքաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Բ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մտեալ գարձեալ ի կա-
փառնաւում՝ յետ աւուրց
լուր եղեւ եթէ ի տան է, և
ժողովեցան բազումք՝ մինչեւ
տեղի եւս ոչ լինիլ և ոչ առ
դրանն. և խօսէր նոցա զբանն։
Եւ գային առ նա՝ բերէին
անդամալոյծ մի բարձեալ ի
չորից։
Եւ իբրեւ ոչ կարէին մերձե-
նալ առ նա յամբոխէ անտի,
քակեցին զտարկն՝ ուր էր Յի-
սուս, և բացեալ զառաստաղն՝
իջուցին զմահիճն՝ յորում
կայր անդամալոյծն։
Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս
նոցա, ասէ ցանդամալոյծն.
Որդեակ, թողեալ լիցին քեզ
մեղք քո։
Եւ էին ոմանք ի դպրաց ան-
տի՝ որք անդ նստէին, և խոր-
հէին ի սիրտս իւրեանց. զինչ
է այս՝ որ խօսի սա զհայհոյու-
թիւնս. ո՞վ կարէ թողուլ զմե-
ղսս, եթէ ոչ մի Աստուած։
Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝
թէ այնպէս խորհէին ի սիրտս
իւրեանց, և ասէ. Ձի՞ խորհիք
զայդ ի սիրտս ձեր։
Զինչ դիւրին է, ասել ցանդա-
մալոյծն՝ թողեալ լիցին մեղք
քո, եթէ ասել՝ արի՛ առ զմա-
հիճս քո՝ և երթ ի տուն քո։
Այլ զի գիտասջիք եթէ իշ-
խանութիւն ունի Որդի մար-
դոյ ի վերայ երկրի՝ թողուլ
զմեղս, ասէ ցանդամալոյծն.
Քեզ ասեմ, արի՛ առ զմահիճս
քո՝ և երթ ի տուն քո։
Եւ յարեաւ, վաղվաղակի ա-
ռեալ զմահիճն՝ եւ առաջի ա-
մենեցուն. մինչեւ զարմանալ
ամենեցուն և փառաւորել առ-
նել զԱստուած և ասել, Թէ

այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք։

—

Յերկրորդում Վերակէի Ուրբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Բ. 13։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եկաբէաղ ի Յովհզրն, և աներևոյթ ժողովուրդն գայր առ նա, և ուսուցանէր զնոսա։

Եւ մինչդեռ անցանէր, տեսզ Ղևւի Ալփեայ՝ զի նստէր ի մաքսաւորութեան, եւ ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ։

Եւ յարուցեալ գնաց զկնի նորա։

Եւ եղեւ ի բազմիլն նորա ի տան նորա, և բազում մաքսաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի եւ ընդ աշակերտան նորա. քանզի էին բազումք՝ որք երթային զհետ նորա։

Իսկ գպիրքն եւ փարիսեցիք՝ իբրեւ տեսին՝ թէ ուտէ ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտան նորա. Զի՞ է՝ զի ընդ մեղաւորս եւ ընդ մաքսաւորս ուտէք և ըմպէք։

Իբրեւ լուաւ Յիսուս՝ ասէ ցնոսա. Ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոյ՝ այլ հիւանդաց, եւ ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։

Եւ էին աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն ի պահս, գան և ասեն ցնա. Ընդէր աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն պահեն, և քո աշակերտքդ ոչ պահեն։

Եւ ասէ ցնոսա Յիսուս. Միթէ մարթ ինչ իցէ որդւոց առագաստի՝ մինչ ընդ նոսա իցէ փեսայն՝ պահել. գորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ վերասցի ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն յաւուրն յայնմիկ։

Ոչ ոք կապերտ նոր անթափ արկանէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առնու լրումեամբն իւրով նորն ի հնոյ անտի, և չար եւս պատառումն լինի։

Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին զտիկան, գինին հեղանի, և տիկքն կորընչին. այլ գինի նոր ի տիկս նորս արկանելի է։

Ցերկրորդում Կիւրակէի Շաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Բ. 23։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ եղեւ նմա՝ ի շաբաթու անցանել ընդ արտօրայս, և աշակերտքն՝ ի գնալն իւրեանց սկսան հասկ կորզել և ուտել։ Եւ փարիսեցիքն ասեն ցնա, Տե՛ս զի՞նչ գործեն աշակերտքն քո՝ ի շաբաթու զոր չէ արժան։

Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ո՞չ երբէք իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ, յորժամ պիտոյն եղեւ, և քաղցեաւնա՝ և որք ընդ նմայն էին. զիա՞րդ եմուտ՝ ի տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ քահանայապետ, և զհացն առաջաւորութեան եկեր՝ և ետ և այնոցիկ՝ որք ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ուտել բայց միայն քահանայիցն։

Եւ ասէ ցնոսա. Շաբաթ վասն մարդոյ եղեւ, եւ ոչ մարդ վասն շաբաթու, ապա ուրեմն տէր է Որդի մարդոյ՝ և շաբաթու։

Եւ եմուտ միւսանգամ՝ ի ժողովուրդն. և էր անդ այր մի՝ որոյ ձեռն գօսացեալ էր։

Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկիցէ զնա՝ ի շաբաթուն՝ զի չարախօսեսցեն զնմանէ։

Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր. Արի՛ անց՝ ի մէջ։ Եւ ասէ ցնոսա. Ձի՞նչ արժան է՝ ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել. ոգի՞ մի ապրեցուցանել՝ եթէ կորուսանել։ Եւ նոքա լռեցին։

Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի յաստամբ, տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա, ասէ ցայրն. Զգեա՛ զձեռն քո։ Եւ նա ձգեաց, եւ ողջացաւ ձեռն նորա։

---

Ցերրորդում Կիւրակէի առաւն։

ԳԼՈՒԽ Գ. 6։

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն Հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա՝ թէ զիա՛րդ կորուսցեն զնա։ Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք գնաց՝ ի ծովեզերն։

Եւ բազում ժողովուրդ՝ ի գալիլեացւոց երթային զհետ նորա, և՝ ի Հրէաստանէ, և յԵրուսաղէմէ, և յայնկայն Յորդանանու, և որք՝ ի Տիւրոսէ

և՝ ի Սիդոնէ. բազում ժողովուրդ՝ իբրեւ լսեին՝ որչափ ինչ առնէր, գային առ նա։
Եւ ասէ ցաշակերտան իւր, զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն զնա։
Բազում զբաղումս բժշկեաց. մինչ գալ խռնիլ զնովաւ՝ զի մերձենասցին առ նա, որք ունէին ախտս ինչ։
Եւ այսք պիղծք յորժամ տեսանէին զնա, անկանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին, թէ դու ես Որդին Աստուծոյ. և նա յոյժ սաստեր նոցա, զի մի՛ յայտնի առնիցեն զնա։

---

Ցերկրդում Կիրակէի երկուշաբաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Գ. 13։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ելանէ՛ ի լեառն՝ եւ կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ, և չորան առ նա։
Եւ արար երկոտասանս՝ զի իցեն զնովաւ, և զի առաքեսցէ զնոսա քարոզել, և ունիլ իշխանութիւն բժշկելոյ զցաւս և հանելոյ զդեւս։
Եւ եդ զանուն Սիմոնի՝ Պետրոս. և Յակովբոս Զեբեդեայ և Յովհաննու եղբօրն Յակովբայ՝ եդ նոցա անուանս Բանեռգես, որ է՝ որդիք որոտման, և զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲարթողիմէոս, և զՄատթէոս զմաքսաւորն, և զԹովմաս, և զՅակովբոս Ալփեայ, և զԹադէոս, և զՍիմոնն Կանանացի, և զՅուդա Իսկարիովտացի, որ և մատնեացն զնա։

---

Ցերրորդում Կիրակէի երեքշաբաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Գ. 20։

Ընդ ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Գան՛ ի տուն, և գայ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն, մինչ զի և հաց եւս ոչ ժամանել ուտել նոցա։
Եւ իբրեւ լուան՝ որ իւրքն էին՝ ելին ունիլ զնա, զի համարէին թէ մոլեգնեալ իցէ։
Եւ գպիրքն՝ որ Երուսաղեմէ իջեալ էին, ասէին թէ Բէեղզեբուղ գոյ՛ ի նմա, և իշխանաւ դիւացն՝ հանէ դա զդեւս։
Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն, առակօք խօսէր ընդ նոսա. Զի՞րդ կարէ սատանայ զսատանայ հանել. և արդ՝ եթէ թագաւորութիւն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ թա-

գաւառութիւնն այն. և եթէ տուն չանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ տունն. եթէ սատանայ ի վերայ անձին իւրոյ յարեաւ՝ եւ բաժանեալ իւրեայք, ոչ կարէ կալ այլ վախճանեալ է։

Այլ ոչ ոք կարէ զկարասի հրզօրի մտեալ ի տուն նորա առաւար հարկանել, եթէ ոչ նախ զհզօրն՝ կապիցէ, և ապա զտուն նորա առաւր հարկանիցէ։

Այժմ ասեմ ձեզ զի ամենայն թողի որդւոց մարդկան մեղք և հայհոյութիւնք՝ որչափ և հայհոյիցեն. բայց որ հայհոյեսցէ զՀոգին Սուրբ, ոչ ունի զթողութիւն յաւիտեան, այլ պարտապան լիցի յաւիտենից մեղաց։

Զի ասէին՝ թէ այս պիղծ գոյ ի նմա։

---

Ցերկրորդում Ախաւկէի Ջրհեղեղաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Գ. 31։

Ա. Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Գան եղբարքն եւ մայր նորա, և արտաքոյ կացեալ յղեցին և կոչէին զնա։

Եւ անդ ժողովուրդն շուրջ զնովաւ նստեր. և իբրեւ ասացին ցնա. Ահաւասիկ մայր քո և եղբարք քո՝ կան արտաքոյ, և խնդրեն զքեզ։

Պատասխանի եւս նոցա՝ և ասէ. Ո՞վ է իմ մայր, կամ եղբարք։

Հայեցաւ շուրջ զնովաւ նստեալսն և ասէ. Ահաւասիկ մայր իմ և եղբարք իմ. զի որ առնիցէ զկամս Աստուծոյ, նա է եղբայր իմ եւ քոյր և մայր։

---

Ցերկրորդում Ախաւկէի Ջրհեղեղաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Դ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Պարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերբն, եւ խառնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչեւ ի նաւ մտանել նմա եւ նստիլ ի ծովուն. և ամենայն ժողովուրդն զծովեզերբն՝ զցամաքն ունէին. և ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ։

Եւ ասէր նոցա ի վարդապետութեան իւրում. Լուարուք. ահաւասիկ եւ սերմանող ի սերմանել. և եղեւ ի սերմանելն, ումն անկաւ առ ճանապարհաւ, և եկին թռչունն և եկեր զնա. Եւ այլն անկաւ յապառաժի՝ ուր ոչ գոյր հող բա-

զում, և վազվազակի բուսաւ, քանզի ոչ գոյր հիւմն երկրին. եւ յորժամ ծագեաց արեւ՝ ջեռաւ. եւ զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ։

Եւ այլն անկաւ ի մէջ փշոց. եւլին փուշքն եւ հեղձուցին զնա, և պտուղ ոչ ետ։

Եւ այլն անկաւ յերկիր բարւոք, և ելեալ աճեցեալ տայր պտուղ, եւ բերէր ընդ միոյ երեսուն, եւ ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր։

Եւ ասէր. Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

---

Յերրորդում Կիւրակէի Ս. Զքարեի աւուրն։

ԳԼՈՒԽ Դ. 10։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ իբրեւ եղեւ առանձինն, հարցին ցնա որք զնովաւն էին աշակերտացն հանդերձ զառակսն։

Եւ ասէ ցնոսա. Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդ արքայութեան Աստուծոյ. բայց նոցա որք արտաքինքն են՝ ամենայն ինչ առակօք լինի. զի տեսանելով տեսցեն՝ և մի՛ տեսցեն, և լսելով լուիցեն՝ եւ մի՛ իմասցին, զի մի՛ երբեք դարձցին՝ և թողթի նոցա։

Եւ ասէ ցնոսա. Ո՞չ գիտէք զառակս զայս, և զիա՞րդ զամենայն առակսն գիտիցէք։

Ար սերմանէն՝ զբանն սերմանէ։

Եւ նոքա են որք առ ճանապարհաւն, ուր բանն սերմանի, և յորժամ լսեն զնա, գայ սատանայ՝ և հանէ զսերմանեալսն ի սիրտս նոցա։

Եւ նոքա են՝ որք յապառաժին սերմանեցան, որք յորժամ լսեն զբանն, վազվազակի խընդութեամբ ընդունին. և զի ոչ ունին արմատս յանձինս, այլ առ ժամանակ մի են, ապա ի հասանիլ նեղութեան կամ հալածման վասն բանին, վաղվաղակի գայթակղին։

Իսկ որ ի մէջ փշոցն սերմանեցան, նոքա են՝ որք իբրեւ լսեն բանն լսեն, և հոգք աշխարհի՝ և պատրանք մեծութեան մտանեն և հեղձուցանեն զբանն՝ և անպտուղ լինի։

Եւ նոքա են որք յերկիրն բարւոք սերմանեցան, որք լսեն զբանն՝ և ընդունին, և տան պտուղ, ընդ միոյ երեսուն, և ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր։

---

Յերրորդում Ներակէի Եաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Դ. 21։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ասէ ցնոսա. Միթէ գայ ճրագ, զի ընդ գրուանաւ դնիցի, կամ ընդ մահճօք. ոչ ապաքէն ի վերայ աշտանակի դնիցի։

Զի չէ ինչ ի ծածուկ, որ թէ ոչ յայտնեացի. և ոչ եղեւ ինչ գաղտնի, եթէ ոչ ի յայտ գայցէ. եթէ ոք ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

Եւ ասէ ցնոսա. Տեսէք զինչ լսէքդ, և յաւելցի ձեզ՝ որոց լսէքդ, որով չափով չափիք՝ նովին չափեսցի ձեզ։

Որ ոք ունիցի՝ տացի նմա. եւ որ ոչն ունիցի, և զոր ունին՝ բարձցի ի նմանէ։

---

Չորրորդում Ներակէի առաւն։

ԳԼՈՒԽ Դ. 26։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ասէր. Այսպէս է արքայութիւն Աստուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր, եւ ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցին, և նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն, և ապա զհասկն, և ապա զորեանն ատոք՝ի հասկին. և յորժամ տացէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ, զի հասեալ են հունձք։

Եւ ասէր. Ո՞ւմ նմանեցուցցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առակաւ առակեցուք զնա։

Որպէս հատն մանանիոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝ որք են յերկրի։

Եւ յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան զամենայն բանջար, և արձակէ ոստս մեծամեծս, մինչեւ բաւական լինիլ ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակիլ։

Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարողք լինէին լսել. և առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն։

---

Զորրորդում Կիւրակէի Երկուշաբաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Դ. 35։

Ցէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ասէ ցնոսա յաւուր յայնմիկ՝ իբրեւ ընդ ե-
րեկս լինէր. եկայք անցցուք
յայն կողմն։
Թողուն զժողովուրդն, եւ
առնուն զնա նաւուն հան-
դերձ, և զայլ եւս նաւսն որք
էին ընդ նմա։
Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ,
և զալիսն ի նաւն զեղոյր՝ մինչ
գրեթէ լի իսկ լինիլ. եւ ինքն
ննջէր ի խելս նաւին ի վերոյ
բարձի։
Զարթուցանէին զնա և ասէ-
ին. վարդապետ, ոչ հոգ ե՞ք զեզ
փոյթ, զի կորնչիմք աւասիկ։
Եւ զարթուցեալ սաստեաց
հողմոյն, և ծովուն ասէ. Դա-
դարեա՛, կարկեա՛ց. և դադա-
րեաց հողմն, և եղեւ խաղա-
ղութիւն մեծ։
Եւ ասէ ցնոսա. Ընդէր այդ-
պէս վատասիրտք էք. չեւ եւս
ունիք հաւատս։
Եւ երկեան յերկիւղ մեծ, և
ասէին ցմիմեանս. Ո՞ որ ար-
դեօք իցէ սա, զի և հողմ և
ծով հնազանդին սմա։

Եւ եկն յայնկոյս ծովուն
յաշխարհն գերգեսացւոց։
Եւ ընդ ելանելն նորա ի նաւ
էն անտի, պատահեցաւ նմա
այր մի ի գերեզմանացն՝ զոր
ունէր այս պիղծ, որոյ բնա-
կութիւն իսկ ի գերեզմանս
էր, եւ ոչ շղթայիւք ոք եւս
կարէր կապել զնա, վասն բա-
զում անգամ ոտնակապօք և
շղթայիւք կապելոյ, և խզելոյ
ի նմանէ զշղթայսն, և զոտնա-
կապսն խորտակելոյ. և ոչ ոք
կարէր պարտել զնա, քանզի
հանապազ գոյդ և գիշերս ի
գերեզմանս և ի լերինս աղա-
ղակէր, եւ կոծէր զանձն իւր
քարամբք։
Իբրեւ ետես զՅիսուս ի հե-
ռուստանէ, ընթացաւ և երկ-
րի եպագ նմա. աղաղակեաց
ի ձայն մեծ եւ ասէ. զի կայ
իմ եւ քո, Յիսո՛ւս Որդի Աս-
տուածոյ Բարձրելոյ. երդմնե-
ցուցանեմ զքեզ ԱԱստուածն,
մի՛ տանջեր զիս։
Քանզի ասէր ցնա. Ել այսդ
պիղծ, ի մարդոյ այսի։
Եւ հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ
անուն է քո։
Եւ ասէ ցնա. Լեգէովն անուն
է իմ, քանզի բազումք եմք։

Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն։

Եւ անդ էր առ լերամբն երամ մակ մի խոզից՝ արօտական մեծ։ Աղաչեցին զնա ամենայն դեւքն եւ ասեն. Առաքեա՛ զմեզ՝ ի խոզն, զի մտցուք՝ ի նոսա. և հրամայեաց նոցա։

Եւ իբրեւ ելին այսքն պիղծք՝ մտին՝ ի խոզ, և դիմեաց երամակն՝ ի գարէ անտի՝ ի ծովն. էին իբրեւ երկու հազարք, և հեղձնուին՝ ի ծովուն։

Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին՝ ի քաղաքին և յառ գարաիս, եւ ելին տեսանել զինչ իցէ՝ որ գործեցաւն։

Գան առ Յիսուս, և տեսանեն զդիւահարն, զի նստեր զգեցեալ և զգաստացեալ, որ առնէր զլեգեոնն. և զահի հանան։

Եւ պատմեցին նոցա, որոց տեսեալն էր, թէ զինչ եղեւ դիւահարին, եւ զինչ վասն խոզից։

Եւ սկսան աղաչել զնա՝ գնալ՝ ի սահմանաց նոցա։

Եւ իբրեւ եմուտ նա՝ ի նաւն, աղաչէր զնա դիւահարն, զի ընդ նմա իցէ. և Յիսուս ոչ ետ նմա թոյլ այլ ասէ ցնա. Երթ՝ ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա՛ նոցա՝ զոր ինչ արանգամ Տէր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ։

Եւ չոգաւ և սկսաւ քարոզել՝ ի Դեկապօլին, զոր ինչ արար նմա Յիսուս. եւ ամենեքին զարմանային։

---

Ձորեդասմ Սիմեոնի երէցաբանի առաքն։

ԳԼՈՒԽ Ե. 21։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ իբրեւ էանց Յիսուս միւսանգամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերբն։ Եւ ահա մի՝ ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր Յայրոս. և իբրեւ ետես զնա՝ անկաւ առ ոտս նորա, աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր նորա մերձ է՝ ի մահ, զի եկեալ դնիցէ նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և կեցցէ։

Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զհետ նորա, և նեղէին զնա։

Եւ կին մի էր՝ ի տեառատեսութեան արեան զերկոտասան ամ, և յոյժ վշտացեալ՝ ի բազում բժշկից, եւ ծախեալ զինչս իւր զամենայն, եւ չէր

ինչ օգտեալ այլ եւս առաւել զայրացեալ։

Իբրեւ լուաւ զՅիսուսէ, եկն ՚ի մէջ ամբոխին լեռոյ՝ եւ բուռն եհար զհանդերձէ նորա. քանզի ասէր ՚ի մտի, Թէ միայն մերձեցայց ՚ի հանդերձս նորա՝ փրկեցայց։

Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա, և գիտաց ՚ի մարմին իւր՝ Թէ բժշկեցաւ ՚ի տանջանացն։

Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն՝ որ էլ ՚ի նմանէ, դարձաւ յամբոխն եւ ասէ. Ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ։

Եւ ասեն ցնա աշակերտքն. Տեսանես՝ զի ամբոխք նեղէ զքեզ, և ասես՝ Թէ ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ։

Եւ շուրջ հայեր տեսանել Թէ ո՛ զայն արար։

Եւ կինն զարհուրեալ և դողացեալ վասն որոյ գաղտն արար. քան զի գիտէր զինչ եղեւ նմա, եկն՝ անկաւ առաջի նորա, և ասաց զամենայն իրան ստուգութեամբ։

Եւ Յիսուս ասէ ցնա. Դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. երթ ՚ի խաղաղութիւն, և եղիջիր ողջ ՚ի տանջանաց քոց։

Երկրորդում Ավետիւն Ղուկիայ աւուրն։

ԳԼՈՒԽ Ե. 35.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք ՚ի ժողովրդապետէն և ասեն. Թէ դուստրն քո մեռաւ, զի եւս աչխատ առնես զվարդապետդ։

Իսկ Յիսուս իբրեւ լուաւ ըզբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն. Մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա՛։

Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս և զՅակովբոս եւ զՅովհաննէս զեղբայրն Յակովբայ։

Գայ ՚ի տունն ժողովրդապետին, և տեսանէ ամբոխ լայժ և լալականս և աղաղակ լայժ. և մտեալ ՚ի նէրսա՝ ասէ ցնոսա. Զի՞ խռովեալ էք և լայք, մանուկդ ոչէ մեռեալ այլ ննջէ։

Եւ ծաղր առնէին զնա. և նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զՀայր մանկանն և զմայր, և զնոսա որք ընդ նմայն էին, և մտանէ ուր դնէր մանուկն. և կալեալ զձեռանէ մանկանն՝ ասէ ցնա. Տալիթա՝ կումի. որ թարգմանի, աղջիկ դո՛ս՝ քեզ ասեմ արի։

Եւ վազվզակի յարեաւ աղ-
ջիկն, և գնայր. քանզի էր ամաց
իբրեւ երկոտասանից. և զար-
մացան մեծաւ զարմանալեօք:
Եւ պատուէր տայր նոցա յոյժ,
զի մի՛ ոք գիտասցէ զայն. և ա-
սայ՝ տալնմա ուտել:

---

Ձորրորդում Կիւրակէի Հինգշաբթի աւուրն:

ԳԼՈՒԽ Զ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եւ ել անտի, եկն՝ի գաւառ
իւր, և երթային զհետ
նորա աշակերտքն իւր:
Եւ եղեւ՝ի շաբաթուն, սկը-
սաւ ուսուցանել՝ի ժողովրդ-
դեանն. եւ բազումք իբրեւ
լսէին՝ զարմանային ընդ վար-
դապետութիւն նորա, և ա-
սէին. Ուսա՞ր իցէ սմա այս,
կամ զի՞նչ իցէ իմաստութիւնն՝
որ տուեալ է սմա. զի զօրու-
թիւնք այսպիսիք՝ի ձեռաց
սորա լինին:
Ո՞չ սա է մանուկ հիւսանն,
եւ որդին Մարեմայ, եղբայր
Յակովբեայ և Յովսեայ և Յու-
դայի և Սիմոնի. և չիցե՞ն քոյրն
դորա աստ առ մեզ, և գայ-
թակղէին՝ի նա:
Եւ ասէ ցնոսա. Ոչ է մար-
գարէ անարգ, բայց եթէ՝ի
գաւառի իւրում, և յազգա-
տոհմի և՝ի տան իւրում:
Եւ ոչ կարէր անդ և ոչմի ինչ
զօրութիւն առնել, բայց սա-
կաւ ինչ հիւանդաց ձեռն ե-
դեալ բժշկէր զնոսա:
Եւ զարմանայր վասն անհա-
ւատութեանց նոցա:

---

Ձորրորդում Կիւրակէի Ուրբաթի աւուրն:

ԳԼՈՒԽ Զ. 7:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եւ կոչէր զտասն աւետարանչսն,
և ուսուցանէր:
Եւ կոչեաց առ ինքն զերկո-
տասանսն, և սկսաւ առաքել
զնոսա երկուս երկուս. և տայր
նոցա իշխանութիւն՝ի վերայ
այսոց պղծոց:
Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛
ինչ բարձցեն՝ի ճանապարհի,
բայց միայն գաւազան. մի՛
պարկ, մի՛ հաց, մի՛ պղինձ՝ի
գօտիս. այլ ագանել հողա-
թափս, եւ մի՛ զգենուցուք,
ասէ, երկուս պարեգօտս:
Եւ ասէր ցնոսա. Ցորժամ տուն
մտանիցէք, անդէն օթեւանս
կալջիք՝ մինչև ելանիցէք անտի:
Եւ որք ոչ ընկալցին զձեզ, և
ոչ լսիցեն ձեզ, յորժամ ելա-
նիցէք անտի՝ թօթափեսջիք

զխոշի ոտից ձերոց ՝ի վկայու-
Թիւն նոցա։
Եւ եղեալ բարողէին՝ զի ա-
պաչխարեսցեն. և դեւս բա-
զումս հանէին, եւ օծանէին
իւղով զբազումս հիւանդս, և
բժշկէին զնոսա։

---

Զորորդում կիրակէի Շաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Զ. 14։

Վ.ան գլխատման Մկրտչի տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի։

Եւ լուաւ արքայ Հերովդէս,
քանզի յայտնի եղեւ ա-
նուն նորա. և ասէր, Թէ Յով-
հաննէս Մկրտիչ յարեաւ ՝ի
մեռելոց, և վասն այնորիկ զո-
րութիւնք լինին նովաւ։
Այլք ասէին՝ Թէ Եղիա է,
իսկ այլքն՝ Թէ մարգարէ է,
կամ Թէ իբրեւ զմի ՝ի մար-
գարէից։
Իբրեւ լուաւ Հերովդէս՝ ասէ.
Զորոյ ես զգլուխն հատի զՅով-
հաննու՝ սա է, նա յարեաւ
՝ի մեռելոց։
Զի ինքն Հերովդէս առաքեաց
կալաւ զՅովհաննէս, և կապեաց
զնա և եդ ՝ի բանտի վասն Հե-
րովդիադայ կնոջ Փիլիպպոսի
եղբօր նորա, զի նա կին արար
զնա։
Քանզի ասէր Յովհաննէս ցը-
Հերովդէս՝ Թէ ոչէ օրէն քեզ
ունել զկին եղբօր քոյ։
Եւ Հերովդիա ախտեաւ էր
ընդ նմա, և կամէր սպանանել
զնա, և ոչ կարէր։
Զի Հերովդէս երկնչէր ՝ի Յով-
հաննէ. քանզի գիտէր նա այր
արդար և սուրբ, և սպասէր
նմա. և լուեալ ՝ի նմանէ՝ բա-
զում ինչ առնէր, և քաղցրու-
Թեամբ լսէր նմա։
Իբրեւ օր մի լինէր պարապոյ,
յորժամ ընծայիս տայր Հերով-
դէս յաւուր ծննդոց իւրոց՝
նախարարաց իւրոց և հազա-
րապետաց և մեծամեծաց գա-
լիլեացւոց, և մտանել դստերն
Հերովդիա և ՝ի կաքաւել, հա-
ճոյ եղեւ Հերովդի և բազմա-
կանացն։
Ասէ Թագաւորն ցաղջիկն.
Խնդրեա՛ յինէն՝ զոր ինչ կամիս,
և տայց քեզ։
Եւ երդուաւ նմա բազում
անգամ, Թէ զոր ինչ և խընդ-
րեսցես դու յինէն, տայց քեզ՝
մինչեւ ցկէս Թագաւորու-
Թեան իմոյ։
Նա եղեալ ասէ ցմայր իւր.
Զի՞նչ խնդրեցից։
Եւ նա ասէ. Զգլուխն Յով-
հաննու Մկրտչի։

Եւ մեռեալ անդրէն փութա-
նակի առ Թագաւորն՝ ասէ.
Կամիմ՝ զի տացես ինձ վազվա-
զակի ի վերայ սկտեղ զգլուխն
Յովհաննու Մկրտչի։
Եւ տրտմեցաւ յոյժ Թագա-
ւորն, այլ վասն երդմանցն և
կոչնականացն՝ ոչ կամեցաւ ա-
նարգել զնա. և առաքեաց վայր-
վազակի Թագաւորն՝ գահիճ,
և հրամայեաց բերել զգլուխն
Նորա։
Եւ չոգաւ գլխատեաց զնա ի
բանտին. եւ եբեր զգլուխն
Նորա սկտեղ՝ և ետ ցաղջիկն,
և աղջիկն տարաւ ետ մօր իւ-
րում։
Իբրեւ լուան աշակերտքն Նո-
րա, եկին եւ բարձին մարմին
Նորա և եդին ի գերեզմանի։

---

Հինգերորդում Նիւթակի առաքն։

ԳԼՈՒԽ Զ. 30.

Առ տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ժողովեցան առաքեալքն առ
Յիսուս, եւ պատմեցին
նմա զամենայն ինչ՝ զոր արա-
բին և զոր ուսուցին։
Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք
դուք առանձինն յանապատ
տեղի, և հանգիջիք սակաւ մի.
զի էին բազումք որք երթային
և գային, և հայց անգամ չժա-
մանէին ուտել։
Եւ գնացին նաւու յանապատ
տեղի առանձինն։
Եւ տեսին զնոսա՝ զի երթա-
յին, և զոմանք բազումք. և
հետի՝ յամենայն քաղաքաց
խուռն ընթանային անդր, և
մերձեցնային առ Նոսա։
Եւ ելեալ ետես ամբոխ բա-
զում, և գթացաւ ի Նոսա, զի
էին իբրեւ ոչխարք՝ որոց ոչ
իւէ հովիւ. և սկսաւ ուսու-
ցանել զնոսա յոյժ։
Եւ իբրև բազում ժամ եղեւ,
մատուցեալ աշակերտքն ա-
սէին. Ցեղիս անապատ է, մինչ
օր կայ, Արձակեա՛ զժողո-
վուրդս, զի երթեալ չուրջ
յագարակս և ի գեօղս՝ գնեսցեն
իւրեանց՝ զինչ ուտիցեն,
զի աստ ուտել ինչ ոչ ունին։
Նա պատասխանի ետ՝ և ասէ
ցնոսա. Դուք տո՛ւք դոցա ու-
տել. ասեն ցնա. Երթիցուք
գնեսցուք երկերիւր դահե-
կանի հաց, եւ տացուք դոցա
ուտել։
Ասէ ցնոսա. Քանի՞ նկանակ ու-
նիք, երթա՛յք և տեսէ՛ք։
Իբրեւ գիտացին, ասեն ցնա.
Հինգ, և երկուս ձկունս։

Եւ հրամայեաց նոցա բազմիլ երախանս երախանս ՚ի վերայ դալար խոտոյ . և բազմեցան՝ դասք դասք , ուր հարիւր եւ ուր յիսուն :

Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս , օրհնեաց , մանրեաց զնկանակսն , և ետ յաշակերտսն զի արկցեն նոցա , և զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն :

Կերին ամենեքեան և յագեցան . և բարձին զնշխարսն երկոտասան սաւառի լի , և ՚ի ձկանց անտի . և էին որք կերանն՝ իբրեւ արք հինգ հազար :

---

Հինգերորդում Կիւրակէի Երկուշաբաթի առաւն :

ԳԼՈՒԽ Զ . 45 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Եւ նոյնժամայն ձեպեաց զաշակերտսն մտանել ՚ի նաւ , և յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս ՚ի Բեթսայիդա , մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ . եւ հրաժարեալ ՚ի նոցանէ՝ եւ ՚ի լեառն կալ յաղօթս :

Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ էր նաւն ՚ի մէջ ծովուն , և ինքն ՚ի ցամաքի :

Եւ ետես զնոսա հոգմակոծեալս ՚ի վարելն , զի էր հողմն ընդդէմ նոցա . եւ զչորրորդ պահու գիշերոյն՝ գայ առ նոսա գնալով ՚ի վերայ ծովուն , և կամէր զանց առնել առ նոքօք :

Եւ նոքա իբրեւ տեսին՝ զի գնայր ՚ի վերայ ծովուն , համարեցան թէ առ աչօք ինչ լինիցի , և զաղաղակ բարձին . քանզի ամենեքեան տեսին զնա՝ և խռովեցան :

Եւ նա անդէն վազվազակի խօսեցաւ ընդ նոսա և ասէ . Քաջալերացարուք , ես եմ , մի երկնչէք . և ել ՚ի նաւն առ նոսա , և դադարեաց հողմն :

Եւ առաւել եւս յիմարեալ էին ՚ի միտս իւրեանց , և զարմանային յոյժ . քանզի և ՚ի վերայ հացին ոչ խմացան , զի էր սիրտ նոցա թմբրեալ :

Եւ իբրեւ անցին յայնկոյս , եկին յերկիրն Գեննեսարեթ , և իբրեւ ելին ՚ի նաւէ անտի , իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ , եւ ընդհատեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն , սկսան մահճօք բերել զամենայն զհիւանդս , ուր լսէին թէ անդ իցէ :

Եւ ուր և մտանէր՝ ՚ի գեօղս կամ ՚ի քաղաքս կամ յագա-

բակս , ՚ի հրապարակս գնէին զախտաժէտս , և ազաչէին զնա՝ զի գան է ՚ի քղանցս հանդերձի նորա մերձենայցեն . և որք միանգամ մերձեցան՝ փրկեցան :

---

Հինգերորդումն Ախարակէի Հինգշաբաթի աւուրն :

ԳԼՈՒԽ Է· 1·

Ա՛ւ ՏԷրն մեր Յիսուս Քրիստոս :

Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն , եւ ոմանք ՚ի դպրացն , որք եկեալ էին յԵրուսաղեմէ :

Եւ տեսեալ զոմանս յաշակերտացն անտի՝ զի խառնակ ձեռօք, այսինքն՝ անլուայ ուտէին զհաց , բամբասեցին :

Զի փարիսեցիքն եւ ամենայն Հրեայք՝ եթէ ոչ բռնալիր լուանան զձեռս , զհաց ոչ ուտեն . քանզի ունին զաւանդութիւն ծերոցն . և ՚ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտիցին , ոչ ուտեն. եւ այլ ինչ բազում է՝ զոր ընկալան ունիլ, մկրտութիւնս բաժակաց և ստամանաց և պղնձեաց և մահճաց :

Ապա հարցանեն ցնա փարիսեցիքն և դպիրք , Թէ ընդէր աշակերտքդ ոչ գնան ըստ աւանդութեան ծերոցն , այլ խառնակ ձեռօք զհաց ուտեն :

Ցա պատասխանի ետ և ասէ ցնոսա , Թէ բարւոք մարգարէացաւ Եսայի վասն ձեր կեղծաւորաց , որպէս ասաց . Ժողովուրդս այս շրթամբք մեծարէ զիս , և սիրտ նոցա հեռացեալ ՚ի բացեայ են յինէն . զուր պաշտեն զիս . ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս :

Թողեալ զպատուիրանն Աստուծոյ , ունիք զմարդկան աւանդութիւնս :

Մկրտութիւնս ստամանաց և բաժակաց . և այլոց նմանեաց սոցին՝ առնէք բազումս :

Եւ ասէ ցնոսա . Բարւոք խոտէք զպատուիրանն Աստուծոյ , զի զձեր աւանդութիւնն հաստատիցէք :

Զի Մովսէս ասէ . Պատուեա՛ զհայր քո և զմայր , և որ չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ , մահու վախճանեսցի :

Եւ դուք ասէք . եթէ ասիցէ ոք ցհայր կամ ցմայր՝ կորբան , որ է պատարագ , զոր յինէն օգտիցիս . և ոչ եւս տայք թոյլ նմա առնել ինչ հօրն կամ մօր . և անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդութեամբն՝ զոր

աւանդեցէք, և բազում ինչ՝ որ այսմ նման է՝ առնէք։

Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժողովուրդն՝ ասէ ցնոսա. Լուարուք ինձ ամենեքեան և ի միտ առէք. ոչինչ արտաքուստ ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ի նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

---

Հինգերորդումտ Կիւրակէի Զատկաբաժնի առաքն։

ԳԼՈՒԽ Է. 17։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ իբրեւ եմուտ ի տունն յամբոխէ անտի, հարցաքննէին զնա աշակերտքն վասն առակին։

Եւ ասէ ցնոսա. Այդպէս և դուք անմիտք էք. ոչ իմանայք, եթէ ամենայն որ արտաքուստ ի ներքս մտանէ ի մարդ՝ ոչ կարէ զնա պղծել. զի ոչ եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն՝ և արտաքս ելանէ. և սրբէ զամենայն կերակուրսն։

Եւ ասէր, թէ որ ինչ ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ. զի ի ներքուստ ի սրտէ մարդկան խորհուրդք չարութեան ելանեն. շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սպանութիւնք, ագահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, դիւղութիւնք, չարակնութիւնք, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն։ Այս ամենայն չարիք ի ներքուստ ելանեն, եւ պղծեն զմարդ։

Եւ անտի յարուցեալ եկն ի սահմանս Տիւրոսի և Սիդովնի. եւ մտեալ ի տուն՝ ոչ կամէր յայտնել, եւ ոչ կարաց ծածկել։

Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ, եկն անկաւ առաջի նորա. եւ կինն էր հեթանոս՝ փիւնիկ Ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ ի դստերէ նորա։

Եւ Յիսուս ասէ ցնա. Թոյլ տուր՝ զի նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։

Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, և շունք ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին։

Եւ ասէ ցնա. Վասն այդր բանի՝ երթ, ել դեւն ի դստերէ քումմէ։

Գնաց ՚ի տուն իւր, և եգիտ եղեալ զգեան, եւ զդուստրն՝ զի անկեալ գներ ՚ի մահիճս։

---

Հինգերորդում Սիբակեի Հինգշաբթի առաւն։

ԳԼՈՒԽ Է· 31։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեալ միւսանգամ ՚ի սահմանացն Տիւրոսի եւ Սիդովնի, եւ եկն ՚ի ծովեզրն գալիլեացւոց ՚ի մէջ սահմանացն ՚ի Դեկապոլիս։

Եւ բերին առաջի նորա խուլ մի եւ համր, եւ աղաչէին՝ զի ձեռն դիցէ ՚ի վերայ նորա։

Եւ առեալ զնա ի մէկուսի յամբոխէ անտի, էարկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ եւ ե թուք անդր. և կալաւ զլեզուէ նորա, հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան և ասէ. Եփփաթա, որ է՝ բացիր։

Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա, և խօսէր ուղիղ։ և պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն։

Եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել քարոզէին, և եւս քան զեւս զարմանային և ասէին. Ջամենայնի նայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ, և համրոց խօսիլ։

---

Հինգերորդում Սիբակեի Երբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Ը· 1։

Ընդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բազում էր, և ինչ ոչ ուներին ուտել։ կոչեաց զաշակերտսն իւր՝ եւ ասէ ցնոսա. Գիժամ ես ՚ի վերայ ժողովրդեանդ. զիարդ եւ զքեզ աւուրք են՝ զի առ իս են, և ոչ ուներին զինչ ուտիցեն։

Եւ եթէ արձակեմ զդոսա նոքա իս ՚ի տուն իւրեանց, նքթիցին ՚ի ճանապարհի. զի ոմանք ՚ի դոցանէ ՚ի հեռաստանէ եկեալ են։

Պատասխանի ետուն նմա աշակերտքն նորա. Ուստի՞ կարես յագեցուցանել զդոսա հացիւ յանապատի աստ։

Եւ հարցանէր զնոսա. Քանի՞ նկանակ հաց ունիք։

Եւ նոքա ասեն՝ եօթն։

Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմիլ ՚ի վերայ երկրի. և առեալ զեօթն նկանական՝ գոհացաւ, եբեկ՝ և տայր ցաշա-

կերտան՝ զի արկցեն. և արկին առաջի ժողովրդեանն. և ձըկունս սակաւս ունէին, եւ զայն եւս օրհնեաց, եւ հրամայեաց արկանել։

Կերին՝ և յագեցան, և բարձին զնշխարս կտորոցն եօթն զամբիւղ։

Եւ էին որք կերանն՝ իբրեւ չորք հազարք. եւ արձակեաց զնոսա։

---

Հինգերորդում՝ Սիրակէ Շաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Ը. 10։

Տէրն մեր ցիսուս Քրիստոս։

Եւ նոյնժամայն մտեալ՝ ի նաւ հանդերձ աշակերտօքն՝ եկին՝ ի սահմանս Դալմանուանեայ։

Եկին փարիսեցիքն՝ եւ սկսան վիճել ընդ նմա, եւ խնդրէին ի նմանէ նշան յերկնից՝ փորձելով զնա։

Եւ զայրացաւ յոգի իւր՝ եւ ասէ. Զի՞ է՝ զի ազգս այս նշան խնդրէ. ամէն ասեմ ձեզ. Թէ տացի նշան ազգիս այսմիկ։

Եթող զնոսա, և դարձեալ եմուտ՝ ի նաւ, և գնաց յայնկոյս։

Եւ մոռացան հայք բառնալ, բայց միայն զմի նկանակ ունէին ընդ իւրեանս ի նաւին։

Եւ պատուիրէր նոցա եւ ասէր. Զգոյշ եղերուք՝ ի խմորոյ անտի փարիսեցւոց և՝ ի խմորոյ հերովդիանոսաց։

Եւ խորհէին ընդ միմեանս և ասէին, Թէ զի հացս ոչ ունիմք։

Գիտաց Ցիսուս՝ և ասէ ցնոսա. Զի՞ խորհիք՝ ի սիրտս ձեր, Թերահաւատք, Թէ հաց ոչ ունիք. տակաւին ոչ իմանայք և ոչ յիշէք. ապշութիւն ունի զսիրտս ձեր. աչք գոն՝ եւ ոչ տեսանէք, ականջք են՝ եւ ոչ լսէք. եւ ոչ իմանայք տակաւին, և ոչ յիշէք, յորժամ զհինգ նկանակն ի հինգ հազարսն, եւ քանի՞ սակաւս լի բարձիք զկտորոցն։

Եւ ասեն. երկոտասան։

Եւ յորժամ զեօթն նկանակն ի չորս հազարսն, քանի՞ զամբիւղ լի բարձէք զկտորոցն. և նոքա ասեն. եօթն։

Եւ ասէ ցնոսա. Ոչ զիա՞րդ ոչ իմանայք։

Գան ի Բեթսայիդա, և ածեն առաջի նորա կոյր մի, և աղաչէին զնա՝ զի մերձենայի ի նա։

Եւ առեալ զձեռանէ կուրին՝

եհան արտաքոյ չինին, եթուր յաչս նորա, և ձեռն եդ ի վերայ նորա. և հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՞ ինչ։ Բայցա՝ և ասէր. տեսանեմ զմարդիկս զի չղինն՝ իբրեւ զծառս։ Դարձեալ եդ զձեռն ի վերայ աչաց նորա, եբաց՝ և տեսանէր համարձակ զամենայն։ Այրձակեաց զնա ի տուն իւր և ասէ. ի չէնդ մի՛ մտանիցես, այլ երթ ի տուն քո. և յորժամ ի չէնն մտանիցես, մի՛ ուրեք ասիցես ի չինին։

---

Վեցերորդում կիրակի աւուն։

ԳԼՈՒԽ Ը. 27։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ել Յիսուս աշակերտօքն հանդերձ ի չէնս կեսարեայ Փիլիպպէայ, եւ ի ճանապարհին հարցանէր ցաշակերտսն և ասէր. Զո՞ ուրեք ասեն զինէն մարդիկ՝ թէ իցեմ։ Նոքա ետուն պատասխանի և ասեն. զՅովհաննէս Մկրտիչ, և այլք զԵղիա, և այլք՝ զմի ոք ի մարգարէից անտի։ Ասէ ցնոսա. Իսկ դուք զո՞ ուրեք ասէք զինէն՝ թէ իցեմ։ Պատասխանի ետ Պետրոս, և ասէ ցնա. Դու ես Քրիստոսն։ Եւ սաստեաց ի նոսա՝ զի մի՛ ուրեք ասիցեն զնմանէ։ Եւ սկսաւ ուսուցանել զնոսա, թէ պարտ է Որդւոյ մարդոյ բազում չարչարանս կրել, եւ անարգիլ լերի ցանց և ի քահանայապետից և ի դպրաց, և մեռանիլ և յերիր աւուր յառնել. եւ համարձակ զբանն խօսեցաւ։ Եւ առեալ զնա Մեկուսի Պետրոսի՝ սկսաւ սաստել նմա։ Եւ նա դարձաւ ետես զաշակերտսն, սաստեաց Պետրոսի և ասէ. Երթ յետս իմ սատանայ, զի ոչ խորհիս դու զԱստուածոյն՝ այլ զմարդկանս։ Եւ կոչեալ առ ինքն զժողովուրդն աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա. Եթէ ոք կամի գալ զկնի իմ, ուրացի զանձն իւր, և բարձցէ զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի իմ։ Զի որ կամիցի ապրեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ զանձն իւր վասն Աւետարանին՝ ապրեցուսցէ զնա։

Զինչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ. քանզի զինչ տացէ մարդ փոխանակ անձին իւրոյ։

Զի որ ոք ամօթ համարեսցի զիս և զբանս իմ՝ ի հնացող և ի մեղաւոր ազգիս յայսմիկ, և Որդի մարդոյ յամօթ արասցէ զնա՝ յորժամ եկեսցէ փառօք Հօր իւրոյ եւ Հրեշտակաց սրբոց։

Եւ ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ. զի են ոմանք ի սոցանէ որ աստ կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչեւ տեսցեն զարքայութիւն Աստուծոյ եկեալ զօրութեամբ։

---

Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Ցիսուս զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձին. և յայլակերպ եղեւ առաջի նոցա. և ձորձք նորա եղեն փայլուն ըստ պիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել։

Եւ երեւեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, որք խօսէին ընդ Ցիսուսի։

Պատասխանի եւ Պետրոս եւ ասէ ցՅիսուս. Ռաբբի, բարւոք է մեզ աստ լինիլ. եւ առցուք երիս տաղաւարս, մի Քեզ, և մի Մովսիսի, և մի Եղիայի։

Քանզի ոչ գիտէր զինչ խօսէր, զի զարհուրեալ էին։

Եւ եղեւ ամպ մի հովանի՝ ի վերայ նոցա. ձայն եղեւ յամպոյն անտի՝ և ասէ. Դա՛ է Որդի իմ սիրելի, դմա լուարո՛ւք։

Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր, ոչ եւս զոք ուրեք տեսին, բայց միայն զՅիսուս ընդ իւրեանս։

Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա զի մի՛ ումեք պատմեսցեն զոր տեսին, բայց յորժամ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։

Եւ նոքա զբանն ի մտի ունէին, և խնդրէին ընդ միմեանս՝ թէ զինչ իցէ ի մեռելոցն յառնել։

Հարցին ցնա և ասեն. Զինչ է այն զոր դպիրքն ասեն, եթէ նախ Եղիայի պարտ է գալ։

Նա պատասխանի եւ ասէ. Եղիա նախ եկեալ յառ դարեսցէ զամենայն։

Իսկ զիա՞րդ գրեալ է զՈրդւոյ մարդոյ, զի բազում ինչ չարչարեսցի և անգոնեսցի։

Այլ ես ասեմ ձեզ, եթէ եղիա եկն, և արարին ընդ նմա զինչ և կամեցան, որպէս և գրեալ է վասն նորա։

---

Վերջերոյգում Աբրահէի երկուշաբաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Թ. 13։

Ընդ ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ եկեալ առ աշակերտսն՝ տեսին ամբոխ չուրջ զնոքօք, և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա։

Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին զնա՝ զարմացան, և ընդ առաջ ընթացեալ՝ ողջոյն տային նմա։

Եւ եհարց ցնոսա՝ Թէ զինչ վիճէիք ընդ նոսա։

Պատասխանի ետ մի ումն ի ժողովրդենէն և ասէ. Վարդապետ, ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր, և ուր հասանէ՝ զարկուցանէ զնա, և փրփրէ և կրճտէ զատամունս իւր՝ և ցամաքի. և ասացի ցաշակերտսն քո զի հանցեն. եւ ոչ կարացին հանել զնա։

Պատասխանի ետ նոցա և ասէ. Ով ազգ անհաւատ, մինչեւ երբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցերբ անոյցեմ ձեզ. ածէք զնա առ իս։

Եւ ածին զնա առ նա։ իբրեւ տեսես զնա ոյն, վազվազակի շարժեցոյց զնա, և անկեալ յերկիր թաւալէր և փրփրայր։

Եհարց ցհայր նորա եւ ասէ. Քանի՞ ժամանակք են՝ յորմէ հետէ այդ եղեւ դմա։

Եւ նա ասէ. Ի մանկութենէ. բազում անգամ ի հուր արկանէ զդա և ի ջուր՝ զի կորուսցէ. արդ թէ կարող ինչ ես, օգնեա մեզ, ՏԷր, գթած ցեալ ի վերայ մեր։

Եւ Յիսուս ասէ ցնա. Ասացեր՝ Թէ կարող ես. ամենայն ինչ հնարաւոր է այնմ՝ որ հաւատայն։

Եւ վազվազակի աղաղակեաց հայր մանկանն եւ ասէ. Հաւատամ ՏԷր, օգնեա անհաւատութեանս իմոմ։

Իբրեւ տեսես Յիսուս՝ եթէ կուտի ժողովուրդն ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ և ասէ. Համրդ եւ խուլ ոգի, ես տամ քեզ հրաման, ել ի դըմանէ, և այլ եւս մի մտանիր ցես ի դա։

Եւ աղաղակեաց և յոյժ լըլկեաց զնա՝ և ել. և եղեւ պատանեկան իբրեւ զմեռեալ, մինչեւ բազմայ իսկ ասել՝ Թէ մեռաւ։

Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝ յարոյց զնա, եւ կանգնեցաւ։

Եւ իբրեւ եմուտ նա ի տունն, աշակերտքն առանձինն հարցին զնա. Մեք ընդէր ոչ կարացաք հանել զնա։

Եւ ասէ ցնոսա. Այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահովք և աղօթիւք։

---

Վ. Հեքերդոգամ Վիրակի երէքշաբթի առաւն։

ԳԼՈՒԽ Թ. 29։

Ընդ աեաւն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ անտի ելեալ անցանէին առ գալիլեացւովք, և ոչ կամէր եթէ ոք գիտասցէ։ Քանզի ուսուցանէր զաշակերտան իւր՝ և ասէր ցնոսա, Թէ Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան, և սպանցեն զնա, և իբրեւ սպանցի, յերիր աւուր յարիցէ։

Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և երկնչէին հարցանել զնա։

Եկն ի Կափառնաում. և իբրեւ եմուտ ի տուն, հարցանէր զնոսա. Զի՞նչ վիճէիք զճանապարհին ընդ միմեանս։

Եւ նոքա լռեցին, քանզի ընդ միմեանս վիճէին ի ճանապարհին՝ Թէ ով մեծ իցէ։

Եւ իբրեւ նստաւ՝ կոչեաց զերկոտասանեան, եւ ասէ ցնոսա. Եթէ ոք կամի առաջին լինիլ, եղիցի ամենեցուն կրտսեր՝ և ամենեցուն պաշտօնեայ։

Եւ առեալ մանուկ մի՝ կայոյց ի մէջ նոցա, և ընկալեալ զնա ի գիրկս իւր՝ ասէ ցնոսա. Որ միանգամ յայսպիսւոյ մանկտւոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդունի. և որ զիս ընդունիցի, ոչ զիս ընդունի, այլ զայն՝ որ առաքեացն զիս։

Պատասխանի ետ նմա Յովհաննէս և ասէ. Վարդապետ, տեսաք զոմն, որ յանուն քո դեւս հանէր՝ և զմեր կին ոչ չքէր, և արգելաք զնա։

Եւ նա ասէ. Մի՛ արգելուք զնա. զի ոչ ոք է՝ որ առնէ զօրութիւնս յանուն իմ, և կարիցէ հայհոյել զիս. զի որ ոչն է ընդ մեզ հակառակ, ի մեր կոյս է։

Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանուն իմ՝ Թէ դուք Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ՝ մի՛ կորուսցէ զվարձս իւր։

Եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի ի փոքրկանցս՝ որք հաւատան յիս, լաւ էր նմա առաւել՝ Եթէ արկեալ էր ընդ պարանոց նորա երկան իշոյ, և ընկեցեալ ի ծով։

Եւ եթէ գայթակղեցուսցէ զքեզ ձեռն քո, հատ՝ ընկեա՛ ի քէն. լաւ իցէ քեզ խեղ մտանել ի կեանսն յաւիտենից՝ քան երկուս ձեռս ունիլ և երթալ ի գեհեն ի հուրն անշէջ։

Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի։

Եւ եթէ ոտն քո գայթակղեցուսցէ զքեզ, հատ՝ և ընկեա զնա ի քէն. լաւ իցէ քեզ կաղ մտանել ի կեանսն յաւիտենից, քան երկուս ոտս ունիլ և արկանիլ ի գեհեն ի հուրն անշէջ։

Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի։

Եւ եթէ ակն քո գայթակղեցուսցանէ զքեզ, հան զնա ի քաց. լաւ իցէ քեզ միով ակամբ մտանել յարքայութիւն Աստուծոյ, քան երկուս աչս ունիլ և անկանիլ ի գեհեն։

Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի։

Զի ամենայն ոք հրով յաղեսցի, եւ ամենայն ողջակէզ աղաւ յաղեսցի։

Բարւոք է աղ. եւ եթէ աղն անհամեսցի, ի՞նչ համեսցի. արդ՝ կալարո՛ւք յանձինս ձեր զաղն՝ և խաղաղութիւն արա՛րէ՛ք ընդ միմեանս։

Վ. Հայրապետական Ախոռակի Զորեքշաբթի առաւօտ։

## ԳԼՈՒԽ Ա. 1.

### Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ անտի յարուցեալ գայ ի սահմանս Հրէաստանի, յայնկոյս Յորդանանոյ, և երթայր դարձեալ խռնեալ ժողովուրդն առ նա, եւ որպէս սովոր էր միւսանգամ ուսուցանէր զնոսա։

Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա՝ և ասէին, եթէ արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել։

Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ձի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս։

Եւ նոքա ասեն. Մովսէս հրամանս ետ՝ զգիր մեհնելոյ գրել և արձակել։

Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. վասն խստասրտութեան ձերոյ գրեաց զպատուիրանն զայն։

Այլ ի սկզբանէ արարածոց՝ արու և էգ արար զնոսա Աստուած, և ասէ. վասն այսորիկ թողեալ այր զհայր իւր եւ զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ։

Եւ եղիցին երկուքն ի մարմին մի. և այնուհետեւ ոչ են

երկու , այլ մարմին մի . արդ՝ զոր Աստուած զուգեաց , մարդ մի՛ մեկնեսցէ :

Եւ ի տան դարձեալ աշա-կերտքն զնոյն հարցին ցնա . և ասէ ցնոսա . Եթէ այր արձակեսցէ զկին իւր՝ և արասցէ այլ՝ շնայ . եւ կին՝ եթէ ելցէ յառնէ իւրմէ՝ և եղիցի առն այլում՝ շնայ :

---

Վկայաբանութիւն Ավետարանի Հինգշաբթի առաւօտի :

ԳԼՈՒԽ Ժ . 13 .

Առ տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Եւ մատուցանէին առ նա մանկունք՝ զի ձեռն դիցէ նոցա , իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ՝ որք մատուցանէին :

Իբրեւ տեսս Յիսուս , բարկացեալ սաստեաց նոցա եւ ասէ . Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս , եւ մի արգելուք զդոսա . զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ :

Ամէն ասեմ ձեզ , որ ոչ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ՝ ոչ մտցէ ի նա :

Եւ առեալ զնոսա ի գիրկս՝ ձեռն եդ ի վերայ և օրհնեաց զնոսա :

Եւ ընդ ելանելն նորա անտի ի ճանապարհ , տհասեալ ումն մեծատուն ընդդիմացեալ ի ծունր իջանէր , հարցանէր ցնա՝ և ասէր . Վարդապետ բարի , զինչ արարից զի զկեանս յաւիտեանական ժառանգեցից :

Եւ Յիսուս ասէ ցնա . Ջի՞ ասես զիս բարի . չէք որ բարի՝ բայց մի Աստուած . զպատուիրանս գիտես , մի՛ սպանանիր , մի՛ գողանար , մի՛ սուտ վկայեր , պատուեա՛ զհայր քո և զմայր :

Նա պատասխանի ետ և ասէ ցնա . Վարդապետ , զայդ ամենայն արարի ի մանկութենէ իմմէ , արդ՝ զինչ եւս պակաս իցեմ :

Եւ Յիսուս հայեցեալ ի նա՝ սիրեաց զնա , և ասէ ցնա . Մի ինչ պակաս է ի քէն . եթէ կամիս կատարեալ լինիլ , երթ՝ զոր ինչ ունիս վաճառեա՛ եւ տո՛ւր աղքատաց . և ունիցիս գանձս յերկինս . և ա՛ռ զխաչն և հետեւեա՛ զինի իմ :

Եւ նա խոժոռեալ ընդ բանն՝ գնաց տրտում , զի ունէր ինչս բազումս :

Եւ հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յիսուս , ասէ ցաշակերտսն . Ջիաւրդ դժուարին է՝ որ զինչս

ուն՝ին , մտանել յարքայու-
թիւն Աստուծոյ :

Եւ աշակերտքն զարմացեալ
էին ի վերայ բանիցն նորա . իսկ
Յիսուս դարձեալ պատասխանի
ետ նոցա և ասէ , Որդեակք ,
որչափ դժուար է յոյսացեալ
լոյ՝ի՝նչ՝ մտանել յարքայու-
թիւն Աստուծոյ . դիւրին է
մալլոյ ընդ ծակ ասղան անցա-
նել քան մեծատան յարքայու-
թիւն Աստուծոյ մտանել :
Եւ նոքա առաւել և ս զարմա-
նային՝ և ասէին ընդ միմեանս .
իսկ ո՞ կարասցէ ապրիլ :
Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝
ասէ . Առ՝ի մարդկանէ այդ
անհնարին է , այլ ոչ առ Աս-
տուծոյ . զի ամենեքեան կա-
րելիք են առ Աստուած :

---

Վերջերոյդում Սիրակի Ընթերցուած :

ԳԼՈՒԽ Ը . 28 :

Առ տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Սկսաւ ասել ցնա Պետրոս .
Ահաւասիկ մեք թողաք զա-
մենայն , և եկաք զկնի քո :
Պատասխանի ետ Յիսուս և
ասէ . Ամէն ասեմ ձեզ , ոչոք է՝
որ եթող զտուն , կամ զեղբարս
կամ զքոյր , կամ զհայր կամ
զմայր , կամ զորդիս , կամ զա-
գարակ՝ վասն իմ՝ կամ վասն
Աւետարանին , եթէ ոչ առ-
նուցու հարիւրապատիկ այժմ
յայսմ ժամանակի՝ տուն , և
եղբարս , և քոյր , և մայր , և
որդիս , և ագարակս հալածանօք
հանդերձ , և յաշխարհին որ
գալոցն է՝ զկեանն յաւիտե-
նականս :
Զի բազումք եղիցին առաջինք՝
յետինք , և յետինք՝ առաջինք :
Եւ էին ի ճանապարհի մին-
չեւ ելանէին Երուսաղէմ , և
երթայր Յիսուս առաջի քան
զնոսա , և զարմացեալ էին՝ որք
զհետեւն երթային , և երկնչէին :

---

Վերջերոյդում Սիրակի Շաբաթի առաւօտն :

ԳԼՈՒԽ Ժ . 33 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Եւ առեալ միւսանգամ զերկ-
տասանեան առանձինն՝
սկսաւ ասել նոցա որ ինչ անցք
անցանելոց իցեն ընդ նա . Թէ
ահաւասիկ ելանեմք Երու-
սաղէմ . և Որդի մարդոյ մատ-
նեսցի քահանայապետիցն և
դպրաց , և դատապարտեսցեն
զնա ի մահ , և մատնեսցեն զնա
հեթանոսաց . և կատակեսցեն
զնովաւ , և հարկանիցեն զնա ,

և Թբանիյեն՝ ի նա, և սպան-
յեն, և յերիր աւուր յարիցէ։
Եւ երթային առ նովաւ Յա-
կովբոս և Յովհաննէս՝ որդիքն
Զեբեդեայ, եւ ասեն ցնա.
Վ՚արդապետ, կամիմք զի՝ զոր
ինչ խնդրեսցուք մեք ի քէն՝
արասցես մեզ։
Եւ նա ասէ ցնոսա. Ձի՞նչ կա-
միք յինէն՝ զի արարից ձեզ։
Եւ նոքա ասեն ցնա. Տ՚ւր մեզ՝
զի նստցուք մի յաջմէ քումմէ
և մի յահեկէ՝ ի փառսն քումմ։
Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնոսա. Ոչ գիտէք զինչ
խնդրէք. կարէ՞ք ըմպել զբա-
ժակն՝ զոր ես ըմպելոց եմ,
կամ զմկրտութիւնն մկրտիլ՝
զոր ես մկրտելոց եմ։
Եւ նոքա ասեն ցնա. Կարեմք։
Եւ Յիսուս ասէ ցնոսա. Զբա-
ժակն զոր ես ըմպելոց եմ՝ ըմ-
պիջէք, և զմկրտութիւնն՝ զոր
ես մկրտելոց եմ՝ մկրտիջիք.
այլ նստուցանել ընդ աջմէ
իմմէ և ընդ ահեկէ՝ ոչ է իմ
տալ, այլ որոց պատրաստեալ
իցէ։
Եւ լուեալ զայն տասանցն,
սկսան բարկանալ Յակովբայ և
Յովհաննու։
Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ
ինքն, և ասէ ցնոսա. Գիտէք՝
զի որք յանուանի իշխանքն են
հեթանոսաց, տիրեն նոցա. և
մեծամեծք նոցա իշխեն նոցա։
Ոչ նոյնպէս իցէ և ի ձերումս
միջի. այլ որ կամիցի ի ձէնջ
մեծ լինիլ, եղիցի ձեր պաշտօ-
նեայ. եւ որ կամիցի ի ձէնջ
առաջին լինիլ՝ եղիցի ամենե-
ցուն ծառայ։
Քանզի և Որդի մարդոյ ոչ եկն
առնուլ պաշտօն, այլ պաշտել
եւ տալ զանձն իւր փրկանս՝
փոխանակ բազմաց։

---

Եօթնեկրորդում կիւրակէի առաքն։

ԳԼՈՒԽ Ժ. 46։

Ընդ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ գան Յերիքով. եւ ընդ
ելանելն նորա Յերիքովէ
աշակերտօքն եւ բազում ժո-
ղովրդով, որդի Տիմէի Բարտի-
մէոս կոյր՝ նստեր մոտ ճանապարհի։
Իբրեւ լուաւ թէ Յիսուս
Նազովրեցի է, սկսաւ աղա-
ղակել և ասել. Որդի Դաւթի
Յիսուս, ողորմեա՛ ինձ։
Եւ սաստէին նմա բազումք
զի լռեսցէ. և նա առաւել եւս
աղաղակէր. Որդի Դաւթի,
ողորմեա՛ ինձ։

Զտեղի էառ Յիսուս, և հրաժայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. Քաջալեր եաց, արի՝ կոչէ զքեզ։

Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ և եկն առ Յիսուս։

Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Ի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ։

Ասէ ցնա կոյրն. Ռաբբունի, զի բացայց։

Եւ Յիսուս ասէ ցնա. Երթ, հաւատք քո կեցուցին զքեզ։ Եւ վաղվաղակի բացաւ, եւ երթայր զհետ նորա ի ճանապարհին։

—

Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ ի Բեթփագէ և ի Բեթանիա մօտ ի լեառն Ձիթենեաց, առաքէ երկուս յաշակերտաց անտի, եւ ասէ ցնոսա. Երթայք դուք ի գեօղն՝ որ ընդդէմ ձեր կայ. և նոյն ժամայն իբրեւ մտանէք ի նա, գտանիցէք յաւանակ մի կապեալ, յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նստաւ, լուծէք զնա և ածէք։

Եւ եթէ ոք ասացէ ցձեզ՝ եթէ զի՞ լուծանէք՝ զայսպէս ասասջիք՝ եթէ տէառն իւրում պիտոյ է. և վաղվաղակի առաքեսցէ զնա այսր։

Զոգան և գտին զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ ի փողոցի անդ, և լուծին զնա։

Եւ ոմանք յորոց անդն կային, ասեն ցնոսա. Զի՞ գործէք զի լուծանէք զյաւանակդ։

Եւ նորա ասեն ցնոսա՝ որպէս ասացն Յիսուս. և թոյլ ետուն նոցա։

Ածեն զյաւանակն առ Յիսուս, եւ արկանեն ի վերայ նորա հանդերձս, եւ նստաւ ի վերայ նորա։

Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին ի վերայ ճանապարհին, եւ այլք ոստս ի ծառոց հատանէին՝ և արկանէին զճանապարհսն։

Եւ որք առաջի եւ զկնի երթային՝ աղաղակէին և ասէին. Ովսաննա բարձրելոյն. օրհնեալ որ գայդ յանուն Տէառն. օրհնեալ թագաւորութիւնդ հօր մերում Դաւթի, խաղաղութիւն յերկինս եւ փառք ի բարձունս։

Եւ եմուտ Յիսուս Երուսաղէմ՝ ի Տաճարն, և հայեցաւ շուրջ զամենեսեան զնովքն, և զի էր երեկոյացեալ ժամն, ել ի Բե-

Թանիա երկոտասանիւքն հանդերձ։

---

Եւ ի մտանելոյն ի տաճարն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ԳԼՈՒԽ ԺԲ. 12։

Եւ ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին ի Բեթանիա՝ քաղցեաւ. և տեսս թզենի մի ի բացուստ տերեւալից. և եկն՝ թէ գտանիցէ ինչ ի նմա. և իբրեւ եկն ի նա, ոչինչ եգիտ՝ բայց միայն տերեւս. վի ոչ էր իսկ ժամանակ թզոյ։ Պատասխանի ետ և ասէ ցնա. Մի՛ եւս ոք յաւիտեան ի քէն պտուղ կերիցէ։

Եւ լսէին աշակերտքն նորա։ Գան Երուսաղէմ. և մտեալ ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականան և զգնողս՝ որք էին ի տաճարին. և զսեղանս հատաւաճառացն ցրուեաց, և զաթոռս աղաւնեվաճառացն կործանեաց. և ոչ թողոյր՝ եւ թէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն։

Ուսուցանէր ցնոսա և ասէր. Թէ գրեալ է, տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց. և դուք արարէք զնա գայրս աւազակաց։

Լուան քահանայապետքն եւ դպիրքն, և խնդրէին թէ որպէս կորուսցեն զնա, բայց երկնչէին ի նմանէ, զի ամենայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ ուսուցմն նորա։

Եւ իբրեւ երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն ելանէին։

Եւ մինչդեռ այգուցն առնվաս անցանէին, տեսին զթզենին ցամաքեալ յարմատոյ. յիշեաց Պետրոս՝ եւ ասէ ցնա. Ռաբբի, ահաւասիկ թզենին՝ զոր անիծեր՝ ցամաքեցաւ։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ունիցիք զհաւատս Աստուծոյ, ամէն ասեմ ձեզ, որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր եւ անկիր ի ծով, և ոչ երկմտիցէ ի սրտի իւրում, այլ հաւատացէ՝ թէ զոր ասէն լինի, եղիցի նմա՝ զոր ինչ և ասիցէ։

Վասն այսորիկ ասեմ ձեզ զամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ՝ խնդրիցէք և հաւատացէք թէ առնուցուք՝ եղիցի ձեզ։

Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք, եթէ ունիցիք ինչ զուժեքէ. զի և Հայրն ձեր՝ որ յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր։

Զի եթէ դուք ոչ թողուցուք, եւ ոչ Հայրն ձեր՝ որ յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր։

Եօթնաբթոգամ կիրակէի երեքշաբթի աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԸ. 27։

Ընդ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Գան մի ւսանգամ յերուսաղէմ. եւ մինչդեռ ՚ի տաճարի անդ զգնայր, գան առ նա քահանայապետքն եւ դպիրք և ծերք, և ասեն ցնա. Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Հարցից եւ ես զձեզ բան մի, տուք ինձ պատասխանի, և ես ասացից ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։

Մկրտութիւնն Յովհաննու յերկնից էր՝ եթէ ՚ի մարդկանէ, տուք ինձ պատասխանի։ Խորհէին ընդ միմեանս՝ եւ ասէին. Եթէ ասեմք, եթէ յերկնից, ասէ ցմեզ՝ իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. այլ եթէ ասեմք՝ ՚ի մարդկանէ, երկնչիմ ՚ի ժողովրդենէն. զի ամենքին զիտէին զՅովհաննէս՝ թէ Մարգարէ էր։

Պատասխանի ետուն եւ ասեն ցնա. Զգիտեմք։

Եւ Յիսուս ետ նոցա պատասխանի եւ ասէ. Եւ ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։

Եւ սկսաւ խօսիլ ընդ նոսա առակօք եւ ասել. Այր մի տնկեաց այգի, և էած շուրջ զնովաւ ցանգ, և գուբ հնձան փորեաց, և շինեաց աշտարակ, եւ ետ զնա ցմշակս եւ գնաց ՚ի տար աշխարհ։

Եւ առաքեաց առ մշական ՚ի ժամանակի ծառայ մի, զի ՚ի մշակաց անտի առցէ ՚ի պտղոց այգւոյն. և նոցա կալեալ՝ գան հարին զնա, և արձակեցին ունայն։

Դարձեալ առաքեաց առ նոսա այլ ծառայ, եւ զնա կատարինատեցին՝ և արձակեցին անարգեալ։

Եւ դարձեալ այլ առաքեաց, և զնա սպանին. և զբազումս այլս, զոմանս՝ հարկանէին, և զոմանս՝ սպանանէին։

Ապա որդի մի եր սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ, և ասէ. Թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։

Իսկ մշակքն իբրեւ տեսին զնա թէ գայ, ասեն ցմիմեանս.

սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, և մեր լիցի ժառանգութիւնն. և կալեալ զնա սպանին, և հանին արտաքոյ այգւոյն։

Արդ ընչ արասցէ տէր այգւոյն։

Եկեսցէ և կորուսցէ զվէրսն, և տացէ զայգին ի ձեռս այլոց։ Եւ ոչ զայն ընթերցեալ իցէ ձեր, թէ զվէմն՝ զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան. ի Տեառնէ եղեւ այս, և է սքանչելի յաչս մեր։

Եւ խնդրէին զնա ունել, եւ երկեան ի ժողովրդենէ անտի, զի գիտացին՝ թէ առ նոսա ասաց զառակն. եւ թողին զնա և գնացին։

Եւ առաքեն առ նա զումանս ի փարիսեցւոց անտի եւ ի Հերովդիանոսից, զի զնա որսացեն բանիւ։

Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ և ասէին. Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս երեսս մարդկան, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես. արդ ա՞ սա մեզ արժանի է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ. տացո՞ւք եթէ ոչ տացուք։

Եւ ՅԻսուս գիտաց զկեղծաւորութիւնն նոցա, ասէ ցնոսա. Զի՞ փորձէք զիս, կեղծաւորք. բերէ՛ք ինձ դահեկան մի՝ զի տեսից։

Եւ նոքա բերին. և ասէ ցնոսա. Ո՞ր է պատկերս այս կամ գիր։ Եւ նոքա ասեն ցնա. կայսեր։ Պատասխանի ետ ՅԻսուս, և ասէ ցնոսա. Երթա՛յք, տո՛ւք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ. և զարմացան ընդ նմա։

---

Եօթներորդաւմ Ափակիէ Զաքէքեանցի աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԲ. 18.

Ա՛ ՏԷրն մեր ՅԻսուս Քրիստոս։

Գան առ նա սադուկեցիքն՝ որք ասեն՝ թէ չիք յարութիւն. հարցանէին ցնա և ասէին. Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի, և թողուցու կին՝ եւ որդի ոչ թողուցու, առցէ եղբայր նորա զկինն նորա եւ յարուսցէ զաւակ եղբօր իւրում։

Արդ՝ եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն էառ կին՝ եւ մեռաւ, և ոչ եթող զաւակ.

և երկրորդն էառ զնոյն, և մե-
ռաւ, և ոչ նա եթող զաւակ.
նոյնպէս և երրորդն էառ զը-
նոյն. և եօթանեքեան իսկ, և
ոչ թողին զաւակ՝ յետ ամե-
նեցուն մեռաւ և կինն։
Այդ ի յարուԹեանն՝ յորժամ
յառնիցեն, ոյր ի նոցանէ լի-
նիցի կինն. զի եօթանեքեան
կալան զնա կին։
Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնոսա. Ո՞չ վասն այդորիկ
իսկ մոլորեալ էք, զի ոչ գիտէք
զգիրս եւ ոչ զզօրուԹիւնն
Աստուծոյ։
Զի յորժամ ի մեռելոց յա-
րիցեն, ոչ արք կանայս առնեն,
եւ ոչ կանայք արանց լինին.
այլ իբրեւ զհրեշտակս իցեն՝
որք յերկինս են։
Այլ վասն յարուԹեան մե-
ռելոց զի յառնեն, ո՞չ իցէ ըն-
Թերցեալ ձեր ի գիրն Մով-
սիսի՝ ի մորենւոջն, որպէս ա-
սաց ցնա Աստուած. Ես եմ,
ասէ. Աստուած Աբրահամու,
Աստուած Իսահակայ, և Ա-
ստուած Յակովբայ. և ոչ է Ա-
ստուած մեռելոց՝ այլ կենդա-
նեաց. և արդ՝ դուք յոյժ մո-
լորեալ էք։
Եւ մատուցեալ ոմն ի դպ-
րացն՝ ասէր նոցա մինչ վիճէին.
իբրեւ ետես Թէ բարւոք ետ
նոցա զպատասխանին, եհարց
ցնա և ասէ. Ո՞ր պատուիրանն
է առաջին։
Եւ Յիսուս ասէ ցնա. առա-
ջին քան զամենայն, Լո՛ւր Իս-
րայէլ, տէր Աստուած մեր
Տէր մի է. եւ սիրեսցես զՏէր
Աստուած քո յամենայն սրտէ
քումմէ, և յամենայն անձնէ
քումմէ, և յամենայն մտաց
քոց, և յամենայն զօրուԹենէ
քումմէ. այս է առաջին պա-
տուիրան։
Եւ երկրորդն նման սմին. սի-
րեսցես զընկեր քո իբրև զանձն
քո. մեծ քան զսոսա այլ պա-
տուիրան ոչ գոյ։
Եւ ասէ ցնա դպիրն. Բարւոք է
վա՛րդապետ, ճշմարտուԹեամբ
ասացեր՝ Թէ մի է Աստուած,
և ոչ գոյ այլ բաց ի նմանէ. և
սիրելն զնա յամենայն սրտէ,
և յամենայն զօրուԹենէ, և
յամենայն մտաց, և սիրել զըն-
կերն իբրեւ զանձն, առաւելէ
քան զողջակէզս և զպահս։
Եւ տեսեալ Յիսուսի Թէ ի-
մաստուԹեամբ ետ պատաս-
խանին՝ ասէ ցնա. Ջես հեռի
յարքայուԹենէն Աստուծոյ։
Եւ ոչ եւս ոք իշխեր ինչ հար-
ցանել ցնա։

Եօթներրորդում Վերակէի Հինգշաբթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԶ. 35։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ՝ մինչ ուսուցանէր ի տաճարին. Զիա՞րդ ասեն դպիրքն, եթէ Քրիստոսն՝ որդի Դաւթի է։

Եւ ինքն Դաւիթ Հոգւովն Սրբով ասէ. Ասաց Տէր Տեր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչ չեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։

Արդ՝ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ իցէ որդի նորա։

Եւ բազում ժողովուրդ լսէր նմա քաղցրութեամբ։

Եւ ասէր ուսուցանելով ի վարդապետութեան իւրում. Զգոյշ լերուք ի դպրաց անտի՝ որք կամին ի հանդերձս երեւելիս շրջիլ, զնախողջոյնս խընդրել ի հրապարակս, և զնախաթոռս ի ժողովուրդս, և զգահագլուխս ընթրեաց. որք ուտեն զտուներս այրեաց, պատճառանաւք յերկարեն զաղօթս, զի առաւել եւս դատաստանս ընկալցին։

Կայր Յիսուս ընդդէմ գանձաւնակին, տեսանէր թէ զիա՞րդ ժողովուրդն արկանէր պղինձ ի գանձանակն. և բազում մեծատունք արկին բազում ինչ. եկն այրի մի՝ և էարկ երկուս լումայս, որ է նաբաթակիտ մի։ Եւ կոչեալ առ ինքն զաշակերտան՝ ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ. զի այրին այն տառապեալ՝ շատ էարկ քան զամենեսեան ի գանձանակն. քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին, այլ նա ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր՝ էարկ, զոյիւ չափ զկեանս իւր։

---

Եօթներրորդում Վերակէի Ուրբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԳ. 1։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ելանելն նորա ի տաճարէ անտի, ասէ ցնա մի յաշակերտացն նորա. Վարդապետ, տե՛ս՝ որպիսիք են քարինքս, և որպիսիք շինուածք։ Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Տեսանե՞ս զայդ ամենայն շինուած, ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի քար ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի։

Եւ մինչ նստէր նա ի լերինն Ձիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն՝ Պետրոս, եւ Յակովբոս, և Յովհաննէս, և Անդրեաս. Ասա մեզ՝ երբ լինիցի այդ. և ընչ նշան է՝ յորժամ կատարեսցի այդ ամենայն։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Զգոյշ կացէք, մի՛ ոք զձեզ խաբեսցէ. զի բազումք եկեսցեն յանուն իմ, և ասիցեն՝ Թէ ես եմ Քրիստոս, եւ զբազումս մոլորեցուսցեն։

Այլ յորժամ լսիցէք պատերազմունս, և համբաւս պատերազմաց՝ մի՛ խռովիցիք, զի պարտ է լինիլ. բայց չէ է կատարած։

Զի յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ. և եղիցին շարժմունք ի տեղիս տեղիս, սովք եւ սրածութիւնք և խռովմունք. այլ այն ամենայն սկիզբն է երկանց։

Եւ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, և ի ժողովուրդս տանջիցիք, և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն իմ, ի վկայութիւն նոցա. և ամենայն հեթանոսաց, բայց նախ պարտ է Աւետարանիս քարոզել։

Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, մի՛ յառաջագոյն հոգայցէք, և մի՛ զմտաւ ածիցէք՝ Թէ զինչ խօսիցիք. այլ որ ինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ոչ դուք էք՝ որ խօսիցիք՝ այլ Հոգին Սուրբ։

Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, և հայր՝ զորդի. և յարիցեն որդիք ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա. և եղիջիք ատելեալք յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ։

Եւ յորժամ տեսանիցէք զգպծութիւն աւերածին՝ զի կայցէ ի տեղոջ ուր չիցէ արժան. որ ընթեռնուն՝ ի միտ առցէ։

Յայնժամ որք ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս. և որ ի վերայ տանեացն իցէ՝ մի՛ իջցէ ի տունն, և մի՛ մտցէ բառնալ ինչ ի տանէ իւրմէ. և որ յագարակին իցէ՝ մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր։

Բայց վա՛յ իցէ յղեաց և սնուցուսց յաւուրսն յայնոսիկ։

Յաղօթս կացէք՝ զի մի՛ ձմերանի լինիցի։

Եղիցին աւուրքն այնօրիկ նեղութեան, որպէս ոչ եղեն երբէք այնպիսիք 'ի սկզբանէ արարածոց մինչեւ յայժմ, և մի՛ այլ լիցի։

Եւ եթէ ոչ էր կարճեալ Աստուածոյ զաւուրսն զայնոսիկ՝ վասն ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վասն ընտրելոցն՝ զորս ընտրեաց՝ կարճեաց զաւուրսն զայնոսիկ։

Յայնժամ եթէ որ ասիցէ ձեզ՝ եթէ ահաւասիկ է Քրիստոս կամ աւանիկ, մի՛ հաւատայցէք։

Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տայցեն նշանս և արուեստս՝ առ 'ի մոլորեցուցանելոց եթէ հնար ինչ իցէ և զընտրեալսն։

Բայց դուք զգոյշ եղերուք. ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամենայն։

Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տայցէ զլոյս իւր, և աստեղք երկնից թօթափեսցին, և զօրութիւնք երկինս՝ շարժեսցին։

Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք զօրութեամբ և փառօք բազմօք։

Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր, և ժողովեսցէ զընտրեալս իւր 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկրի մինչեւ 'ի ծագս երկնից։

Բայց դուք 'ի թզենւոյ անտի ուսջիք զառակն. յորժամ տակաւ ոստքն նորա կակղանայցեն, եւ տերեւս արձակիցի 'ի նմա՝ գիտէք թէ մերձ է ամառն. նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ՝ գիտասջիք թէ մերձ է առ դուրս։

Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի։

Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն։

Այլ վասն աւուրն այնորիկ և ժամուն՝ ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս՝ և ոչ Որդի, բայց Հայր միայն։

Զգոյշ եղերուք, սկեցէք եւ կացէք յաղօթս. զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ։

Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ, թողոյց զտունն իւր, և տայէ ծառայից իւրոց իշխանութիւն, և իւրաքանչիւր զգործս իւր, եւ դռնապանին պատուիրէ տայցէ՝ զի արթուն լինիցի։

Այդ՝ արիւն կայէք, զի ոչ պիտէք երբ տէր տանն դայցէ, յերեկորեայ, եթէ ի միջ գիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդառաւօտս, գուցէ եւ կեալ յանկարծակի գտանիցէ զձեզ ի քուն։

Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝ արիւն կայէք։

---

Եսթինէրրոգեամ Սիբակիի շաբաթի առաւօտ։

ԳԼՈՒԽ ԺԴ. 1։

Վ՚ան ընթրեայ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր զատիկն եւ բաղարջակերք յետ երկուց աւուրց. խնդրէին քահանայապետքն և գպիրք՝ եթէ զիարդ զնա նենգութեամբ կալեալ սպանանիցեն. բայց ասէին՝ թէ մի՛ ի տօնի աստ, զի մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն։

Եւ մինչ էր ի Բեթանիա ի տան Սիմոնի բորոտի բազմեալ, եկն կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, եւ բեկեալ զշիշն՝ հեղ ի վերայ գլխոյ նորա։ Եւ աշակերտքն զայրեին եւ ասէին. Ընդէ՞ր եղեւ կորուստ իւղոյդ այդորիկ. մարթ էր զայդ իւղ վաճառել աւելի քան զերիս հարիւր դահեկանի, և տալ աղքատաց։

Եւ զայրանային նմա յոյժ. Եւ Յիսուս ասէ ցնոսա. Թոյլ տուք զնա. զի՞ աշխատ առնէք, զի գործ մի բարի գործեաց դա յիս. յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս. այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք։

Զոր ունէր՝ արար. յառաջագոյն խնկեաց զմարմին իմ՝ ի նշան պատանաց։

Ամէն ասեմ ձեզ, ուր և քարոզեսցի Աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, եւ զոր արար դա՝ խօսեսցի վասն յիշատակի դորա։

Եւ Յուդա Իսկարիովտացի մի յերկոտասանից անտի՝ գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նոցա։

Եւ նոքա իբրեւ լուան՝ խնդացին, եւ խոստացան տալ նմա արծաթ. և խնդրէր՝ թէ զիարդ պարապով մատնեսցէ զնա։

Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն՝ յորում զպաս էին զառնէին, ասեն ցնա աշակերտքն. Ո՞ւր կամիս՝ երթիւ

ցօրք պատրաստեացուք, զի կե-
րիցես զզատիկն։

Եւ առաքէ երկուս յաշակեր-
տաց անտի՝ և ասէ ցնոսա. Եր-
թայք ի քաղաք, և իբրեւ մը-
տանիցէք ի քաղաքն՝ պատա-
հեացէ ձեզ այր մի՝ որ սափոր
ջրոյ յօսս ուղիցի, երթայք
զհետ նորա. և յորտուն մտա-
նիցէք, ասասջիք ցտանուտէրն.
վարդապետ ասէ՝ ո՞ւր են իջա-
վանքն իմ, ուր աշակերտօքս
ուտիցեմ զզատիկն. եւ նա
ցուցցէ ձեզ վերնատունն մի
մեծ զարդարեալ. անդ պատ-
րաստեացիք մեզ։

Եւ գնացին պատրաստել ա-
շակերտքն նորա. եկին ի քա-
ղաքն, և գտին որպէս ասացն
նոցա. և պատրաստեցին զզա-
տիկն։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ գայ
երկոտասանիւքն հանդերձ։

Եւ իբրեւ բազմեցան, և դեռ
ուտէին, ասէ Յիսուս. Ամէն
ասեմ ձեզ՝ զի մի ոմն ի ձէնջ
մատնելոց է զիս, որ ուտէ
իսկ ընդ իս։

Եւ նոքա սկան տրտմիլ եւ
ասել մի ըստ միոջէ. միթէ
ես իցեմ, և միւսն՝ միթէ ես
իցեմ։

Եւ պատասխանի ետ և ասէ
ցնոսա. Մի յերկոտասանից
այսր, որ միասց ընդ իս ի
սկաւառակի։

Ամէն որդի մարդոյ երթայ՝ որ-
պէս գրեալ է վասն նորա. բայց
վայ իւրմէ մարդոյն այնմիկ՝ որով
ձեռն որդի մարդոյ մատնեսցի.
լաւ էր նմա՝ թէ չէր իսկ ծնեալ
նէտ մարդն այն։

Եւ մինչդեռ ուտէին, ա-
ռեալ Յիսուսի հաց՝ օրհնեաց
և եբեկ՝ ետ նոցա, եւ ասէ.
Առէք, այդ է Մարմին իմ։

Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ,
և ետ նոցա. և արբին ի նմանէ
ամենեքեան. եւ ասէ ցնոսա.
Այս է Արիւն իմ նորոյ ուխ-
տի, որ փոխանակ բազմաց հե-
ղանի։

Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ եւս
յաւելից ըմպել ի բերոյ որ-
թոյ մինչեւ ցօրն յայն՝ յոր-
ժամ արբից զնա նոր յարքա-
յութեան Աստուծոյ։

Եւ գոհացեալ՝ ելին ի լեառն
Ձիթենեաց։

ԳԼՈՒԽ ԺԹ. 27։

Վասն մատնութեան Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ամենեքեան գայթակղեցջիք զիս ի գիշերի այսմիկ. զի գրեալ է, թէ հարից զհովիւն և ոչխարքն ցրուեսցին։ Այլ յետ յարուցանելոյ իմոյ՝ յառաջագոյն երթայց քան զձեզ ի Գալիլեա։ Պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա. Թէպէտ և ամենեքին գայթակղեսցին, այլ ես ոչ։ Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ քեզ, թէ դու իսկ յայսմ գիշերի մինչեւ հառաւօտ խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս։ Իսկ Պետրոս առաւել եւս պնդէր և ասէր. Եթէ մեռանիլ եւս հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրասցայց։ Նոյնպէս և ամենեքեան ասէին։

Գան ի գեօղն՝ որում անուն էր Գեթսեմանի. և ասէ ցաշակերտսն. Նստարուք աստ՝ մինչեւ ես յաղօթս կացից։ Եւ առնու ընդ իւր զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և սկսաւ տրտմիլ և հոգալ։ Յայնժամ ասէ ցնոսա. Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ. մնայք աստ և արթուն կացէք։

Եւ մատուցեալ սակաւիկ մի յառաջ, անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր. և կայր յաղօթս, զի եթէ հնար ինչ է՝ անցցէ ի նմանէ ժամն, և ասէ, Աբբա՝ Հայր, ամենայն ինչ քեզ հնարաւոր է, անցո զբաժակս զայս ինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու կամիս։

Եւ գայ գտանէ զնոսա զի նընջէին, եւ ասէ ցՊետրոս. Սիմոն, ննջե՞ս. ոչ կարացեր ժամ մի արթուն կալ։

Արթուն կացէք եւ յաղօթս կացէք, զի մի մտջիք ի փորձութիւն. ոգին յօժար է՝ բայց մարմինն տկար։

Եւ դարձեալ չոգաւ՝ եւ կաց յաղօթս, և զնոյն բան ասաց։ Դարձաւ միւսանգամ անդրէն, և եգիտ զնոսա ի քուն. քանզի էին աչք նոցա ծանրացեալք, և ոչ գիտէին թէ զինչ պատասխանի տացեն նմա։

Գայ երրորդ անգամ, և ասէ ցնոսա. Ննջեցէք այսուհետեւ և հանգիրուք, զի հասեալ է վախճան. եկն ժամ՝ եւ ահա

Որդի մարդոյ մատնի ՚ի ձեռս մեղաւորաց, ճն արիք գնասցի՛ք, ել ահաւասիկ մերձեցաւ՝ որ մատնելոց է զիս։

Եւ մինչդեռ նա զայն խօսէր, գա՛յ Յուդա Իսկարիովտացի՝ մի յերկոտասանից անտի, և ընդ նմա ամբոխ սուսերօք և բրօք, ՚ի քահանայապետին եւ ՚ի դպրաց և ՚ի ծերոց։

Տուեալ էր նշան մատնչին՝ և ասէր. Ընդ որում հաս համբուրեցից՝ նա է, կալջի՛ք զնա եւ տարջի՛ք զգուշութեամբ։

Եւ մատուցեալ վազվազակի՛ ասէ ցնա. Ռաբբի, Ռաբբի. և համբուրեաց զնա։

Եւ նորա արկին ՚ի նա ձեռս՝ և կալան զնա։

Եւ մի ոմն յայնցանէ՝ որք ընդ վաւն կային՝ ձգեաց զսուր, և եհար զծառայ քահանայապետին, և ՚ի բաց եհան զունկն նորա։

Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնոսա. Իբրեւ ՚ի վերայ աւազակի ելիք սուսերօք եւ բրօք՝ ունիլ զիս. Հանապազ առ ձեզ էի՝ եւ ուսուցանէի ՚ի տաճարին, և ոչ կալա՛ք զիս. այլ զի լցին գիրք մարգարէից։ Յայնժամ Թողին զնա աշակերտքն ամենեքին՝ և փախեան։

Եւ ոմն երիտասարդ զհետ երթայր նորա՝ արկեալ զնեարեւ կտաւ մի ՚ի մերկութ. ուստին զնա երիտասարդքն. եւ նորա Թողեալ զկտաւան՝ փախեաւ մերկ ՚ի նոցանէ։

Եւ տարան զՅիսուս առ քահանայապետն Կայիափա. եւ գային ընդ նմա ամենայն քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք։

Եւ Պետրոս երթայր զհետ նորա՝ մինչեւ ՚ի ներքս իսկ ՚ի գաւիթ քահանայապետին, և նստէր ընդ սպասաւորան եւ ջեռնոյր առ լուսով։

Իսկ քահանայապետքն և ամենայն ատեանն խնդրէին հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա, և ոչ գտանէին. զի բազումք սուտ վկայութիւն վկայէին զնմանէ, և նման միմեանց ոչ էին վկայութիւնքն։

Ապա յարուցեալ վկայէին սուտ զնմանէ և ասէին, Թէ մեք լուաք ՚ի դմանէ զի ասէր. Ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ, և զերիս աւուրս չինեցից զայլ՝ առանց ձեռագործի։

Սակայն և այնպէս չէր նման վկայութիւնն նոցա։

Ապա յարուցեալ քահանայապետն՝ ի մէջ՝ հարցանէր զՅիսուս եւ ասէր. Ո՛չ ինչ տաս պատասխանի, զի՛նչ դոքա ըզքեզ վկայեն։

Եւ Յիսուս լուռ և եթ կայր, և չտայր ինչ պատասխանի։ Դարձեալ քահանայապետն հարցանէր ցնա կրկին անգամ և ասէր. Դո՛ւ ես Քրիստոսն Որդի Աստուծոյ օրհնելոյն։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Դու ասացեր՝ թէ ես եմ, բայց տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեան Աստուծոյ. եւ եկեալ ընդ ամպս երկնից։

Եւ քահանայապետն պատառեաց՝ վաղվաղակի զպատմուճանն իւր և ասէ. Ջի՞նչ եւս պիտոյ են մեզ վկայք. ահա լուաք ամենեքեան զհայհոյութիւնն՝ ի բերանոյ դորա. զիա՞րդ թուի ձեզ։

Եւ ամենեքեան դատապարտեցին զնա՝ թէ մահապարտ է։

Եւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս նորա, ձորձ զդէմսն արկանել՝ կոփել և ասել. Մարգարեա՛ց մեզ, Քրիստո՛ս, ո՛վ է այն՝ որ եհարն զքեզ։

Եւ սպասաւորքն ապտակս հանէին նմա։

Եւ Պետրոս մինչդեռ էր՝ ի խոնարհ՝ ի գաւթին՝ գայ աղախին մի քահանայապետին, և տեսանէ զնա՝ զի ջեռնոյր. հայեցաւ ընդ նա և ասէ. Եւ դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էիր։ Նա ուրացաւ և ասէ. Ոչ ճանաչեմ, եւ ոչ գիտեմ զի՛նչ դուդ ասես. և իբրեւ ել յարտաքին գաւիթն, և հաւ խօսեցաւ։

Դարձեալետես զնա աղախինն, և սկսաւ ասել ցայնոսիկ՝ որք չուրջն կային, թէ և սա՝ ի նոցանէ է. եւ նա դարձեալ ուրացաւ։

Եւ յետ սակաւ միոյ՝ դարձեալ որք չուրջն կային ասեն ցՊետրոս. Արդարեւ և դու՝ ի նոցանէ ես, քանզի Գալիլեացի ես, և խօսքդ իսկ քոնման են։

Եւ սկսաւ նզովել՝ երդնուլ և ասել, թէ ոչ գիտեմ զորմէ դուդ ասէք. և նոյն ժամայն կրկին հաւ խօսեցաւ։

Եւ յիշեաց Պետրոս զբանն՝ զոր ասաց ցնա Յիսուս, թէ չեւ իցէ հաւուս երկիցս խօսեալ՝ զի դու երիցս ուրասցիս զիս, և սկսաւ լալ։

---

ԳԼՈՒԽ ԺԵ. 1.

*Վասն չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արարեալ քահանայապետին հանդերձ ծերովքն և դպրօք՝ և ամենայն ատեանն, կապեցին զՅիսուս՝ և տարան մատնեցին Պիղատոսի։

Եհարց զնա Պիղատոս և ասէ. Դո՞ւ ես Թագաւորն Հրէից։ Նա պատասխանի ետ նմա և ասէ. Դո՛ւ ասես։

Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն, եւ նա ոչ ինչ տայր պատասխանի։

Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր զնա. Ոչինչ տաս պատասխանի. տե՛ս՝ քանի՛ ամբաստանեն զքեզ։

Եւ Յիսուս այնու հետեւ ոչ ինչ ետ պատասխանի, մինչեւ զարմանալ յոյժ Պիղատոսի։

Բայց ըստ տօնի արձակէր նոցա զմի ոք կապեալ զոր ինքեանք խնդրէին։

Եւ էր՝ որում անուն էր Բարաբաս՝ կապեալ ընդ խռովիչն, որոյ ընդ խռովելն՝ այր մի սպանեալ էր։

Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամբոխն և խնդրել՝ որպէս սովոր էր, զի արձակեսցէ նոցա զԲարաբբաս։

Պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցնոսա. Կամիք, զի արձակեցից ձեզ զԱրքայն Հրէից։

Քանզի գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն. որք եւ զամբոխն հաւանեցուցին՝ զի արձակեսցէ նոցա զԲարաբբաս։

Դարձեալ պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցնոսա. Իսկ զինչ կամիք թէ արարից զԱրքայն Հրէից։

Եւ նորա դարձեալ աղաղակեին՝ յոռեալք ի քահանայապետին, ի խաչ հան զդա։

Ասէ ցնոսա Պիղատոս. Զինչ ինչ չար արարեալ իցէ դորա։ Եւ նորա առաւել եւս աղաղակեին և ասէին. Ի խաչ հան զդա։

Իսկ Պիղատոս իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխին, արձակեաց նոցա զԲարաբբաս, և զՅիսուս գան հարեալ՝ ետ ի ձեռս՝ զի ի խաչ ելանիցէ։

Եւ զինուորքն տարան զնա ի ներքս ի գաւխիճն՝ ուր հրապարակն էր, եւ կոչեն միանգամայն զամենայն գունդն։

և զգեցուցանեն նմա զգամիդ կարմիր և ծիրանիա, և եդին ի գլուխ նորա պսակ արարեալ ի փշոց. և սկսան ողջոյն տալ նմա և ասել. Ո՛ղջ եր, Արքայդ Հրեից։

Եւ ձեձէին զգլուխն եղեգամբ, եւ թքանէին ընդ երեսս, և ի ծունր իջեալ երկիր պագանէին նմա։

Եւ իբրեւ կատակեցին զնա, մերկացուցին զգգամիդն եւ զծիրանիա, և զգեցուցին նմա զնա հանդերձ, և առին զնա տարան՝ զի ի խաչ հանիցեն զնա։

Եւ ուղեին պահակ զՍիմէոն Կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր եկեալ յագարակէ, զՀայրն Աղեքսանդրի և Ռուփայ, զի բարձցէ զխաչափայտն նորա։

Եւ առեն զնա ի Գողգոթա՝ տեղի մի՝ որ Թարգմանի՝ տեղի կառափելոյ։

Եւ տային նմա գինի զմռսեալ և նա ոչ էառ. և հանին զնա ի խաչ։

Եւ իբրեւ խաչեցին զնա՝ բաժանեցին զհանդերձս նորա, արկեալ վիճակս ի վերայ՝ Թէ ո՞ զինչ առնուցու։

Էր ժամ երրորդ՝ եւ հանին զնա ի խաչ։

Եւ էր գիր վերագրեալ նորա պրեալ, Թէ Թագաւոր է Հրէից։

Եւ ընդ նմա հանին ի խաչ երկուս աւազակս, մի ընդ աջմէ նորա և մի ընդ ահեկէ։

Եւ լաւ գիրն որ ասէ, Թէ ընդ անօրէնս համարեցաւ։

Եւ որք անցանէինն՝ հայհոյէին զնա՝ շարժեալ զգլուխս իւրեանց, և ասէին. վա՜հ, որ քակէիր զտաճարն՝ և վերստին առուրս չինէիր. ապրեցո՛ զանձն քո, և էջ ի խաչէդ։

Նոյնպէս և քահանայապետիցն այսպէս արարեալ ընդ միմեանս հանդերձ դպրօքն՝ ասէին. Զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարէ ապրեցուցանել. Քրիստոս Աքքայդ Իսրայելի, իջցէ այժմ ի խաչէ այսր, զի տեսցուք և հաւատասցուք դմա։

Եւ որք ընդ նմա ի խաչն եկեալ էին՝ նախատէին զնա։

Եւ իբրեւ վեց ժամ եղեւ՝ խաւար կալաւ զամենայն երկիր մինչեւ ցինն ժամ։

Եւ յինն երորդ ժամուն աղաղակեաց Յիսուս ի ձայն մեծ, և ասէ. Էլի՛, Էլի՛, լամա սաբաքթանի. որ Թարգմանի, Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ընդէր Թողե՛ր զիս։

Եւ ոմանք՝ ինոցանէ որք չուրջն կային զնովաւ՝ իբրեւ լուան, ասէին՝ Թէ զԵղիա կարդայ։

Եւ ընդայսեալ մի ոմն՝ ելից սպունգ մի քացախով, և հասեալ յերեսս՝ տայր ըմպել նմա, և ասէ. Թոյլ տուք, տեսցուք՝ գայ Եղիա իջուցանել զդա։

Եւ Յիսուս արձակեայ զձայն մեծ՝ և եհան զոգի։

Եւ վարագոյր տաճարին պատառեցաւ յերկուս՝ ի վերուստ մինչեւ ի խոնարհ։

Եւ տեսեալ հարիւրապետին՝ որ կայր անդ՝ ընդ նմա զդէմ՝ եթէ աղաղակեալ եւ եհան զոգի, ասէ. Արդարեւ այրս այս՝ Որդի Աստուծոյ էր։

Էին և կանայք՝ որք հայէին ի հեռաստանէ, յորս էր Մարիամ Մագդաղենացի, և Մարիամ Յակովբայ փոքրկան եւ Յովսեայ մայրն, և Սողովմէ. որք յորժամ էին ի Գալիլեա՝ զհետ երթային նորա և պաշտէին զնա. և այլք բազումք կանայք՝ որք ընդ նմա իսկ եկեալ էին Երուսաղէմ։

---

ԳԼՈՒԽ ԺԵ. 42։

*Վասն թաղման և յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր՝ որ ի շաբաթն մտանէր, եկեալ Յովսէփ՝ որ Արիմաթեացին էր, այր պարկեշտ նախարար, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ, համարձակեցաւ՝ եմուտ առ Պիղատոս, և խնդրեաց զմարմինն Յիսուսի։

Եւ Պիղատոս զարմացաւ, թէ այնչափ վաղ մեռաւ. եւ կոչեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա և ասէ, թէ արդարեւ այնչափ վաղ մեռաւ. և իբրեւ ստուգեաց ի հարիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսեփայ։

Եւ Յովսէփ գնեաց կաւա, և իջուցեալ զնա՝ պատեաց կաւաւն, և եդ ի գերեզմանի՝ որ էր փորեալ ի վիմէ, և խաւալեցոյց վէմ մի ի դուռն գերեզմանին։

Իսկ Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և Յովսեայ տեսին զեղեն՝ ուր եդաւ։

Եւ իբրեւ էանդ չաբաթն, Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակոբեայ և Սալոմէ՝ չոգան պատրաստեցին խոնկս, զի եկեսցեն և օծցեն զնա։

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն՝ գան ի գերեզմանն ընդ արեւագալն, եւ ասէին ցմիմեանս. Ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն ի դրանց գերեզմանին։

Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր վէմն ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ։

Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն՝ տեսին երիտասարդ մի՝ զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրեցան։

Եւ նա ասէ ցնոսա. Մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ՛ աստ. ահաւադիկ տեղին՝ ուր եդին զնա։

Այլ երթա՛յք ասացէ՛ք ցաշակերտս նորա և ցՊետրոս, թէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ։

Եւ իբրեւ լուան՝ ելին եւ փախեան ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. եւ ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին։

---

ԳԼՈՒԽ ԺԶ. 9։

*Վասն յարութեան և համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Յարուցեալ Յիսուս առաւօտուն, առաջին միաշաբաթուն՝ երեւեցաւ Մարիամու Մագդաղենացւոյ, յորմէ հանեալ էր զեօթն դեւս։

Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ որք ընդ նմայն էին, մինչդեռ լային և սգային։

Նոքա իբրեւ լուան թէ կենդանի է՝ եւ երեւեցաւ նմա, ոչ հաւատացին։

Յետ երեւեցաւ այլով կերպարանաւ՝ որք երթային յանդստան։

Նոքա չոգան պատմեցին այլոց, և ոչ նոքա հաւատացին։

Յետ մինչդեռ բազմեալ էին մեսասանքն, երեւեցաւ նոցա, և թշնամանեաց զանհաւատութիւն նոցա և զխստասրտութիւն. զի որ երեւեցաւ նոցա յարուցեալ ի մեռելոց, եւ նոքա ոչ հաւատացին։

Եւ ասէ ցնոսա, երթայք յաշխարհ ամենայն և քարոզեցէք զԱւետարանն արքայութեան ամենայն արարածոց։

Որ հաւատասցէ և մկրտեսցի՝ կեցցէ, և որ ոչն հաւատասցէ՝ դատապարտեսցի։

Նշանք այնոցիկ՝ որք հաւատանն, երթիցեն զհետ այնոցիկ. յանունն իմ դեւս հանիցեն. լեզուս խօսեսցին. ի ձեռս իւրեանց օձս բարձցեն. եւ եթէ մահացու ինչ դեղ արբցեն, նոցա ինչ ոչ վնասեսցէ. ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝ և բժշկեսցեն։

Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր։

Եւ նոքա ելեալ քարոզեին ընդ ամենայն երկիր՝ Տեառն գործակցութեամբ. և զբանն հաստատէին ամենայն նշանօք՝ որք երթային զհետ նոցա։



# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Ղուկայ գրեալ է՝ նոյն ինքն Ղուկաս՝ աշակերտ էր Պետրոսի, եւ ձեռնադրեցաւ ընթացակից Պօղոսի, եւ վկայեցաւ ի նմանէ. սա գրեաց զԱւետարանս զայս։ Զակիզբն առնէ ի ծննդենէն Յովհաննու, եւ զոր ըստ նմին. պատմէ եւ զմարմնանալ Փրկչին. ազգաթիւ առնէ եւ ելանէ ի Յովսեփայ ի Դաւիթ, եւ ի Դաւիթ մինչեւ յԱդամ։ Պատմէ սա եւ զկրտութիւնն Յովհաննու. եւ լինելովն ի լեառն զփորձիլն ի սատանայէ, եւ զընտրութիւն աշակերտացն, եւ այլ եօթանասունսն. եցոյց նշանս եւ արուեստս բազումս եղեալս. եւ զխորհուրդ մատնութեան, եւ զկատարածն՝ որ մատնեցաւ Պիղատոսի պոնտացւոյ, եւ խաչեցաւ մարմնով. զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. եւ որք խաչեցան յերկուց աւազակաց՝ մինն ապաշխարեաց խոստովանութեամբ։ Եւ զի մարմին նորա եդաւ ի գերեզմանի, եւ յարեաւ յերրորդ աւուր. եւ յետ այսորիկ համբարձաւ յերկինս՝ տեսանելով Հրեշտակաց։

Ղուկաս՝ արուեստիւ բժշկի գոլով, սա աշակերտեցաւ Փրկչին. եւ համարեալ կոչեցաւ ի Թիւս եօթանասնից։ Իսկ յետոյ աշակերտեցաւ Պօղոսի. վասն որոյ ասի՝ գովութիւն սորա յԱւետարանին։ Սա հրամանաւ Պօղոսի գրեաց զԱւետարանս իւր յԱնտիոք քաղաքի ի լեզու Աւորի՝ զկնի եօթնուտասն ամի համբառնալոյ Փրկչին։

# ՍԿԻԶԲՆ ՆԻՒԹՈՑ

## ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ


| | ԵՐԵՍ | ԷՋ |
|---|---|---|
| Վասն աշխարհագրին | 126 | 1 |
| Վասն բացօթեայ հովուացն | 126 | 2 |
| Վասն Սիմէոնի | 127 | 2 |
| Վասն մարգարէին Ննայի | 128 | 1 |
| Վասն լինելոյ բանին Աստուծոյ առ Յովհաննէս | 129 | 2 |
| Վասն որոց հարցանէին զՅովհաննէս | 130 | 1 |
| Վասն փոքունթեանց փրկչին | 131 | 2 |
| Վասն որ ունէր զհոգին գիւական | 133 | 2 |
| Վասն զաքանչին Պետրոսի | 134 | 1 |
| Վասն որոց բժշկէին ի պէսպէս հիւանդութեանց | 134 | 1 |
| Վասն որոյ ձկանցն | 134 | 2 |
| Վասն բորոտին | 135 | 2 |
| Վասն անդամալուծին | 136 | 1 |
| Վասն Ղեւեայ մաքսաւորին | 136 | 2 |
| Վասն գօսացեալ ձեռնին | 138 | 1 |
| Վասն առաքելոցն համարոյ | 138 | 2 |
| Վասն երանութեանց | 139 | 1 |
| Վասն հարիւրապետին | 141 | 1 |
| Վասն որդւոյ այրւոյն | 141 | 2 |
| Վասն որոց առաքեցանն ի Յովհաննէ | 142 | 1 |
| Վասն օծանելոյ զՏէրն մեռոնաւն | 143 | 2 |
| Վասն առակի սերմնացանին | 145 | 1 |
| Վասն սաստեալ Ջուրցն | 146 | 1 |
| Վասն որ ունէր զլեգէոնն | 146 | 2 |
| Վասն դստեր ժողովրդապետին | 147 | 2 |
| Վասն տեառատես կնոջն | 147 | 2 |
| Վասն առաքելոյ զերկոտասանսն | 148 | 2 |
| Վասն հինգ հացիցն և երկու ձկանցն | 149 | 2 |
| Վասն ցաշակերտսն հարցանելոյ | 149 | 2 |
| Վասն պլակերպութեան Յիսուսի | 150 | 2 |
| Վասն լուանահարին | 151 | 1 |
| Վասն խորհելոյն Թէ ով իցէ մեծ | 151 | 2 |
| Վասն չտալոյն հրաման զինի երթալ | 152 | 2 |

| | ԵրեսՍ | ԷՋ |
|---|---|---|
| Վ. ան երեւեցուցանելոյ զԵօթանասունսն | 153 | 1 |
| Վ. ան հարցանելոյ օրինականին | 154 | 2 |
| Վ. ան անկելոյն ի ձեռս աւազակաց | 155 | 1 |
| Վ. ան Մարիամու և Մարթայի | 155 | 2 |
| Վ. ան յաղթիս կալոյն | 156 | 2 |
| Վ. ան խուլ դիւին | 156 | 2 |
| Վ. ան որ կին ձայն եբարձ ի ժողովրդեանն | 157 | 2 |
| Վ. ան նշան խնդրելոյն | 158 | 2 |
| Վ. ան որ փարիսեցին կոչեաց զՏէր | 158 | 1 |
| Վ. ան վայ տալոյ օրինականացն | 159 | 1 |
| Վ. ան խնդրոյ փարիսեցւոյն | 160 | 2 |
| Վ. ան բաժանելոյ զինչն ընդ եղբօրն | 160 | 2 |
| Վ. ան պտղաբերելոյ անդր մեծատանն | 160 | 2 |
| Վ. ան գալիլեացւոյն և որոց ի Սիլովամ և վան Թզենւոյն | 163 | 2 |
| Վ. ան կարիամեալ կնոջն այսահարի | 164 | 1 |
| Վ. ան առակացն | 165 | 1 |
| Վ. ան Թէ սակաւք իցեն որք ապրելոց իցեն | 165 | 1 |
| Վ. ան որք ասացին ցՅիսուս զՀերովդէէ | 165 | 2 |
| Վ. ան որ ջրգողեալ էր | 166 | 1 |
| Վ. ան որք սիրեն զնախագահսն | 166 | 2 |
| Վ. ան կոչելոյն յընթերիսն | 167 | 1 |
| Վ. ան չինելոյ աշտարակին | 168 | 1 |
| Վ. ան հարիւր ոչխարացն | 168 | 2 |
| Վ. ան անառակ որդւոյն | 169 | 1 |
| Վ. ան անիրաւ տնտեսին | 170 | 2 |
| Վ. ան մեծատանն և Ղազարու | 171 | 2 |
| Վ. ան տասն բորոտացն | 173 | 2 |
| Վ. ան անիրաւ դատաւորին | 175 | 1 |
| Վ. ան փարիսեցւոյն և մաքսաւորին | 175 | 2 |
| Վ. ան հարցանելոյն մեծատանն զՅիսուս | 176 | 1 |
| Վ. ան կուրին | 177 | 1 |
| Վ. ան Զակքէոսի | 177 | 2 |
| Վ. ան գնալոյ առնուլ իւր Թագաւորութիւն և դառնալ | 178 | 1 |
| Վ. ան առնլոյ զտասն մնասն | 178 | 1 |
| Վ. ան յաւանակին | 179 | 1 |
| Վ. ան հարցանելոյ քահանայիցն զՏէր | 180 | 1 |
| Վ. ան առակի պղծոյն | 181 | 1 |
| Վ. ան դահեկանին | 182 | 1 |
| Վ. ան սադուկեցւոցն | 182 | 2 |
| Վ. ան՝ Թէ զիարդ է Քրիստոս որդի Դաւթի | 183 | 1 |

| | ԵՐԵՍ | ԷՋ |
|---|---|---|
| Վասն երկու լումայի պրեզին | 183 | 2 |
| Վասն հարցման կատարածին | 183 | 2 |
| Վասն Զաուկին | 186 | 1 |
| Վասն վիճելոյն՝ Թէ ով մեծ իցէ | 187 | 1 |
| Վասն խնդրելոյն սատանայի փոքձել զՅիմովն | 187 | 2 |
| Վասն նախատանաց Հերովդի | 190 | 2 |
| Վասն կծելոյ կանանցն | 191 | 2 |
| Վասն ապաշխարելոյ աւազակին | 192 | 2 |
| Վասն խնդրելոյ զՏէրունական մարմինն | 193 | 1 |
| Վասն խոզաբեր կանանց | 193 | 2 |
| Վասն կղէոպասնցն | 194 | 1 |
| Վասն համբառնալոյ Տեառն | 196 | 1 |

Ս. ՂՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

# ԱԻԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

ԳԼՈՒԽ Ա. համար 1։

Արդ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Քանզի բազումք յօժա-
րեցին վերատին կար-
գել զպատմուԹիւնս վասն ի-
րացն՝ հաստատեալոց ի մեզ,
որպէս աւանդեցին մեզ՝ որք
ի սկզբանէ ականատեսք եւ
սպասաւորք եղեն բանին. կամ
եղեւ եւ ինձ՝ որ ի սկզբանէ
գհետ երթեալ էի ամենայնի՝
ճշմարտուԹեամբ, կարգա-
պրել քեզ, բաջդ Թէոփիլէ. զի
ծանիցես զբանիցն՝ որոց աշա-
կերտեցար՝ զճշմարտուԹիւնն։
Եւ եղեւ յաւուրս Հերովդի
Արքայի Հրէաստանեայ, քահա-
նայ ումն՝ անուն Զաքարիա ի
դասակարգէ Աբիայ, եւ կին
նորա ի դստերաց Ահարոնեան,
եւ անուն նորա Եղիսաբեթ։
Եւ էին արդարք երկոքին ա-
ռաջի Աստուծոյ, գնային յա-
մենայն պատուիրանս և յիրա-
ւունս Տեառն անարատք։
Եւ ոչ գոյր նոցա որդեակ,
քանզի Եղիսաբեթ ամուլ էր,
և երկոքեան անցեալք էին զա-
ւուրսն իւրեանց։
Եւ եղեւ ի քահանայանալն
նորա ըստ կարգի աւուրսն հա-
մանելոյ առաջի Աստուծոյ, ըստ
օրինի քահանայուԹեանն՝ ե-
հաս նմա խաւնկ արկանել՝

մեռեալ ի տաճարին Տեառն. և ամենայն բազմութիւն ժողովրդեանն կային յաղօթս արտաքոյ ի ժամ խնկոյն։

Եւ երեւեցաւ նմա Հրեշտակ Տեառն, զի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոյն. և խռովեցաւ Զաքարիա՝ իբրեւ ետես, եւ անկաւ ահ ի վերայ նորա։

Ասէ ցնա Հրեշտակն Տեառն. Մի՛ երկնչիր, Զաքարիա, զի լսելի եղեն աղօթք քո, և կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի, և կոչեսցես զանուն նորա Յովհաննէս։

Եւ եղիցի քեզ ուրախութիւն և ցնծութիւն, և բազումք ի ծննդեան նորա խնդասցեն. զի եղիցի մեծ առաջի Տեառն. և գինի և օղի մի՛ արբցէ. և Հոգւով Սրբով լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ, եւ զբազումս յորդւոցն Իսրայելի դարձուսցէ ի Տէր Աստուած իւրեանց։

Եւ ինքն եկեսցէ առաջի նորա Հոգւով եւ զօրութեամբ Եղիայի՝ դարձուցանել զսիրտս հարց՝ յորդիս, և զանհաւանս՝ իմաստութիւն արդարոց, պատրաստել Տեառն ժողովուրդ կազմեալ։

Եւ ասէ Զաքարիա ցՀրեշտակն, Եւ ի՞ գիտացից զայդ. զի ես ծեր եմ, եւ կին իմ անցեալ զաւուրբք իւրովք։

Պատասխանի ետ Հրեշտակն և ասէ ցնա. Ես եմ Գաբրիէլ՝ որ կամ առաջի Աստուծոյ, և առաքեցայ խօսիլ ընդ քեզ և աւետարանել քեզ զայդ. եւ ահա եղիցիս համր, և մի՛ կարասցես խօսիլ մինչեւ ցօրն՝ յորում այդ լինիցի. փոխանակ զի ոչ հաւատացեր բանից իմոց՝ որք լցցին ի ժամանակի իւրեանց։

Եւ ժողովուրդն ակն ունէր Զաքարիայ, և զարմանային ընդ յամելն նորա ի տաճարին. և իբրեւ ել՝ ոչ կարէր խօսիլ ընդ նոսա. և իմացան՝ թէ տեսիլ ետես ի տաճարին. և նա նշանացոյց խօսեր ընդ նոսա, և կայր պապանձեալ։

Եւ եղեւ իբրեւ լցան աւուրք պաշտաման նորա, գնաց ի տունն իւր։

Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ յղացաւ Եղիսաբեթ կինն նորա, և թագուցանէր զանձն ամիսս հինգ, և ասէր. Զի՛նչ գործ գործեաց ընդ իս Տէր՝ յաւուրս՝ յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ ի մարդկանէ։

ԳԼՈՒԽ Ա· 26·

Ի Հօրէ ամենակալէ·

Եւ յամենեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ Հրեշտակ յԱստուծոյ ՚ի քաղաք մի գալիլեացւոց՝ որում անուն էր Նազարէթ, առ կոյս խօսեցեալ առն՝ որում անուն էր Յովսէփ՝ ՚ի տանէ Դաւթի, և անուն կուսին Մարիամ։

Եւ եկեալ առ նա Հրեշտակն՝ ասէ· Ուրախ լեր, Բեբկրեալդ, Տէր ընդ քեզ։

Եւ նա ընդ բանին խռովեցաւ, եւ խորհէր ընդ միտս՝ Թէ սպասիւ ինչ իցէ ողջոյնս այս։

Եւ ասէ ցնա Հրեշտակն· Մի երկնչիր, Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ· և ահա յղասջիր, և ծնցիս որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս։ Նա եղիցի մեծ, և Որդի բարձրելոյն կոչեսցի· եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա, եւ թագաւորեսցէ ՚ի վերայ տանն Յակովբայ ՚ի յաւիտեան· և թագաւորութեան նորա վախճան մի լիցի։

Եւ ասէ Մարիամ ցՀրեշտակն·

Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ։

Պատասխանի ետ Հրեշտակն և ասէ ցնա· Հոգին Սուրբ եւ կեսցէ՚ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերայ քո· քանզի և որ ծնանելոցն է ՚ի քէն՝ սուրբ է, և Որդի Աստուծոյ կոչեսցի։

Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո՝ և նա յղի է ՚ի ծերութեան իւրում· և այս վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կոչեցեալ է· զի ոչ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն բան։

Եւ ասէ Մարիամ· Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում։ և գնաց ՚ի նմանէ Հրեշտակն։

---

ԳԼՈՒԽ Ա· 39·

Տէրամբ մերով Յիսուսիս Քրիստոսիւ·

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ՝ գնաց ՚ի լեռնականսն փութապէս ՚ի քաղաքն Յուդայ, և եմուտ ՚ի տուն Զաքարիայ, և ետ ողջոյն Եղիսաբեթի։

Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա։

Եւ լցաւ Եղիսաբեթ Հոգւով Սրբով. և ՚ի ձայն բարձր ազաղակեաց և ասէ. Օրհնեա՛լ ես դու ՚ի կանանց, և օրհնեա՛լ է պտուղ արգանդի քոյ. և ուստա՞ր է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։

Զի ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջոյնի քոյ յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկ յորովայնի իմում. և երանի՛ որ հաւատացեալ՝ եթէ եղիցի կատարումն ասացելոցս նմա ՚ի Տեառնէ։

Եւ ասէ Մարիամ. Մեծացուցէ անձն իմ զՏէր, եւ ցնծացաւ հոգի իմ՝ ՚ի Աստուած փրկիչ իմ. զի հայեցաւ ՚ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ։

Զի ահա յայսմ հետէ երանելացեն ինձ ամենայն ազգք. զի արար ինձ մեծամեծս Հզօրն, եւ սուրբ է անուն նորա, եւ ողորմութիւն նորա յազգս յազգս երկիւղածաց իւրոց։

Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց. քակեաց զՀզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս։

Զքաղցեալս լցոյց բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում՝ յիշեալ զողորմութիւն իւր, որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամ և զաւակի նորա յաւիտեան։

Եկաց Մարիամ առ նմա իբրեւ ամիսս երիս, և դարձաւ ՚ի տուն իւր։

---

ԳԼՈՒԽ Ա. 57։

Վասն ծննդեան Մկրտչի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծննդելոյ, եւ ծնաւ զորդի։

Եւ լսան որք շուրջ զնովաւ էին՝ և ազգատոհմք նորա, զի մեծ արար Տէր զողորմութիւն իւր ընդ նմա, եւ խնդային ընդ նմա։

Եւ եղեւ յաւուրն ութերորդի՝ եկին թլփատել զմանուկն, և կոչէին զնա՝ յանուն հօր իւրոյ Զաքարիա։

Պատասխանի ետ մայրն նորա և ասէ. Ո՛չ, այլ կոչեսցի Յովհաննէս։

Եւ ասեն ցնա. քանզի ոչ ոք է յազգի քումմէ՝ որոյ կոչի անուն Յովհաննէս։

Ակնարկէին հօրն նորա՝ թէ զինչ կամիցի կոչել զնա։ Եւ խնդրեաց տախտակ, գրեաց եւ ասէ. Յովհաննէս է անուն դորա. Եւ զարմացան ամենեքեան։

Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի և լեզու նորա, և խօսէր և օրհնէր զԱստուած։

Եւ եղեւ ահ ՚ի վերայ ամենեցունն՝ որք լսէին զայս, և որք ջուրջ բնակեալքն էին զնոքօք, եւ ընդ ամենայն լեռնակողմն Հրէաստանի՝ պատմէին ամենայն բանեքս այսոքիկ։

Եւ եդին ամենեքեան՝ որք լսէին ՚ի սիրտս իւրեանց՝ և ասէին. Զինչ լինիցի մանուկս այս։ Եւ ձեռն Տեառն էր ընդ նմա։

Եւ Զաքարիա հայր նորա լցաւ Հոգւով Սրբով, մարգարէացաւ եւ ասէ. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի, զի այցս եւ արար զփրկութիւն ժողովրդեան իւրում։

Եւ յարոյց զեղջիւր փրկութեան մեզ ՚ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ, որպէս խօսեցաւ բերանով սրբոցն՝ որք յաւիտենից՝ մարգարէքն նորա էին։ Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց. առնել ողորմութիւն ընդ հարսն մեր, եւ յիշել զուխտն իւր սուրբ։

Զերդումնին զոր երդուաւ Աբրահամու հօր մերում, տալ մեզ առանց երկիւղի ՚ի ձեռաց թշնամեաց փրկեալս, պաշտել զնա սրբութեամբ եւ արդարութեամբ առաջի նորա՝ զամենայն աւուրս կենաց մերոց։

Եւ դու մանուկ, մարգարէ բարձրելոյն կոչեսջիր. զի երթիցես առաջի երեսաց Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա։

Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա, ՚ի թողութիւն մեղաց նոցա։

Ողորմութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ, որով այց արար մեզ Արեգակն ՚ի բարձանց, երեւեալ որոց ՚ի խաւարի եւ ՚ի ստուերս մահու նստեալն, ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան։

Եւ մանուկն աճէր եւ զօրանայր Հոգւով, և էր յանապատս մինչեւ յօր երեւելոյ նորա՝ Իսրայելի։

## ԳԼՈՒԽ Բ. 1.

*Վ. ան Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.*

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս. այս առաջին աշխարհագիր եղև ի դատաւորութեան Սուրբայ կիւրենեայ։

Եւ երթային ամենեքեան մըտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քաղաքի։

Ել և Յովսէփ ի Գալիլեէ՝ ի քաղաքէ Նազարեթէ ի Հրէաստան, ի քաղաք Դաւթի, որ կոչի Բեթղեհէմ, վասն լինելոյ նորա ի տանէ և յազգէ Դաւթի, մտանել յաշխարհագիր Մարիամաւ հանդերձ որ խօսեցեալն էր նմա, և էր յղի։

Եւ եղեւ ի հասանիլն նոցա անդր, լցան աւուրք ծննդեանն նորա, եւ ծնաւ զՈրդին իւր զանդրանիկ, եւ պատեաց ի խանձարուրս, եւ եդ զնա ի մսուր. վի ոչ գոյր նոցա տեղի յիջեւանին։

---

## ԳԼՈՒԽ Բ. 8.

*Ի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Եւ հովիւքն էին ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք, որք պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։

Եւ Հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա, եւ փառք Տեառն ծագեցան առ նոսա, եւ երկեան յերկիւղ մեծ։

Եւ ասէ ցնոսա Հրեշտակն, Մի՛ երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի. եւ այս նշանակ ձեզ, գտանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս, և եդեալ ի մսուր։

Եւ յանկարծակի եղեւ ընդ Հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որք օրհնէին զԱստուած և ասէին. Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։

---

Եւ եղեւ իբրեւ վերացան ի նոցանէ Հրեշտակքն յերկինս, ասէն ցմիմեանս հովիւքն. Եկայք երթիցուք մինչեւ յԲեթղեհէմ, և տեսցուք զլինել է բանս այս՝ որ եղեւ, զոր Տէր եցոյց մեզ։

Եւ եկին փութանակի, և գտին զՄարիամ և զՅովսէփ, և զմանուկն եդեալ ի մսուր, և ծանեան վասն բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն։

Եւ ամենեքին որք լսէին՝ զարմանային վասն բանիցն՝ զոր խոսեցան ընդ նոսա հովիւքն։

Եւ Մարիամ զամենայն զբանս զայսոսիկ պահէր, եւ խելամուտ լինէր ի սրտի իւրում։

Եւ դարձան հովիւքն՝ փառաւորեալ առնէին եւ օրհնէին զԱստուած վասն ամենայնի՝ զոր լուան եւ տեսին, որպէս պատմեցաւ նոցա։

---

ԳԼՈՒԽ Բ. 21։

*Վասն Թլփատութեան և անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Եւ իբրեւ լցան աւուրք ութ Թլփատել զնա, և կոչեցաւ անուն նորա Յիսուս, որ կոչեցեալն էր ի հրեշտակէն, մինչեւ յղացեալ էր զնա յորովայնի։

---

ԳԼՈՒԽ Բ. 22։

*Վասն քառասնօրեայ գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նորա՝ ըստ օրինացն Մովսիսի, տային զնա յերուսաղէմ յանդիման առնել Տեառն. որպէս եւ գրեալ է յօրէնս Տեառն, թէ ամենայն արու՝ որ բանայ զարգանդ՝ սուրբ Տեառն կոչեսցի։ Եւ տալ պատարագս՝ ըստ ասացելոյն յօրէնս Տեառն, զոյգս տատրակաց կամ երկուս ձագս աղաւնեաց։

Եւ ահա այր մի էր յերուսաղէմ, որոյ անուն էր Սիմէոն, և էր այրն այն արդար և երկիւղած, և ակն ունէր մխիթարութեանն Իսրայէլի, եւ Հոգի Սուրբ էր ի նմա։

Եւ էր նորա հրամանն առեալ ի Հոգւոյն Սրբոյ՝ մի՛ տեսանել զմահ, մինչեւ տեսցէ զՕծեալն Տեառն. և եկն հոգւովն ի Տաճարն։

Եւ իբրեւ ածին ծնողքն զմանուկն Յիսուս՝ առնել նոցա

քան սովորութեան օրինացն ի վերայ նորա, և նա առ ընկալաւ զնա ի գիրկս իւր, եւ օրհնեաց զԱստուած և ասէ. Արդ արձակես զծառայ քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո՝ զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց։

Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց, և փառս ժողովրդեան քում Իսրայէլի։

Եւ էին հայր եւ մայր նորա զարմանալով ի վերայ բանիցն, որք խօսէին զնմանէ։

Եւ օրհնեաց զնոսա Սիմէոնն, և ասէ ցՄարիամ մայր նորա. Ահա սա կայ ի կործումն եւ ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայէլի, եւ ի նշան հակառակութեան. եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր. զի յայտնեսցին ի բազմաց սրտից խորհուրդք։

Եւ անդ էր Աննա մարգարէ՝ գուստր Փանուէլի յազգէ Ասերայ. սա ինքն անցեալ էր զաւուրբք բազմօք, կեցեալ ընդ առն սմա եօթն ի կուսութենէ իւրմէ. և էր այրի ամաց իբրեւ ութսուն և չորից, որ ոչ մեկնիւր ի տաճարէն, այլ պահօք և աղօթիւք պաշտէր զամայ և զգիշեր։

Եւ սա ի նմին ժամու յարուցեալ գոհանայր զՏեառնէ, և խօսէր զնմանէ ընդ ամենեսին՝ որք սպասէին փրկութեան Երուսաղէմի։

Եւ իբրեւ կատարեցին զամենայն քան օրինացն Տեառն, դարձան անդրէն ի Գալիլեա ի քաղաքն իւրեանց Նազարեթ։

Եւ մանուկն աճէր եւ զօրանայր լի իմաստութեամբ, եւ ընդհարհ Աստուծոյ էին ի վերայ նորա։

---

ԳԼՈՒԽ Բ. 41։

Ընդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ երթային ծնողք նորա ամի ամի Երուսաղէմ ի տօնի զատկին։

Եւ իբրեւ եղեն նորա ամաց երկոտասան, յերանել նոցա Երուսաղէմ ըստ սովորութեան տօնին. եւ կատարել զաւուրսն՝ եւ դառնալ անդրէն, մնաց Յիսուս մանուկն Երուսաղէմ. և ոչ գիտացին ծնողք նորա. կարծէին զնմանէ՝ թէ ընդ ուղեկիցսն էցէ.

եկին իբրև աւուր միոյ ՀԱՆԱ-
պարհ, և խնդրէին զնա ընդ
դրացիան և ընդ ծանօթս. և
իբրև ոչ գտին, դարձան անդրէն
ՅԵՐՈՒսաղէմ խնդրել զնա։
Եւ եղեւ յետ երից աւուց՝
գտին զնա ի տաճարին՝ զի նըս-
տեր ընդ վարդապետան, լսեր
ի նոցանէ և հարցանէր զնոսա։
Զարմանային ամենեքեան՝ որք
լսէին ի նմանէ՝ ընդ իմաս-
տութիւնն և ընդ պատասխա-
նիս նորա. և իբրեւ տեսին զնա
նա աքանչացան։
Եւ ասէ ցնա մայրն իւր. Որ-
դեակ, ինչ գործ գործեցեր
դու ընդ մեզ. ահաւասիկ հայր
քո եւ ես տառապեաք եւ
խնդրեաք զքեզ։
Եւ ասէ ցնոսա. Ձի խնդրէիք
զիս. ոչ գիտէիք՝ եթէ ի տան
Հօր իմոյ պարտ է ինձ լինիլ։
Եւ նորա ոչ իմացան զբանն՝
զոր խօսեցաւ ընդ նոսա։
Եւ էջ ընդ նոսա, եւ գնաց
ի Նազարէթ. և էր նոցա հլը-
նազանդ, և մայրն նորա պա-
հէր զամենայն զբանան ի սրտի
իւրում։
Եւ Յիսուս զարգանայր իմաս-
տութեամբ և հասակաւ, և
շնորհօք ԱՍտուծոյ և ի մարդ-
կանէ։

ԳԼՈՒԽ Գ. 1։

*Վասն յայտնութեան և մկրտութեան*
*Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Ի հնգետասաներորդի ամի
տէրութեանն Տիբերեայ
կայսեր, ի գատաւորութեան
Հրէաստանի Պիղատոսի Պոն-
տացւոյ, և ի չորրորդ պետու-
թեան գալիլեացւոյ Հերովդի,
և ի Փիլիպպոսի եղբօր նորա
չորրորդպետութեան Իտու-
րացւոց և Տրաքոնացւոց աշ-
խարհին, և ի չորրորդպետու-
թեան Լիսանեայ՝ Աբիլե-
նացւոց, և ի քահանայապե-
տութեան Աննայի և Կայիա-
փայ, եղեւ բան Աստուծոյ ի
վերայ Յովհաննու որդւոյ Զա-
քարիայ՝ յանապատի անդ։
Եւ եկն յամենայն կողմն Յոր-
դանանու՝ քարոզել մկրտու-
թիւն ապաշխարութեան՝ ի
թողութիւն մեղաց։
Որպես և գրեալ է ի գիրս պատ-
գամաց Եսայեայ մարգարէի.
Ձայն բարբառոյ յանապատի,
պատրաստ արարէք զճանա-
պարհ Տեառն, և ուղիղ արա-
րէք զշաւիղս նորա. ամենայն
ձորք լցին, և ամենայն լերինք
եւ բլուրք խոնարհեսցին, եւ

եղեցին գժոռարինքն՝ ի գիւ-
րինս, և առապարքն ի հարթ
ճանապարհս. և տեսցէ ամե-
նայն մարմին զփրկութիւն Ա-
տուծոյ։

Եւ ասէ ցժողովուրդսն՝ ելեալս
ի կրթել ի նմանէ. Ծնունդք ի-
ժից, ո՞ եցոյց ձեզ փախչել ի
բարկութենէն՝ որ գալոց է.
արարէք պտուղս հետեւ պտուղս
արժանի ապաշխարութեան։
Եւ մի սկսանիցիք ասել՝ Եթէ
ունիմք հայր զԱբրահամ. զայս
ասեմ ձեզ, եթէ կարող է Ա-
տուած ի քարանցս յայսցանէ
յարուցանել որդիս Աբրահա-
մու։

Բայց ահաւասիկ տապար առ
արմին ծառոյ կայ. ամենայն
ծառ՝ որ ոչ առնէ զպտուղ
բարւոյ, հատանի և ի հուր
արկանի։

Հարցանէին զնա ժողովուրդքն
և ասէին. Իսկ արդ՝ զի՞նչ գոր-
ծեսցուք։

Պատասխանի եւ ասէ ցնո-
սա. Ոյր իցեն երկու հան-
դերձք՝ տացէ զմին այնմ՝ որ
ոչն գուցէ, և որ կայցէ կե-
րակուր՝ նոյնպէս արասցէ։

Եկին եւ մաքսաւորք մկրտիլ,
եւ ասեն ցնա. Վ՚արդապետ,
զի՞նչ գործեսցուք։

Եւ նա ասէ ցնոսա. Մի՛ ինչ
աւելի քան զկրամայեալսն ձեզ՝
առնիցէք։

Հարցանէին զնա և զինուորքն
եւ ասէին. Եւ մեք զի՞նչ գոր-
ծեսցուք։

Ասէ ցնոսա. Մի՛ զոք խու-
ցէք՝ և մի՛ զոք զրպարտիցէք,
շատ լիցին ձեզ թոշակքն ձեր։

Մինչ սակն ունէր ժողովուրդն,
եւ խորհէին ամենեքեան ի
սիրտս իւրեանց վասն Յովհան-
նու՝ միթէ սա՞ իցէ Քրիստոսն։

Պատասխանի ետ ամենեցուն՝
և ասէ. Ես մկրտեմ զձեզ ջրով.
բայց գայ զօրագոյն քան զիս,
զորոյ չեմ բաւական զկօշիկս,
նա մկրտեսցէ զձեզ
Հոգւով Սրբով և հրով։

Որոյ հեծանոցն ի ձեռին իւ-
րում՝ սրբել զկալ իւր, և ժո-
ղովել զգորեանն ի չտեմարանս
իւր, և զյարդն այրեսցէ ան-
շէջ հրով։

Բազում և այլ ինչ մխիթա-
րութեամբ աւետարանէր ժո-
ղովրդեանն։

Բայց Հերովդէս չորրորդա-
պետ յանդիմանեալ ի նմանէ
վասն Հերովդիադայ կնոջ եղ-
բօր իւրոյ, եւ վասն ամենայն
չարեաց՝ զոր գործեալ Հերով-
դէս, յաւել և զայն եւս ի վե-

բոլ ամենայնի, և եդ ի բանտի դՅովհաննէս։

Եւ եղեւ ի միւրիալ ամենայն ժողովրդեանն, և ընդ Յիսուսի միւրիլն եւ կալ յագօթս, բանալ երկնից, և իջանել Հոգւոյն Սրբոյ մարմնաւոր տեսլեամբ իբրեւ զաղաւնի ի վերոյ նորա, և գալ ձայն յերկնից՝ որ ասէր. Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ։ Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից, սկսեալ՝ որոց որպէս կարծիւր որդի Յովսեփայ, որ Յակովբայն, որ Հեղեայն, որ Մատաթեայն, որ Ղեւեայն, որ Մեղքեայն, որ Յաննեայն, որ Յովսեփայն, որ Մատաթեայն։

Որ Ամովսայն, որ Նաւումայն, որ Եսղեայն, որ Նանգեայն, որ Մահաթայն, որ Մատաթեայն, որ Սեմեայն, որ Յովսեքեայն։

Որ Յովդեայն, որ Յովհաննայն, որ Րեսայն, որ Զօրաբաբելին, որ Սաղաթիելին, որ Ներեայն, որ Մեղքեայն։

Որ Ադդեայն, որ Կովսամայն, որ Եղմադադայն, որ Երայն, որ Յեսուայն, որ Եղիազարայն, որ Յովրամայն, որ Մատաթայն։

Որ Ղեւեայն, որ Սիմէոնին, որ Յուդայն, որ Յովսեփայն, որ Յովհաննայն, որ Եղիակիմայն, որ Մելկայն, որ Մեննեայն։

Որ Մատաթայն, որ Նաթանայն, որ Դաւթին, որ Յեսսեայն, որ Ովբեդայն, որ Բոոսայն, որ Սաղմոնայն, որ Նաասոնին։

Որ Ամինադաբայն, որ Արամայն, որ Ադմեայն, որ Առնեայն, որ Եսրովմայն, որ Փարէսին, որ Յուդայն, որ Յակովբայն։

Որ Իսահակայն, որ Աբրահամն, որ Թարայն, որ Նաքովրայն, որ Սերուբայն, որ Ռագաւայն, որ Փաղեկայն։

Որ Եբերայն, որ Սաղայն, որ Կայնանայն, որ Արփաքսադայն, որ Սեմայն, որ Նոյին, որ Ղամեքայն, որ Մաթուսաղային։

Որ Ենովքայն, որ Յարեդին, որ Մաղաղեղին, որ Կայնանայն, որ Ենոսայն, որ Սեթայն, որ Ադամայն, որ Աստուծոյն։

---

Եւ Յիսուս լի Հոգւով Սրբով դարձաւ ի Յորդանանէ. և վարեաւ Հոգւովն յանապատ՝ յաւուրս քառասուն փորձեալ ի սատանայէ. և ոչ եկեր և ոչ էարբ յաւուրսն յայնոսիկ, և ի կատարիլն նոցա՝ քաղցեաւ։ Եւ ասէ ցնա սատանայ. Եթէ

Որդի ես Աստուծոյ, ասա՛ քար
բիդ այդմիկ՝ զի հաց լինի։
Պատասխանի եւ ն՛ա Յիսուս
և ասէ. Գրեալ է, եթէ ոչ հաց
յիւ միայն կեցցէ մարդ, այլ ա
մենայն բանիւ Աստուծոյ։
Եւ հանեալ զնա ի լեառն մի
բարձր՝ ետես նմա զամենայն
թագաւորութիւնս աշխարհի
ի վարկեան ժամանակի. և ա
սէ ցնա սատանայ. Քեզ տաց
զայս ամենայն իշխանութիւն և
զփառս սոցա, զի ինձ տուեալ է,
և ում կամիմ՝ տամ զսա. արդ՝
դու եթէ անկեալ երկիր պա
գանիցես առաջի իմ, քեզ ե՛ղ
ցի ամենայն։
Պատասխանի ե՛ն նմա Յիսուս
և ասէ. Գրեալ է՝ երկիր պագ
ցես Տեառն Աստուծոյ քումմ,
և զնա միայն պաշտեսցես։
Եւ էած զնա Երուսաղէմ, և
կացոյց զնա ի վերայ աշտարակի
տաճարին, և ասէ ցնա. Եթէ
Որդի ես Աստուծոյ, արկ գքեզ
աստի ի վայր. Զի գրեալ է,
եթէ Հրեշտակաց իւրոց պա
տուիրեալ է վասն քո՝ պահել
զքեզ. զի ի վերայ ձեռաց
բարձցեն զքեզ, մի՛ երբեք
հարցես զքարի զոտն քո։
Պատասխանի ե՛ն նմա Յիսուս
եւ ասէ. Ասացեալ է, թէ ոչ
փորձեսցես զՏէր Աստուած
քո։
Եւ կատարեալ զամենայն փոր
ձուածիւն՝ սատանայի, ի բաց
եկաց ի նմանէ՝ մա ժամանակ
մի։

---

ԳԼՈՒԽ Գ. 14։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ դարձաւ Յիսուս զօրու
թեամբ Հոգւոյն ի Գալի
լեա, եւ ել համբաւ ընդ
ամենայն կողմանս գաւա
ռին. և նա ուսուցանէր ի ժո
ղովուրդս նոցա փառաւորեալ
յամենեցունց։
Եւ եկն ի Նազարեթ՝ ուր սը
նեալ էր, և եմուտ ըստ սովո
րութեան իւրում յաւուր շա
բաթու ի ժողովուրդն։
Եւ եաւն նմա գիրս զնայեցա
մարգարէին. եւ յարեաւ ըն
թերնուլ. և իբրեւ եբաց զգ
իրսն՝ եգիտ զայն տեղի՝ ո
րում գրեալն էր. Հոգի Տեառն
ի վերայ իմ, վասն որոյ և օծ
ցեալ զիս. Աւետարանել աղքա
տաց առաքեաց զիս, բժշկել
զերեկեալս սրտիւք, քարոզել
գերեաց զմոլորութիւն, և կու
րաց տեսանել, արձակել զվի
րաւորս ի թողութիւն, քա

բոզել զտարեկան Ցեսուն ընդունելի և զօր հատուցման։

Եւ խրեալ զդիրան եւ ցպաշտօնեայն, և նստաւ, և ամենայնքն՝ որք ի ժողովրդեանն էին աչք՝ ի նա հայէին։

Եւ սկսաւ ասել ցնոսա. Այսօր լցան գիրքս այս յականջս ձեր։

Եւ ամենեքին վկայէին նմա, և զարմանային ընդ բանս շնորհս՝ որք ելանէին ի բերանոյ նորա, և ասէին. Ո՞չ սա է որդին Յովսեփայ։

Եւ ասէ ցնոսա. Ապաքէն ասիցէք առ իս զառակս զայս. բժիշկ, բժշկեա զանձն քո. որչափ լուաք՝ զօր արարեր ի Կափառնաում, արա եւ աստ ի քում գաւառի։

Եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ, թէ չէ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում։

Արդարեւ ասեմ ձեզ, զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայելի, յորժամ փակեցան երկինք վերիս ամն և վեց ամիս, և եղեւ սով մեծ ընդ ամենայն երկիր. և ոչ առ ոմի ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն ի Սարեփթայ Սիդովնացւոյ առ կին մի այրի։

Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի առ Եղիսեէ մարգարէ. և ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նեեման Ասորի։

Եւ լցան ամենեքին բարկութեամբ ի ժողովրդեանն՝ իբրև լսէին զայս. և յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչեւ յատեւան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր, գահավիժ առնել զնա։

Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր։

---

Յերկրորդում Մակաբայեցւոց երկրաբանի առաւօտուն։

ԳԼՈՒԽ Դ. 31։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ էջ ի Կափառնաում ի քաղաքն գալիլեացւոց, և ուսուցանէր զնոսա ի շաբաթան։

Եւ զարմանային ընդ վարդապետութիւնն նորա, զի իշխանութեամբ էր բանն նորա։

Եւ էր ի ժողովրդեանն այր մի, զոր ոչնէր ոգի դիւի պղծոյ, և ազաղակեաց ի ձայն մեծ՝ ասէ. Թո՛ւլացո՛, զի կայ մեր եւ քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմ զքեզ ո՞վ ես Սուրբդ Աստուծոյ։

Ասաեաց ՚ի նա Յիսուս՝ եւ ասէ. Պապանձեա՛ց եւ եղ՚ի դլմանէ. Զգետնեաց զնա դեւն ՚ի միջի անդ եւ եղ՚ի նմանէ, եւ ինչ ոչ ՚ի ճշասեաց նմա։

Եւ եղեն զարմանալիք ՚ի վերայ ամենեցուն, խօսէին ընդ միմեանս եւ ասէին. Ջի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ եւ զօրութեամբ սաստէ այսոց պղծոց՝ եւ ելանեն։

Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառաւն։

Եւ յարուցեալ ՚ի ժողովրդենէ անտի, եմուտ ՚ի տունն Սիմովնի. զընչանչ Սիմովնի տագնապիւր ջերմամբ մեծաւ, եւ աղաչեցին զնա վասն նորա. եկաց առ նըմա, սաստեաց ջերմանն, եւ եթող զնա. եւ վաղվաղակի յարեաւ եւ պաշտէր զնոսա։

Եւ ընդ արեւուն մտանել՝ ամենեքեան որոց էին հիւանդք ՚ի պէսպէս ցաւս, բերէին զնոսա առ նա։

Եւ նա իւրաքանչիւր ումեք ՚ի նոցանէ դնէր ձեռս՝ եւ բժշկէր զնոսա։

Ելանէին դեւք ՚ի բազմաց, աղաղակէին եւ ասէին. Եթէ դու ես Որդի Աստուծոյ. և նա սաստէր և ոչ տայր թոյլ խօսել զի գիտէին զնա՝ թէ Քրիստոս է։

---

Ցերկրորդում Ախթակի երկրաթաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Դ. 43։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ իբրեւ տիւ եղեւ, ել եւ գնաց յանապատ տեղիս. և ժողովուրդքն խնդրէին զնա. եկին մինչեւ առ նա, և արգելուին զնա՝ զի մի գնասցէ ՚ի նոցանէ։

Եւ նա ասէ ցնոսա. Եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել զարքայութիւնն Աստուծոյ, զի յայս իսկ առաքեցայ։

Եւ քարոզէր ՚ի ժողովրդեան գալիլեացւոց։

---

Եւ եղեւ ՚ի խռնիլ զնովաւ ժողովրդեանն և լսել զբանն Աստուծոյ, և ինքն կայր առ ծովակին Գեննեսարեթայ. և տեսս երկուս նաւս՝ զի կային առ ծովակին, և ձկնորքն ելեալք ՚ի նոցանէ՝ լուանային զգործիսն։

Ել նա ՚ի մի նաւուցն՝ որ էր Սիմովնի, և աղաչեաց զնա՝ սակաւիկ մի տանիլ ՚ի ներքս ՚ի

ցամաքէն. նստաւ՝ և ուսու-
ցանէր ի նաւէ անտի զժողո-
վուրդսն։
Եւ իբրեւ լռեաց ի խօսիլն,
ասէ ցՍիմովն. խաղացո՛ ի խորն,
և արկէք զգործս ձեր յորս։
Պատասխանի եւ Սիմովն և ա-
սէ ցնա. վ՛արդապետ, զամե-
նայն գիշերս աշխատ եղեաք՝
և ոչ ինչ կալաք, բայց վասն քո
բանիդ՝ արկցուք զգործսս։
Զայս իբրև արարին՝ փակեցին
ի ներքս բազմութիւն ձկանց
յոյժ, մինչեւ պարպատէին
ուռկանք նոցա. և ակնարկէին
որսակցացն ի միւս նաւն՝ գալ
օգնել նոցա. և եկին, և լցան
երկոքին նաւքն՝ մինչեւ մերձ
յընկղմիլ նոցա։
Իբրեւ ետես Սիմովն Պետրոս,
անկաւ առ ծունկսն Յիսուսի
և ասէ. Ի բաց գնա՛ յինէն, Տէր,
զի այր մեղաւոր եմ ես։
Քանզի ահ պատեաց զնա եւ
զամենեսին որք ընդ նմանն էին՝
վասն որսոյ ձկանցն՝ զոր ըմբռ-
նեցին. նոյնպէս և զՅակովբոս
և զՅովհաննէս՝ զորդիսն Զեբե-
դեայ, որք էին որսակիցք Սի-
մովնի։
Եւ ասէ ցՍիմովն Յիսուս. Մի՛
երկնչիր, յայսմհետէ զմարդիկ
որսայցես ի կեանս։
Եւ հանեալ զնաւն ի ցամաք՝
Թողին զամենայն, և գնացին
զհետ նորա։

---

Յերկրորդում Վերադարձի ուսուցման։

ԳԼՈՒԽ Ե. 12։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ ի հասանիլն նորա
ի մի քաղաքաց, և ահա
այր մի լի բորոտութեամբ, իբ-
րեւ ետես զՅիսուս՝ անկեալ
ի վերայ երեսաց աղաչեաց զնա և ասէ. Տէր, եթէ կամիս,
կարող ես զիս սրբել։
Զգեաց զձեռն իւր՝ հասոյց ի
նա և ասէ. Կամիմ, սրբեաց,
և վազվազակի գնաց ի նմանէ
բորոտութիւնն։
Եւ նա պատուիրեաց նմա՝ մի՛
ումեք ասել, այլ թէ՝ երթ
ցոյց զանձն քո քահանային, և
մատո՛ պատարագ վասն սըր-
բութեան քոյ, որպէս և հրա-
մայեաց Մովսէս՝ ի վկայու-
թիւն նոցա։
Եւ յորդէր առաւել բանն զնմանէ, եւ ժողովէին ժողո-
վուրդք բազումք լսել և բժըշ-
կիլ ի հիւանդութեանէ իւ-
րեանց։
Եւ նա խոյս տայր յանապատ
տեղիս, և կայր յաղօթս։

Յերկրորդում Ախտակի Հինգշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Ե· 17։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ ՚ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետքն նստէին. որք ժողովեալ էին յամենայն բաղաքաց գալիլեացւոց և Հրէաստանի և Երուսաղէմի, և զօրութիւն Տեառն էր ՚ի բժշկել զնոսա։ Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ, և խնդրէին զնա մուծանել ՚ի ներքս և դնել առաջի նորա. և իբրեւ ոչ գտանէին՝ Թէ ընդ որ մուծանիցեն զնա ՚ի ներքս՝ վասն ամբոխին, ելին ՚ի տանիս, և ՚ի յուռցն կախեցին ըզնա, և իջուցին մահճօքն հանդերձ ՚ի մէջ առաջի Յիսուսի։ Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա. Այր դու, Թողեալ լինին քեզ մեղք քո։

Սկսան խորհիլ դպիրք և փարիսեցիքն՝ և ասեն. Ո՞վ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս. Ո՞վ կարէ Թողուլ զմեղս, բայց միայն Աստուած։

Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդն նոցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա. Զի՞ խորհիք ՚ի սիրտս ձեր. զո՞րն դիւրագոյն է, ասել՝ Թողեալ լինին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի՛ և գնա։

Այլ զի գիտասջիք՝ Թէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ երկրի՝ Թողուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն, քեզ ասեմ արի՛, առ զմահիճս քո, և երթ ՚ի տուն քո։

Եւ առ ժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ էառ զիբրեւ՝ յորոյ վերայ անկեալ էր, գնաց ՚ի տուն իւր, և փառաւորէր զԱստուած։ Զարմանք կալան զամենեսեան, և փառաւորէր զԱստուած. լի եղեն ահիւ և ասեն, Թէ տեսաք այսօր նոր նշան։

---

Յերկրորդում Ախտակի Ընդրաջի առաւն։

ԳԼՈՒԽ Ե· 27։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Եւ յետ այնորիկ ել անտի, եւ ետես մաքսաւոր մի՝ որում անուն էր Ղեւի, զի նստէր ՚ի մաքսաւորութեան, և ասէ ցնա, Եկ զկնի իմ։ Եւ Թողեալ զամենայն՝ յարեաւ գնաց զկնի նորա։

Եւ արար ընդուներութիւն մեծ նմա Ղեւի ի տան իւրում. եւ էր ժողովուրդ բազում մաքսաւորաց եւ այլոց՝ որք էին բազմեալք ընդ նոսա։ Եւ տրտնջէին փարիսեցիքն եւ դպիրքն նոցա զնմանէ առ աշակերտան նորա՝ եւ ասեն. Ընդէ՞ր ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէք եւ ըմպէք։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ոչինչ են պիտոյ բժիշկք՝ ողջոց, այլ հիւանդաց. եւ ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս յապաշխարութիւն։ Եւ նոքա ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու պահեն յաճախ, եւ խնդրուածս առնեն, նոյնպէս և փարիսեցւոցն, և քոյդ ուտեն և ըմպեն։ Եւ նա ասէ ցնոսա. միթէ կարող էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ՝ հրաման տալ պահել եկեսցեն առաւքք՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, ապա պահեսցեն յաւուրսն յայնոսիկ։ Ասաց և առակ մի առ նոսա, թէ ոչ ոք արկանէ ի նոր հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ, ապա թէ ոչ և զնորն պատառէ, և ընդ հնոյն չիաբանի կապերան՝ որ ի նորոյն։ Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուսցանէ գինին նոր զտիկս հինս. ինքն հեղանի, և տիկքն կորնչին։ Այլ գինի նոր՝ ի տիկս նորս արկանելի է, և երկոքին պահին։ Եւ ոչ ոք ըմպէ զհինն՝ և կամիցի զնորն. քանզի ասէ՝ թէ հինն քաղցրագոյն է։

---

Յերկրորդաւ Կիրակէ Շաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Զ. Ւ.

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ եղեւ ի շաբաթու երկրորդում առաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն, և աշակերտքն նորա կորզէին հասկ՝ ուտէին ընդ ափ և ուտէին։ Եւ ոմանք ի փարիսեցւոցն ասեն ցնոսա. Զի՞նչ գործէք՝ զոր չէ օրէն ի շաբաթու։ Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. Զիա՞րդ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն ինքն՝ և որք ընդ նմայն էին. զիա՞րդ եմուտ նա ի տունն Աստուծոյ, և զհացն զառաջաւորութեան եկեր՝ և ետ այնոցիկ՝ որք ընդ նմայն

էին. զոր ոչ էր օրէն ուտել ոեւէք ոե-
տել բայց միայն քահանայա-
պետին։
Եւ ասէ ցնոսա. Տէր է Որդի
մարդոյ և շաբաթոե։
Եւ եղեւ ի միւսում շաբա-
թոեն մտանել նմա ի ժողո-
վուրդն և ուսուցանել. և էր
անդ այր մի, որոյ ձեռն աջ՝
գօսացեալ էր։
Եւ սպասէին նմա գպիրքն և
փարիսեցիք՝ թէ ի շաբաթոեն
բժշկիցէ, զի գտանիցեն չարա-
խօսութիւն ընմանէ։
Եւ նա գիտէր զխորհուրդս
նոցա. ասէ ցայրն՝ որոյ ձեռն
գօսացեալ էր, Արի՛ և անդ ի
մէջ։ Եւ նա յարուցեալ եկաց։
Ասէ ցնոսա Յիսուս. Հարցիյ
ինչ ձեզ. զի՞նչ արժան է ի շա-
բաթոե, բարի՞ ինչ առնել՝ և-
թէ չար գործել. ոգի մի ապրե-
ցուցանել՝ եթէ կորուսանել։
Եւ հայեցեալ շուրջ զամենե-
քումբք զայրագին՝ ասէ ցնա.
Զգեա՛ զձեռն քո. Եւ նա ձը-
գեաց, և հաստատեցաւ ձեռն
նորա իբրեւ զմիւսն։
Եւնոքա լցան յիմարութեամբ,
և խօսէին ընդ միմեանս՝ թէ
զի՞նչ առնիցեն Յիսուսի։

---

Յերկրորդում Աւետարանի աւուրն։

ԳԼՈՒԽ Զ. 12։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ
այնոսիկ ել ի լեառն կալ
յաղօթս, և հանէր զգիշերն ի
գլուխ յաղօթից Աստուծոյ։
Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց
զաշակերտսն իւր, և ընտրեաց
ի նոցանէ երկոտասանս, զորս
եւ առաքեալս անուանեաց. զ-
Սիմովն՝ զոր եւ Պետրոսն ա-
նուանեաց, և զԱնդրեաս զեղ-
բայր նորին, և զՅակովբոս, և
զՅովհաննէս, և զփիլիպպոս, և
զԲարթուղիմէոս, եւ զՄատ-
թէոս, և զԹովմաս, և զՅակով-
բոս Ալփեայ, և զՍիմովն՝ զկո-
չեցեալն նախանձայոյզ, և զՅ-
ուդա Յակովբայ, և զՅուդա
Իսկարիովտացի՝ որ եղեւ իսկ
մատնիչ։
Եւ իջեալ նոքօք հանդերձ ի
տեղի մի տափարակ, և ժողով
աշակերտացն նորա, եւ բազ-
մութիւն ցոյժ ժողովրդեանն
յամենայն Հրէաստանէ և Ե-
րուսաղէմէ, և յայնմ կողմա-
նէ, և ի ծովեզերէն Տիւրոսի
եւ Սիդովնի, որք եկին լսել ի
նմանէ, և բժշկիլ ի հիւանդու-

թենէ իւրեանց. և նեղեալքն յայսոց պղծոց՝ բժշկին։
Եւ ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի նա, զի զօրութիւն բազում ելանէր ՚ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին։
Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտան իւր՝ և ասէ. Երանի՛ աղքատացդ հոգւով, զի ձեր է արքայութիւն Աստուծոյ։
Երանի է՝ որք քաղցեալք են այժմ, զի յագեսցին։
Երանի՝ որք լան այժմ, զի ծիծաղեսցին։
Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ, և յորժամ որոշիցեն զձեզ և նախատիցեն, և հանիցեն անուն չար զձէնջ՝ վասն Որդւոյ մարդոյ։
Ուրախ լինիջիք յաւուր յայնմիկ և ցնծասջիք, զի ահա վարձք ձեր բազում են յերկինս, ըստ դմին օրինակի առնէին մարգարէիցն հարք իւրեանց։
Բայց վա՛յ ձեզ մեծատանդք, զի ընկալայք զմխիթարութիւն ձեր։
Վա՛յ ձեզ՝ որք յագեալքդ էք այժմ՝ զի քաղցիցիք. վա՛յ ձեզ՝ որ ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք և լայցէք։
Վա՛յ ձեզ՝ յորժամ բարի ասիցեն զձէնջ ամենայն մարդիկ, զի այդպէս առնէին սուտ մարգարէիցն հարքն նոցա։
Ա՛յլ ձեզ ասեմ որք լսէքդ. սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց. օրհնեցէք զանիծիչս ձեր, աղօթս արարէք ՚ի վերայ նեղչաց ձերոց։
Որ հարկանէ զծնօտս քո, մատո՛ նմա և զմիւսն. և որ հանէ ՚ի քէն զպաճկոն քո, մի՛ արգելուր ՚ի նմանէ և զշապիկս. ամենայն որ խնդրէ ոք ՚ի քէն՝ տո՛ւր, և զոր ինչ հանէ ոք ՚ի քէն՝ մի՛ պահանջեր։
Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս առնէջիք և դուք նոցա։
Եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր, զի՞նչ շնորհ է ձեր. զի և մեղաւորք սիրեն զսիրելիս իւրեանց. և եթէ բարի առնէք բարերարաց ձերոց, որ շնորհ է ձեր. զի եւ մեղաւորք զնոյն գործեն։
Եւ եթէ տայք փոխ այնոցիկ՝ յորոց ակն ունիցիք առնուլ որ շնորհ է ձեր. քանզի եւ մեղաւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն անդրէն զնոյն կշիռն։

Բայց սիրեցէք զմիմեանս ձեր, և բարի արարէք առելեաց ձերոց. և տուք փոխ ուստի ոչ ակն ունիցիք առնուլ. և եղիցին վարձք ձեր բազումք, եւ եղիջիք որդիք Բարձրելոյ. զի նա քաղցր է ի վերայ չարաց և ապաշնորհաց։

Ողորմած գթած՝ որպէս եւ Հայրն ձեր գթած է։

Մի դատէք՝ և ոչ դատիցիք. մի պատժէք՝ և ոչ պատժիցիք. արձակեցէք եւ արձակիցիք. տուք՝ և տայի ձեզ. չափ բարւոք թաղաղուն, շարժուն, զեղուն, տային ի գոգս ձեր. նովին չափով որով չափէք՝ չափեսցի ձեզ։

Աստ և առակ մի առ նոսա. Միթէ կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել, ոչ ապաքէն երկոքին ի խորխորատ անկանիցին։

Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր. ամենայն կատարեալն՝ եղիցի իբրեւ զվարդապետ իւր։

Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քոյ, եւ ի քումմ ականն զգերանգ ոչ նշմարես։

Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր քո. եղբա՛յր, թո՛ղ հանից զշիւղ յականէ քումմէ, եւ դու ի քումմ ականն զգերանգ ոչ տեսանես։

Կեղծաւոր, հան նախ զգերանգ յականէ քումմէ, և ապա հայեսջիր հանել զշիւղ յականէ եղբօր քոյ։

Զի ոչ է ծառ բարի՝ որ առնէ պտուղ չար, և ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնիցէ զպտուղ բարի. զի իւրաքանչիւր ծառ՝ ի պտղոյ իւրմէ ճանաչի։

Զի ոչ եթէ ի փշոց քաղեն թուզ, և ոչ ի մորենւոյ կթեն խաղող։

Մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի. եւ մարդ չար՝ ի չարէն բղխէ զչար. քանզի ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նորա։

Զի կոչէք զիս՝ Տէր, Տէր, եւ զոր ասեմ ոչ առնէք։

Ամենայն որ գայ առ իս և լսէ զբանս իմ եւ առնէ զնոսա, ցուցից ձեզ ումն նման է։

Նման է առն՝ որ շինիցէ տուն, որ փորեաց և խորեաց, և եդ զհիմն ի վերայ վիմի. ի յաւելնել հեղեղաց՝ բաղխեաց գետ զտունն, և ոչ կարաց շարժել զնա. զի հաստատեալէր հիմունն ի վերայ վիմի։

Իսկ որ լսէ զբանս իմ եւ ոչ առնէ, նման է առն՝ որ շինիցէ

զտուն ՚ի վերայ հողոյ առանց հիման. զոր բաղխեաց գետ, եւ վազվազակի անկաւ, եւ եղեւ կործանումն տանն այնորիկ մեծ։

---

Յերրորդում Ախբակէի երկուշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Է. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ իբրեւ կատարեաց զամենայն զբանս իւր ՚ի լսելիս ժողովրդեանն, եմուտ ՚ի Կափառնաում։

Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ մերձ էր ՚ի վախճանիլ, որ էր նմա պատուական։

Եւ իբրեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն ՚ի Հրէից, աղաչել զնա՝ զի եկեսցէ եւ ապրեցուսցէ զծառայն նորա։

Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ եւ ասէին, թէ արժանի է՝ որում զշնորհս զայս առնես. զի սիրէ զազգս մեր, եւ զժողովրդեանցն՝ նա շինեաց մեզ։

Եւ Յիսուս գնաց ընդ նոսա. իբրեւ ոչ ինչ կարի հեռի էր ՚ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս, եւ ասե ցնա. Տէր, մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական եթէ ընդ յարկաս իմով մտանիցես. վասնորոյ եւ ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ՝ եւ բժշկեսցի մանուկս իմ. քանզի եւ ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինեւ զինուորս, և ասեմ սմա՝ երթ, և երթայ. և այլում՝ թէ եկ, և գայ. և ծառայի իմում՝ թէ արա զայս, և առնէ։

Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն՝ որք երթային զհետ նորա և ասէ. Ամէն ասեմ ձեզ, թէ եւ ոչ Իսրայէլի այսչափ հաւատս գտի։

Եւ դարձան անդրէն պատգամաւորքն ՚ի տուն, և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ։

---

Յերրորդում Ախբակէի երեքշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Է. 11։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ ՚ի վաղիւն երթայր ՚ի քաղաք մի՝ որում անուն էր Նային. երթային ընդ նմա աշակերտքն նորա, եւ ժողովուրդք բազումք։

Իբրեւ մերձ եղեւ ՚ի դուռն քաղաքին, և ահա ելանէր մե-

ռեալ մի՝ որպէս միամօր մօր իւրոյ, և նա էր պարի. և ժողովուրդ բազում բազաւորին էր ընդ նմա։

Իբրեւ եհաս ընդ Տէր՝ գթացաւ ի նա և ասէ, մի լար։

Եւ մատուցեալ մերձեցաւ ի դագաղն. եւ որք բարձեալն տանէին՝ զտեղի առին. և ասէ. Պատանի դուռ, քեզ ասեմ արի։

Կանգնեցաւ եւ նստաւ մեռեալն, և սկսաւ խօսիլ։

Եւ ետ զնա ցմայր իւր. և ահ կալաւ զամենեսին, և փառաւորէ առնէին զԱստուած՝ եւ ասէին, մարգարէ մեծ միջ մեզ յարուցեալ է ի միջի մերում, և թէ՝ այց արար Աստուած ժողովրդեան իւրում ի բարութիւն։

Եւ էլ զըսյս այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա, եւ ընդ ամենայն կողմանս աշխարհին։

Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ։

Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց Յովհաննէս, առաքեաց առ Տէր՝ և ասէ. Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք։

Եւ ի նմին ժամու բժշկեաց զբազումս ի հիւանդութենանց և ի հարուածոց և յայսոց չարաց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։

Պատասխանի ետ նոցա և ասէ, երթայք, պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսէքդ և լուայք. զի կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին. և երանի՛ իցէ՝ որ ոչ գայթակղեսցի յիս։

Եւ իբրեւ գնացին հրեշտակքն Յովհաննու, սկսաւ խօսիլ ընդ ժողովուրդն վասն Յովհաննու. զի՞ ելէք յանապատն տեսանել. զեղէգն շարժո՞ւն ի հողմոյ։

Այլ զի՞նչ ելէք տեսանել. զայր ի հանդերձս փափկութեա՞ն զարդարեալ. ահաւադիկ որք ի հանդերձս երեւելիս և ի փափկութեան են՝ յարքունեաս են։

Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ՞. այո՛, ասեմ ձեզ՝ առաւել եւս քան մարգարէ. զի

սաէ՝ վասն որոյ գրեալն է, Թէ
ահա առաքեմ զհրեշտակ իմ
առաջի քո՝ որ յարդարեսցէ ըզ-
ճանապարհս քո առաջի քո։
Ամէն ասեմ ձեզ. մեծ ի ծը-
նունդս կանանց մարգարէ քան
զՅովհաննէս՝ ոչ որ է. բայց փոք-
րիկն յարքայութեան Աստու-
ծոյ՝ մեծ է քան զնա։
Եւ ամենայն ժողովուրդն իբ-
րեւ լուաւ՝ եւ մաքսաւորքն,
արդարացուցին զԱստուած,
զի մկրտեցան ի մկրտութիւնն
Յովհաննու։
Իսկ փարիսեցիքն և օրինականք՝
զխորհուրդն Աստուծոյ անար-
գեցին յանձինս իւրեանց, զի
ոչ մկրտեցան ի նմանէ։
Արդ՝ ումե՞մ նմանեցուսից զմարդ-
իկ ազգիս այսորիկ. և ումի՞ ի-
ցեն նմանողք. նմանք են ման-
կտուց՝ որք ի հրապարակս նըս-
տեալք, կարդայցեն զմիմեանս
և ասիցեն. փող հարաք ձեզ՝
եւ ոչ կաքաւեցէք, ողբացաք՝
և ոչ լացէք։
Եկն Յովհաննէս Մկրտիչ՝ ոչ
ուտէր զհաց և ոչ ըմպէր ըզ-
գինի, եւ ասէք՝ դեւ կայ ի
նմա։
Եկն Որդի մարդոյ՝ ուտէ և ըմ-
պէ, և ասէք, ահա այր կերող
և արբեցող, բարեկամ մաքսա-
ւորաց եւ մեղաւորաց։
Եւ արդարացաւ իմաստու-
թիւն յորդւոց իւրոց։

---

Ցերկրորդում Կիւրակէի Զատկաքաւթի առաքն։

ԳԼՈՒԽ Է. 36։

Զաէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ա զաէրէ զնա ումն ի փարի-
սեցւոցն՝ զի կերիցէ ճաշ
ընդ նմա. և մտեալ ի տունն փա-
րիսեցւոյն՝ բազմեցաւ։
Եւ կին մի էր ի քաղաքին մե-
ղաւոր, իբրեւ գիտաց եթէ
բազմեալ է ի տան փարիսեց-
ւոյն, բերեալ շիշ մի իւղոյ նար-
դեան ազնուի։
Կայր լեալ առ ոտս նորա,
լայր եւ արտասուօքն սկսաւ
թանալ զոտս նորա, և հերով
գլխոյ իւրոյ ջնջէր, եւ համ
բուրէր զոտս նորա, և օծա-
նէր իւղովն։
Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ
կոչեացն զնա, ասէ ընդ միտս
իւր. Սա թէ մարգարէ որ էր,
ապա գիտէր թէ ո՞վ և որպիսի
որ կինն մերձենայ ի սա, զի մե-
ղաւոր է։
Պատասխանի եւ Յիսուս եւ
ասէ. Սիմո՛ն, ունի՛մ ինչ ասել
քեզ։

Եւ նա ասէ. Ա՛սա, վ՛արդապետ։

Եւ ասէ. Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. մինն պարտէր հինգ հարիւր դահեկան, և միւսն չիսուն, և իբրեւ ոչ գոյր հատուցանել, երկոցունց շնորհեաց. արդ ասա՝ ո՞վ առաւել սիրեսցէ զնա։

Ա՛սէ Սիմոն. Ինձ այսպէս թուի՝ թէ որում զբազումն շնորհեաց։

Եւ նա ասէ ցնա. Ուղիղ դատեցար։

Եւ դարձեալ ՚ի կին կողմն, ասէ ցՍիմոն. Տեսանե՞ս զայս կին, մի՛ ՚ի տուն քո, ջուր ոտից իմոց ոչ ետուր. իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, և հերով իւրով չնչեաց. համբոյր մի դու ոչ ետուր ինձ, սա աւասիկ յորժէ՛ հետէ մտեալ եմ՝ ոչ դադարեաց ՚ի համբուրել զոտս իմ, իւղով զգլուխ իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ էօծ։

Վասն որոյ ասեմ քեզ. Թողեա՛լ լիցին սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց. զի որոյմ շատ թողուցու՝ շատ սիրէ, և որոյմ սակաւ՝ սակաւ։

Եւ ասէ ցնա. Թողեա՛լ լիցին քեզ մեղք քո։

Եւ սկսան որք բազմեալն էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց. Ո՞վ է սա՝ որ զմեղս թողու։

Եւ նա ասէ ցկինն. Հաւատոք քո կեցուցին զքեզ, երթ ՚ի խաղաղութիւն։

---

Ցերկրորդում Ախաւկի Հիգեաբանի աւուրն։

ԳԼՈՒԽ Ը. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ յետ այնորիկ, եւ ինքն շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս, քարոզէր եւ աւետարանէր զԱրքայութիւն Աստուծոյ, եւ երկոտասանքն ընդ նմա. եւ կանայք ոմանք՝ որք բժշկեալ էին յայսոց չարաց եւ ՚ի հիւանդութեանց. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եօթն դեւքն ելեալ էին. եւ Յովհաննա կին Քուզայ՝ հաղարապետին Հերովդի, եւ Շուշան, եւ այլք բազումք, որք պաշտէին զնա յընչից իւրեանց։

Եւ ՚ի ժողովիլ բազում ժողովրդոց, եւ ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն առ նա,

սաէ առակաւ . Եւ սերմա-
նացան սերմանել զսերմանիս
իւր . եւ ի սերմանելն իւ-
րում՝ էր որ անկաւ առ ճա-
նապարհաւ և եղեւ կոխան ,
եւ թռչունք երկնից կերին
զնա :

Եւ այլն անկաւ յապառաժի .
եւ ընդ բուսանիլն՝ չորացաւ՝
առ ի չգոյէ հիւթոյ :

Եւ այլն անկաւ ի մէջ փշոց .
եւ ընդ նմին բուսեալ փշոցն՝
հեղձուցին զնա :

Եւ այլն անկաւ յերկիր բարի
և պարարտ . և բուսեալ՝ արար
պտուղ հարիւրապատիկ :

Զայս իբրև խօսեցաւ՝ ասէ . Որ
ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ :

Հարցանէին զնա աշակերտքն ,
Թէ զի՞նչ իցէ առակն :

Եւ նա ասէ . Ձեզ տուեալ է
գիտել զխորհուրդս Աստ-
ուածոյ , բայց այլոցն առակօք , զի տեսցեն՝ և մի՛
տեսցեն , և լսիցեն՝ և մի՛ ի-
մացին :

Բայց առակն այս ինչ է . սերմն՝
բանն Աստուածոյ է . և որք առ
ճանապարհաւն , այնոքիկ են՝
որք լսեն , և ապա գայ սատա-
նայ՝ և հանէ զբանն ի սրտից
նոցա , զի մի՛ հաւատասցեն և
ապրեսցին :

Եւ որք յապառաժին , որք յոր-
ժամ լսիցեն՝ խնդութեամբ
ընդունին զբանն , եւ արմատս
ոչ ունին . որք առ ժամանակ մի
հաւատան , եւ ի ժամանակի
փորձութեան հեռանան :

Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝
նորա են , որք իբրեւ լսեն զբ-
անն՝ և ի հոգս և ի մեծու-
թիւն եւ ի ցանկութիւն աշ-
խարհիս զբաղեալ՝ հեղձնուն
և անպտուղ լինին :

Իսկ որ յերկիրն պարարտ , որոց
բարւոք և զուարթագին սըր-
տիւ լուեալ զբանն՝ ընդունին ,
եւ տան զպտուղ համբերու-
թեամբ :

Ոչ ոք լուցանէ զճրագ և թա-
գուցանէ ընդ կարասեաւ , կամ
դնէ ընդ մահճօք . այլ՝ի վերայ
աշտանակի դնէ , զի որք մտա-
նեն՝ զլոյս տեսցեն :

Զի՛ք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ
լիցի , և ոչ գաղտնի՝ որ ոչ ծա-
նիցի և եկեսցէ ի յայտ :

Տեսէք այսուհետեւ՝ զիարդ
լսէքդ . զի որ գուցէ՝ տացի
նմա , և որ ոչն գուցէ՝ և զոր
կարծէն Թէ ունիցի՝ բարձցի
ի նմանէ :

Եկին առ նա մայրն և եղբարք
իւր , և ոչ կարէին հասանիլ ի
նա վասն բազմութեանն :

Ազգ եղեւ նմա և ասէն. Մայր քո և եղբարք քո կան արտաքոյ՝ և կամին ղքեզ տեսանել: Եւ ասէ ցնոսա. Մայր իմ եւ եղբարք իմ սոքա են, որք լըսբանն Աստուծոյ լսեն՝ և առնեն:

---

Յերրորդում Աւետեաց Ընթերցի առաւն:

ԳԼՈՒԽ Ը. 22:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եւ եղեւ ՚ի միում աւուրց՝ ինքն ել ՚ի նաւ եւ աշակերտքն նորա, և ասէ ցնոսա. Եկայք անցցուք յայնկոյս ծովակիս. և գնացին:

Եւ մինչդեռ նաւէին՝ ՚ի քուն եմուտ. և էջ մրրիկ հողմոյ ՚ի ծովակն՝ և ուռնոյր, և տագնապէին:

Մատուցեալ զարթուցին զնա և ասեն. Վարդապետ, վարդապետ, կորնչիմք աւասիկ:

Եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն և խռովութեան ջրոյցն, և հանգարտեցին, և եղեւ խաղաղութիւն:

Ասէ ցնոսա. Ո՞ւր են հաւատք ձեր:

Եւ զահի հարեալ զարմացան, եւ ասէին ցմիմեանս. Ո՞վ արդեօք իցէ սա՝ զի և հողմոյ և ջրոյ հրամայ տայ, և հնազանդին սմա:

Եւ նաւեցին ի կղին յաշխարհն գերգեսացւոց, որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ:

Եւ ընդ ելանելն նորա ՚ի ցամաք՝ պատահեաց այր մի ՚ի քաղաքէն, յորում էին դեւք, և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ եւ ոչ ՚ի տան բնակեալ, այլ ՚ի գերեզմանս:

Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. Զի՞ կայ իմ և քո, Յիսուս՝ Որդի Աստուծոյ Բարձրելոյ. աղաչեմ զքեզ, մի տանջեր զիս:

Վասնզի հրամայ տայր այսոյն պղծոյ ելանել ՚ի մարդոյ անտի. քանզի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր ՚ի շղթայս, եւ պահէր յերկաթս, և խզէր զկապանսն, և վարեր ՚ի դիւէն յանապատ:

Եհարց ցնա Յիսուս և ասէ. Զի՞նչ անուն է քեզ:

Եւ նա ասէ. Լեգէովն: Զի դեւք բազումք մտեալ էին ՚ի նա. և աղաչէին զնա՝ զի մի հրաման տայցէ նոցա երթալ յանդունդս:

Եւ էր անդ երամակ մի խոզից բազմաց արօտական ՚ի լերինն.

և աղաչեցին զնա՝ զի հրաման տացէ նոցա մտանել ի նոսա. և հրամայեաց նոցա։

Եւ ելեալ դեւքն յառնէին՝ մտին ի խոզեանն. եւ դիմեաց երամակն ի գահէ անտի ի ծովակն՝ և հեղձաւ։

Իբրեւ տեսին խոզարածքն զերան՝ որք եղեն՝ փախեան, և պատմեցին ի քաղաքին և յագարական։

Եւ իբրեւ ելին տեսանել զգործն, և եկին առ Յիսուս, և գտին զայրն ուստի դեւքն ելեալ էին, զգեցեալ և զգաւ տացեալ նստեր առ ոտսն Յիսուսի, և երկեան։

Պատմեցին նոցա՝ որոց տեսեալքն էր՝ թէ զիարդ փրկեցաւ դիւահարն։

Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկողմամբքն գերգեսացւոց՝ զնալ ի սահմանից նոցա նոցա, քանզի ահիւ մեծաւ տագնապէին. և նա մըտեալ ի նաւ՝ դարձաւ անդրէն։

Այդաչէր զնա այրն ուստի դեւքն ելեալ էին՝ շրջիլ ընդ նմա. արձակեաց զնա և ասէ. Դարձ ի տուն քո, և պատմեա՝ զոր միանգամ արար քեզ Աստուած։ Գնաց ի բաղաքն և քարոզէր՝ զոր ինչ արար նմա Յիսուս։

Եւ իբրեւ դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին նմա։

Եւ ահա եկն այր մի՝ որոյ անուն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել ի տունն նորա. զի դուստր միամօր էր նորա, ամաց իբրեւ երկոտասանից, և էր մերձ ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա։

Եւ կին մի էր ի տեառատեսութեան արեան չամաց երկոտասանից, որ ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր, որովհետեւ ոչ էր լեալ հնար յոմեքէ բժշկիլ։

Մատուցեալ յետոյ մերձեցաւ ի դրաչակ հանդերձի նորա, և նոյնժամայն եկաց բըզխութիւն արեան նորա։

Եւ ասէ Յիսուս. Ո՞վ է որ մերձեցաւն յիս։

Իբրեւ ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս և որք ընդ նմա էին. վարդապետ, ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ։

Եւ ասէ Յիսուս. Ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ելին ինէն։

Իբրեւ ետես կինն՝ եթէ ոչ ծանկեցաւ ի նմանէ, եկն դողալով՝ և անկաւ առաջի նորա, Թէ վասն որոց իրաց մերձեցաւ ի նա՝ պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն, և եթէ ո՛րպէս բժշկեցաւ առժամայն։ Եւ ասէ. Քաջալերեա՛ց, դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ՝ ի խաղաղութիւն։

Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն ի տանէ ժողովրդապետին և ասէ ցնա. Մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ զդա։

Իսկ Յիսուս իբրեւ լուաւ, պատասխանի ետ նմա և ասէ. Մի՛ երկնչիր, միայն հաւատա՛ և կեցցէ։

Եւ մտեալ ի տունն, ոչ ըզք եթող մտանել՝ բայց միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա։

Լային ամենեքեան և կոծէին զնա. և նա ասէ. Մի՛ լայք, զի չէ մեռեալ՝ այլ ննջէ։

Եւ նորա ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մեռաւ։

Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նորա, բարբառեցաւ և ասէ. Աղի՛ կաց, մանուկ դու։

Եւ դարձաւ ոգի նորա, և կանգնեցաւ վաղվաղակի. և հրամայեաց տալ նմա ուտել։

Եւ զարմացան ծնողքն նորա. և նա պատուիրէր՝ մի՛ ումեք ասել՝ որ ինչ եղեւն։

---

Ձեռրդումն Վերակի Շաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Թ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, ետ նոցա զզօրութիւն և զիշխանութիւն՝ ի վերայ ամենայն դիւաց. և բժշկել զհիւանդութիւնս։

Եւ առաքեաց զնոսա քարոզել զԱրքայութիւնն Աստուծոյ, և բժշկել զախտաժէտս։

Եւ ասէ ցնոսա. Մի՛ ինչ բառնայք ի ճանապարհի, մի՛ գաւազան և մի՛ մախաղ, մի՛ հաց և մի՛ արծաթ, և մի՛ երկուս հանդերձս ունիցիք։

Եւ յոր տունն մտանիցէք՝ անդ ագջիք, և անտի գնայցէք։

Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք՝ ի վկայութիւն նոցա։

Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ գեօղս, աւետարանէին

և բժշկեին ընդ ամենայն տե-
ղիս։

Լուաւ Հերովդէս զորմորդա-
պետ զգործսն ամենայն. եւ
զարմանայր վասն ասելոյն յո-
մանց, եթէ յովհաննէս յա-
րեաւ ի մեռելոց, և յոմանց՝
թէ Եղիա յայտնեցաւ, եւ
յայլոց՝ եթէ մարգարէ ոմն
յառաջնոցն յարեաւ։

Ասէ Հերովդէս. զՅովհաննէս՝
ես գլխատեցի. իսկ սա ո՞վ իցէ՝
զորմէ զայսպիսի իրս լսեմ։

Եւ խնդրէր տեսանել զնա։

Դարձան առաքեալքն և պատ-
մեցին նմա զամենայն՝ զոր ա-
րարին։

Եւ առեալ զնոսա խուսեաց
առանձինն ի տեղի անապատ՝
քաղաքի միոյ, որում անուն
էր Բեթսայիդա։

Եւ ժողովուրդքն իբրեւ գի-
տացին, գնացին զհետ նորա.
և ընկալեալ զնոսա՝ խօսէր ընդ
նոսա վասն Արքայութեան Աս-
տուծոյ, եւ որոց պէտք էին
բժշկութեան՝ բժշկէր։

Եւ օրն սկսաւ տարաժամիլ.
մատեան երկոտասանքն և ա-
սեն ցնա. Արձակեա՛ զժողո-
վուրդսդ, զի երթեալ շուրջ
ի գեօղսն և յագարակ՝ հան-
գիցեն եւ գտցեն կերակուր.
զի աստ յանապատի տեղւոջ
եմք։

Ասէ ցնոսա. Դուք տա՛ք դո-
ցա ուտել։

Եւ նոքա ասեն. Ոչ գոյ մեր
աւելի քան զհինգ նկանակ և
զերկուս ձկունս. բայց եթէ
երթիցուք գնեսցուք բաւա-
կան՝ ժողովրդեանդ կերակուր։
Քանզի էին արք իբրեւ հինգ
հազարք։

Ասէ ցաշակերտան. Բազմե-
ցուցէ՛ք զդոսա դասս դասս,
հիսուն հիսուն։

Եւ արարին այնպէս, և բազ-
մեցուցին զամենեսեան։

Եւ առեալ զհինգ նկանական
եւ զերկուս ձկունսն, հայե-
ցաւ յերկինս՝ օրհնեաց, եւ
եբեկ, եւ տայր ցաշակերտսն
արկանել ժողովրդեանն։

Կերին եւ յագեցան ամենե-
քեան, և բարձին զնշխարս կո-
տորոցն՝ երիոտասան սակառս։

---

Ձորմորդում Ախաբեի աւուրն։

ԳԼՈՒԽ Թ. 18։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ եղեւ ի կալն նորա յա-
ղօթս առանձինն՝ էին ընդ
նմա եւ աշակերտքն նորա. և
հարց զնոսա եւ ասէ. Զո՞ ոք

ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ։

Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն. զՅովհաննէս Մկրտիչ, և այլք՝ զԵղիա, իսկ այլք՝ թէ մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ։

Ասէ ցնոսա. Դուք զի՞մ ոք ասէք զինէն թէ իցեմ։

Պատասխանի ետ Պետրոս և ասէ. զՔրիստոսն Աստուծոյ։

Նա սաստեաց ի նոսա, եւ պատուիրեաց մի՛ ումեք ասել զայն. և ասէր, թէ պարտ է Որդւոյ մարդոյ բազում չարչարիլ եւ անարգիլ ի բաց հանայապետից և ի ծերոց և ի գպրաց, եւ սպանանիլ, եւ յերիր աւուր յառնել։

Եւ ասէր առ ամենեսին. Եթէ ոք կամի զինի իմ գալ, ուրասցի զանձն, եւ առցէ զխաչ իւր հանապազ, եւ եկեսցէ զհետ իմ։

Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա։

Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ շահեսցի, եւ զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի։

Զի որ ամօթ համարեսցի զիս և զբանս իմ, զնա և Որդի մարդոյ ամաչեսցէ յորժամ գայցէ փառօք իւրով և Հօր և Հրեշտակաց սրբոց։

Բայց արդարեւ ասեմ ձեզ, եթէ են ոմանք ի դոցանէ որք այդր կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զԱրքայութիւն Աստուծոյ։

Եւ եղեւ յետ այսց բանից իբրեւ աւուրք ութ, առեալ զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս՝ ել ի լեառն կալ յաղօթս։

Եւ ի կալն նմա յաղօթս՝ եղեւ տեսիլ երեսաց նորա այլակերպ, եւ փոխեցաւ հանդերձ նորա և եղեւ սպիտակ փայլուն. և ահա արք երկու խօսէին ընդ նմա, որք էին Մովսէս եւ Եղիա, երեւեալ փառօք. և ասէին զելիցն նորա՝ զոր կատարելոց էր Երուսաղէմ։

Իսկ Պետրոս և որք ընդ նմանն էին՝ ծանրացեալք ի քնոյ՝ զարթեան և տեսին զփառսն նորա և զերկուս արսն՝ որք կային առ նմա։

Եւ եղեւ ի մեկնիլն նոցա ի նմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս. Վարդապետ, բարւոք է մեզ աստ լինիլ, և արասցուք երիս

աւազաւարս, մի փեզ, եւ մի Մովսիսի, եւ մի եղիայի. Եւ ոչ գիտէր՝ զինչ խօսէր։

Եւ իբրեւ զայս ասաց, եկն ամպ եւ հովանի եղեւ ի վերայ նոցա, և երկեան ի մտանել նոցա ընդ ամպովն։

Զայն եղեւ յամպոյն եւ ասէ. Դա՛ է Որդի իմ ընտրեալ, դմա լուարո՛ւք։

Եւ ընդ լինիլ բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն. եւ ինքեանք լռեցին, եւ ոչ ուրեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ և ոչինչ՝ յորոց տեսին։

---

Ձորդումն Ախտակիւ Ձորքրաքաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Թ. 37։

Ընդ ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ եղեւ ի վաղիւն մինչ իջանէին նոքա ի լեառնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում։

Եւ ահա այր մի ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ. Վարդապետ, աղաչեմ զքեզ, հայեաց՝ յորդի իմ, զի միամօր է ինձ. և ահա այս հարկանի ի նմա, և յանկարծ գոչէ, և զարկուցանէ, և Թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ, և հազիւ մեկնի ի նմանէ՝ խորտակել զնա. և աղաչեցի զաշակերտսն քո՝ զի հանցեն զնա, և ոչ կարացին։

Պատասխանի Տէրն Յիսուս և ասէ. Ո՛վ ազգ անհաւատ եւ Թիւր, մինչեւ երբ եղէց ընդ ձեզ, և անասցեմ ձեզ. մատո այսր զորդին քո։

Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դեւն և չարժլեաց։

Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, և բժշկեաց զմանուկն, և ետ զնա ցհայր իւր։

Եւ զարմանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն Աստուծոյ։

Եւ ի զարմանալ ամենեցուն ի վերայ ամենայնի՝ զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր, Դո՛ք դուք ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ, զի Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան։

Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և էր ծածկեալ ի նոցանէ՝ զի մի՛ գիտասցեն. և երկնչէին հարցանել ցնա վասն բանին այնորիկ։

Եմուտ խորհուրդ ի նոսա, Թէ ո՞վ արդեօք մեծ իցէ ի նոցանէ։

Յիսուս իբրեւ ծանեաւ զխորհուրդս սրտից նոցա, եառ

մանուկ մի՝ կայցէ ՚ի մէջ նո-
ցա առ իւր, եւ ասէ ցնոսա.
Որ ոք ընկալցի զմանուկս զայս
յանուն իմ՝ զիս ընդունի. և
որ զիս ընդունիցի՝ ընդունի
զԱռաքիչն իմ. զի որ փոքրիկն
է յամենեսին ՚ի ձեզ՝ նա եղից
մեծ։

Պատասխանի ետ Յովհաննէս
և ասէ. Վարդապետ, տեսաք
զոմն՝ որ յանուն քո դեւս հա-
նէր, և արգելաք զնա, զի ոչ
երթայր ընդ մեզ։

Ասէ ցնոսա Յիսուս. Մի՛ ար-
գելուք, զի որ ոչն է ձեր թըշ-
նամի՝ ՚ի ձեր կողմն է։

---

Զորրորդամ կիրակէի երեքշաբթի աւուրն։

ԳԼՈՒԽ Թ. 51։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ եղեւ ՚ի կատարել ա-
ւուրց վերանալոյ նորա՝
և ինքն զերեսս հաստատեաց
երթալ Յերուսաղէմ։

Եւ առաքեաց հրեշտակս ա-
ռաջի երեսաց իւրոց. եւ իր-
րեւ չոգան՝ մտին ՚ի գիւղ մի
սամարացւոց՝ պատրաստել ինչ
նմա. եւ ոչ ընկալան զնա, զի
դէմ եգեալ էր նորա երթալ
Յերուսաղէմ։

Իրրև տեսին աշակերտքն Յա-
կովբոս և Յովհաննէս՝ ասեն.
Տէր, կամիս զի ասասցուք և
իջցէ հուր յերկնից և սատա-
կեսցէ զնոսա։

Դարձաւ սաստեաց ՚ի նոսա
և ասէ. Ոչ գիտէք՝ որոյ հոգ-
ւոյ էք դուք. զի Որդի մարդոյ
ոչ եկն զոգիս մարդկան
կորուսանել՝ այլ կեցուցանել։
և գնացին յայլ գիւղ։

Եւ մինչդեռ երթային նոքա
՚ի ճանապարհին՝ ասէ ոմն ցնա.
Եկից և ես զկնի քո՝ Տէր
և երթիցես։

Ասէ ցնա Յիսուս. Աղուեսուց
որջք գոն, և թռչնոց երկնից
դադարք, եւ Որդւոյ մարդոյ
ոչ գոյ՝ ուր գիցէ զգլուխ։

Ասէ ցմիւս ևս. Եկ զկնի իմ։
Եւ նա ասէ. Տէր, հրամայ
տուր ինձ՝ երթալ նախ թա-
ղել զհայր իմ։

Ասէ ցնա Յիսուս. Թո՛ղ զմե-
ռեալսն թաղել զմեռեալս իւ-
րեանց, և դու երթ և պատ-
մեա՛ զԱստուածութիւնն Ա-
ստուծոյ։

Ասէ և այլ ոմն. Եկից զկնի քո,
Տէր, բայց նախ հրամայ
տուր ինձ հրաժարիլ ՚ի տանէ իմմէ։
Ասէ ցնա Յիսուս. Ոչ ոք պիտա-
նէ ձեռն զմաճով՝ եւ հայիցի

հետս , եթէ յաջողեալ իցէ Աբբայութիւն Աստուծոյ։

---

Զպղպեղամբ Ախտակի Զոքէքսթաթի աւետն։

ԳԼՈՒԽ ԺԸ. 1։

Տէրն մեր ցիտաս զբիտոս։

Յետ այսորիկ երեւեցոյց Տէր և այլ եւս եօթանասունն և երկուս. և առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս և ի տեղիս՝ ուր ինքն երթալոց էր։

Եւ ասէ ցնոսա. Հունձք բազումք են՝ և մշակք սակաւ. արդ՝ աղաչեցէք զՏէր հնձոյ. զի հանիցէ մշակս ի հունձս իւր։ Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրեւ զգառինս ի մէջ գայլոց։ Մի բառնայք քսակ, և մի մախաղ, մի կօշիկս. և ի ճանապարհի ումեք ողջոյն մի տայցէք։

Յոր տուն մտանիցէք՝ նախ ասասջիք՝ Թէ ողջոյն տանս այսմիկ. եթէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա, ապա Թէ ոչ՝ ի ձեզ դարձցի։

Եւ ի նմին տան ագանիջիք, ուտիջիք և ըմպիջիք ի նոցանէ. զի արժանի է մշակն վարձու իւրոյ. մի փոխիցիք ի տանէ ի տուն։

Յոր քաղաք մտանիցէք և ընդունիցին զձեզ, ուտիջիք՝ զինչ առաջի դնիցեն ձեր, և բժշկեսջիք որք ի նմա հիւանդք իցեն, և ասասջիք նոցա, Մերձեալ է ի վերայ ձեր Աբբայութիւն Աստուծոյ։

Իսկ յոր քաղաք մտանիցէք և ոչ ընդունիցին զձեզ, իբրեւ ելանիցէք ի հրապարակս նորա՝ ասասջիք. և զփոշիս որ կռնեալ է ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք ի ձեզ. բայց զայս գիտասջիք՝ զի մերձեալ է Աբբայութիւն Աստուծոյ։

Ասեմ ձեզ, զի սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այնմիկ։ Ա՛յ քեզ, Քորազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա. զի եթէ ի Տիւրոս և ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն՝ որք եղեն ի ձեզ, վաղուց եւս արդեօք ի խորգ և ի մոխիր նստեալք ապաշխարեալ էին։

Բայց Տիւրոսի և Սիդովնի ընդարձակագոյն լիցի ի դատաստանի՝ քան ձեզ։

Եւ դու , Կափառնաում՝, որ մինչեւ յերկինս բարձրացեալ ես, մինչեւ ի դժոխս իջցես։

Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ.

և որ զիս անարգէ, զԱ՛ստուածն իմ անարգէ. և որ ինձ լսէ, լսէ այնմիկ՝ որ առաքեացն զիս։

Պարձան եօթանասունն և երկուքն խնդութեամբ և ասեն. Տէր, և դեւք հնազանդին մեզ յանուն քո։

Եւ ասէ ցնոսա. Տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրեւ զփայլակն։

Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս, և զամենայն զօրութիւն թըշնամւոյն, և ձեզ ոչ ինչ մեղանչիցէ։

Բայց ընդ այն մի՛ խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ, այլ խնդացէ՛ք՝ զի անուանք ձեր գրեալ են յերկինս։

Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգւով Սրբով և ասէ. Գոհանամ զքէն, Հա՛յր, Տէր երկնից և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոյ և՛ ի գիտնոց, եւ յայտնեցեր զայս՝ տղայոց. այո՛, Հա՛յր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քոյ։

Ամենայն ինչ տուաւ ինձ ՚ի Հօրէ իմմէ. և ոչ ոք գիտէ՝ ո՛վ է Որդի՝ եթէ ոչ Հայր, և ո՛ է Հայր՝ եթէ ոչ Որդի, և ումմ կամիցի Որդին յայտնել։

Եւ դարձեալ առանձինն առ աշակերտան ասէ. Երանի՛ աչաց՝ որք տեսանիցեն՝ զոր տեսանէք դուք. ասեմ ձեզ, զի բազում մարգարէք և թագաւորք կամեցան տեսանել՝ զոր դուք տեսանէք՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէք՝ և ոչ լուան։

---

Ձօրդորդում Ա֊բանակի Հիգէաթեի աւուրն։

ԳԼՈՒԽ Ժ. 25։

Ջաչերն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր զնա եւ ասէր. Վարդապետ, զի՞նչ գործեցից՝ զի կեանն յաւիտենական ժառանգեցից։

Եւ նա ասէ ցնա. Յօրէնս զի՞նչ գրեալ է, որպէս ընթեռնուս։

Նա պատասխանի ետ և ասէ. Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտաց քոց, և զընկեր քո իբրև զանձն քո։

Եւ ասէ ցնա, Ուղիղ եսուր զպատասխանիդ. զայդ արա՛ և կեցցես։

Նա իբրեւ կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս. Եւ ո՞վ է իմ ընկեր։

Պատասխանի եւ Յիսուս և ասէ. Աչք մի իջանէր յերուսաղէմ յերիքով, և անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա. և վէրս ի վերայ եդին, թողին կիսամահ և գնացին։

Դէպ եղեւ քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ, և տեսեալ զնա՝ զանց արար. նոյնպէս եւ Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն տեղի, ետես՝ և զանց արար։

Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ զնա՝ գթացաւ. և մատուցեալ պատեաց զվէրս նորա՝ արկեալ ի վերայ ձէթ և գինի, և եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ էած զնա ի պանդոկ մի, եւ դարմանեաց զնա։

Եւ ի վաղիւ անդր իբրեւ ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ. Դարման տար զմա, և զոր ինչ ծախեսցես ի դմա՝ ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ։

Արդ՝ ո՞ յերեցուանց ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակաց։ Եւ նա ասէ. Որ արար զողորմութիւն ի վերայ նորա։ Ասէ ցնա Յիսուս. Երթ եւ դու արա նոյնպէս։

Եւ եղեւ ի գնալն նորա, եւ ինքն եմուտ ի գիւղ մի. եւ կին ոմն անուն Մարթա՝ ընկալաւ զնա ի տան իւրում։ Եւ նորա էր քոյր մի, որում անուն էր Մարիամ, որ և եկն նստաւ առ ոտն Տեառն, եւ լսէր զբանս նորա։

Եւ Մարթա զբաղեալ էր ի բազում սպասու. եկն և եկաց առ նմա՝ և ասէ. Տէր, ոչինչ է փոյթ քեզ, զի քոյրդ իմ միայն եմոզ զիս ի սպասու. արդ՝ ասա դմա՝ զի օգնեսցէ ինձ։

Պատասխանի եւ նմա Յիսուս և ասէ. Մարթա Մարթա, դու հոգաս՝ և զբաղուս իւիք բազում. բայց սատ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մանր բարի ընտրեաց, որ ոչ բարձցի ի նմանէ։

---

Ձորդորդում նիւթակէն Ուբրաթի աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԱ. 1։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ եղեւ ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս. եւ իբրեւ դադարեաց՝ ասէ ցնա ոմն յա-

չակերտացն իւրոց. Տէր, ուստ մեզ յաղօթս կալ, որպէս Յով հաննէս ուսոյց աշակերտաց իւրոց։

Ամէն ցնոսա. Յորժամ կայցէք յաղօթս, ասասջիք. Հայր մեր, սուրբ եղիցի անուն ք՛ո. և եկեսցէ Ա՛ր քայութիւն ք՛ո. ըղ հաց մեր հանապազորդ՝ տո՛ր մեզ զօրըստօրէն. և ի՛ն մեզ զնեղս մեր. զի եւ մեք թո ղուա՛մբ ամենայնի՝ որ պարտի ցի մեզ. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն։

Եւ ասէ ցնոսա. Ո՞վ է ի ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ, և երթայցէ առ նա ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա, բարեկամ, տո՛ւր ինձ փոխ երիս նկանակս. զի բարեկամ իմ եկն առ իս յուղեայ, եւ ոչ ինչ ունիմ պնել առաջի նորա։

Եւ ի ներքուստ տայցէ պատասխանի եւ ասիցէ. մի՛ աշխատ առներ զիս, զի դուրզդ փակեալ են, եւ մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի. ոչ կարեմ յառնել և տալ քեզ։ Ամէն ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեան, սակայն վասն ժուռթեանն յարուցեալ տայցէ նմա՝ զինչ և պիտոյ իցէ։

Եւ ես ասեմ ձեզ. խնդրեցէք՝ և տայի ձեզ, հայեցեցէք՝ և գտջիք, բաղխեցէք՝ և բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայէ՝ գտանէ, և որ բաղխէ՝ բացցի նմա։

Յո՞ր ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն ծձ տայցէ նմա. և կամ խնդրիցէ ձու, միթէ կարի՞ տայցէ նմա։

Իսկ եթէ դուք՝ որք չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ եւս առաւել Հայրն ձեր յերկնից տայցէ բարիս այնոցիկ՝ որք խընդրեն ի նմանէ։

---

Ջորրորդումն Կիրակէի Շաբաթի առաջն։

ԳԼՈՒԽ ԺԱ. 14։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ հանէր դեւ մի համր. և եղեւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն, եւ զարմացան ամենայն ժողովուրդքն։

Եւ ոմանք ի նոցանէ ասեն. Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց՝ հանէ զդեւս։

Եւ այլք փորձէին եւ նշան յերկնից խնդրէին ի նմանէ։

Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. Ամե-

Նայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, և տուն բաժանեալ յանձն՝ կործանի։

Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն թէ Բէեղզեբուղաւ իշխանաւ հանէ դա ըզդեւս։

Եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր ի՞ւր հանիցեն։

Վասն այնորիկ նորին եղիցին ձեր դատաւորք։

Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ զդեւս, ապա հասեալ է ի վերայ ձեր Արքայութիւն Աստուծոյ։

Յորժամ հզօր վառեալ պահիցէ զտուն իւր, ի խաղաղութեան են ինչք նորա։

Բայց եթէ հզօրագոյն քան զնա ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա, զսպառազինութիւնն նորա հանէ՝ յոր յուսացեալէր, և զաւար նորա բաշխեսցէ։

Որ ոչ է ընդ իս, հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ։

Յորժամ ոգին ելանիցէ ի մարդ դժ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ. և իբրեւ ոչ գտանէ, ասէ. դարձայց անդրէն ի տուն իմ՝ ուստի ելի. եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ։

Յայնժամ երթայ եւ առնու եօթն այլ ոգիս չար եւս քան զինքն, և մտեալ բնակի անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն։

Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս՝ ձայն եբարձ կին մի ի ժողովրդենէ անտի և ասէ. Երանի՛ է որովայնին՝ որ կրեացն զքեզ, եւ սատեանցն՝ որք դիեցուցին զքեզ։

Եւ նա ասէ. Նա՝ երանի այնոցիկ է, որք լսեն զբանն Աստուծոյ, և առնեն։

Եւ ի դիզանալ ի վերայ նորա ժողովրդոցն՝ սկսաւ ասել. Ազգս այս՝ ազգ չար է. նշան խնդրէ, և նշան յերկնից ոչ տացի սմա՝ բայց նշանն Յովնանու։

Զի որպէս եղեւ Յովնան նշան Նինուէացւոց, այնպէս եղիցի եւ Որդի մարդոյ ազգիս այսմիկ։

Դիշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ, և դատապարտեսցէ զսոսա. զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի. և ահա առաւել քան զՍողոմոնի է աստ։

Աբք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս այսմիկ, և դատապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին ի քարոզութեան Յովնանու, և ահա աւելի քան զՅովնան է աստ։

---

Հինգերորդում կիրակէի առաքի։

ԳԼՈՒԽ ԺԱ. 33։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ոչ ուրուք լուցեալ զճրագ՝ դնէ ի ծածկաստեան, և ոչ ընդ գրաստանաւ, այլ ի վերայ աշտանակի, զի որք մտանեն՝ զլոյս տեսանիցեն։

Ճրագ մարմնոյ ակն է, յորժամ ակն առատ է, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի. և երբ ակն չար է, եւ մարմինն խաւարին եղիցի. արդ զգոյշ լեր, գուցէ լոյսդ որ ի քեզ է խաւար իցէ։

Եթէ մարմինդ քո ամենայն լուսաւոր է. և չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի լուսաւոր ամենայն՝ որպէս յորժամ ճրագն ճշմարիտ լուսաւորեսցէ զքեզ։

Եւ մինչ խօսէր զայս, աղաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն՝ զի ճաշ կերիցէ առ նմա, եւ նա մտեալ բազմեցաւ։

Իբրև եաւս փարիսեցին՝ զարմացաւ՝ զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշ։

Ասէ ցնա Տէր. Այժմ դուք փարիսեցիք զարտաքին զբաժակին եւ զպնակին սրբէք, և ներքինն ձեր լի է յափշտակութեամբ և չարութեամբ. անմիտք, ոչ ապաքէն որ զարտաքինն արար՝ եւ զներքինն նոյն արար։

Բայց ազէ զարժանն իսկ՝ տուք ողորմութիւն, և ահա ամենայն սուրբ է ձեր։

Այլ վայ ձեզ փարիսեցւոց, զի տասանորդէք զանանուխ և զրիւեղինայ և զամենայն բանջար, և անցանէք զիրաւամբք եւ զսիրոյն Աստուծոյ. զայս արժան էր առնել՝ եւ զայնու ոչ անցանել։

Վայ ձեզ փարիսեցւոց, զի սիրէք զբարձրագահս ի ժողովուրդս, և զնախասղջոյնս ի հրապարակս։

Վայ ձեզ, զի էք դուք իբրեւ զգերեզմանս անյայտս, և մարդիկ գնան ի վերայ՝ և ոչ գիտեն։

Պատասխանի ետ ոմն յօրինաւականացն և ասէ. Վարդապետ,

զայդ բան ասելով՝ եւ զմեզ
Թշնամանես։

Եւ նա ասէ. Եւ ձեզ վայ օ-
րինականացդ. զի բառնայք
մարդկան բեռինս դժուարա-
կիրս, և դուք մատամբ միով
ի բեռինն ոչ մերձենայք։

Վայ ձեզ, զի շինէք գչիրիմս
մարգարէիցն, եւ հարքն ձեր
սպանին զնոսա. ապա ուրեմն
վկայէք՝ եթէ կամակից էք
գործոց հարցն ձերոց, զի նոքա
կոտորեցին զնոսա, եւ դուք
զգերեզմանս նոցա շինէք։

Վասն այնորիկ իմաստութիւնն
Աստուծոյ ասաց. Առաքեցից
ի նոսա Մարգարէս եւ Առա-
քեալս, և ի նոցանէ սպանա-
նիցեն և հալածիցեն. զի խընդ-
րեսցի արիւն ամենայն մար-
գարէից հեղեալ ի սկզբանէ
աշխարհի՝ յազգէ յայդմանէ,
յարեւնէն Աբելի մինչեւ յա-
րիւնն Զաքարիայ կորուսելոյ
ընդ սեղանն եւ ընդ տաճարն.
այո՛ ասեմ ձեզ, խնդրեսցի
յազգէ յայդմանէ։

Վայ ձեզ օրինականացդ, զի
Թաքուցանէք զփականս գի-
տութեանն. դուք ոչ մտա-
նէք, եւ որք մտանելոցն են՝
արգելուք։

Եւ ի խօսիլն զայս ամենայն
առ նոսա առաջի ամենայն ժո-
ղովրդեանն, զամօթի հարկա-
նէին։

Եւ սկսան գպիրքն եւ փարի-
սեցիքն զչարել՝ և գրգռել ընդ
նմա վասն բազումք իրաց, և
սպասել որսալ ինչ բանս ի բե-
բանոյ նորա, զի չարախօսես-
ցեն զնմանէ։

---

Ողովք ի կուտիլ բիւրաւո-
րաց ժողովրդեանն՝ մինչև
կոխել զմիմեանս, սկսաւ ա-
սել, ցաշակերտան իւր. Նախ
զդուշ լերուք անձանց ի խմո-
րոյ փարիսեցւոցն, որ է կեղ-
ծաւորութիւն։

Զի ոչինչ է ի ծածուկ՝ որ
ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ
ոչ ծանիցի։

Վասն այսորիկ, զոր ինչ ասի-
ցէք ի խաւարի, լսելի լիցի ի
լոյս. և զոր յականջն խօսե-
ցայք ի ջուրմանս, քարո-
զեսցի ի վերայ տանիցաց։

Բայց ձեզ ասեմ սիրելեաց ի-
մոց. մի զարհուրիք յայնցանէ,
որք սպանանեն զմարմին, եւ
յետ այնորիկ աւելի ինչ ոչ
ունիցին առնել։

Այլ ցուցից ձեզ յումմէ եր-
կնչիցիք. երկերիւք յայնմանէ՝

որ չետ սպանանելոյ ուներ զնչ-
խանուԹիւն արկանել ՚ի գե-
հեն . այո՛, ասեմ ձեզ, յայն-
մանէ երկերիւք :

Ո՞չ ապաքէն հինգ ձագք եր-
կուց դանգաց վաճառին, և մի
՚ի նոցանէ ոչ է մոռացեալ ա-
ռաջի Աստուծոյ :

Այլ ձեր և ամենայն իսկ հեր
գլխոյ ԹուեալՀ է . մի երկնչիք,
զի քան զբազում ձագս լաւ
էք դուք :

Ասեմ ձեզ, զի ամենայն որ
խոստովանեսցի յիս առաջի
մարդկան, և Որդի մարդոյ խոս-
տովանեսցի զնմանէ առաջի
Հրեշտակաց Աստուծոյ :

Եւ որ ուրասցի զիս առաջի
մարդկան, ուրացեալ լինի ա-
ռաջի Հրեշտակաց Աստուծոյ :

Եւ ամենայն որ ասէ բան զՈրդ-
ւոյ մարդոյ՝ Թողեի նմա, բայց
որ զՀոգին Սուրբ հայհոյիցէ՝
մի Թողեի նմա :

Այլ յորժամ տանիցեն զձեզ
՚ի ժողովուրդս եւ ՚ի պետու-
Թիւնս, մի հոգայցէք՝ որպէս
ԹԷ զինչ պատասխանի տայ-
ցէք, կամ զինչ ասիցէք. զի Հո-
գին Սուրբ ուսուսցէ ձեզ ՚ի
նմին ժամու՝ զինչ պարտ իցէ
խօսիլ :

—

Հինգերորդում Մարտակի երկաշաբթի առաւօտեան ։

ԳԼՈՒԽ ԺԲ. 13։

Ա՛ռ տէրն մեր Յիսուս Քրիստոս ։

Ասէ ոմն ՚ի ժողովրդենէն
ցնա. Վարդապետ, ասա
ցեղբայր իմ՝ բաժանել ընդիս
զժառանգուԹիւնն :

Եւ նա ասէ ցնա. Ա՛յր դու,
ո՞ կացոյց զիս դատաւոր կամ
բաժանարար ՚ի վերայ ձեր :

Եւ ասէ ցնոսա. Տեսէ՛ք եւ
զգուշ լերուք յամենայն ա-
գահուԹենէ . զի ոչ եթԷ ՚ի
մեծերից ընչից ուրուք իցէն՝
կեանք նորա :

Խօսեցաւ առ նոսա առակ մի՝
եւ ասէ . Առն ուրումն մե-
ծատան ետուն անդք տոհմա-
կանս . և խորհէր ՚ի միտս իւր
և ասէր . զի՞ գործեցից՝ զի ոչ
գոյ տեղի , ուր ժողովեցից
զարգիւնս իմ :

Եւ ասէ . գիտեմ զինչ արա-
րից , քակեցից զշտեմարանս
իմ, եւ եւս մեծամեծս շինե-
ցից . և անդր ժողովեցից զո-
րեան եւ զամենայն բարու-
Թիւնս իմ, և ասացից ցանձն
իմ. անձն, ունիս բազում բա-
րուԹիւնս համբարեալ ամս

բազմաց՝ հանգիր, կէր, սրբ և ուրախ լեր։

Ասէ ցնա Աստուած. անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցեր՝ ումեմ լինիցի։ Նոյնպէս եւ որ գանձ անձին, եւ ոչ յԱստուած մեծանայցէ։

Ասէ տէրակերտան իւր. վասն այդորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք ընդ ոգւոյ՝ թէ զինչ ուտիցէք, և մի՛ ընդ մարմնոյ՝ թէ զինչ զգենուցուք. զի ոգի առաւել է քան զկերակուր, և մարմին քան զհանդերձ։

Հայեցարուք ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն եւ ոչ հընձեն, որոց ոչ գոն չտեմարանք եւ ոչ համբարանոց, եւ Աստուած կերակրէ զնոսա, որչափ եւս առաւել զձեզ՝ որք լաւ էք քան զնոսունս։

Ո՞վ ի ձէնջ առ հոգալ՝ կարիցէ յաւելուլ ի հասակ իւր կանգուն մի. իսկ արդ եթէ ի փոքուն չէք բաւական, վասն այլոցն զի՞ հոգայք։

Հայեցարուք ընդ շուշանն՝ որպէս աճէ, ոչ ջանայ եւ՞ ոչ նիւթէ. ասեմ ձեզ և ոչ Սողոմոն զամենայն ի փառս իւր զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ։

Իսկ եթէ զխոտն՝ որ այսօր ի բացի է եւ վաղիւ ի հնոց արկանելի՝ Աստուած այնպէս զգեցուցանէ, որչափ եւս առաւել զձեզ, Թերահաւատք։

Եւ դուք մի՛ խնդրէք՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, եւ մի՛ զբաղնուք. զի զայն ազգքն աշխարհի խնդրեն. այլ ձեր Հայր գիտէ՝ զի պիտոյ է այն ամենայն։ Բայց խնդրեցէք նախ զԱրքայութիւն Աստուծոյ, եւ այն ամենայն յաւելցի ձեզ։

---

Հինգերորդում Փետրվարի երեքտասներորդ աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԲ. 32։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զԱրքայութիւն։

Վաճառեցէք զինչս ձեր, եւ տուք ողորմութիւն. և արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, և ոչ ցեց ապականէ։

Զի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին։

Եղիցին կօտիք ձեր չպնդեալ

ընդ մէջս, և ճրագունք լուսցեալք, եւ դուք նմանողք մարդկան՝ որք ակն ունիցին Տեառն իւրեանց՝ Թէ երբ դառնայցէ ի հարսանեաց, զի յորժամ գայցէ և բաղխիցէ, վաղվաղակի բանայցեն նմա։

Երանի՛ իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ Տէրն՝ գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ, զի գօտի ընդ մէջ ածցէ, եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ պաշտեսցէ զնոսա. և եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ և գտցէ այնպէս, երանելիք են ծառայքն այնոքիկ։

Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ, հսկէր. եւ չտայր Թոյլ ական հատանել ի տան իւրում։

Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ գայ Որդի մարդոյ։

---

Ասէ Պետրոս. Տէր, առ մե՞զ ասացեր զառակդ զայդ՝ Թէ առ ամենեսեան։

Եւ ասէ Տէր. Ո՞վ իցէ հաւատարիմ տնտես և խոհատուն, զոր կացուցց տէր իւր ի վերայ գերդաստանի իւրոյ՝ տալ ի ժամու զկերակուրս։

Երանի՛ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս։

Ամէն ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուցցէ զնա։

Ապա Թէ ասիցէ ծառայն այն ի սրտի իւրում. յամէ տէր իմ ի գալ, և սկսանիցի հարկանել զծառայս եւ զաղախնայս, ուտել և ըմպել և արբենալ, եկեսցէ տէր ծառային այնորիկ յաւուր՝ յորում ակն ոչ ունիցի, եւ ի ժամու՝ յորում ոչ գիտիցէ, ընդ մէջ կտրեսցէ զնա, և զհան նորա ընդ անհաւատս դիցէ։

Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ՝ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում։

Եւ որ ոչն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ. ամենայնի՝ որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ, եւ որում բազում աւանդեցաւ՝ առաւել եւս պահանջեսցեն ի նմանէ։

---

Հինգերորդում Կիրակիի Ջրհեղեղաթեմի առաւօտն։

ԳԼՈՒԽ ԺԸ. 49։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Շուտ եկիր արկանել յերկիր. և ինչ կամիմ՝ թէ արդէն իսկ բորբոքիւր. և մկրտութեամբն ի ոնիմ մկրտիլ. եւ զինքդ փութամ մինչեւ կատարեսցի։

Համարիք եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր. ոչ, ասեմ ձեզ, այլ բաժինս։

Զի եղիցին յայսմհետէ հինգ ի տան միում բաժանեալք, երեքն յերկուց, եւ երկուքն յերից։

Բաժանեսցի հայր յորդւոյ՝ և որդի ի հօրէ, մայր ի դստերէ՝ և դուստր ի մօրէ, սկեսուր ի հարսնէ՝ եւ հարսն ի սկեսրէ իւրմէ։

Ասաց և ցժողովուրդն. Ցորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարեւմտից, իսկոյն ասէք թէ անձրեւ գայ, և լինի այնպէս. եւ յորժամ հարաւ չնչեալ, ասէք թէ խորշակ լինի, և լինի այնպէս։

Կեղծաւորք, զերեսս երկնի և երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք։

Ընդէր եւ յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն։

Ցորժամ երթայցես ընդ ոստիկանի քում առ իշխան, ի ճանապարհի տուր ջհաչիւն զերծանիլ ի նմանէ. զի գուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորն, և դատաւորն մատնիցէ դահճի, և դահիճն արկանիցէ ի բանտ։

Ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչեւ հատուցանիցես զյետին բնիոնն։

---

Եկին ոմանք ի նմին ժամանակի, և պատմեցին նմա վասն գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա։

Պատասխանի ետ և ասէ ցնոսա. Համարիք՝ եթէ այն գալիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն գալիլեացիս, զի զայնպիսի անցս կրեցին. ոչ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքին նոյնպէս կորնչիցիք։

Կամ նոքա ութուտասանքն՝ յորոց վերայ աշտարակն անկաւ ի Սելովամ, և սպան զնո-

սա, համարիք թէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ՝ որք բնակեալք են Երուսաղէմ. ո՛չ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորնչիցիք։

Ասաց և զառակս զայս. Թզենի մի էր ուրուքն անկեալ յայգեօջ իւրում, և եկն խնդրել պտուղ ի նմանէ՝ և ոչ գիտ։ Ասէ ցայգեգործն. ահա երեք ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ՝ եւ ոչ գտանեմ՝ արդ կտրեա զդա, ընդէր և զերկիրդ խափանէ։

Ձա պատասխանի ետ և ասէ. տէր, թո՛ղ զդա յայս ամ եւս, մինչեւ շուրջ դնովասք բրեցից և արկից աղբ, թերեւս արասցէ պտուղ ապա թէ ոչ՝ յամէ եւս հատցես զդա։

---

Հինգերորդումն Վերակէի Հինգշաբթի աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԳ. 10։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ուսուցանէր ի միում ժողովրդանոցացն ի շաբաթս. եւ ահա կին մի՝ զոր ունէր այս հիւանդութեան ամս ութեւտասան, և էր կամեալ, և ոչ կարէր ամենեւին ի վեր հայիլ։

Եւ տեսեալ զնա Յիսուսի՝ կոչ եցոյ առ ինքն և ասէ ցնա. Կին դո՛ւ, արձակեալ ես ի հիւանդութենէ քումմէ։

Եւ եդ ի վերայ նորա ձեռն, և առ ժամայն ուղղեցաւ, և փառաւորէր զԱստուած։ Պատասխանի ետ ժողովրդապետն՝ ցասուցեալ թէ ընդէր ի շաբաթու բժշկեաց Յիսուս, և ասէ ցժողովուրդն. վեց օր է՝ յորս արժան է գործել, յայնս եկայք և բժշկեցարուք, և մի՛ յաւուր շաբաթու։

Պատասխանի ետ Նմա Տէր և ասէ. կե՛ղծաւորք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ ի շաբաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ ի մսուր, և տանի տայ ջուր։ Իսկ այս դուստր Աբրահամու էր՝ զոր կապեաց սատանայ՝ ահաւասիկ ութեւտասն ամ, ո՞չ էր արժան արձակել ի կապանաց անտի ի շաբաթու։

Եւ զայս իբրեւ ասաց, յամօթ լինէին ամենեքեան, որք հակառակն կային Նմա. եւ ամենայն ժողովուրդն ուրախ լինէր ի վերայ ամենայն փառաւորութեանցն՝ որք գործէին ի Նմանէ։

Եւ ասէր. Ո՞ւմ նման է Արքայութիւն Աստուծոյ, եւ ո՞րո՞ւմ նմանուիցեմ նմանեցուցից զնա։

Նման է հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ՝ էարկ ի պարտէզ իւր. աճեաց եւ եղեւ ծառ, և թռչունք երկնից բնակեալ էին յոստս նորա։

Եւ դարձեալ ասէ. Ո՞ւմ նմանեցուցից զԱրքայութիւն Աստուծոյ։

Նման է խմորոյ, զոր առեալ կնոջ թագոյց յալեր երից գրուանց՝ մինչեւ խմորեցաւ ամենայն։

---

Հինգերորդում Աիբակէի Ուրբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԾԳ. 22։

Տէրն մեր ցխուս Քրիստոս։

Եւ շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գիւղս, ուսուցանէր. եւ ճանապարհ արարեալ յԵրուսաղէմ, ասէ ցնա ոմն. Տէր, եթէ սակաւք իցեն՝ որք ապրելոց իցեն։

Եւ նա ասէ ցնոսա. Ջանայարուք մտանել ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ, զի բազումք խնդրեսցեն մտանել՝ եւ ոչ կարասցեն։

Յորմէ հետէ մտցէ տանուտէրն եւ փակեսցէ զդուռն, եւ սկսանիցիք կալ արտաքոյ եւ բաղխել զդուռնն, եւ ասել. Տէր՝ Տէր, բաց մեզ. եւ պատասխանի տուեալ ասիցէ ձեզ. ոչ գիտեմ զձեզ ուստի էք։

Յայնժամ սկսանիջիք ասել. կերաք առաջի քոյ և արբաք, և ի հրապարակս մեր ուսուցեր։

Եւ ասիցէ. Ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք. ի բաց կացէ՛ք յինէն ամենայն մշակք անիրաւութեան։

Անդ եղիցի լալ եւ կրճտել ատամանց, յորժամ տեսանիցէք զԱբրահամ և զԻսահակ և զՅակովբ՝ և զամենայն Մարգարէս յԱրքայութեան Աստուծոյ, եւ զձեզ հանեալ արտաքս։

Եւ եկեսցեն յարեւելից եւ յարեւմտից և ի հիւսիսոյ և ի հարաւոյ, եւ բազմեսցին յԱրքայութեան Աստուծոյ։

Եւ ահա կեսինք՝ որք եղիցին առաջինք, և իցեն առաջինք՝ որք լինիցին կեսինք։

Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք եւ ասեն. Է՛լ եւ գնա աստի, զի Հերովդէս կամի սպանանել զքեզ։

Եւ նա ասէ ցնոսա. Երթայք ասացէք աղուեսուն այնմիկ, ահաւասիկ հանեմ դեւս եւ բժշկութիւնս կատարեմ այսօր և վաղիւ, և յերիր աւուր կատարիմ։

Բայց պարտ է այսօր և վաղիւ և՛ի միւսում աւուր գնալ. զի ոչ է մարթ մարգարէի կորնչիլ արտաքոյ քան զԵրուսաղէմ։

Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զՄարգարէս, և քարկոծ առնէիր զԱռաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ զճագս իւր ընդ թեւովք, և ոչ կամեցարուք. ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր։

Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ եւս տեսանիցէք զիս, մինչեւ ասիցէք՝ օրհնեալ եկեալ յանուն Տեառն։

---

Հիգկրրգում Ախրակէի շաբաթի աւուն։

ԳԼՈՒԽ ԺԹ. 1։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ եղեւ՝ ի մտանելն նորա ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց ի շաբաթու՝ ուտել հաց, և նոքա սպասէին նմա։

Եւ ահա այր ումն էր անգ ջրգողէալ առաջի նորա։

Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ յօրինաւորս եւ ցփարիսեցիս. Եթէ արժա՞ն իցէ՛ ի շաբաթու բժշկել։

Եւ նոքա լուռ եղեն. և բռնեալն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա և արձակեաց։

Եւ ասէ ցնոսա. Ո՞յր ուրուք՛ ի ձէնջ էշ կամ եզն անկանի՛ յի՛ ջրհոր, և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու։

Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն։

Ասաց և առ կոչնականն առակ մի, հայեցեալ եթէ զիարդ բարձընտիր լինէին, ասէ ցնոսա. Ցորժամ կոչիցէ ոք զքեզ՛ ի հարսանիս կամ՛ ի կոչունս, մի՛ բազմիցիս յառաջին բարձին, գուցէ պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալ՛ ի նմանէ. և եկեալ՝ որ զքեզ և զնա կոչեաց՝ ասիցէ քեզ. տո՛ւր սմա տեղի. եւ ապա սկսանիցիս ամօթով զյետին տեղին առնել։

Այլ յորժամ կոչիցիս, երթի՛ր բազմի՛ր՝ ի յետին տեղւոջ. զի յորժամ գայցէ՝ որ կոչեացն զքեզ՝ ասիցէ քեզ

Բարեկամ՝ ի վեր մատիր. յայն ժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակացն քոյ։

Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի։

Ասէ և ցկոչնատէրն. ցորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, եւ մի՛ զեղբարս քո, և մի՛ զազգս կանս քո, և մի՛ զդրացիս քո, եւ մի՛ զմեծամեծս. զի մի՛ եւ նոքա փոխարէն կոչիցեն զքեզ. և լինիցի քեզ հատուցումն։

Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս և զխեղս, և զկաղս և զկոյրս. և երանելի լինիցիս, զի ոչ ունին փոխարէն հատուցանել քեզ. և հատուսցի քեզ փոխարէնն ի յարութեան արդարոց։

Իբրեւ լուաւ զայս ումն ի բազմականացն՝ ասէ ցնա. երանի՛ որ կերիցէ ճաշ յԱթոռս թեան Աստուծոյ։

Եւ նա ասէ ցնա. Այր ումն գործեաց ընթրիս, և հրաւիրեաց զբազումս։

Եւ առաքեաց զծառայ իւր ի ժամու ընթրեացն՝ կոչել զհրաւիրեալսն՝ թէ եկայք, զի ահաւասիկ պատրաստ է ամենայն ինչ։

Եւ սկսան ամի ըստ միոջէ ամենեքեան հրաժարիլ. Առաջինն ասէ. ագարակ գնեցի, և հարկ է ելանել եւ տեսանել զնա. աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ։

Եւ միւսն ասէ. Լուծս հինգ եզանց գնեցի, և երթամ փորձել զնոսա, աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ։

Եւ միւսն ասէ. Կին առի, և վասն այնորիկ ոչ կարեմ գալ։

Եւ եկեալ ծառայն պատմեաց զայն տեառն իւրում։

Յայնժամ բարկացեալ տանուտէրն՝ ասէ ցծառայն իւր. Ել վաղվաղակի ի հրապարակս և ի փողոցս քաղաքին, և զաղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս մձյծ այսր։

Եւ ասէ ծառայն. տէր, եղեւ զոր հրամայեցեր, և կայ եւս տեղի։

Եւ ասէ տէրն ցծառայն. Ել ի ճանապարհս և ի ցանգս, և արա այսր մտանել՝ զի լցցի տունն իմ։

Ասեմ ձեզ, զի ոչ ոք յայնց կոչեցելոց ճաշակեացէ յընթրեացն իմոյ։

---

Վերջերոգամ Կիւրակէի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԴ. 25.

Ընդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բազումք, դարձաւ և ասէ ցնոսա. Թէ որ գայ առ իս, և ոչ ատեայ զհայր իւր և զմայր, և զկին և զորդիս, և զեղբարս և զքոյրս, նա և զանձն եւս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինիլ։

Զի որ ոչ բառնայ զխաչ իւր եւ գայ զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինիլ։

Ով ոք ի ձէնջ կամիցի շինել աշտարակ, և ոչ նախ նստեալ համարիցի զծախսն՝ եթէ ունիցի բաւական ի կատարումն։

Զի գուցէ իբրեւ արկանիցէ զհիմն՝ և ոչ կարասցէ կատարել, ամենեքեան որք տեսանիցեն՝ սկսանիցին ծաղր առնել զնա, եւ ասել՝ եթէ այս այր սկսաւ շինել և ոչ կարաց կատարել։

Կամ որ թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի, եւ ոչ նստեալ նախ խորհիցի, եթէ կարող իցէ տասն հազարաւ զդէմ ունել այնորիկ՝ որ գայցէ ի վե-

րայ նորա քսան հազարաւ. ապա թէ ոչ՝ մինչդեռ հեռագոյն իցէ, հրեշտակութիւնս առաքեալ՝ աղաչեսցէ ի խաղաղութիւն։

Այդպէս այսպէս ամենայն որ ի ձէնջ՝ որ ոչ հրաժարեսցի յամենայն ընչից իւրոց, ոչ կարէ իմ աշակերտ լինիլ։

Բարւոք է աղ. ապա թէ աղն անհամեսցի, ըստ համեմեսցի. ոչ յերկիր եւ ոչ յամբար է պիտանացու, այլ ընկենուլ զնա արտաքս։

Որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ։

---

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք եւ մեղաւորք՝ լսել ի նմանէ։

Տրտնջէին փարիսեցիքն և գրպիրք և ասէին. Ընդէր սա ըզմեղաւորս ընդունի, և ուտէ ընդ նոսա։

Այսաց առ նոսա զառակս զայս. Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար, և կորուսանիցէ զմի ի նոցանէ, ոչ թողցուցու զկնինսուն և զկնին յանապատի, և երթայցէ զհետ կորուսեալին՝ մինչեւ գտանիցէ զնա։

Եւ իբրեւ գտանէ, դնէ զնա ՚ի վերայ ուսոց իւրոց խնդալով, և երթայ ՚ի տուն, կոչէ զբարեկամս և զդրացիս, և ասէ ցնոսա. ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկորուսեալ։

Ասեմ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ, քան վասն իննսունն և իննի արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն։

Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն, և եթէ կորուսցէ նիցէ զդրամ մի, ոչ լուցանիցէ զճրագ, և ածիցէ աւել ՚ի տան, և խնդրիցէ ստէպ՝ մինչեւ գըտանիցէ. և իբրև գտանէ, կոչէ զբարեկամս և զդրացիս և ասէ. Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ՝ զոր կորուսի։

Այնպէս, ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի Հրեշտակաց Աստուծոյ ՚ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ։

Եւ ասէ. Այն մարդոյ էին երկու որդիք. ասէ կրտսերն ՚ի նոցանէ ցհայրն, հայր՝ տուր ինձ բաժին, որ անկանի ընձեռոյց. եւ նա բաժանեաց նոցա ընդկանան։

Եւ յետ ոչ բազումս աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսեր որդեցն՝ գնաց յաշխարհ հեռի. եւ անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ։

Եւ իբրեւ սպառեաց զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմիկ. եւ սկսաւ ինքն չքաւորիլ։

Եւ գնացեալ յարեցաւ ՚ի մի ումն ՚ի բաղաքացւոց աշխարհին այնորիկ, և յղեաց զնա յագտակ իւր՝ արածել խոզս. եւ ցանկայր ընուլ զորովայն իւր յեղջերէն՝ զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա։

Եւ եկեալ ՚ի միտս իւր՝ ասէ. Քանի՞ վարձկանք իցեն ՚ի տան հօր իմոյ հացակից, և ես աստ սովամահ կորնչիմ. յարուցեալ գնացից առ հայր իմ, և ասացից ցնա. Հա՛յր՝ մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ եւս եմ արժանի կոչիլ որդի քո, ա՛ռ զիս իբրեւ զմի ՚ի վարձկանացդ քոց։

Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. և մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն և գթացաւ, յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցսն նորա, և համբուրեաց զնա։

Եւ ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. ոչ եւս եմ արժանի կոչիլ որդի քո։

Ասէ հայրն ցծառայսն իւր. Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին, և ագուցէք նմա, եւ տուք զմատանին ի ձեռն նորա, եւ կօշիկս յոտս նորա. եւ առէք զեզն պարարակ՝ զենէք, կերիցուք և ուրախ լինիցուք. զի այս որդի իմ մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ. և սկսան ուրախ լինիլ։

Եւ էր երէց որդի նորա յագարակի. և մինչդեռ գայր՝ և մերձ եղեւ ի տունն, լուաւ զձայն երգոյն և զպարուց. և կոչեալ առ ինքն զմի ի ծառայիցն՝ հարցանէր թէ զինչ իցէ այն։

Եւ նա ասէ ցնա. Զի եղբայր քո եկեալ է, և եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա։

Բարկացաւ՝ եւ ոչ կամէր մտանել. եւ հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա։

Պատասխանի ետ և ասէ ցհայրն. Ա՛յս քանի՞ ամ են՝ զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի երբէք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ։ և յորժամ եկն որդիդ քո այդ, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեզեր դմա զեզն պարարակ։

Եւ ասէ ցնա. Որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է. այլ ուրախ լինիլ և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր՝ եւ եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ։

---

Վերծանութիւն Ախտակի երկուշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԶ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ասէր առ աշակերտսն. Ա՛յր մի էր մեծատուն, որոյ էր տնտես. և եղեւ զնմանէ թէ վատնիցէ զինչս նորա։

Կոչեաց և ասէ ցնա. Զի՞նչ է այս՝ զոր լսեմ զքէն. տո՛ւր զհամար անտեսութեան քոյ, զի ոչ եւս կարես լինիլ տընտես։

Ասէ ընդ միտս իւր տնտեսն. Զի՞նչ գործեցից, զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս. գործել ոչ կարեմ, մուրանալ ա-

մաչեմ. գիտեմ զինչ արարից, զի յորժամ ի բաց լինիցիմ ի տնտեսութենէս՝ ընկալցին զիս ի տուն իւրեանց։

Եւ կոչեալ տէրն ի բոլոր մի ոջէ ի պատասխանայ տեառն իւրոյ, ասէ ցառաջինն. Քանի՞ ինչ պարտիս տեառն իմում։

Եւ նա ասէ. Հարիւր մար ձիթոյ. ասէ ցնա. Կա՛ զգիր քո, և նի՛ստ գրեա՛ վաղվաղակի հիսուն։

Դարձեալ ասէ ցմիւսն. Դու քանի՞ ինչ պարտիս. և նա ասէ. Հարիւր քուռ ցորենոյ. և ասէ ցնա. Կա՛ զգիր քո, եւ նի՛ստ գրեա՛ ութսուն։

Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար. զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ՝ յազգս իւրեանց։

Եւես ձեզ ասեմ. արարէ՛ք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասիցէ այն, ընկալցին զձեզ ի յարկսն յաւիտենականս։

Որ ի փոքուն հաւատարիմ է, և ի բազմին հաւատարիմ է. և որ ի փոքուն անիրաւ է, և ի բազմին անիրաւ է։

Իսկ արդ եթէ յանիրաւ մամոնային չեղէք հաւատարիմք, զճշմարիտն ձեզ ո՞ հաւատասցէ։

Եւ եթէ յօտարին չեղէք հաւատարիմք, զձերն ո՞ տացէ ձեզ։

Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծառայել. զի եթէ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի։

Իբրեւ լսէին զայս ամենայն՝ փարիսեցիքն, քանզի արծամաժէք էին, և անդրանէին զնա։

Եւ ասէ ցնոսա. Դուք էք՝ որք արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան, սակայն Աստուած գիտէ զսիրտս ձեր, զի որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ։

Օրէնք և Մարգարէք մինչեւ ցՅովհաննէս. յայնմհետէ Աւետարանն քարոզութիւն Աստուծոյ բռնաբարի, եւ ամենայն որ զնա բռնաբարէ։

Դիւրին իցէ երկինից և երկրի անցանել քան յօրինացն միոյ նշանախեցի անկանիլ։

Ամենայն որ արձակէ զկին իւր և առնէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ։

Այր ոմն էր մեծատուն, եւ

ագանէր բեհեզս և ծիրանիս, եւ ուրախ լինէր հանապազ առ ատապէս։

Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս՝ անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ և ցանկայր յագիլ ի փշրանացն՝ որք անկանէին ի սեղանոյ մեծատանն. այլ եւ շունք եւս գային, եւ լիզուէին զվէրս նորա։

Եղեւ մեռանիլ աղքատին, և տանիլ հրեշտակաց զնա ի գոգն Աբրահամու. մեռաւ եւ մեծատունն և թաղեցաւ. և ի դժոխեան ամբարձ զաչսն իւր՝ մինչ ի տանջանսն էր, եւ տես զԱբրահամ ի հեռաստանէ, եւ զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ։

Եւ նա աղաղակեաց և ասէ. Հայր Աբրահամ, ողորմեա՛ց ինձ. և առաքեա՛ զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր, և զովացուցցէ զլեզու իմ, զի պապակիմ ի տապոյ աստի։

Եւ ասէ ցնա Աբրահամ. Որդեակ, յիշեա՛ զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանս քումմ, եւ Ղազարոս նոյնպէս զչարչարանսն. արդ սա աստ սիխիթարի, եւ դու այդր պապակիս. և ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. եթէ կամիցին աստի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն, և ոչ այտի առ մեզ անցանել։

Եւ ասէ. Արդ աղաչեմ զքեզ, հայր, զի արձակեսցես զդա ի տուն հօր իմոյ. են իմ անդ եղբարք հինգ, որպէս զի տացէ նոցա վկայութիւն, զի մի՛ եւ նոքա գայցեն յայս տեղի տանջանաց։

Եւ ասէ Աբրահամ. Ունին զՄովսէս և զմարգարէս, նոցա լսիցեն։

Եւ նա ասէ. Ոչ, հայր Աբրահամ, բայց եթէ ի մեռելոց որ երթիցէ առ նոսա՝ ապաշխարեսցեն։

Եւ ասէ ցնա. Եթէ Մովսիսի և մարգարէից ոչ լսեն, և ոչ թէ ի մեռելոց որ յառնիցէ հաւատասցեն։

---

Վիճակ ընթերցման Ներքնաբաթի առաւօտուն։

ԳԼՈՒԽ ԺԷ. 1։

Տէրն մեր ցխտաւս փրիսաս։

Ասաց եւ առ աշակերտսն իւր. Ոչ է մարթ չգալ գայթակղութեան. բայց վա՛յ այնմիկ ի՝ յոյր ձեռն գայցէ։ Լաւ էր՝ եթէ վէմ երկանաքար կախէր զպարանոցէ նորա՝

և անկանիւր ի ծով, քան թէ գայթակղեցուցանիցէ զմի ոք ի փոքրկանցս յայսցանէ։

Զգոյշ կացէք անձանց. եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, սաստեա նմա. և եթէ ապաշխարիցէ, թող նմա. և եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ, և եօթն անգամ դարձցի ի քեզ եւ ասիցէ՝ ապաշխարեմ, թող ցես նմա։

Եւ ասեն Առաքեալքն Տեառն. Յաւել մեզ հաւատս։

Եւ ասէ Տէր. Եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, եւ ասիցէք թթենւոյս այսմիկ. խլեա՛ց և անկեա՛ց ի ծովս, և հնազանդեսցի ձեզ։

Իսկ ո՞վ ոք ի ձէնջ, որ ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ իբրեւ մտանիցէ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի, թէ անց բազմեա՛ց. այլ ո՞չ ասիցէ ցնա, թէ պատրաստեա՛ զինչ ընթրելոց իցեմ, եւ գո՛ւտ ածեալ պաշտեա՛ զիս՝ մինչ չեւ կերայց և արբից, և ապա կերիցես և արբցես դու։

Մի՞թէ շնո՛րհ ինչ ունիցի ծառային այնմիկ, զի արար զայնոյն հրամանսն։

Նոյնպէս եւ դուք՝ յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջի՛ք՝ եթէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաք։

Եւ եղեւ մինչ երթայր նա Երուսաղէմ, եւ ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ եւ գալիլեացւոց։

Եւ մինչդեռ մտանէր ի գիւղ ուրեմն, պատահեցան նմա տասն արք բորոտք, որք կացին ի հեռաստանէ, բարձին զձայնս և ասեն. Յիսո՛ւս վարդապետ. ողորմեա՛ մեզ։

Եւ իբրեւ տեսս զնոսա, ասէ ցնոսա. Երթա՛յք, ցուցէ՛ք զանձինս քահանայիցն։

Եւ եղեւ իբրեւ գնային, առ ժամայն սրբեցան։

Մի ոմն ի նոցանէ իբրեւ եւ տես՝ եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն՝ ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած. անկաւ առ ոտս նորա ի վերայ երեսաց իւրոց՝ եւ գոհանայր դմանէ, և ինքն էր Սամարացի։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ո՞չ տասն սոքա սրբեցան, իսկ արդ իննեւնքն ո՞ր են. զի ոչ գտան դառնալ եւ տալ փառս Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս։

Եւ ասէ ցնա. Արի՛ գնա՛, զի հաւատք քո կեցուցին զքեզ։

Վերջերոգամ Նիւթակէի Շաբաթուան աւուր։

ԳԼՈՒԽ ԺԷ. 20։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Իբրեւ հարցաւ ի փարիսեցւոցն՝ Թէ ե՞րբ գայցէ Արքայութիւն Աստուծոյ. պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ոչ գայ Արքայութիւն Աստուծոյ խարանօք. և չասիցեն, Թէ ահաւասիկ աստ է՝ կամ անդ, զի ահա Արքայութիւն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է։

Ասաց և առ աշակերտսն. Եկեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրցն Որդւոյ մարդոյ տեսանել՝ եւ ոչ տեսանիցէք։

Եւ եթէ ասիցեն ձեզ, եթէ ահաւասիկ է՝ կամ անդ, մի երթայցէք զհետ։

Զի որպէս փայլակն փայլատակէալ ի ներքոյ երկնից՝ ընդ երկինս ծագիցի, նոյնպէս և Որդի մարդոյ յաւուր իւրում։

Բայց նախ պարտ է նմա բազում չարչարիլ՝ եւ խոտիլ յազգէս յայսմանէ։

Եւ որպէս եղեւ յաւուրսն Նոյի, նոյնպէս եղիցի եւ յաւուրս Որդւոյ մարդոյ. ուտէին, ըմպէին, կանայս առնէին, և արանց լինէին, մինչև յօրն՝ յորում եմուտ Նոյ ի Տապանն, եւ եկն ջրհեղեղն՝ և կորոյս զամենեսեան։

Նոյնպէս և որպէս յաւուրսն Ղովտայ եղեւ, ուտէին ըմպէին, գնէին վաճառէին, տնկէին շինէին. եւ յորում աւուր ել Ղովտ ի Սոդոմայ, տեղայ հուր և ծծումբ յերկնից և կորոյս զամենեսին. ըստ նմին օրինակի եղիցի եւ յաւուրն՝ յորում Որդի մարդոյ յայտնելոց իցէ։

Յայնմ աւուր որ կայցէ ի տանն՝ և կարասի իւր ի տան, մի՛ իջցէ առնուլ զայն. և որ յանդի իցէ, նոյնպէս մի՛ դարձցի յետս։

Յիշեցէք զկինն Ղովտայ։

Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել, կորուսցէ զնա. և որ կորուսցէ՝ ապրեցուսցէ զնա։

Ասեմ ձեզ. յայնմ գիշերի՝ Թէ եղիցին երկու ի մի մահիճս, մին առցի՝ եւ միւսն Թողցի. և Թէ եղիցին երկու՝ աղալ ի միասին, մին առցի՝ և միւսն Թողցի. եւ եթէ իցեն երկու յանդի, մին առցի՝ և միւսն Թողցի։

Պատասխանի ետուն և ասեն ցնա. Ցո՞, Տէր։ Եւ նա ասէ ցնոսա. Ուր մարմին է, անդր և արծուիք ժողովեսցին։

---

Վ. հերթողութ Ներակի Հիգշաթի աւուն։

ԳԼՈՒԽ ԺԸ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ասաց և առակ մի նոցա՝ առ այն՝ թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս և մի՛ ձանձրանալ. ասէ. Դատաւոր մի էր ի քաղաքի ոմն, յԱստուծոյ ոչ երկնչէր, և ի մարդկանէ ոչ ամաչէր։ Եւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ նա և ասէր. Դատ արա ինձ յոսոխէ իմմէ։ Եւ ոչ կամէր ի բազում ժամանակս. յետ այնորիկ ասէ ի մտի իւրում, թէ և Աստուծոյ ոչ երկնչիմ, և ի մարդկանէ ոչ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առնել զիս այսր այնմ՝ արարից նմա դատ, զի մի՛ խափառ եկեալ թախանձիցէ զիս։ Եւ ասէ Տէր. Լուարուք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր. իսկ Աստուած ոչ առնիցէ զվրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որք աղաղակեն առ նա ի տուէ և ի գիշերի. և երկայնամիտ միանգն լինիցի առ նոսա. այո՛ ասեմ ձեզ, զի առասցէ զվրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի. իսկ Որդի մարդոյ եկեալ գտանիցէ արդեօք հաւատս յերկրի։

Ասաց և առ ոմանս պանծացեալս յանձինս՝ թէ արդարք իցեն՝ և խոտիցեն զզաւակս, զառակս զայս. Երկու եղեն ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի և միւսն մաքսաւոր։

Փարիսեցին կայր մեկուսի, և զայս առանձին աղօթս մատուցանէր. Աստուա՛ծ իմ, գոհանամ զքէն, զի ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ՝ զյափշտակողս և զանիրաւս և զշունս, կամ իբրեւ զայս մաքսաւոր. այլ պահեմ երկիցս ի շաբաթու, և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց։

Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կամէր և ոչ զաչս ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր ըզկուրծս իւր և ասէր. Աստուա՛ծ, քաւեա զիս զմեղաւորս։ Ասեմ ձեզ, էջս արդարացեալ ի տուն իւր քան զնա։ Զի ամենայն որ բարձրացու-

*ցանէ զանձն՝ խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։*

---

Վերջերոյթում Սիրակէի Ներքսեցի աւետն։

ԳԼՈՒԽ ԺԸ. 15։

Աւ տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ա տատուցանէին առ նա եւ մանկտի՝ զի մերձենայցէ ի նոսա. իբրեւ տեսին աշակերտքն՝ սաստէին նոցա։

Իսկ Յիսուս կոչեալ զնոսա առ ինքն՝ ասէ. Թոյլ տուք մանկտւդ գալ առ իս, և մի արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է Արքայութիւն Աստուծոյ։

Ամէն ասեմ ձեզ, որ ոչ ընդունիցի զԱրքայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ, ոչ մտցէ ի նա։

Եւ եհարց զնա ոմն իշխան և ասէ. Վարդապետ բարի, զինչ գործեցից զի կեանս յաւիտենական ժառանգեցից։

Ասէ ցնա Յիսուս. Ընդէր ասես զիս բարի. չիք ոք բարի՝ բայց միայն Աստուած։

Զպատուիրանս գիտես. մի՛ շնար, մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր, պատուեա՛ զհայր քո և զմայր։

Եւ նա ասէ. Զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ։

Իբրեւ լուաւ զայս Յիսուս՝ ասէ ցնա. Միւս եւս պակաս է քեզ. զամենայն ինչ զոր ունիս՝ վաճառեա՛ և տո՛ւր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ։

Նա իբրեւ լուաւ զայս՝ տրտմեցաւ, քանզի էր մեծատուն յոյժ։

Իբրեւ տեսեալ զնա Յիսուս տրտմեալ, ասէ. Որքա՜ն դժուարին է որք ինչս ունիցին՝ մտանիցեն յԱրքայութիւն Աստուծոյ։

Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յԱրքայութիւն Աստուծոյ մտանել։

Եւ որք լուանն՝ ասեին. Եւ ո՞ կարիցէ ապրիլ։

Եւ նա ասէ. Անհնարինք առ ի մարդկանէ՝ հնարաւորք են յԱստուծոյ։

Եւ ասէ Պետրոս. Ահաւասիկ մեք թողաք զամենայն ինչ զմեր. և եկաք զկնի քո։

Եւ նա ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ ոք է՝ որ եթող զտունս, կամ զծնողս, կամ զեղբարս, կամ զկին, կամ զորդիս՝ վասն Արքայութեան

Աստուածոյ, եթէ ոչ առնուցու բազմապատիկ ՚ի ժամանակի յայսմիկ, և յաշխարհին՝ որ գալոցն է՝ զկեանսն յաւիտենական ժառանգեսցէ։

Եւ առեալ զերկոտասանսն առաքեալսն՝ ասէ ցնոսա. Ահա՛ ես ելանեմք Երուսաղէմ, և կատարեսցին ամենայն գրեալքն Մարգարէիւք վասն Որդւոյ մարդոյ. զի մատնեսցի հեթանոսաց եւ կատակեսցի, եւ հարկանիցի եւ թքանիցի. և իբրեւ հարկանիցեն և սպանանիցեն զնա, և յերրորդ աւուր յարիցէ։

Եւ նոքա ոչ իմացան յայնցանէ, այլ էր բանն ծածկեալ ՚ի նոցանէ, և ոչ գիտէին զասացեալսն։

---

ՎէցերորդումՓ Կիրակէ Շաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԸ. 35.

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ եղեւ ՚ի մօտիլն նորա Երիքով կոյր ոմն նստեր առ ճանապարհաւն մուրացիկ. իբրեւ լուաւ զանցանել ժողովրդեանն՝ հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն։

Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ։

Աղաղակեաց և ասէ. Յիսո՛ւս, որդի Դաւթի, ողորմեա՛ ինձ։

Եւ որք առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. եւ նա եւս առաւել աղաղակէր. որդի Դաւթի ողորմեա՛ ինձ։

Ջտեղի առ Յիսուս, և հրամայեաց ածել զնա առ իւր. և իբրեւ մերձ եղեւ առ նա, եհարց զնա և ասէ. Ջի՞նչ կամիս գո՛ զի արարից քեզ։

Եւ նա ասէ. Տէր, զի բացցին աչք իմ և տեսից։

Եւ Յիսուս ասէ ցնա. Հայեա՛ց, հաւատք քո կեցուցին զքեզ։

Եւ առ ժամայն ետես, երթայր գՀետ նորա և փառաւորէր առնէր զԱստուած. և ամենայն ժողովրդեանն տեսեալ՝ տայր զօրհնութիւն Աստուծոյ։

---

Եւ մտեալ ջրջէր ընդ Երիքով. և ահա այր մի անուն կոչեցեալ Զաքէոս, և նա էր մաքսապետ, եւ ինքն մեծատուն. եւ խնդրէր տեսանել՝ թէ ո՛վ իցէ Յիսուս, և ոչ կարէր ՚ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ։

Եւ ընթացեալ յառաջ, եւ՚ի ժանտաքի զնին՝ զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։

Իբրեւ եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս՝ եւ ասէ ցնա. Զաքէ, փութա՛ իջ այսր, զի այսօր ի տան քում արժան է ինձ ագանիլ. փութացաւ եւ էջ՝ եւ ընկալաւ զնա ուրախութեամբ։

Իբրեւ տեսին ամենեքեան, տրտնջէին եւ ասէին՝ թէ առաւն մեղաւորի եմուտ լուծանել։

Եկն եկաց Զաքէոս և ասէ ցՏէր. Տէր, ահա զկէս ընչից իմոց տայ աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։

Եւ ասէ ցնա Յիսուս. Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ. քանզի և սա որդի Աբրահամու է։

Զի եկն Որդի մարդոյ խնդրել եւ կեցուցանել զկորուսեալն։

Եւ մինչդեռ նորա զայն լսէին, յաւել առակ մի և ասէ՝ վասն մերձենալոյն Նորա Երուսաղէմ, և համարելոց Նոցա՝ եթէ առժամայն յայտնելոց է Արքայութիւն Աստուծոյ. ասէ. Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն, և դառնալ։ Եւ կոչեալ զծառայս իւր՝ եւ նոցա տասն մնաս. և ասէ ցնոսա. յարգեցէք զայդ՝ մինչեւ եկից։

Եւ քաղաքացիքն Նորա ատէին զնա, առաքեցին հրեշտակս զկնի Նորա՝ և ասեն, թէ ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր։

Եւ եղև դառնալ նմա՝ առեալ զթագաւորութիւնն. եւ կոչեալ զծառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ՝ թէ ո՞վ ինչ շահեցաւ, եկն առաջինն և ասէ. Տէր՝ մնասն քո տասն մնաս արար։

Եւ ասէ ցնա. Այնր՛ ծառայ և բարի, զի ի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ տասն քաղաքի։

Եկն երկրորդն և ասէ. Մնասն քո արար հինգ մնաս։

Այս և ցնա. Եւ դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց։

Եկն միւսն և ասէ. Տէր, ահա մնասն քո՝ զոր ունէի ծրարեալ ի վարշամակի. երկնչէի ի քէն, զի այր ստամբակ ես, բառնաս՝ զոր ոչ եդեր, եւ հնձես՝ զոր ոչ սերմանեցեր։

Եւ ասէ ցնա. Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ, ծառայ անհաւատ, գիտեիր թէ ես

այր մի ստամբակեմ, բառնամ՝ զոր ոչ եդի, և հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի, եւ ընդէր ոչ ետուր զարծաթդ իմ ի սեղանաւորս, եւ եկեալ ես տոկոսեօք պահանջէի։

Եւ ասէ ցսպասաւորան. Առէք ի դմանէ զմնասն, և տարայք տո՛ւք այնմ՝ որ ունի զտասն մնաս։

Եւ ասեն ցնա. Տէր, ունի տասն մնաս։

Ասեմ ձեզ, եթէ ամենայնի՝ որ ունիցի՝ տացի. և յայնմանէ՝ որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ։

Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ՝ որք ոչն կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա, տո՛ւք այսր՝ և սպանէք առաջի իմ։

Եւ իբրեւ զայս ասաց, գնաց յառաջ՝ ելանել Երուսաղէմ։

---

Նոմնեբրոդում Ալբակէի առեալն։

ԳԼՈՒԽ ԺԹ. 29։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ ի Բեթփագէ և ի Բեթանիա մօտ ի լեառնն՝ որ կոչի Ձիթենեաց, առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց և ասէ. Երթա՛յք ի գեօղդ՝ որ հանդէպ մեր կայ. յոր իբրեւ մտանէք՝ գտանիցէք յաւանակ կապեալ, յորում որ ի մարդկանէ երբէք ոչ նստաւ. լուծէ՛ք զնա և ածէ՛ք։

Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ թէ ընդէր լուծանէք, այսպէս ասասջիք ցնա, թէ Տէառն իւրում պիտոյ է։

Իբրեւ չոգան որք առաքեացանն, գտին որպէս ասացն ցնոսա. կայր յաւանակն։

Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն, ասեն տէարքն նորա ցնոսա. Ընդ՞ լուծանէք զյաւանակդ։

Եւ նոքա ասեն. Տէառն իւրում պիտոյ է. և ածին զնա առ Յիսուս. և արկին զնովաւ հանդերձս, և հեծուցին զՅիսուս։

Եւ մինչդեռ երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին զճանապարհսն։

Եւ իբրեւ այն ինչ մերձ եղեւ ի զառ ի վայր լերինն Ձիթենեաց, սկսաւ ամենայն բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ օրհնել զԱստուած ի ձայն մեծ՝ վասն ամենայն եղելոց զօրութեանցն՝ զոր տեսին, և ասէին. Օրհնեալ որ գայ թագաւորդ յա-

նուէն Ցեսուէն, խազաղութիւն յերկինս, եւ փառք ի բարձունս։

Եւ ոմանք ի փարիսեցւոցն յամբոխէ անտի ասեն ցնա. Վարդապետ, սաստեա աշակերտացդ քոց։

Պատասխանի ետ եւ ասէ. Ասեմ ձեզ՝ զի եթէ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն։

Եւ իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքաղաքն՝ ելոյց ի վերայ նորա՝ եւ ասէ. Եթէ գիտեիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւնն քո. բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց։

Զի եկեսցեն աւուրք ի վերայ քո, և պատեսցեն զքեզ թշնամիք քո պատնէշ, և պաշարեսցեն զքեզ, և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց. և յատակեսցեն զքեզ, եւ զորդիս քո ի քեզ, և ոչ թողուցուն քար ի քարի վերայ յամենայնի ի քեզ, փոխանակ՝ զի ոչ ծանեար զժամանակ այցելութեան քոյ։

Եւ մտեալ ի տաճարն՝ սկսաւ հանել զգաղանէվաճառսն և զդնողս, եւ զսեղանս հաւատավաճառացն տապալեաց։

Եւ ասէ ցնոսա. Գրեալ է՝ և եղիցի տունն իմ տունն աղօթից, եւ դուք արարէք զդա պարսաւատեղիս։

Եւ ուսուցանէր զնոսա հանապազ ի տաճարին. իսկ քահանայապետքն եւ գպիրքն եւ գլխաւորքն ժողովրդեանն խնդրէին զնա կորուսանել, և ոչ գտանէին՝ թէ զինչ արասցեն. զի ժողովուրդն ամենայն կախեալ կային զնմանէ ի լսել։

---

Եւթներորդում Կիրակի երկուշաբթի առաւն։

ԳԼՈՒԽ Ի. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեւ ի միում աւուրցն յայնցանէ, մինչդեռ ուսուցանէր զժողովուրդն ի տաճարի անդ՝ և աւետարանէր, հասին ի վերայ քահանայապետքն եւ գպիրքն ծերովքն հանդերձ, և ասեն ցնա. Ասա մեզ, որով իշխանութեամբ գործես դու զայդ, կամ ո՞վ է՝ որ ետ քեզ զայդ իշխանութիւն։

Պատասխանի ետ և ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի, և ասացէք ինձ. Մկրտութիւնն Յովհաննու յերկնից էր՝ եթէ ի մարդկանէ։

Եւ նորա խորհեցան ՚ի միտս իւրեանց եւ ասեն, եթէ ա-սեմք յերկինից, ասէ, իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք ՚ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ. զի հաստատեալ է ՚ի միտս զՅովհաննէս, թէ Մար-գարէ է։

Եւ պատասխանի ետուն՝ չը-գիտել թէ ուստի՛ իցէ։

Եւ Յիսուս ասէ ցնոսա. Եւ ոչ ես ասեմ ձեզ, որով իշխա-նութեամբ առնեմ զայս։

---

Եօթներորդում Կիրակիի երեքշաբթի առաւն։

ԳԼՈՒԽ Ի. 9։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Սկսաւ ասել առ ժողովուրդն զառակս զայս. Այր ոմն տնկեաց այգի, և ետ զնա մշա-կաց, եւ ինքն գնաց ՚ի ճանա-պարհ ժամանակս բազումս։

Եւ ՚ի ժամու՝ առաքեաց առ մշակսն ծառայ, զի ՚ի պտղոյ այգւոյն տացեն նմա. եւ մշա-կքն գան հարին զնա, և արձակեցին ունայն։

Եւ յաւել միւս եւս ծառայ յղել, նորա և զնա եւս գան հարին՝ անարգեցին և առա-քեցին ունայն։

Եւ յաւել զերրորդն առաքել. նորա եւ զնա վիրաւորեցին, և հանին արտաքս։

Ասէ տէր այգւոյն. զի՞նչ ա-րարից. առաքեցից զորդի իմ սիրելի, թերեւս ՚ի տեսանել պատկառեսցին։

Իբրեւ տեսին զնա մշակքն, խորհեցան ընդ միմեանս եւ ասեն. սա է ժառանգն. սպան-ցուք զսա, զի մեր լինիցի ժա-ռանգութիւնն. և հանին զնա արտաքս քան զայգին եւ սպանին։

Այդ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն. ո՛չ ապաքէն գայցէ և կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ, եւ տայցէ զայգին այլոց։

Իբրեւ լուան՝ ասեն. փառ, մի՛ լիցի։

Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ասէ. Իսկ զի՞նչ իցէ այն՝ որ գրեալն է, եթէ զվէմն զոր ա-նարգեցին շինողք՝ նա եղեւ գլուխ անկեան։

Ամենայն որ ընդ հարցի ընդ վէմս ընդ այս՝ խորտակեսցի, եւ յորոյ վերայ անկցի՝ հո-սեսցէ զնա։

Եւ խնդրեին գպիրքն և քա-հանայապետք արկանել ՚ի նա ձեռս ՚ի նմին ժամու, և երկեան

՝ի ժողովրդենէն, զի գիտէին՝ թէ առ նոսա ասաց զառակն զայն։

Եւ ապա սպասեցին, և առա՛քեցին դաւաճանս կեղծաւորեալս զանձինս առ արդարս ունել, զի ըմբռնեսցեն զնա բանիւք, առ՝ի մատնել զնա պետութեան եւ իշխանութեան դատաւորին։

Հարցին զնա ևասեն. վա՛րդապետ, գիտեմք զի ուղիղ խօսիս և ուսուցանես, և ոչ առնուս ակն. այլ ճշմարտութեամբ ըզճանապարհն Աստուծոյ ուսուցանես. արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ ոչ։

Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա՝ ասէ ցնոսա. Ցուցէ՛ք ինձ զդահեկանն։

Եւ նոքա ցուցին։

Եւ ասէ. Ձո՞ւր պատկեր և ըզգիր ունի։

Պատասխանի եւտուն և ասեն՝ զկայսեր։

Եւ նա ասէ ցնոսա. Արդ՝ տո՛ւք զկայսերն՝ կայսեր, եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ։

Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն. և զարմացեալ ընդ պատասխանին նորա՝ լռեցին։

---

Լսեմնելոցդ ամ Սիրակի Զորեքշաբթի առաւօտն։

ԳԼՈՒԽ Ի. 27։

Ա՛ստէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ա՛տուցեալ ոմանք՝ ի սադուկեցւոցն՝ որք հակառակեին չլինիլ յարուցեալ, հարցին զնա՝ և ասեն. վա՛րդապետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի՝ որոյ իցէ կին, և նա անորդի իցէ, զի առնուցու եղբայրն նորա զկինն, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում։

Այրդ՝ եօթն եղբարք էին. և առաջնոյն առեալ կին՝ մեռաւ անորդի. և առ զնոյն եւ երկրորդն, մեռաւ և նա անորդի. և առ զնա և երրորդն. նոյնպէս և եօթանեքեան, և ոչ թողին որդիս. մեռաւ և կինն. արդ՝ ի յարուցեալսն ո՞ւմ՝ ի նոցանէ լինիցի կին, զի եօթանեքեան կալան զնա կին։

Պատասխանի եւ նոցա Յիսուս և ասէ. Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն, եւ արանց լինին. իսկ որք արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել՝ եւ յարուցեալսն որ՝ի մեռելոց, ոչ կանայս առնեն, և ոչ արանց լինին։

Քանզի եւ ոչ մեռանիլ եւս կարեն. զի հաւասար հրեշտակաց են՝ եւ որդիք Աստուծոյ. քանզի յարուցեան որդիք են։

Այլ զի յառնեն մեռեալք, եւ Մովսէս գուշակեաց ՚ի մորենւոջն, որպէս ասէ զՏեառնէ Աստուծոյ Աբրահամու եւ զԱստուծոյ Իսահակայ եւ զԱստուծոյ Յակովբայ։

Եւ Աստուած չէ մեռելոց՝ այլ կենդանեաց, զի ամենեքեան նմա կենդանիք են։

Պատասխանի ետուն ոմանք ՚ի գպրացն եւ ասեն. Վարդապետ, բարւոք ասացեր։

Եւ ոչ եւս ոք իշխեր հարցանել զնա և ոչինչ։

Ասէ և առ նոսա. Զիա՞րդ ասեն զՔրիստոսէ՝ թէ որդի է Դաւթի. զի ինքն Դաւիթ ասէ ՚ի գիրս Սաղմոսաց. Ասաց Տէր՝ ՅՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմում, մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։

Իսկ արդ՝ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ։

Եւ լուա ՚ի լուս ամենայն ժողովրդեանն՝ ասէ ցաշակերտան. Զգայջ լերուք ՚ի գպրացն՝ որք կամին պատմուճանօք շրջիլ, և սիրեն ողջոյնս ՚ի հրապարակս, և զնախաթոռս ՚ի ժողովուրդս, և զբարձերեցս յընթրիս։

Որք ուտեն զտունս այրեաց, եւ պատճառանօք յերկարեն զաղօթս, նոքա ընկալցին աւելի դատաստան։

---

Եւ հայեցեալ ետես զմեծատունսն՝ որք արկանէին զտուրս իւրեանց ՚ի գանձանակն։

Ետես եւ զկին մի այրի աղքատ, որ էարկ անդր երկուս լումայս։

Եւ ասէ. Արդարեւ ասեմ ձեզ. զի այրին այն աղքատ՝ աւելի արկ քան զամենեսին։

Այնենքին նոքա ՚ի մէջերից իւրեանց արկին յընծայան Աստուծոյ. բայց նա ՚ի կարօտութենէ իւրմէ՝ զամենայն զկեանսն իւր ընդ նմա էարկ։

---

Լսեմնեբրդում Խրակէի Հինգշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԻԱ. 5։

Ա՛ռ տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ յասել ոմանց զտաճարն՝ թէ գեղեցիկ վիմօք և աշտարակօք զարդարեալ է,

ասէ. Ձայդ ամենայն զոր տե-
սանէք՝ եկեսցեն աւուրբք՝ յորս
ոչ թողցի այդր քար ի քարի
վերայ, որ ոչ քակտեսցի:
Հարցին ցնա և ասեն. Վարդա-
պետ, երբ լինիցի այդ, և ընդ-
նշան իցէ՝ յորժամ այդ լինե-
լոց իցէ:
Եւ նա ասէ. Զգոյշ կացէք,
մի խաբիցիք. զի բազումք գայ-
սցեն յանուն իմ և ասասցեն՝
Թէ ես եմ. և ժամանակ մի եր-
թայցէք զկնի
նոցա:
Եւ յորժամ լսիցէք պատե-
րազմունս և խռովութիւնս՝
մի զարհուրիցիք, զի պարտ է
նախ այնմ լինիլ, այլ ոչ առ-
ժամայնն կատարած:
Յայնժամ ասէ ցնոսա. Յարիցէ
ազգ յազգի վերայ, և թագա-
ւորութիւն ի թագաւորու-
թեան վերայ. եւ շարժմունք
մեծամեծք. և ի տեղիս տեղիս
սովք և սրածու թիւնք. եղի-
ցին արհաւիրք եւ նշանք մե-
ծամեծք յերկնից:
Բայց յառաջ քան զայս ամե-
նայն՝ մխեսցեն զձեռս իւրեանց
ի ձեզ, և հալածեսցեն. մատ-
նեսցեն ի ժողովուրդս եւ ի
բանտս, եւ տանիցին առ աջի
դատաւորաց և թագաւորաց
վասն անուան իմոյ. և լինիցի
ձեզ այն ի վկայութիւն:
Արդ դիք ի սիրտս ձեր՝ մի յա-
ռաջագոյն կրթել տալոց պա-
տասխանի. զի ես տայց ձեզ
բերան և իմաստութիւն, ո-
րոմ ոչ կարիցեն կալ հակա-
ռակ կամ տալ պատասխանի՝
ամենայն հակառակորդք ձեր:
Մատնեսջիք և ի ծնողաց և
եղբարց՝ և յազգականաց և
ի բարեկամաց, և սպանանի-
ցեն ի ձէնջ. և եղիջիք ատե-
ցեալք յամենեցունց վասն ա-
նուան իմոյ. և մազ մի ի գլխոց
ձերոց ոչ կորիցէ. եւ համբե-
րութեամբ ձերով ստասջիք
զոգիս ձեր:
Այլ յորժամ տեսանիցէք
շուրջ պատեալ զօրօք զերու-
սաղէմ. յայնժամ գիտասջիք՝
Թէ մերձ է աւեր նորա:
Յայնժամ որք ի Հրէաստանի
իցեն՝ փախիցեն ի լերինս. և
որք ի միջի նորա իցեն՝ խու-
սեսցեն, եւ որք ի դաշտան
իցեն՝ մի մտցեն ի նա. զի ա-
ւուրբք վրէժխնդրութեան են
այնորիկ՝ առ ի կատարելոց ա-
մենայն գրելոց:
Բայց վայ իցէ յղեաց և ստնո-
ղաց յաւուրսն յայնոսիկ. զի եղիցի տագնապ մեծ ի վե-

րայ երկրի, եւ բարկութիւն ժողովրդեանն այնմիկ։

Եւ անկցին ի նմանութիւն սուսերի, եւ գերեսցին յամենայն հեթանոսս. եւ երուսաղէմ եղիցի կոխան ազգաց. մինչեւ կատարեսցին ժամանակք հեթանոսաց։

Եւ եղիցին նշանք յարեգակն, և ի լուսին, և յաստեղս. և յերկրի տագնապ հեթանոսաց՝ յահեղ բարբառոյ իբրեւ ծովու և խռովութեան, յեղանելոց ոգւոց մարդկան յերկիւղ՝ և ի կարծեաց եկելոց ի վերայ տիեզերաց. զի զօրութիւնք երկնից շարժեսցին։

Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք, զօրութեամբ և փառօք բազմօք։

Եւ յորժամ սկսանիցի այս լինիլ, ամբարձջիք եւ բարձրացուսջիք զգլուխս ձեր, զի մերձ է փրկութիւն ձեր։

Եւ ասաց առակ ի նոցա. Տեսէք զթզենիդ եւ զամենայն ծառ. յորժամ ցուցանիցեն զպտուղ իւրեանց. տեսանէք եւ ի նոցանէ ճանաչէք՝ թէ մերձ է ամառն։

Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է Արքայութիւն Աստուծոյ։

Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն լինիցի։

Երկինք և երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն։

Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շքեւայտութեամբ և արբեցութեամբ՝ և հոգւովք աշխարհականօք, և յանկարծակի հասանիցի ի վերայ ձեր օրն այն. զի իբրեւ զորոգայթ հասանիցի ի վերայ ամենեցուն՝ որք բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։

Արթուն կացէք այսուհետեւ, յամենայն ժամ աղօթս արարէք, զի արժանի լինիջիք զերծանիլ յայնմ ամենայնէ՝ որ լինելոց է, և կալ առաջի Որդւոյ մարդոյ։

Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր, և զգիշերս ելեալ ագանէր ի լերինն՝ որ կոչիւր Ձիթենեաց։

Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առնա ի տաճարն՝ լսել ի նմանէ։

Եօթներորդաւմ Սիւրակի Ներքոմի աւետն։

ԳԼՈՒԽ ԻԲ · 1·

Վասն ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ստերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչիւր պասքա։

Եւ խնդրէին քահանայապետքըն և դպիրք՝ թէ որպէս սպանանիցեն զնա. բայց երկնչէին ի ժողովրդենէ անտի։

Ապա եմուտ սատանայ ի Յուդա՝ ի կոչեցեալն Իսկարիովտայի, որ էր ի թուոյ երկոտասանիցն։

Զոգաւ եդ բանս ընդ քահանայապետսն, եւ ընդ դպիրս, և ընդ իշխանս ժողովրդեանն, զի մատնեսցէ զնա նոցա։

Եւ խնդացին, և խոստացան տալ նմա արծաթ. եւ յանձն էառ, և խնդրէր պարապ մատնել զնա նոցա՝ ի կուսի յամբոխէ անտի։

Եկն օր բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպասեքն. և առաքեաց զՊետրոս եւ զՅովհաննէս՝ եւ ասէ. Երթայք, պատրաստեցէք մեզ զպասեքն՝ զի կերիցուք։

Եւ նոքա ասեն. Ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք։

Եւ ասէ ցնոսա. Ահա իբրեւ մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ, երթիջիք զհետ նորա ի տունն՝ յոր մտանիցէ, և ասասջիք ցտանուտէր տանն, վարդապետն ասէ քեզ, Ո՞ւր են վանքն իմ՝ յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ. և նա ցուցցէ ձեզ վերնատունն մի մեծ զարդարեալ, և անդ պատրաստեսջիք։

Եւ գնացեալ գտին՝ որպէս և ասաց նոցա, և պատրաստեցին զպասեքն։

Եւ իբրեւ ժամ եղեւ՝ բազմեցաւ, եւ երկոտասան Առաքեալքն ընդ նմա։

Եւ ասէ ցնոսա. Յանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչեւ չարչարեալ իցեմ։

Բայց ասեմ ձեզ, թէ ոչ եւս կերից ի սմանէ՝ մինչեւ լցցի յԱրքայութեան Աստուծոյ։

Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ և ասէ. Առէք զայդ՝ և բաժանեցէք ի ձեզ։

Ասեմ ձեզ, թէ յայսմհետէ ոչ արբից ի բերոյ որթոյ՝ մինչեւ եկեսցէ Արքայութիւն Աստուծոյ։

Եւ առեալ հաց՝ գոհացաւ,

եբեկ՝ եւ ետ նոցա եւ ասէ. Ա՛յս է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ. զայս արասջիք առ իմոյ յիշատակի։ Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեացն էառ՝ և ասէ. Ա՛յս բաժակ է նոր Ուխտ իմով արեամբ վասն բազմաց հեղլոյ։

---

Եւհիլրտպում Սիւրակի շաբաթի առաւ։

ԳԼՈՒԽ ԻԲ. 21։

Տէրն մեր ցիտաս Քրիստոս ասէ։

Բայց աւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ի սեղանս. և Որդի մարդոյ ըստ սահմանեալն երթայ. բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն մատնիցի։

Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս. Թէ ո՞վ է ի նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ։

Եւ եղեւ հակառակութիւն ի մէջ նոցա, Թէ ո՞ ի նոցանէ համարիցի մեծ։

Եւ նա ասէ ցնոսա. Թագաւորք ազգաց՝ տիրեն նոցա, և որք իշխեն նոցա՝ բարերարք կոչին. Ա՛յլ դուք ոչ այնպէս, այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն, և առաջնորդն՝ իբրեւ զպաշտաւորն։

Որ է մեծ, բազմեա՞լն՝ եթէ սպասաւորն. ո՞չ սպասաւորն բազմեալն. բայց ես եմ ի միջի ձերում իբրեւ սպասաւոր։

Եւ դուք էք՝ որք ցանգ կայիք ընդ իս ի փորձութիւնս իմ. և ես ուխտեմ ձեզ՝ որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ զԱրքայութիւն. զի ուտիցէք և ըմպիցէք ի սեղանն իմ՝ Արքայութեանն իմում, և նստիցիք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայելի։

---

Եւ ասէ Տէր. Սի՛մոն՝ Սի՛մոն, ահա սատանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրեւ զցորեան. այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի՛ պակասեսցին հաւատք քո. եւ դու երբեմն դարձցիս՝ եւ հաստատեսցես զեղբարս քո։

Եւ նա ասէ ցնա. Տէր, ընդ քեզ պատրաստ եմ և՛ ի բանտ և՛ ի մահ երթալ։

Եւ նա ասէ ցնա. Ասեմ քեզ, Պետրէ, չիցէ այսօր հաւն խօսեալ՝ մինչ երիցս ուրասցիս զիս չգիտել։

Եւ ասէ ցնոսա. Յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի, և

մախապէ, և կօշկաց, մինչ կա-
րօտացայք խմիք։
Եւ նորա ասէն. Եւ ոչ խմիք։
Ասպա ասէ. Ասլ այժմ որ ու-
նիք քանի՞ բարձկէ, նկնպէս և մա-
խապ. եւ որ ոչն ունի, վաճա-
ռեսցէ զձորձս իւր՝ և գնեսցէ
իւր սուսեր։
Բայց ասեմ ձեզ. զի այս եւս
որ գրեալ է՝ պարտ է՝ զի կատա-
րեսցի յիս, մինչ ընդ անօրէնս
համարեցաւ. զի որ վասն իմ
ինչ է՝ վճարեալ է։
Եւ նորա ասեն. Տէր, ահաւա-
սիկ են աստ երկու սուր։
Եւ նա ասէ ցնոսա. Բաւա-
կանք են։
Եւ ելեալ գնաց ըստ սովո-
րութեան՝ ի լեառն Ձիթե-
նեաց. գնացին զհետ նորա և
աշակերտքն։
Իբրեւ եհաս՝ ի տեղին՝ ասէ
ցնոսա. Յաղօթս կացէք, չմտա-
նել՝ ի փորձութիւն։
Եւ ինքն մեկնեցաւ՝ ի նոցա-
նէ իբրեւ քարընկէց մի, եդ
ծունր, կայր յաղօթս՝ և ասէր.
Հայր, եթէ կամիս՝ անցո՛ զբա-
ժակս զայս յինէն. բայց ոչ
իմ կամք՝ այլ քոյդ լիցի։
Եւ երեւեցաւ նմա Հրեշտակ
յերկնից՝ և զօրացուցանէր
զնա, և էր՝ ի տագնապի, և
մուսդիւբութեամբ եւս կայր
յաղօթս. և հոսէին՝ ի նմանէ
քրտունք իբրեւ կիսլակա ա-
րեան՝ ոլոռն ոլոռն հեղեալ
յերկիր։
Եւ յարուցեալ յաղօթից՝ ե-
կեն առ աշակերտսն՝ և գտա
զնոսա՝ ի քուն՝ ի տրտմու-
թենէն. եւ ասէ ցնոսա. Զի՞
ննջէք, արդ կացէք յաղօթս՝
զի մի՛ մտանիցէք՝ ի փորձու-
թիւն։
Եւ մինչդեռ խօսէր, ահա
ւասիկ ամբոխ. և որ կոչիւր
Յուդա՝ մի յերկոտասանից՝
առաջնորդէր նոցա։
Իբրեւ մերձեցաւ առ Յիսուս՝
համբուրեաց զնա. քանզի զայն
նշան տուեալ էր նոցա, թէ
ընդ որում ես համբուրեցից՝
նա է, զնա ունիցիք։
Ասէ ցնա Յիսուս. Յո՛ւդա,
համբուրեալ մատնես զՈրդի
մարդոյ։
Իբրեւ տեսին՝ որք զնովաւն
էին՝ որ ինչ եղեւն, ասեն ցնա.
Տէր, հարցուք զնոսա սրով։
Եւ ե հար մի ոմն՝ ի նոցանէ
զքահանայապետին ծառայ, և
՝ի բաց եհան զաջմ ունկն նորա։
Պատասխանի Յես Յիսուս եւ
ասէ. Թո՛ղ տուք մինչեւ ցայդ
վայր։

Եւ մատուցեալ յունկն՝ բժըշկեաց զնա։

Եւ ասէ ցհկեալն՝ Ի վերայ նորա ցքահանայապետան, և ցիշխանս տաճարին, և ցձերս. իբրև՝ Ի վերայ աւազակի՞ եղէք սուսերօք և բրօք։ Հանապազ ընդ ձեզ էի՝ Ի տաճարին, և ոչ ձգեցէք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ, եւ իշխանութիւն խաւարի։

Եւ կալեալ զնա՝ առին և մուծին՝ Ի տուն քահանայապետին. և Պետրոս երթայր զհետ նորա հեռագոյն։

Իբրեւ լուցին զկրակ՝ Ի մէջ դահլիճն՝ և նստան շուրջ նըմա տաս և Պետրոս՝ Ի մէջ նոցա։

Եւտես զնա աղախին ոմն՝ զի նստէր առ լոյսն, հայեցաւ ընդ նա և ասէ. և սա ընդ նոսա էր՝ որք ընդ նմա էին։

Իսկ Պետրոս ուրացաւ և ասէ. Ոչ գիտեմ զնա, կին՛ դու։

Եւ յետ սակաւ մի՝ այլ ոմն եւտես զնա, և ասէ. Եւ դու՝ Ի նոցանէ ես։

Եւ Պետրոս ասէ. Ա՛յր դո՛ւ, չեմ՝ Ի նոցանէ։

Եւ իբրեւ ժամ մի եանց՝ Ի վերայ, այլ ոմն վիճէր եւ ասէր. Ստոյգ և սա ընդ նմա՛ էր, քանզի Գալիլեացի է։

Այլ Պետրոս. Ա՛յր դո՛ւ, չգիտեմ զինչ խօսիգ։

Եւ առ ժամայն մինչդեռ զգին ասէր՝ խօսեցաւ հաւ։

Դարձաւ Տէր և հայեցաւ՝ Ի Պետրոս. և յիշեաց Պետրոս զբանն Տեառն՝ զոր ասաց ցնա, մինչեւ հաւս խօսեալ լցէ, երիցս ուրասցիս՝ չգիտեմ զիս. և ելեալ արտաքս՝ եկաց դառնապէս։

Եւ արքն որք պահէին զնա, այպն առնէին զնովաւ և հարկանէին. ծածկէին զբեւս նորա և առնջէին. և հարցանէին ցնա և ասէին. Մարգարէ՛ա՝ ձո՛վ է որ եհարն զքեզ։

Եւ այլ բազում ինչ հայհոյութեամբ խօսէին Ի նա։

---

ԳԼՈՒԽ ԻԲ. 66.

Վասն չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ իբրեւ այգ եղեւ, ժողովեցաւ ծերակոյտ ժողովրդեան՝ քահանայապետքն և դպիրք, և հանին առին զնա յատեանն իւրեանց՝ և ասեն. Թէ դո՛ւ ես Քրիստոս. ասա՛ մեզ։

Ասէ ցնոսա. եթէ ասացից ձեզ, սակայն ոչ հաւատայք. եւ եթէ հարցից ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի՝ կամ արձակիցէք։

Բայց յայսմհետէ նստցի Որդի մարդոյ ընդ աջմէ զօրութեան Աստուծոյ։

Եւ ասեն ամենեքեան. Ուրեմն դու ես Որդին Աստուծոյ։

Եւ նա ասէ ցնոսա. Դուք ասէք թէ ես եմ։

Եւ նորա ասեն. Ընդէ՞նչ եւս պիտոյ է մեզ վկայութիւն, զի մեզէն իսկ լուաք ի բերանոյ դորա։

—

Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա, ածին զնա առ Պիղատոս։

Եւ սկսան չարախօս լինիլ ըզնմանէ և ասել. Գտաք զսա զի խիւրէր զազգս մեր, և արգելլոյր ի տալոյ հարկս կայսեր, և ասէր զանձնէ՝ եթէ Քրիստոսն իսկ թագաւոր։

Իսկ Պիղատոս եհարց զնա և ասէ, Դո՞ւ ես Թագաւորն Հրեից։

Նա պատասխանի ետ նմա և ասէ. դու ասացեր։

Ասէ Պիղատոս ցքահանայապետսն եւ ցժողովուրդսն. Ոչ գտանեմ ինչ վնաս յառնս յայսմիկ։

Եւ նորա պնդէին եւ ասէին, թէ խառնէ զժողովուրդս. ուսուցանէ ընդ ամենայն Հրէաստան՝ սկսեալ ի Գալիլեէ մինչեւ ցայսր։

Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զԳալիլեէ, և հարց՝ եթէ Գալիլեացի իցէ պարն. եւ իբրեւ գիտաց թէ յիշխանութենէ Հերովդի է, ետ տանիլ զնա առ Հերովդէս. քանզի եւ նա յԵրուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ։

Եւ Հերովդէս իբրեւ տեսս զՅիսուս, ուրախ եղեւ յոյժ. զի ցանկայր ի բազում ժամանակաց տեսանել զնա. քանզի լսեր բազում անգամ զնմանէ, ևակն ունէր նշան ինչ լինել տեսանել ի նմանէ։

Հարցանէր զնա բանիւք բազմօք, և նա ոչինչ ետ նմա պատասխանի։

Կային քահանայապետքն եւ գպիրք՝ եւ պնդապոյն չարախօսէին զնմանէ։

Արհամարհեաց զնա և Հերովդէս հանդերձ իւրովք զօրականօքն, և այսն արարեալ՝ էարկ զնովաւ հանդերձս սպիտակս,

և ետ տանիլ անդրէն առ Պիղատոս։

Եւ եղեն բարեկամք Պիղատոս և Հերովդէս յաւուրն յայնմիկ. քանզի յառաջ թշնամիք էին միմեանց։

Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն և զիշխանս և զժողովուրդն, և ասէ ցնոսա. Ածէք մատուցէք ինձ զայս զայս իբրեւ զխոտորեցուցիչ ժողովրդեան. եւ ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, և ինչ ոչ գտի յառնս յայսմիկ զորոյ դուք չարախօսէիք զմէնէ։

Այլ և ոչ Հերովդէս, քանզի ետուս տանիլ զդա առ նա. և արդ ոչինչ մահու արժանի է գործեալ դորա. խրատեցից զդա և արձակեցից։

Զի հարկէր մի մի ըստ տօնի արձակել նոցա։

Եւ նոքա աղաղակէին ամենայն բազմութեամբն և ասէին. Բարձ զդա, և արձակեա մեզ զԲարաբբա. որ էր վասն խռովութեան իրիք եղեալ ի քաղաքին եւ սպանութեան մտեալ ի բանտ։

Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսիլ. քանզի կամէր արձակել զՅիսուս։

Եւ նորա անդրէն աղաղակէին և ասէին. Ի խաչ հան զդա։

Եւ նա երրորդ ասէ ցնոսա. Զի՞նչ չար արար սա. ոչինչ մեռանելոյ մահու գտի ի սմա. խրատեցից զսա և արձակեցից։

Եւ նորա սոսկեցին մեծաձայն՝ եւ խնդրէին զնա ի խաչ հանել. եւ զրանտային բարբառ նոցա և քահանայապետիցն։

Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել զհայցուածս նոցա։

Արձակեաց նոցա զԲարաբբաս՝ զոր վասն խռովութեան եւ սպանութեան արկեալ էր ի բանտ. զոր եւ խնդրէինն իսկ. եւ զՅիսուս մատնեաց կամաց նոցա։

Իբրեւ առին գնացին զնա, ըմբռնեցին զոմն Սիմոն Կիւրենացի՝ որ գայր յանդէ, եւ դին ի վերայ նորա զխաչն՝ բերել զկնի Յիսուսի։

Եւ երթայր զհետ նորա բազմութիւն ժողովրդեանն, եւ կանանց՝ որք կոծէին և աշխարէին զնա։

Դարձաւ Յիսուս և ասէ ցնոսա. Դուստերք Երուսաղէմի, մի լայք ի վերայ իմ, այլ լայք ի վերայ անձանց և ի վերայ որդւոց ձերոց. զի եկեսցեն աւուրք, յորս ասիցեն՝ Թէ ե-

բանի՛ ամլոց և որովայնից՝ որք ոչ ծնան, և սեռանց՝ որք ոչ դիեցուցին։

Յայնժամ սկսանիցին ասել լերանց՝ Թէ անկեր՛ուք ի վերայ մեր, և բլրոց՝ Թէ ծածկեցէ՛ք զմեզ։

Զի եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն ընդ՞նչ լինիցի։

Ածին եւ այլ երկուս չարագործս՝ սպանանել ընդ նմա։

Իբրեւ չոգան ի տեղին կոչեցեալ գագաթն, անդ հանին զնա ի խաչ. և զչարագործսն՝ զմին ընդ աջմէ՝ եւ զմին ընդ ձախմէ խաչեցին։

Եւ Յիսուս ասէ. Հա՛յր, Թող դոցա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն։

Եւ ի բաժանել զհանդերձս նորա, արկին վիճակս. և կայր ժողովուրդն հայեցեալ։

Անգոնեէին զնա եւ իշխանքն հանդերձ նոքօք՝ եւ ասէին. զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն՝ եթէ դա է Քրիստոս՝ Որդի Աստուծոյ ընտրեա՛լն։

Ասկն առնէին զնա եւ զինուորքն, եկեալ առ ա՛ջն, մատուցանէին նմա քացախ, եւ ասէին. Եթէ Դու ես Թագաւորն Հրէից՝ փրկեա՛ զանձն քո։

Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա՝ Յունարէն եւ Դաղմատերէն և Եբրայեցերէն գրով, Եթէ սա է արքայն Հրէից։

Իսկ մի ոմն ի կախեալոց չարագործացն հայհոյէր զնա, և ասէր. Ո՛չ դու ես Քրիստոս. փրկեա՛ զանձն քո և զմեզ։

Պատասխանի ետ ընկերն սաստեալ նմա՝ և ասէ. Զերկնչիս դու Աստուածդ՝ զի ի նմին պատժի կաս. և մեք յիրաւի, զի արժանի՝ որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. և սա ապիրատ ինչ ոչ գործեաց։

Եւ ասէ Յիսուս. Յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով։

Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ քեզ. այսօր ընդ իս իցես ի դրախտին։

Եւ էր իբրեւ վեցերորդ ժամ. և խաւար եղեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցիննեերորդ ժամն. խաւարեցաւ աստեղակն։

Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ։

Եւ կարդաց Յիսուս ի ձայն մեծ՝ և ասէ. Հա՛յր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։ Զայս իբրեւ ասաց, եհան զոգի։

Եւ տեսեալ հարիւրապետին որ ինչ եղեւն, վառաւաւոր ա-
բար զԱստուած և ասէ. Ա-
դարեւ այրս այս արդար էր։
Եւ ամենայն ժողովուրդն որք
եկեալ էին, և տեսանէին զը-
տեսիլն զայն և զգործ, բաղ-
խէին զկուրծս և դառնային։
Այրին և ամենայն ծանօթքն
նորա՝ ի հեռաստանէ. և կա-
նայք՝ որք եկեալ էին զհետ
նորա՝ ի Գալիլեէ՝ տեսանէին
զայն։

—

ԳԼՈՒԽ ԻԳ. 50։

Վասն Թաղման Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի։

Եւ ահա այր մի անուն Յով-
սէփ, որ էր նախարար,
այր բարեգործ և արդար. սա
չէր միաբանեալ ընդ խորհուրդ-
դըս և ընդ գործս նոցա. ՅԱրիմ-
աթեայ քաղաքէ Հրէից, որ
և ինքն իսկ ակն ունէր Աբբա-
յութեան Աստուծոյ. սա մա-
տուցեալ առ Պիղատոս՝ խընդ-
րեաց զմարմինն Յիսուսի. եւ
իջուցեալ զնա պատեաց պաս-
տառակալաւ, և եդ ի կուռծոյ
գերեզմանի, ուր չէր քնաւ
ոք եդեալ։

Եւ օրն էր ուրբաթ. և շաբաթ
լուսանայր. և երթային զհե-
նորա կանայք՝ որք եկեալ էին
ընդ նմա ի Գալիլեէ. տեսին
զգերեզմանն, և որպէս եդաւ
մարմին նորա։

Դարձան եւ պատրաստեցին
խունկս և իւղս, և ի շաբաթուն
հանգարտեցին վասն պատուի-
րանին։

—

Բայց ի միաշաբաթուն վաղ
քաջ ընդ առաւօտն եկին
ի գերեզմանն, բերին զխունկն՝
զոր պատրաստեցին, և այլ կա-
նայք ընդ նոսա։

Եւ գտին զվէմն թաւալեցու-
եալ ի գերեզմանէ անտի. և
մտեալ ի նէրքս՝ ոչ գտին զմար-
մինն Տեառն Յիսուսի։

Եւ եղեւ ընդ հիանալն նոցա
վասն այնորիկ, և ահա արք եր-
կու հասին առ նոսա ի հան-
դերձս լուսաւորս։

Եւ իբրեւ զահի հարան, եւ
խոնարհեցուցին զերեսս իւ-
րեանց յերկիր, ասեն ցնոսա.
Ձի՞ խնդրէք զկենդանին ընդ
մեռեալս. չէ ասա՝ այլ յա-
րեաւ։

Յիշեցէք՝ որպէս խօսեցաւ ընդ
ձեզ՝ մինչ էրն ի Գալիլեա, և

ասէր՝ Թէ պարտէ Որդւոյ մարդոյ դոյ մատնիլ՝ ի ձեռս մարդոց մեղաւորաց. և՝ ի խաչ ելանել, և յերրորդ աւուր յառնել։

Եւ յիշեցին զբանն նորա։

Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մեռաւանիցն, և այլոցն ամենեցուն։

Եւ էին Մարիամ Մագդաղենացի և Յովհաննա և Մարիամ Յակոբեայ եւ այլք ընդ նոսա՝ որք պատմեցին զայս Առաքելոցն. և երեւեցան առաջի նոցա շաղփաղփուԹիւն բանիք նոցա, և չհաւատային նոցա։

Բայց Պետրոս յարուցեալ ընԹացաւ՝ ի գերեզմանն, և հայեցեալ տեսանէ զկտաւան լոկ՝ զի կային. և գնաց՝ ընդ միտս զարմացեալ Թէ զինչ եղեւ։

---

ԳԼՈՒԽ ԻԳ. 13։

*Ի յարուԹիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Եւ ահա երկուք՝ ի նոցանէ երԹային՝ ի նմին աւուր՝ ի գեօղ մի, որ հեռի էր յԵրուսաղէմ հարիւր և վաԹսուն ասպարիսաւ. և էր անուն նորա Եմմաուս. և նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամենայն անցիցն անցելոց։

Եւ եղեւ ընդ խօսիլն նոցա և ընդ վիճել՝ և ինքն իսկ Յիսուս մերձեցաւ՝ եւ երԹայր ընդ նոսա. եւ նոցա աչք կալեալ էին առ՝ ի չճանաչելոյ զնա։

Եւ ասէ ցնոսա. Զինչ են բանքդ՝ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս՝ մինչդեռ գնայիդ, և տրտմեալ էք։

Պատասխանի եւս մի ումն՝ ի նոցանէ՝ որում անուն էր Կղէոպաս, և ասէ ցնա. Դու միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ՝ ի նմա յաւուրս յայսոսիկ։

Եւ ասէ ցնոսա. Զի՞նչ։

Եւ նոքա ասեն. ԶՅիսուսէ Նազովրեցւոյ, որ եղեւ այր մարգարէ՝ հզօր արդեամբք և բանիւք առաջի Աստուծոյ և ամենայն ժողովրդեանն. որպէս մատնեցին զնա քահանայապետքն և իշխանքն մեր՝ ի գատաստան մահու, եւ հանին զնա՝ ի խաչ։

Մեք ակն ունէաք՝ Թէ նա է որ փրկելոցն իցէ զԻսրայէլ. այլ եւ հանդերձ այսու ամենայնիւ՝ այս երրորդ օր է՝ յորմէ հետէ այն գործեցաւ։

Այլ և կանայք ոմանք՝ ի մէնջ զարմացուսին զմեզ, որք կան-

խեալք ընդ առաւօտս չոգան ի գերեզմանն, և ոչ գտին զմարմինն Նորա. եկին և ասեն, Թէ և տեսիլ եւս Հրեշտակաց տեսին, որք ասէինն զնմանէ Թէ կենդանի է։

Եւ գնացին ոմանք ի մէնջ ի գերեզմանն, և գտին նոյնպէս՝ որպէս եւ կանայքն ասացին, բայց զնա ոչ տեսին։

Եւ Նա ասէ ցնոսա. Ո՛վ անմիտք եւ հեզգասիրտք առ ի հաւատալ յամենայնի՝ զոր խօսեցան Մարգարէքն. Ո՞չ զնոյնս պարտէր չարչարիլ Քրիստոսի, և մտանել ի փառս իւր։

Եւ սկսեալ ի Մովսիսէ և յամենայն Մարգարէից՝ մեկնէր նոցա՝ որ ինչ յամենայն գիրս գրեալ է զնմանէ։

Իբրեւ մերձեցան ի գեօղն՝ յոր երթային, և Նա պատճառէր հեռագոյն եւս ուրեք երթալ։

Եւ բռնադատեցին զնա և ասեն. Աւ մեզ ապիր, զի ընդ երեկս է, և տարաժամեալ է օրս։

Եւ եմուտ ագանիլ անդ ընդ նոսա։

Եւ եղեւ ի բազմիլն Նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, եբեկ՝ և ետ նոցա. և նոցա բացան աչք և ծանեան զնա. եւ Նա եղեւ ի նոցանէ աներեւոյթ։

Ասեն ցմիմեանս. Ո՞չ իսկ եւ սիրտք մեր ճմլէին ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն. և որպէս բանայր մեզ զգիրս։

Եւ յարուցեալ նոյնժամայն դարձան յԵրուսաղէմ, և գտին ժողովեալ զմեծատասանան՝ եւ զորս ընդ նոսայն էին. և ասեն՝ Թէ արդարեւ յարեաւ Տէր, և երեւեցաւ Սիմոնի։

Եւ նոքա պատմէին՝ որ զճանապարհայնն, և Թէ զնարդ ետ ծանօթս նոցա՝ ի բեկանել հացին։

---

ԳԼՈՒԽ ԻԴ. 36.

Ցեւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Մինչդեռ զայն խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց ի մէջ նոցա, և ասէ ցնոսա. Խաղաղութիւն ընդ ձեզ. Ես եմ, մի՛ երկնչիք. և զահի հարեալ երկնչէին, և համարէին ոգի մինչ տեսանէը։

Եւ ասէ ցնոսա. Ձի՞ խռովեալ էք, և ընդէ՞ր խորհուրդք ելա

նեն ՚ի սիրտս ձեր. տեսէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ. շօշափեցէք զիս և տեսէք. զի ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք՝ զի ունիմ։

Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռսն և զոտս։

---

ԳԼՈՒԽ ԻԴ. 41։

Վասն հաւատարմութեան ցեղին մերոյ ցխտեսի Քրիստոսի։

Եւ մինչդեռ տակաւին չհաւատային ՚ի խնդութենէն, և զարմանայի էին, ասէ ցնոսա. Ունի՞ք ինչ կերակուր աստ։

Եւ նոքա ետուն նմա ձկան խորովելոյ մասն, և խորիսխ մեղու։

Եւ առ եկեր առաջի նոցա, և զմնացորդսն ետ նոցա։

Եւ ասէ ցնոսա. այս բանք են՝ զոր խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզն էի, թէ պարտ է լնուլ ամենայն գրելոցն յօրէնսն Մովսիսի և ՚ի մարգարէս և ՚ի Սաղմոսսն վասն իմ։

Յայնժամ եբաց զմիտս նոցա՝ իմանալ զգիրս։

Եւ ասէ ցնոսա, թէ այսպէս պարտ էր քարշարիլ Քրիստոսի, և յառնել ՚ի մեռելոց յաւուր երրորդի. և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն եւ թողութիւն մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ յԵրուսաղէմ։ և դուք էք վկայք բանից այսոցիկ։

Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ ՚ի ձեզ. և դուք նստարուք ՚ի քաղաքիս Երուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրութիւն ՚ի բարձանց։

Եհան զնոսա մինչեւ ՚ի Բեթանիա, և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա։

Եւ եղեւ յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ՚ի նոցանէ, և վերանայր յերկինս։

Եւ նոցա երկիր պագեալ նմա՝ դարձան յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ։

Եւ էին հանապազ ՚ի տաճարին, գովէին եւ օրհնէին զԱստուած։



# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Յովհաննու Աւետարանն՝ գրեալ է Յովհաննու, որ եղբայր է Յակովբայ Զեբեդեայ, որ անկաւ ի վերայ լանջացն Տեառն. նոյն սա գրեաց զԱւետարանս զայս: Եւ զսիրելն առնէ Աստուածական Բանէն. և զքոյր մօրմոյ Ծնունդն յիշատակէ յասելն. Եւ Բանն մարմին եղեւ: Եւ յիշատակէ զսկզբումն Յովհաննու, եւ զընտրութիւն աշակերտացն. այլ եւ զնշանս եւ զարուեստս՝ որք եղեն. եւ զկատարած՝ն՝ որ մատնեցաւ Պոնտացւոյ Պիղատոսի, եւ խաչեցաւ. յորում եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, եւ ի վերայ պատմուճանի նորա վիճակ արկին. եւ մարմին նորա եդաւ ի գերեզմանի, և յարեաւ յերրորդ աւուր, երեւեցաւ աշակերտացն ինքն:

Յովհաննէս՝ որ եւ Որդի Որոտման, զվերինն որոտալով պատմեաց մեզ: Սա զինի յիսներորդի երրորդի ամի Համբառնալոյ Փրկչին՝ գրեաց զԱւետարանս իւր Եփեսոս քաղաքի, ի հնգերորդ եկեղեցւոյն Ասիայ՝ ի լեզու Ցոյն:

# ՍԿԻԶԲՆ ՆԻՒԹՈՑ

## ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ


| | ԵՐԵՍ | ԷՋ |
|---|---|---|
| Վասն՝ զի անսկիզբն է Բանն Աստուած | 197 | 1 |
| Վասն Յովհաննու վկայելոյն Բանին Աստուծոյ | 198 | 1 |
| Վասն գալոյն առ նա գառինն Աստուծոյ | 199 | 1 |
| Վասն աշակերտացն առ Յիսուս ագանելոյն | 199 | 2 |
| Վասն գտանելոյն զՄեսիա | 199 | 2 |
| Վասն ի Կանա հարսանեացն | 200 | 2 |
| Վասն արտաքս հանելոյն ի տաճարէն | 201 | 2 |
| Վասն Նիկոդիմոսի | 202 | 1 |
| Վասն ի Յայենոյին մկրտելոյն | 204 | 1 |
| Վասն խնդիր լինելոց վասն սրբութեան | 204 | 1 |
| Վասն կնոջն Սամարացւոյ | 205 | 1 |
| Վասն Թագաւորականն | 207 | 2 |
| Վասն երեսուն և ութամեայ հիւանդին | 208 | 2 |
| Վասն՝ զի Հայր սիրէ զՈրդի | 209 | 2 |
| Վասն հինգ հացին, և երկու ձկանն | 211 | 2 |
| Վասն գնալոյն ի վերայ ծովուն | 213 | 1 |
| Վասն մարտնչելոյն ընդ միմեանս Հրէից | 214 | 1 |
| Վասն ընկելոյն Յիսուսի ի գալիլէէ, և խրատուս եղբարցն | 216 | 1 |
| Վասն խնդրելոյն Հրէից ունիլ զՅիսուս | 217 | 2 |
| Վասն ի ծնէ կուրին | 223 | 1 |
| Վասն դնելոյն Յիսուսի զանձն ի վերայ ոչխարացն | 226 | 1 |
| Վասն նաւակատեացն Յերուսաղէմ | 227 | 1 |
| Վասն Ղազարու յարութեան | 228 | 1 |
| Վասն օծանելոյն զՏէրն | 231 | 2 |
| Վասն՝ որ ասաց ցուգա զկնի գոյն | 232 | 1 |
| Վասն յաւանակին | 232 | 2 |
| Վասն եղելոց հեթանոսացն առ Տէր | 233 | 1 |
| Վասն հատին ցորենոյ | 233 | 1 |
| Վասն Յիսուսի՝ լցս գալոյն յաշխարհ | 234 | 2 |
| Վասն ընթրեացն, և լուանալոյ զոտս աշակերտացն | 235 | 1 |
| Վասն չարչարանացն Յիսուսի, և սփոփելոյ զաշակերտսն | 238 | 2 |
| Վասն գալոյ Հոգւոյն՝ և մխիթարելոյ զաշակերտսն | 239 | 1 |
| Վասն մատնութեանն Յիսուսի | 245 | 1 |

| | ԵՐԵՍ | ԷՋ |
|---|---|---|
| Վասն ուրացութեանն Պետրոսի, և հաւուն խօսելոյ | 246 | 1 |
| Վասն ածելոյն զՅիսուս ՚ի վանացն Կայիափայ | 247 | 1 |
| Վասն տանելոյն զՅիսուս ՚ի Գողգոթա | 249 | 2 |
| Վասն աւանդելոյն Յիսուսի զՀոգին | 250 | 2 |
| Վասն խնդրելոյն զՏէրութեական մարմինն | 251 | 1 |
| Վասն բերելոյն Նիկոդիմոսի զմուռս | 251 | 1 |
| Վասն գալոյ կանանցն ՚ի գերեզմանն | 251 | 2 |
| Վասն դրօքն փակելովք մնանելոյն Յիսուսի առ աշակերտսն | 252 | 2 |
| Վասն զԹովմաս հաստատելոյ Յհաւն | 253 | 1 |
| Վասն ուտելոյն ընդ նոսա, և հարցմանն զՊետրոս | 254 | 2 |
| Վասն սիրելւոյ աշակերտին, և գրելոյ զԱւետարանն | 255 | 1 |

Ս ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԻԵՏԱՐԱՆԻՉ



# Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

## ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա· Համար 1·

*Արբայ Ա՛ստուածին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու·*

*Ի Հօրէ լսեայ·*

ՍԿԶԲՈՒՆՔ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն. նա էր ի սկզբանէ առ Աստուած։ Ամենայն ինչ նովաւ եղեւ, և առանց նորա եղեւ և ոչինչ որ ինչ եղեւն։ Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան. եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղեւ հասու։ Եղեւ այր մի Առաքեալ Աստուծոյ, անուն նմա Յովհաննէս. սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ. ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։ Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ։ Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ։ Ի իւրան եկն, և իւրքն զնա ոչ ընկալան. իսկ որք ընկալան զնա, եա նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ՝ որոց

հաւատացեն Յովհաննու նորա. զի ոչ յարենէ և ոչ ի կամաց մարմնոյ, և ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։

Եւ Բանն մարմին եղեւ՝ և բնակեաց ի մեզ, և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ լի շնորհօք և ճշմարտութեամբ։

Յովհաննէս վկայեաց վասն նորա, աղաղակեաց և ասէ. Սա՛ է զորմէ ասէի՝ որ զկնի իմ գալոցն էր, առաջի իմ եղեւ, զի նախ քան զիս էր։

Զի ի լրութենէ անտի նորա՝ մեք ամենեքին առաք շնորհս՝ փոխանակ շնորհաց։

Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուաւն. շնորհք և ճշմարտութիւնն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն։

---

Յերկրորդում կիրակէի Երկոտասնեքի առաքելոց։

ԳԼՈՒԽ Ա. 18։

ԶՆոյն լուսոյ։

ԶԱստուած ոչ ոք երբէք եր բէք, բայց Միածինն Որդի՝ որ է ի ծոց Հօր՝ նա պատմեաց։

Եւ այս է վկայութիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին առ նա Հրեայքն Երուսաղէմէ քահանայս և Ղեւտացիս, զի հարցցեն զնա՝ Թէ դու ո՞ւս։ Եւ խոստովան եղեւ՝ և ոչ ուրացաւ. խոստովան եղեւ, Թէ ես ոչ եմ Քրիստոսն։

Եւ հարցին զնա. Իսկ ո՞վ ես դու. Եղիա՞ ես։

Եւ ասէ. Ո՛չ եմ։

Իսկ Մարգարէ՞ն ես դու. Պատասխանի ետ՝ Ո՛չ։

Իսկ ասա՛ մեզ՝ դու ո՞վ ես, զի պատասխանի տացուք՝ որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո։

Ասէ. Ես ձայն բարբառոյ յանապատի. ուղիղ արարէք զճանապարհ Տեառն, որպէս ասաց Եսայի մարգարէ։

Եւ որք առաքեցանն՝ ի փարիսեցւոց անտի էին. հարցին զնա և ասեն. Իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու չես Քրիստոսն, և ոչ Եղիա, և ոչ Մարգարէն։

Պատասխանի ետ նոցա Յովհաննէս և ասէ. Ես մկրտեմ զձեզ ջրով. ի միջի ձերում կայ՝ զոր դուքն ոչ գիտէք, որ զկնի իմ գալոց է, որ առաջի իմ եղեւ, որում չեմ արժան՝ եթէ լուծիկ զկօշկաց նորա։

Այս ի Բեթաբարա եղեւ յայնկոյս Յորդանանու, ուր էրն Յովհաննէս և մկրտէր։

ՅԵՐԿՈՒՈՂՈՒՄ ԱԲԱԿԱՅԻ ԵՐԿՔՍՐՔԱԹԻ ԱՒԱՐՆ։

ԳԼՈՒԽ Ա. 29։

Մկրտիչ Ցեղան մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս՝ զի գայր առ նա, և ասէ. Ահաւասիկ Գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի։

Սա է՝ վասն որոյ ես ասէի, զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղեւ, զի յառաջ իսկ էր քան զիս։

Եւ ես ոչ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իսրայելի՝ վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել։

Վկայեաց Յովհաննէս և ասէ, թէ տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի յերկնից, և հանգչէր ի վերայ նորա։

Եւ ես ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս. Ցոյր վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ և հանգչիցի ի վերայ նորա, նա է որ մկրտէ Հոգւովն Սրբով։

Եւ ես տեսի և վկայեցի եթէ սա է Որդին Աստուծոյ։

---

ՅԵՐԿՈՒՈՂՈՒՄ ԱԲԱԿԱՅԻ ԶՈՐՔՍՐՔԱԹԻ ԱՒԱՐՆ։

ԳԼՈՒԽ Ա. 35։

Մկրտիչ Ցեղան մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, և յաշակերտաց անտի նորա երկու. և նայեցեալ ընդ Յիսուսի՝ զի գնայր, և ասէ. Ահաւասիկ Քրիստոս Գառն Աստուծոյ։

Լուան ի նմանէ երկու աշակերտքն՝ զի խօսէր, և գնային զհետ Յիսուսի։

Իբրեւ դարձաւ Յիսուս, և եհաս զնոսա՝ զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա. Զի՞նչ խնդրէք։

Նոքա ասեն ցնա. Ռաբբի, որ թարգմանեալ կոչի՝ վարդապետ, ո՞ւր են օթեւանք քո։

Ասէ ցնոսա. Եկայք և տեսէք։ Եկին և տեսին՝ ուր էին օթեւանք նորա, և առ նմա ոգան այն օր, զի ժամ էր իբրեւ տասնեւերորդ։

Էր Անդրեաս՝ եղբայր Սիմովնի Պետրոսի՝ մի յերկուց անտի, որք լսեցին ի Յովհաննէ, և գնային զկնի նորա։

Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍիմովն, և ասէ ցնա. Գտաք

զՄեսիա՝ որ Թարգմանի Քրիստոս. սա էած զնա առ Յիսուս։ Հայեցեալ ընդ նա Յիսուս՝ ասէ. Դու ես Սիմոնէ որդի Յովնանու. դու կոչեսցիս Կեփաս, որ Թարգմանի Պետրոս։

---

Ցերկրորդում Նեեմիայի Հնգշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Ա. 43։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ՚ի Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս, և ասէ ցնա Յիսուս. Ե՛կ զկնի իմ։ Եւ էր Փիլիպպոս ՚ի Բեթսայիդայ, ՚ի քաղաքէ Անդրեայ և Պետրոսի։ Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ, և ասէ ցնա. Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն՝ և Մարգարէքն, գտաք զՅիսուս զորդի Յովսեփայ ՚ի Նազարեթէ։ Ասէ ցնա Նաթանայէլ. Իսկ ՚ի Նազարեթէ մարթ ինչ լինել բարւոյ իմիք լինիլ։ Ասէ ցնա Փիլիպպոս. Ե՛կ և տե՛ս։ Իբրեւ տես Յիսուս զՆաթանայէլ զկնի գայր առ նա, ասէ վասն նորա. Ահա արդարեւ Իսրայէլացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ։

Ասէ ցնա Նաթանայէլ. Ո՞րպէս ճանաչես զիս։ Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնա. Մինչեւ էր Փիլիպպոսի կոչել զքե՛զ զի էիր ՚ի ներքոյ թզենւոյն, տեսի զքե՛զ։ Պատասխանի եւ նմա Նաթանայէլ և ասէ. Ռաբբի, դու ես Որդի Աստուծոյ. Դու ես Թագաւորն Իսրայէլի։ Պատասխանի եւ նմա Յիսուս և ասէ. Փոխանակ զի ասացի քե՛զ Թէ տեսի ՚ի ներքոյ թզենւոյն՝ հաւատաս, մեծամեծ ըստ եւս քան զայս տեսցես։ Եւ ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ ձեզ, տեսանիցէք զերկինս բացեալ և զհրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն և իջանիցեն ՚ի վերայ Որդւոյ մարդոյ։

---

Ցերկրորդում Նեեմիայի Ուրբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Բ. 1։

Սկիզբն նշանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ՚ի Կանա գալիլեացւոց. և էր անդ մայրն Յիսուսի. կոչեցաւ և Յիսուս եւ աշակերտքն նորա ՚ի հարսանիսն։

Եւ ՚ի պակասել գինւոյն՝ ասէ

մայրն Յիսուս. Գինի ոչ ունին։

Եւ ասէ Յիսուս. Ձի՞ կայ իմ և քո, կին դու. չեւ է հասեալ ժամանակ իմ։

Ասէ մայրն նորա ցսպասաւորսն. Որ ինչ ասիցէ ձեզ արասջիք։

Անդ էին վեցկայք վէմք ջրով լեալք ըստ սրբութեանն Հրէից, տանէին մի մի ի նոցանէ մարս երկուս կամ երիս։

Ասէ Յիսուս. Լցէք ըզվեցկայսդ ջրով. և լցին զնոսա մինչեւ ի վեր։

Եւ ասէ ցնոսա. Առեք և բերէք տաճարապետիս. և նոքա բերին։

Եւ իբրեւ ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ. բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն, խօսի ընդ փեսային տաճարապետն՝ և ասէ. Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ. և յորժամ արբենան, յայնժամ զվատն. դու պահեցեր զանոյշ գինիդ մինչեւ ցայժմ։

Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս ի Կանա գալիլեացւոց, և յայտնեաց զփառս իւր. եւ հաւատացին ի նա աշակերտքն նորա։

Յերկրորդում Վերակի շաբաթի առաւօտ։

ԳԼՈՒԽ Բ. 12։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յետ այսորիկ էջ Յիսուս ի Կափառնաում, ինքն եւ մայր իւր և եղբարք իւր. և անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս։

Եւ էր մերձ զատիկն Հրէից, և էլ Յիսուս յԵրուսաղէմ։

Եւ եգիտ ի տաճարին՝ զվաճառէին զարջառս և զոչխարս եւ զաղաւնիս, եւ զըստմայափոխան՝ որք նստէին։

Եւ արար խարազան չուանեայ, և եհան զամենեսին ի տաճարէն՝ զոչխարան եւ զարջառս, և զդրամնձա հատուածառացն յերեսաց, և զսեղանսն կործանեաց. եւ որք զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ ասա, և մի առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վաճառի։

Ապա յիշեցին աշակերտքն նորա՝ թէ գրեալ է, Նախանձ տան քոյ կերիցէ զիս։

Պատասխանի ետուն Հրեայքն և ասեն ցնա. Ձի՞նչ նշան ցուցանես դու մեզ՝ զի զայդ առնես։

Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ջակեցէք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս կանգնեցից զդա։

Ասեն ցնա Հրեայքն. Ջքառասուն և վեց ամ շինեցաւ տաճարս այս. եւ դու զերիս աւուրս կանգնեսես զսա։

Բայց նա ասէր վասն տաճարի մարմնոյ իւրոյ։

Իսկ յորժամ յարեաւն ի մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա՝ թէ այս է՝ զոր ասացն. և հաւատացին գրոյն և բանին՝ զոր ասաց Յիսուս։

---

Ցերկրորդում Նիւսանի աւուրն։

ԳԼՈՒԽ Բ. 23։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ իբրեւ էր յԵրուսաղէմ ի զատկին տօնի, բազումք հաւատացին յանուն նորա. զի տեսանէին զնշանսն՝ զորս առնէր։

Բայց ինքն Յիսուս ոչ հաւատայր յանձն նոցա, քանզի ինքն գիտէր զամենայն. և զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ. զի ինքն իսկ գիտէր՝ զինչ կրէր ի մարդն։

Եւ էր այր մի ի փարիսեցւոց անտի՝ Նիկոդեմոս անուն նորա՝ իշխան Հրէից. սա եկն առ նա գիշերի և ասէ ցնա. Ռաբբի, գիտեմք եթէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել՝ զոր Դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա։

Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերըստին՝ ոչ կարէ տեսանել զԱքայութիւն Աստուծոյ։

Ասէ ցնա Նիկոդեմոս. Ջիա՞րդ կարէ մարդ ծնանիլ՝ որ ծեր իցէ. միթէ մարթի՞ երկրորդ անգրեն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանիլ։

Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ. Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յԱքայութիւն Աստուծոյ։

Զի ծնեալն ի մարմնոյ՝ մարմին է, եւ ծնեալն ի Հոգւոյ՝ Հոգի է։

Դու մի՛ զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանիլ վերստին. զի հովտ՝ ուր կամի շնչէ, և զձայն նորա լսես, այլ ոչ գիտես՝ ուստի գայ կամ յո՞ երթայ. սոյնպէս և ամենայն ծնեալն ի Հոգւոյն։

Պատասխանի եւ Նիկոդեմոս եւ ասէ ցնա. Զիա՞րդ մարթի այդմ լինիլ։

Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնա. Դու ես վարդապետ Իսրայէլի՝ եւ զայդ ո՞չ գիտես։

Ամէն ամէն ասեմ քեզ. զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, եւ զոր տեսաք՝ վկայեմք. և զվկայութիւն մեր ոչ ընդունիք։

Իսկ արդ եթէ զերկրաւորս ասացի ձեզ՝ և ոչ հաւատայք, զիա՞րդ եթէ զերկնաւորն ասացից՝ հաւատայցէք։

---

Յերրորդամ Նիսանի երկուշաբթի առաւն։

ԳԼՈՒԽ Գ. 13։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Եւ ոչ ոք եւ յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից՝ Որդի մարդոյ՝ որ էն յերկինս։

Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ. զի ամենայն, որ հաւատայ ի նա՝ ոչ կորիցէ, այլ ընկալցի զկեանն յաւիտեանական։

Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչեւ զՈրդին իւր Միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենական։

Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ։

Որ հաւատայ ի նա, ոչ դատապարտեսցի. և որ ոչ հաւատայ ի նա, արդէն իսկ դատապարտեալ է. զի ոչ հաւատաց յանուն Միածնի Որդւոյն Աստուծոյ։

Եւ այս իսկ է դատաստան. զի լոյս եկն յաշխարհ՝ և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեան։

Զի ամենայն որ զչար գործէ՝ ատէ զլոյս. եւ ոչ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա. իսկ որ առնէ ըստ ճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լինին գործք նորա՝ թէ Աստուծով գործեցան։

Յերդգամ Նիւսակի երէքշաբթի առաւն։

ԳԼՈՒԽ Գ. 22։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յետ այսորիկ ելին Յիսուս և աշակերտքն նորա յերկիրն Հրէաստանի, և անդ շրջեր նոքօք հանդերձ և մկրտէր։

Մկրտէր և Յովհաննէս ի Յայենովն՝ մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազումք էին անդ, և գային՝ և մկրտէին։

Զի չէր եւս էր արկեալ Յովհաննէս ի բանտ։

Եւ եղև խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէից վասն սրբութեան, եկին առ Յովհաննէս և ասեն ցնա. Ռաբբի, որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որումդ դուն վկայեցեր, ահաւասիկ նա մկրտէ՝ և ամենեքին գան առ նա։

Պատասխանի Յովհաննէս և ասէ. Ոչ կարէ մարդ առնել յանձնէ և ոչինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից ի վերուստ։

Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ չեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա։

Որ ունի զհարսն՝ նա է փեսայ, իսկ բարեկամ փեսային՝ որ կայ և լսէ նմա, ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. արդ այս ուրախութիւն որ իմ է, լցեալ է։

Նմա պարտ է աճիլ, եւ ինձ մեղմանալ։

Որ ի վերուստն գայ՝ ի վերոյ է բան զամենայն. որ յերկրէ ասի է, յերկրէ է՝ եւ յերկրէ խօսի։

Որ յերկինից գայ, զոր ինչ եւ աես և զոր լուաւ՝ վկայէ. և զվկայութիւն նորա ոչ ոք ընդունի։

Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է. զի զոր Աստուածն առաքեաց՝ զբանն Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին։

Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ետ ի ձեռս նորա։

Որ հաւատայ Որդի, ընդունի զկեանս յաւիտենական. եւ որ ոչն հնազանդի Որդւոյ՝ ոչ տեսցէ զկեանս, այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա։

---

Յերրորդամ կը բակի Զաքէոսթեի աւուրն։

ԳԼՈՒԽ Դ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Երբեմն դիտայ Յիսուս՝ եթէ լուան փարիսեցիքն՝ եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ, և մկրտէ քան զՅովհաննէս, քանզի ոչ եթէ Յիսուս ինքնին մկրտէր՝ այլ աշակերտքն նորա, եթող զՀրէաստան երկիր, և եկն միւսանգամ ի Գալիլեա։

Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա։

Գայ նա ի քաղաք մի սամարացւոյ՝ որում անուն էր Սիքար, մերձ ի գեօղն զոր ետ Յակովբ որդւոյ իւրում Յովսեփայ. և անդ էր աղբիւր մի Յակովբեայ։

Եւ Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն՝ նստեր ի վերայ աղբերն. և էր ժամ իբրեւ վեցերորդ։

Գայ կին մի ի Սամարեայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. Տուր ինձ ըմպել։

Զի աշակերտքն նորա երթեալ էին ի քաղաք անդր՝ զի կերակուր գնեսցեն։

Ասէ ցնա կինն Սամարացի. Դու որ հրեայդ ես, զիա՞րդ ինձ նէն ըմպել խնդրես ի կնոջէ Սամարացւոյ։

Զի ոչ երբէք խառնակին Հրեայք ընդ Սամարացիս։

Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Եթէ գիտէիր դու ընդպարգեւն Աստուծոյ, և ո՛վ է՝ որ ասէգ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել դու արդեօք խնդրէիր ի նմանէ՝ և տայր քեզ զջուրն կենդանի։

Ասէ ցնա կինն. Տէր, դու քանզի և դոյլ իսկ ոչ ունիս, և ջրհորս խոր է, իսկ արդ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի։

Մի՞թէ դու մեծ ինչ ո՞ր իցես քան զՀայրն մեր Յակովբ՝ որ զայս ջրհոր ետ մեզ, և ինքն ասաի էարբ՝ և որդիք նորա և խաշինք նորա։

Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Ամենայն, որ ըմպէ ի ջրոյ յայդմանէ՝ միւսանգամ ծարաւի. բայց որ ըմպէ ի ջրոյն, զոր ես տաց նմա, մի՛ ծարաւեսցի յաւիտեան. այլ ջուրն, զոր ես տաց նմա, եղիցի ի նմա աղբիւր ջրոյ բղխեցելոյ ի կեանն յաւիտենական։

Ասէ ցնա կինն. Տէր, տուր ինձ զջուրն զայն՝ զի մի՛ ծարաւե-

ցայց, և մի՛ եկից այսր հանել զնա։

Ասէ ցնա Յիսուս. Երթ կոչեա զայր քո՝ և եկ այսր։

Պատասխանի ետ նմա կինն և ասէ. Չկիք իմ այր։

Ասէ ցնա Յիսուս. Բարւոք ասացեր՝ թէ չկիք իմ այր. զի հինգ այր փոխեալ ես քո, եւ զոր այժմ ունիս՝ չէ քո այր. զայդ արդար ասացեր։

Ասէ ցնա կինն. Տէր, թուի ինձ թէ մարգարէ իցես դու. հարքն մեր՝ ի լերինս յայսմիկ երկիր պագին, և դուք ասէք՝ եթէ յԵրուսաղէմ եւ եթէ ոչ տեղի, ուր արժան իցէ երկիր պագանել։

Ասէ ցնա Յիսուս. Կին դու, հաւատա՛ ինձ, զի եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ի լերինս յայսմիկ, և ոչ յԵրուսաղէմ երկիր պագանիցէն Հօր։

Դուք երկիր պագանէք՝ որում ոչն գիտէք, մեք երկիր պագանեմք՝ որում գիտեմք, զի փրկութիւն ի հրեից է։

Այլ եկեսցէ ժամանակն և այժմ իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք երկիր պագանիցեն Հօր՝ հոգւով եւ ճշմարտութեամբ. քանզի և Հայր զայնպիսի երկրպագուս իւր խնդրէ։

Ցերրորդում Նեբակիի Հիգւաբոթի աւուրն։

ԳԼՈՒԽ Դ. 24։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Հոգի է Աստուած, և երկրը պագուացդ նորա՝ հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել։

Ասէ ցնա կինն, Գիտեմք՝ զի Մեսիա գայ՝ անուանեալն Քրիստոս. յորժամ եկեսցէ նա, պատմեսցէ մեզ զամենայն։

Ասէ ցնա Յիսուս. Ես եմ, որ խօսիմ ընդ քեզ։

Եւ յայնքան եկին աշակերտքն նորա, և զարմանային՝ զի ընդ կնոջն խօսէր. բայց ոչ ոք ասաց ի նմայնէ՝ թէ զինչ խնդրես, կամ զինչ խօսիս ընդ դմա։

Եթող կինն զսափոր իւր՝ և չորաւ ի քաղաքն, և ասէ ցմարդիկն. Եկայք, տեսէք զայր մի, որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ գործեալ է. միթէ նա իցէ Քրիստոսն։

Ելին ի քաղաքէն եւ գային առ նա։

Եւ մինչեւ եկեալ էին նոքա, աղաչէին զնա Աշակերտքն եւ ասէին. Ռաբբի, հայ կեր։

Նա ասէ ցնոսա. Ես կերակուր

ուՆիմ ուսել, զոր դուքն ոչ գիտէք։

Ասէին Աշակերտքն ընդ միմեանս. Միթէ եբեր ինչ ոք զմա ուտել։

Ասէ ցնոսա Յիսուս. Իմ կերակուր այն է՝ զի արարիչ կամս այնորիկ՝ որ առաքեացն զիս, և կատարեցից զգործն նորա։

Ո՞չ դուք ասէք՝ եթէ այլ եւս չորք ամիսք են՝ և հունձք գան. ահաւասիկ ես ասեմ ձեզ. ամբարձէք զաչս ձեր եւ տեսէք զարտորայսն՝ զի սպիտակացեալք են եւ ի հունձս հասեալք։

Եւ որ հնձէն՝ վարձս առնու, և ժողովէ զպտուղ ի կեանս յաւիտենականս. զի որ սերմանէն՝ և որ հնձէ՝ հասարակ ցնծասցեն։

Յայսմ իսկ է բանն ճշմարիտ. զի այլ է՝ որ սերմանէ, և այլ է՝ որ հնձէ։

Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ դուք վաստակեցիք. այլք վաստակեցին, և դուք ի վաստակս նոցա մտէք։

Եւ ի քաղաքէն յայնմանէ սամարացւոց բազումք հաւատացին ի նա, վասն բանի կնոջն վկայելոյ՝ եթէ ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ էր։

Իսկ իբրեւ եկին առ նա Սամարացիքն, ապաչէին զնա լինել առ նոսա. եւ եղեւ անդ աւուրս երկուս։

Եւ եւս բազումք հաւատացին ի նա վասն բանին նորա, և ասէին կնոջն, թէ ոչ այսուհետեւ վասն քո խօսիցդ հաւատամք. զի մեզէն իսկ լուաք ի դմանէ. և գիտեմք եթէ դա է Ճշմարիտ Փրկիչ աշխարհի։

---

Յերրորդում Խրատի Ուրբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Դ. 43։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ յետ երկուց աւուրց ել անտի եւ գնաց ի Գալիլեա։

Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝ եթէ Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։

Այլ յորժամ եկին նա ի Գալիլեա, ընկալան զնա Գալիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն նշանսն՝ զորս արար Երուսաղէմ ի տօնին. քանզի և նոքա եկեալ էին ի տօնն։

Եկն դարձեալ ի Կանա գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի. և անդ էր թագաւորացն մի, որոյ որդին հիւանդ կայր ի Կափառնաում։

Նա իբրեւ լուաւ, եթէ Յիսուս եկեալ է ի Հրէաստանէ ի Գալիլեա, եկն առ նա և աղաչէր՝ զի իջցէ եւ բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ի մեռանիլ։

Ասէ ցնա Յիսուս. եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք։

Ասէ ցնա հազարապետն. Տէր, էջ մինչեւ մեռանիլ իցէ մանուկն իմ։

Ասէ ցնա Յիսուս. երթ, որդին քո կենդանի է։

Եւ հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, և գնաց։

Եւ մինդեռ իջանէր, ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա, աւետիս ետուն և ասեն, թէ մանուկն նորա կենդանի է։

Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց. և ասեն ցնա. Երէկ յերկրորդ ժամուն եթող զնա ջերմն։

Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու, յորում ասացն ցնա Յիսուս՝ թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամենայն տունն իւր։

Զայս գործեալ երկրորդ նշան արար Յիսուս՝ եկեալ ի Հրէաստանէ ի Գալիլեա։

---

Ցերկրորդամ Աբաթին Շաբաթի առաքն։

## ԳԼՈՒԽ Ե. 1.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յետ այսորիկ ոմն էր Հրեից. և ել Յիսուս յԵրուսաղէմ։ Եւ էր յԵրուսաղէմ ի Պրոպատիկէ աւազանին՝ որ կոչի Եբրայեցերէն Բեթհեզդա, հինգ սրահ. յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որք ակն ունէին ջրոցն յուզելոյ։

Եւ Հրեշտակ Տեառն ըստ ժամանակի իջանէր յաւազանն և յուզէր զջուրն. և որ նախ ի չարժուսն ջուրցն իջանէր յաւազանն, բժշկիւր՝ ոչ ունելով զնչան հիւանդութեան։

Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն և ութ ամ էր ի հիւանդութեան իւրում. զնա իբրեւ ետես Յիսուս՝ զի անկեալ դնի՛ր, և գիտաց եթէ բազում ժամանակք են այնու հետեւ, ասէ ցնա. Կամի՞ ողջ լինիլ։

Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզեցին՝

արկէք զիս յաւազանն, և մինչ
ես գանգաղիմ, այլոք քան զիս
յառաջագոյն իջանէ։
Ասէ ցնա Յիսուս. Ա՛րի, առ
զմահիճս քո և գնա։
Եւ ողջացաւ այրն, և յարեաւ,
եառ զմահիճս իւր և շրջեր. և
էր շաբաթ յաւուրն յայնմիկ։
Ասեն Հրեայքն ցբժշկեալն.
շաբաթ է՝ և ոչ է արժան քեզ
առնուլ զմահիճս քո։
Պատասխանի ետ նոցա և ասէ.
Որ բժշկեացն զիս. Նա ասաց
ցիս՝ առ զմահիճս քո և գնա։
Հարցին ցնա և ասեն. Ո՞վ է
այրն, որ ասացն ցքեզ՝ առ ըզ-
մահիճս քո և շրջեաց։
Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ
ո՛վ իցէ. քանզի Յիսուս խոյս
ետ վասն ամբոխին՝ի տեղւոջէ
անտի։
Յետ այսորիկ գտանէ զնա Յի-
սուս՝ի տաճարին, և ասէ ցնա.
Ահաւադիկ ողջացար, մի՛ եւս
մեղանչէր՝ զի մի՛ չար եւս ինչ
լինիցի քեզ։
Գնաց այրն և պատմեաց Հրե-
ից, եթէ Յիսուս էր՝ որ բժըշ-
կեացն զնա։
Եւ վասն այնորիկ հալածէին
զՅիսուս Հրեայքն, զի զայն
առնէր՝ի շաբաթու։
Եւ Յիսուս պատասխանի ետ
նոցա. Հայր իմ մինչեւ ցայժմ
գործէ, և ես գործեմ։
Վասն այնորիկ առաւել խընդ-
րէին Հրեայքն սպանանել զնա,
զի ոչ միայն լուծանէր զշաբա-
թըս, այլ եւ Հայր իւր կոչէր
զԱստուած, և հաւասար առ-
նէր զանձն Աստուծոյ։

---

Ձորմորդւոյ Ալփաիէի աւետն։

ԳԼՈՒԽ Ե. 19։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Պատասխանի ետ Յիսուս և
ասէ ցնոսա. Ամէն ամէն
ասեմ ձեզ, ոչ կարէ Որդի մար-
դոյ առնել յանձնէ, և ոչ ինչ.
եթէ ոչ տեսանիցէ զՀայրն՝ զի
առնէ. զի զոր նայն առնէ, ըզ-
նայն և Որդին նմին նման գործէ։
Զի Հայր սիրէ զՈրդի, և զա-
մենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր
ինքն առնէ. և մեծամեծս եւս
քան զայնս ցուցանէ նմա ըզ-
գործս, ընդ որ դուքդ զար-
մանայք։
Զի որպէս Հայր յարուցանէ
զմեռեալս և կենդանի առնէ,
նայնպէս եւ Որդի՝ զոր կամի
կենդանի առնէ։
Եւ ոչ եթէ Հայր գատէ զոք,
այլ զամենայն գատաստան ետ

Որդւոյ իւրոյ, զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի՝ որպէս պատուեն զՀայրն. որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայրն՝ զառաքիչն նորա։

---

Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ՝ որ առաքեացն զիս, ընդունի զկեանան յաւիտենական. և ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս։

Ամէն ամէն ասեմ ձեզ զի գայ ժամանակ՝ եւ արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ, և որք լսիցեն՝ կեցցեն։

Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և Որդւոյ ունիլ կեանս յանձին իւրում։

Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել. և զի Որդի մարդոյ է, ընդ այն զի զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք ի գերեզմանս կացեն՝ լսիցեն ձայնի նորա, և եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց։

Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ. այլ որպէս լսեմ՝ դատեմ, և դատաստան իմ արդար է. զի ոչ խնգրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

---

Ձորրորդում Կիրակիէ Երկուշաբաթի առաւօտ։

ԳԼՈՒԽ Ե. 31։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Եթէ ես վկայեմ վասն անձին իմոյ, վկայութիւն իմ չէ ճշմարիտ. այլ է որ վկայէ վասն իմ. և դուք գիտէք՝ եթէ ճշմարիտ է վկայութիւնն՝ զոր վկայեաց վասն իմ։

Դուք առաքեցէք առ Յովհաննէս՝ եւ վկայեաց ճշմարտութեանն. այլ ես ոչ եթէ ի մարդկանէ առնում զվկայութիւն. այլ զայս ասեմ՝ զի դուք ապրեսջիք։

Նա էր ճրագն՝ որ լուսեալ էր և ծագէր, և դուք կամեցայք ցնծալ առ ժամանակ մի ի լոյս նորա։

Այլ ես ունիմ զվկայութիւն մեծ եւս քան զՅովհաննու, զի գործսն՝ զորս ետ ինձ Հայր, զի

կատարեցիք զնոսա, նոքին իսկ գործքն՝ զոր գործեմ՝ վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց զիս. և որ առաքեաց զիս Հայր՝ նա վկայեաց վասն իմ։

Ոչ ձայն նորա երբեք լուայք, եւ ոչ զտեսիլ նորա տեսիք։

Եւ ոչ զբան նորա ունիք ի ձեզ բնակեալ. զի զոր նա առաքեաց՝ դուք նմա ոչ հաւատայք։

Քննեցէք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունել զկեանն յաւիտենական. և նոքին իսկ են, որք վկայեն վասն իմ, ոչ թողք համարիք ունել կեանս. և դուք ոչ կամիք գալ առ իս՝ զի զկեանն ունիցիք։

Ես փառս ի մարդկանէ ոչ առնում. այլ գիտեմ զձեզ՝ թէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս։

Ես եկի յանուն Հօր իմոյ՝ և ոչ ընդունիք զիս, եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք։

Զիա՞րդ կարէք դուք հաւատալ, զի փառս ի միմեանց առնուք, և զփառս զառ ի միայն Աստուծոյ ոչ խնդրէք։

Մի՛ համարիք՝ եթէ ես չարախօս լինիմ զձեզ առ Հօր. գոյ՝ որ չարախօս կայ զձեզնջ՝ Մովսէս, յոր դուք յուսացեալ էք. զի եթէ հաւատայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեօք և ինձ. զի նա վասն իմ իսկ գրեաց։

Զի եթէ նորա գրոցն ոչ հաւատայք, զիա՞րդ իմոցս բանից հաւատայցէք։

---

Ձորրորդում կիրակէի երեքշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Զ. Ւ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն գալիլեացւոց Տիբերեայ, և զհետ երթայր նորա ժողովուրդ բազում. զի տեսանէին զնշանն՝ զոր առնէր ի վերայ հիւանդաց։

Ել ի լեառն Յիսուս, և անդ նստէր աշակերտօքն հանդերձ։

Եւ էր մերձ զատիկ՝ տօնն Հրեից։

Եբարձ ի վեր զաչս իւր Յիսուս, և տեսս՝ զի ժողովուրդ բազում գայր առ նա. ասէ ցՓիլիպպոս. Ուստի գնեսցուք հաց՝ զի կերիցեն դոքա։

Զայս ասէր փորձելով զնա. այլ ինքն գիտէր զինչ առնէր ընդ եր։

Պատասխանի եւ նմա Փիլիպպոս. Երկերիւր դահեկանի հայ՝ չէ դոյա բաւական, Թէպէտ եւ իւրաքանչիւր ոք սակաւ ինչ առնուցու։

Ասէ ցնա մի յաշակերտացն նորա, Անդրէաս՝ եղբայր Սիմոնեայ վիմի. Է աստ պատանեակ մի, որ ունի հինգ նկանակ գարեղէն՝ և երկուս ձկունա. այլ այն զինչ է առ այդչափ մարդիկ։

Ասէ Յիսուս. Բազմեցուցէք զմարդիկդ. Եւ էր խոտ յոյժ ի տեղւոջն. և բազմեցան մարդիկն Թուով իբրեւ հինգ հազար։

Եւ էառ զհացն Յիսուս, եւ գոհացաւ, և բաշխեաց բազմականացն. նոյնպէս և ի ձկանցն որչափ և կամեցան։

Եւ իբրեւ յագեցան, ասէ ցաշակերտան. Ժողովեցէք զնըշխարեալ կտորսդ՝ զի մի ինչ կորիցէ։

Ժողովեցին, և լցին երկոտասան սակաւի զկտորսցն ի հինգ գարեղէն նկանակէ անտի, որ յաւելաւ ի կերուղացն։

Իսկ մարդիկն իբրեւ տեսին զնշանան՝ զոր արար. ասէին, սա է ճշմարիտ Մարգարէն՝ որ գալոց է յաշխարհ։

Ընթերցուած ի Սիրա կի Ընթերցուածի աւուրն։

ԳԼՈՒԽ Զ. 15։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յիսուս իբրեւ գիտաց եթէ գալոց են յափշտակել զնա, զի արասցեն զնա Թագաւոր, գնաց դարձեալ՝ի լեառնն ինքն։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, իջին աշակերտքն նորա ի ծովն զրն։ Եւ մտեալ ի նաւ՝ գային կոյս ծովուն ի Կափառնաւում. և իբրեւ նսեմացաւ, և չեւ եւս եկեալ էր առ նոսա Յիսուս, և ծովն ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզիւր։

Եւ վարեալ իբրեւ ասպարէզս քան և հինգ կամ երեսուն, տեսանէին զՅիսուս զի գնայր ի վերայ ծովուն և մերձ էր ի նաւն, և զարհուրեցան յոյժ. Նա ասէ ցնոսա. Ես եմ, մի երկնչէք։

Եւ կամէին զնա ընդունել ի նաւն. եւ վազվազակի եհաս նաւն յերկիրն՝ յոր երթային։

Ջորջդաս Սիրակի Հիպչաբաթի առաքեալ։

## ԳԼՈՒԽ Զ. ՀԶ։

Ընդ առաւն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իվարիս անդր ժողովուրդն՝ որ կայր յայնկոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ ոչ գոյր անդ բայց ի միոյն՝ յոր մտին աշակերտքն Յիսուսի. եւ զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա գնացին. իբրեւ այլ նաւք գային ի Տիբերեայ մօտ յայն տեղի՝ ուր զհացն կերին։

Իսկ իբրեւ տեսաւ ժողովուրդն՝ եթէ Յիսուս չէ անդ՝ եւ ոչ աշակերտքն նորա, առին նոքա գնաւան, և եկին ի Կափառնաւում խնդրել զՅիսուս։

Եւ իբրեւ գտին զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա. Ռաբբի, ե՞րբ եկիր այսր։

Պատասխանի եւ նոցա Յիսուս և ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ. խնդրէք զիս, իբր ոչ եթէ զնշանս ինչ տեսիք, այլ զի կերիք ի հացէ անտի և յագեցարուք։

Երթայք, գործեցէք՝ մի զկոտրատական կերակուրն, այլ զկերակուրն՝ որ մնայ ի կեանսն յաւիտենական, զոր Որդին մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Աստուած։

Ասեն ցնա. Զի՞նչ առնիցեմք՝ զի գործան Աստուծոյ գործեացուք։

Պատասխանի եւ ցնոսա Յիսուս, և ասէ. Այս է գործն Աստուծոյ, զի հաւատասջիք յայն՝ զոր առաքեացն նա։

Ասեն ցնա. Զի՞նչ նշանս առնիցես՝ զի տեսցուք և հաւատասցուք. զի՞նչ գործիցես։

Հարքն մեր կերին զմանանայն յանապատի անդ, որպէս և գրեալ է՝ Հաց յերկնից ետ նոցա ուտել։

Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից, այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ։

Զի հաց Աստուծոյ է, որ իջանէ յերկնից և կեանս տայ աշխարհի։

Ասեն ցնա. Տէր, յամենայն ժամ տուր մեզ զհացն զայն։

Ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ հացն կենաց. որ գայ առ ի՝ ոչ քաղցիցի, և որ հաւատայ ի՝ ոչ երբեք ծարաւեսցի։

Այլ ասացի ձեզ՝ թէ տեսանէք զիս, և ոչ հաւատայք։

Զամենայն՝ զոր տայ ինձ Հայր՝ առ իս եկեսցէ. և որ գայ առ իս՝ ոչ հանիցէ արտաքս։ Զի իջեւ եմ յերկնից՝ ոչ զի ըզկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

---

Ձորդզուամ Սիրակեի Ներքաթի առաքն։

ԳԼՈՒԽ Զ. 39։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ա՛յս են կամք Հօր իմոյ՝ որ առաքեացն զիս, զի զամենայն՝ զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ի՛նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնում։ Ա՛յս են կամք Հօր իմոյ, զի ամենայն՝ որ տեսանիցէ զՈրդի՛ եւ հաւատայ ի՛նա, ընկալցի զկեանսն յաւիտենական. և ես յարուցից զնա յաւուրն յետնում։

Տրտնջէին զնմանէ Հրեայքն, զի ասաց՝ Ես եմ Հայն իջեալ յերկնից, և ասէին. Ո՞չ սա է Յիսուս որդին Յովսէփ, զորոյ մեք գիտեմք զՀայրն եւ զմայրն. իսկ արդ՝ զիա՞րդ ասէ՝ Ես յերկնից իջի։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Մի՛ քրթմնջէք ընդմիմեանս. ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա. և ես յարուցից զնա յաւուրն յետնում։

Գրեալ է ի մարգարէս. Եւ ե՛ղիցին ամենեքեան ուսեալք Աստուծոյ. ամենայն որ լսէ ի Հօրէ՝ և ուսանի, գայ առ իս. իբրեւ ոչ եթէ զՀայր ուրուք տեսեալ իցէ, եթէ ոչ՝ որ էն Աստուծոյ՝ նա տեսս զՀայր։ Ա՛մէն ամէն ասեմ ձեզ. զի որ հաւատայ յիս, ընդունի զկեանսն յաւիտենականս։

---

Ես եմ հացն կենաց։ Հարքն ձեր կերին զմանանայն յանապատին՝ և մեռան։ Ա՛յս է հացն՝ որ յերկնից իջեալ է. զի որ ուտիցէ զի՛ս սմանէ՝ մի՛ մեռանիցի. Ես եմ հացն կենդանի՝ որ յերկնից իջեալ. եթէ որ ուտիցէ ի՛ հացէ յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան. և հացն, զոր ես տայց՝ մարմին իմ է, զոր ես տայց վասն կենաց աշխարհի։

Մ՛արտնջէին ընդ միմեանս Հրեայքն և ասէին. Զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր ուտել։

Ասե ցնոսա Յիսուս. Ամէն ա-
մէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիք
զմարմին Որդւոյ մարդոյ՝
եւ արբջիք զարիւն նորա, ոչ
ունիք կեանս յանձինս:

Որ ուտէ զմարմին իմ՝ և լմպէ
զԱրիւն իմ, ունի զկեանս յա-
ւիտենական. և ես յարուցից
զնա յաւուրն յետնում:

Զի Մարմին իմ ճշմարիտ կերա-
կուր է, և Արիւն իմ՝ ճշմարիտ
ըմպելի է:

Որ ուտէ զմարմին իմ, և լմպէ
զԱրիւն իմ, յիս բնակեսցի, և
ես՝ ի նմա:

Որպէս առաքեաց զիս կենդա-
նին Հայր, և ես կենդանի եմ
վասն Հօր. և որ ուտէն զիս, և
նա կեցցէ վասն իմ:

Այս է հացն՝ որ յերկնից ի-
ջեալ. ոչ որպէս կերին հարքն
ձեր զմանանայն և մեռան. որ
ուտէ զհացս զայս՝ կեցցէ յա-
ւիտեան:

Զայս ասաց ի ժողովրդեանն՝
յուսուցանելն ի Կափառնա-
ում:

Եւ բազումք յաշակերտացն
իբրեւ լուան՝ ասէին. Խիստ է
բանդ այդ. ո՞ կարէ լսել զմա:

Իբրեւ գիտաց Յիսուս յանձն
իւր՝ եթէ տրտնջեն վասն այ-
նորիկ աշակերտքն իւր, ասէ
ցնոսա. Ա՞յդ գայթակղեցու-
ցանէ զձեզ:

Իսկ արդ եթէ տեսանիցէք
զՈրդի մարդոյ՝ զի ելանիցէ
ուր էր զառաջինն:

---

Հոգին է կենդանարար. մար-
մին ինչ ոչ օգնէ. զբանս զոր
ես խօսեցայ ընդ ձեզ՝ Հոգի է
և կեանք. այլ են ոմանք ի ձէնջ՝
որք ոչ հաւատան:

Գիտէր գիտեր Յիսուս ի սկզբ-
բանէ, զի են այնոքիկ՝ որ ոչն
հաւատան, եւ զի այն է՝ որ
մատնելոցն է զնա:

Եւ ասէր. Վասն այնորիկ ա-
սացի ձեզ՝ թէ ոչ ոք կարէ
գալ առ իս, եթէ ոչ իցէ տը-
ւեալ նմա ի Հօրէ իմմէ:

Յայսմանէ բազումք յաշակեր-
տացն նորա չոգան յետս, եւ
ոչ եւս ընդ նմա:

Ասէ Յիսուս ցերկոտասան ա-
շակերտսն. Միթէ և դուք կա-
միք երթալ:

Պատասխանի ետ նմա Սիմովն
Պետրոս. Տէր, առ ո՞վ երթի-
ցուք. բանս կենաց յաւիտե-
նականաց ունիս. և մեք հաւա-
տացաք և ծանեաք՝ եթէ դու
ես Քրիստոսն Որդի Աստուծոյ:
Պատասխանի ետ նոցա Յի-

սուս. Ո՞չ ես զձեզ ընտրեցի, և միւդ ի ձէնջ սատանայ է։

Եւ ասէր զՍիմովնէ՛ն Յուդայէ Իսկարիովտացւոյ. զի նա իսկ մատնելոց էր զնա. և մի էր յերկոտասանիցն։

---

Ընթերցուած Վարդավառի շաբաթի առաւօտն։

ԳԼՈՒԽ Ը. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յետ այսորիկ չորեր Յիսուս ի Գալիլեա. քանզի ոչ կամէր ի Հրեաստանի չորել, զի խնդրէին զնա Հրեայքն սպանանել։

Եւ էր մերձ տօնն Հրեից տաղաւարահարաց։

Ասեն ցնա եղբարքն նորա. Գնա աստի և երթ ի Հրեաստան, զի և աշակերտքն քո տեսցեն զգործսդ քո՝ զորս գործես. զի ոչ ոք է որ ի ծածուկ ինչ գործէ՝ և խնդրէ ինքն համարձակ լինիլ. եթէ զայդ գործես, յայտնեա՛ զանձն քո աշխարհի։ Քանզի և եղբարքն իսկ չէին հաւատացեալ ի նա։

Ասէ ցնոսա Յիսուս. ժամանակ իմ չեւ է հասեալ. բայց ձեր ժամանակ յամենայն ժամս պատրաստ է։

Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց զիս ատէ, զի ես վկայեմ վասն նորա՝ եթէ գործքն իւր չարասիրեան են։

Դուք երթայք ի տօնն յայն, ես ոչ երթամ ի տօնն յայն. զի իմ ժամանակ չեւ է լեալ։

Զայս իբրեւ ասաց՝ ինքն մնաց անդէն ի Գալիլեա. իբրեւ եղեն եղբարքն նորա, ապա եւ ինքն ել ի տօնն, ոչ յայտնի՝ այլ իբրեւ ի ծածուկ։

Եւ Հրեայքն խնդրէին զնա ի տօնի անդ և ասէին. Ո՞ր իցէ նա։

Եւ բրիմիջիւն էր զնմանէ ի ժողովուրդն. կէսքն ասէին՝ թէ բարւոք է. այլքն ասէին՝ ոչ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն։

Եւ ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ՝ վասն երկիւղին Հրեից։

---

Ընթերցուած Վարդավառի առաւօտն։

ԳԼՈՒԽ Ը. 14։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Իբրեւ տօնն կէս միջեցաւ, ել Յիսուս ի տաճարն և ուսուցանէր։

Զարմանային Հրեայքն և ասէին. Զիա՞րդ զգիս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չիք։

Պատասխանի ետ Նոցա Յիսուս և ասէ. Իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս. եթէ ոք կամի ըզկամս նորա առնել, գիտասցէ վասն վարդապետութեանս՝ Աստուծոյ իցէ արդեօք, եւ թէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ։

Որ յանձնէ իւրմէ խօսի փառս անձին իւրում խնդրէ. իսկ որ խնդրէ զփառս այնորիկ՝ որ առաքեացն զնա, նա ճշմարիտ է, եւ անիրաւութիւն ոչ գոյ ի նմա։

Ո՞չ Մովսէս ետ ձեզ զօրէնսն, և ոչ ոք ի ձէնջ առնէ զօրէնսն. զի՞ խնդրէք զիս սպանանել։

Պատասխանի ետ ժողովուրդն եւ ասէ. Դեւ գոյ ի քեզ. ո՞վ խնդրէ զքեզ սպանանել։

Պատասխանի ետ Նոցա Յիսուս և ասէ. Գործ մի գործեցի, և ամենեքին զարմացեալ էք. վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ ըզթլփատութիւն. զի ոչ եթէ ի Մովսիսէ էր, այլ ի հարց անտի. և ի շաբաթու թլփատէք զմարդ։

Իսկ արդ եթէ զթլփատութիւն առնու մարդ ի շաբաթու, զի մի՛ օրէնքն Մովսիսի լուծցին, ընդ իս յասուցեալ էք՝ զի զողջոյն իսկ մարդ բըժշկեցի ի շաբաթու։

---

Հինգերորդում Կիրակէի երկուշաբթի առաւօտն։

ԳԼՈՒԽ Է. 24։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Մի՛ ըստ աչս դատէք, այլ ուղիղ դատաստան արարէք։

Ասեին ոմանք Երուսաղեմացւոց անտի. ո՞չ նա է սա՝ զոր խորհէին սպանանել. եւ աւասիկ յայտնապէս խօսի, և չասեն ինչ ընդ դմա. գուցէ արդեօք և իշխանքն գիտացին՝ թէ սա է Քրիստոս։

Սակայն զսա գիտեմք ուստի է. իսկ Քրիստոս յորժամ գայցէ, ոչ ոք գիտէ ուստի է։

Աղաղակեաց Յիսուս ի տաճարին, ուսուցանէր և ասէր. Եւ զիս գիտէք, և ուստի եմ գիտէք. և ես ձեզ ոչ եմ եկեալ, այլ է ճշմարիտ՝ որ առաքեացն զիս՝ զոր դուքն ոչ գիտէք. Ես գիտեմ զնա. զի ի նմանէ իսկ եմ, եւ նա առաքեաց զիս։

Ընդրեին զնա ունել, և ել ի ձեռաց նոցա. և ոչ ոք արկ ի նա ձեռն, զի չէր էր հասեալ ժամ նորա։

Եւ բազում ի ժողովրդենէն հաւատացին ի նա, և ասէին. Քրիստոսն յորժամ գայցէ՝ միթէ աւելի ինչ նշանս առնիցէ քան զոր սայս առնէ։

Եւ լուան փարիսեցիքն զսոքա տունջ ժողովրդեանն զնմանէ. և առաքեցին քահանայապետքն և փարիսեցիքն սպասաւորս՝ զի կալցին զՅիսուս։

Ասէ Յիսուս. Փոքր մի եւս ժամանակ ընդ ձեզ եմ. և երթամ առ այն՝ որ առաքեացն զիս։

Խնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք. և ուր եան երթամ՝ դուք ոչ կարէք գալ։

Ասեն Հրեայքն ընդ միմեանս. Իսկ յո՞ երթայցէ դա՝ զի մեք ոչ գտանիցեմք զդա. միթէ ի սփիւռս հեթանոսաց երթայցէ՝ և ուսուցանիցէ զհեթանոսս. զինչ է բանն այն՝ զոր ասաց. խնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք. եւ ուր եան երթամ՝ դուք ոչ կարիցէք գալ

---

Հինգերորդամ Կիրակէի Երեքշաբաթի աւուրն։

ԳԼՈՒԽ Է. 37։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ի վերջնումն աւուր մեծի տոնին կայր Յիսուս՝ աղաղակէր և ասէր. Եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս և արբցէ. որ հաւատայ յիս՝ որպէս ասեն գիրք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան։

Զայս ասէր վասն Հոգւոյն՝ զոր ընդունելոց էին որք հաւատային ի նա. զի չեւ էր Հոգի, քանզի Յիսուս չեւ էր փառաւորեալ։

Ոմանք ի ժողովրդենէն իբրեւ լսէին զբանս զայս՝ ասէին. Սա է ճշմարիտ Մարգարէն. այլքն ասէին՝ Սա է Քրիստոսն։

Իսկ կէսքն ասէին՝ Միթէ ի Գալիլէէ գալոց իցէ Քրիստոսն. ոչ գիրք ասեն, եթէ ի զաւակէ Դաւթի, և ի Բեթղեհեմ գեղջէ՝ ուր Դաւիթն էր, գալոց է Քրիստոս։

Եւ եղեւ հերձուած ի ժողովրդեանն վասն նորա։

Եւ ոմանք ի նոցանէ կամեցան ունիլ զնա. այլ ոչ ոք մերձեաց ի նա ձեռս։

Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահանայապետսն և փարիսեցիս, և ասեն սոքա ցնոսա. Ընդէր ոչ ածէք զնա այսր։ Պատասխանիետուն սպասաւորքն և ասեն. Ոչ երբէք այնպէս խօսեցաւ մարդ՝ որպէս այրն այն։

Պատասխանի Թոմաս փարիսեցիքն և ասեն. Միթէ և դուք մոլորեցա՞ք. միթէ յիշխանացն ոք հաւատա՞ց ՚ի նա՝ կամ ՚ի փարիսեցւոց. այլ այն խաժամուժ ամբոխ՝ որ ոչ գիտէ զօրէնս, և նզովեալք են։

Ասէ Նիկոդեմոս ցնոսա, որ եկեալն էր առ նա գիշերի յառաջագոյն՝ և մի էր ՚ի նոցանէ. միթէ օրէնքն մեր դատե՞ն զմարդ՝ եթէ ոչ լսեն ինչ նախ ՚ի նմանէ, կամ գիտեն զինչ գործէ։

Պատասխանի Թոմաս նմա և ասեն. Միթէ և դու եւս գալիլեացի՞ ես. քննեա՛ եւ տե՛ս, զի Մարգարէ ՚ի Գալիլէէ ոչ յառնէ։

Եւ գնացին իւրաքանչիւր որ ՚ի տեղի իւր։

---

Իսկ Յիսուս գնաց ՚ի լեառն Ձիթենեաց. և ընդ առաւօտան դարձեալ եկն ՚ի տաճարն, եւ գայր առ նա ամենայն ժողովուրդն, և ուսուցանէր զնոսա։

Ածին գպիրքն և փարիսեցիք կին մի ըմբռնեալ ՚ի շնութեան. և կացուցեալ զնա առաջի՝ ասեն. Վինա այս ըմբռնեալ՝ ինքն յայտնապէս չնացեալ է. և յօրէնսն Մովսէս մեզ պատուիրեաց զայսպիսիս քարկոծել. արդ՝ դու զի՞նչ ասես վասն դորա։

Զայս ասէին փորձելով զնա, զի ունիցին ամբաստանութիւն զնմանէ. իսկ Յիսուս ՚ի խոնարհ նայեալ գրէր մատամբն յերկիր։

Իսկ իբրեւ ստիպեցին հարցանելով զնա, հայեցեալ ՚ի վեր՝ ասէ ցնոսա. Անմեղն ՚ի ձէնջ՝ նախ նա ընկեցսէ քար ՚ի վերայ դորա։

Եւ դարձեալ ՚ի խոնարհ նայեալ՝ գրէր յերկիր։

Եւ լուեալ՝ ելանէին մի ըստ միոջէ՝ սկսեալ յառաջնոցն մինչ չեւ ՚ի վերջինն, և մնաց միայն Յիսուս, և կինն կայր առաջի նորա։

Պատասխանի Թոմաս Յիսուս եւ ասէ ցնա. Կի՛ն դու, ո՞ւր են, ոչ ոք զքեզ դատապարտեաց։

Եւ ասէ. Ոչ, Տէր։

Եւ ասէ Յիսուս. Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ. երթ, յայսմհետէ մի՛ մեղանչեր։

---

Հինգերորդում Ախաւկի Ջաքեւսեանի աւետ.

ԳԼՈՒԽ Ը. 12.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Դարձեալ խօսեցաւ ընդ նա Յիսուս, և ասէ. Ես եմ լոյս աշխարհի. որ զիս ընդ իս, ընդ խաւար մի գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց:

Ասեն ցնա փարիսեցիքն. Դու վասն անձին քո վկայես, եւ վկայութիւն քո չէ ճշմարիտ:

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Թէպէտ ես վկայեմ վասն անձին իմոյ, վկայութիւն իմ ճշմարիտ է, զի գիտեմ ուստի եկի եւ յո՛ երթամ. բայց դուք ոչ գիտէք ուստի գամ՝ կամ յո՛ երթամ:

Դուք ըստ մարմնոյ դատէք. ես ոչ դատեմ և ոչ ոքի. Թէ պէտ և դատեմ ես զոք, դատաստանն իմ ճշմարիտ է. զի չեմ միայն, այլ ես՝ և որ առաքեացն զիս Հայր:

Եւ յօրէնսն իսկ ձեր գրեալ է, Թէ երկուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է. Ես եմ՝ որ վկայեմ վասն իմ, և վկայէ վասն իմ՝ որ առաքեացն զիս Հայր:

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ոչ զիս գիտէք՝ և ոչ զՀայրն իմ. եթէ զիս գիտէիք, եւ զՀայրն իմ Թերեւս գիտէիք:

Զայս բան խօսեցաւ Յիսուս ի տան գանձին, յօրժամ ուսուցանէր ի տաճարի անդ. և ոչ ոք կալաւ զնա, զի չէր եւս հասեալ ժամ նորա:

---

Հինգերորդում Ախաւկի Հինգշաբթի աւետ.

ԳԼՈՒԽ Ը. 21.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս. Ես երթամ, եւ խնդրիցէք զիս, և ի մեղս ձեր վեռանիցիք. զի ուր եան երթամ՝ դուք ոչ կարէք գալ:

Ասէին Հրեայքն. Միթէ զիւրովին երթայցէ, զի ասէ՝ Թէ ուր եան երթամ՝ դուք ոչ կարէք գալ:

Եւ ասէ ցնոսա. Դուք ի ներքուստ աստի էք, և ես ի վերուստ անտի եմ. դուք յաշխարհէ աստի էք, ես չեմ յայսմ աշխարհէ:

Բայց ասացի ձեզ՝ Թէ ի մեղս ձեր վեռանիցիք. զի Թէ ոչ հաւատայցէք Թէ ես եմ, մեռանիցիք ի մեղս ձեր:

Ասեն ցնա. Դու ՚ի՞մ ես։ Ասէ ցնոսա Յիսուս. Նախ՝ զի եւ խօսիմ իակ ընդ ձեզ. բազում ինչ ունիմ վասն ձեր խօսիլ և դատել. այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ է. և ես զոր լուայ ՚ի նմանէ, զայն խօսիմ յաշխարհի։

Եւ ոչ գիտացին՝ թէ զՀօրէ ասէր ցնոսա։

Ասէ ցնոսա Յիսուս. Յորժամ բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ, յայնժամ գիտասջիք՝ եթէ Ես եմ. և յանձնէ իմմէ ինչ ոչ առնեմ, այլ որպէս ուսոյց զիս Հայրն իմ՝ զայն խօսիմ. եւ որ առաքեացն զիս՝ ընդ իս է. ոչ եթող զիս միայն, զի ես զՀաճոյս նորա առնեմ հանապազ։

Իբրեւ զայն խօսեցաւ՝ բազումք հաւատացին ՚ի նա։

---

Հինգերորդում Խրակէի ընթերցի առաքն։

ԳԼՈՒԽ Ը. 31։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ասէր Յիսուս առ Հրեայսն հաւատացեալս. Եթէ դուք կացջիք ՚ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք. եւ ծանիջիք զճշմարտութիւն, եւ ճշմարտութիւն ազատեսցէ զձեզ։

Պատասխանի ետուն նմա եւ ասեն. Զաւակ Աբրահամու եմք, և ոչ ումեք երբէք ծառայեցաք. զիա՞րդ ասես եթէ ազատք լինիջիք։

Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ամենայն որ առնէ զմեղս, ծառայ է մեղայ։

Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ ՚ի տան, իսկ Որդին յաւիտեան կայ. իսկ արդ՝ եթէ Որդին զձեզ ազատեցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք։

Գիտեմ զի զաւակ Աբրահամու էք, այլ խնդրէք սպանանել զիս, զի բանին իմոյ չէք տեղի ՚ի ձեզ։

Ես՝ զոր տեսի առ Հօր իմում՝ խօսիմ. և դուք՝ զոր լուարուք ՚ի հօրէն ձերմէ՝ առնէք։

Պատասխանի ետուն նմա եւ ասեն. Հայր մեր Աբրահամ է։

Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ որդիք Աբրահամու էիք, զգործսն Աբրահամու գործէիք. այլ այժմ խնդրէք սպանանել զիս, զայր մի՝ որ ձեզ զճշմարտութիւն խօսեցայ՝ զոր լուայ ՚ի Հօրէ իմմէ. զայդ Աբրահամ

ոչ արար. դուք առնէք զգործս հօրն ձերոյ։

Ասեն ցնա. Մեք ի պոռնկու- թենէ չեմք ծնեալ. մի է հայր մեր, Աստուած։

Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ Աս- տուած էր հայր ձեր, սիրէիք արդեօք զիս. զի ես ԱՀստու- ծոյ ելի եւ եկի. եւ ոչ եթէ յանձնէ ինչ եկի, այլ նա ա- ռաքեաց զիս։

Ընդէր զխօսս իմ ոչ գիտէք դուք. վասն զի՝ ոչ կարէք լսել զբանն իմ։

Դուք ի հօրէ ի սատանայէ էք, և զցանկութիւն հօրն ձերոյ կամիք առնել. զի նա մարդա- սպան էր ի սկզբանէ, և ի ճըշ- մարտութեան ոչ եկաց, զի ոչ գոյ ճշմարտութիւն ի նմա. յորժամ խօսիցի սուտ՝ յիւրոյ անտի խօսի. զի սուտ է եւ հայր նորա։

Իսկ ես՝ զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ հաւատայք ինձ։

Ո՞ ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց. եթէ զճշմարիտն ասեմ՝ ընդէր ոչ հաւատայք ինձ։

Որ էն ԱՀստուծոյ՝ զբանս Աս- տուծոյ լսէ. եւ դուք վասն այնորիկ ոչ լսէք, զի չէք ԱՀս- տուծոյ։

Պատասխանի ետուն Հրէայքն և ասեն ցնա. Ոչ բարւոք ա- սեմք մեք՝ եթէ Սամարացի ես դու, և դեւ գոյ ի քեզ։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ցիս դեւ ոչ գոյ, այլ պա- տուեմ զՀայր իմ, և դուք ա- նարգէք զիս. ես ոչ խնդրեմ զփառս իմ, է որ խնդրէն՝ և դատէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ որ զբանն իմ պահեսցէ՝ զմահ մի՛ տեսցէ՛ ի յաւիտեան։

Ասեն ցնա Հրէայքն. Արդ գի- տացաք եթէ դեւ գոյ ի քեզ. Աբրահամ մեռաւ և Մարգա- րէքն, և դու ասես՝ եթէ որ զբանն իմ պահեսցէ, մի՛ ճա- շակեսցէ զմահ ի յաւիտեան։

Մի՞թէ դու մեծ ինչ ոք իցես քան զՀայրն մեր Աբրահամ որ մեռաւ, եւ Մարգարէքն մեռան. արդ դու զո՞ տառնես զքեզ։

Պատասխանի ետ Յիսուս. Ե- թէ ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ ոչինչ են. է Հայր՝ որ փառաւորէ զիս, զորմէ դուքն ասէք՝ թէ Աստուած մեր է, և ոչ ճանաչէք զնա։

Բայց ես գիտեմ զնա. և թէ ասեմ՝ թէ ոչ գիտեմ զնա, ձեզ նման սուտ լինիմ. այլ ես

գիտեմ զնա, եւ զբան նորա պահեմ։

Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօրն իմ, եւ տես եւ ուրախ եղեւ։

Ասեն ցնա Հրեայքն. Ցիսուն ամ չեւ եւս է քո, եւ զԱբրահամ տեսեր։

Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ. յառաջ քան զլինիլն Աբրահամու եմ ես։

Վերցուին քարինս՝ զի արկցեն ի վերայ նորա, եւ Յիսուս խոյս ետ, եւ ելեալ գնաց ի տաճարէ անտի։

---

Հինգերորդումն Վարակի Շաբաթի առաւօտն։

ԳԼՈՒԽ Թ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մինչդեռ անցանէր՝ եւ տես այր մի կոյր ի ծնէ. և հարցին ցնա աշակերտքն նորա և ասեն. Ռաբբի, ո՞վր մեղաս է, սորա՞ թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնեալ։

Պատասխանի ետ Յիսուս. Ոչ դորա մեղաս է, և ոչ հօր և մօր իւրոյ. այլ զի յայտնի լինիցին գործքն Աստուծոյ ի նմա։

Եւ ինձ պարտ է գործել զգործս նորա որ առաքեացն զիս՝ մինչ օր կայ. գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել. մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի։

Զայս իբրեւ ասաց, եթող ի գետին և արար կաւ ի թքոյն, և ծեփեաց զկաւն ի վերայ աչաց կուրին, և ասէ ցնա. Երթ լուա յաւազանին Սելովմայ, որ թարգմանի առաքեալ. երգաւ լուացաւ, եկն եւ տեսանէր։

Իսկ դրացիքն և որոց տեսեալն էր զնա յառաջագոյն՝ եթէ մուրացիկ էր, ասէին. Ոչ սա էր՝ որ նստէր և մուրանայր։

Կէսքն ասէին, Նա է. այլքն ասէին՝ ոչ, այլ նման է նմա եւ ինքն ասէր՝ թէ ես եմ։

Ասեն ցնա. Իսկ զիա՞րդ բացան աչք քո։

Նա ետ պատասխանի. Այր մի որում Յիսուս ասեն, կաւ արար և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս. Երթ ի Սելովամ եւ լուա. երգայ լուացայ՝ և տեսանեմ։

Ասեն ցնա. Ո՞ւր է նա։

Ասէ ցնոսա. Ոչ գիտեմ։

Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն էր. և էր շաբաթ յորժամ զկաւն արար Յիսուս, և եբաց զաչս կուրին։

Դարձեալ հարցանէին զնա

փարիսեցիքն, Թէ զինքդ տե-
սանեմ։

Եւ նա ասէ ցնոսա. Կաւ եդ
ի վերայ աչաց իմոց, և լուա-
ցայ՝ և տեսանեմ։

Ասեն ոմանք ի փարիսեցւոցն.
Ոչ է այրն այն Աստուածոյ, զի
զշաբաթս ոչ պահէ։

Ելեալք ասէին. Իսկ զինքդ կա-
րէ մարդ մեղաւոր այսպիսի
նշանս առնել։

Եւ էին հերձուածք ի մէջ
նոցա։

Ասեն դարձեալ կուրին. դու
զի՞ ասես վասն նորա՝ զի եբաց
զաչս քո։

Եւ նա ասէ՝ Թէ Մարգարէ է։

Եւ ոչ հաւատային Հրեայքն
զնմանէ եթէ կոյր էր՝ և բացաւ,
մինչեւ կոչեցին զծնողս բացե-
լոյն, հարցին ցնոսա և ասեն.
Սո՞ւ որդին ձեր, զորմէ դուքն
ասէիք՝ Թէ կոյր ծնաւ. արդ
զինքդ տեսանէ։

Պատասխանի ետուն նոցա ծնո-
ղքն նորա և ասեն. Գիտեմք՝
զի սա է որդին մեր, և զի կոյր
ծնաւ. բայց զինքդ այժմ տե-
սանէ՝ ոչ գիտեմք, կամ Թէ
ո՛վ եբաց զաչս դորա, մեք ոչ
գիտեմք. ցդա իսկ հարցէք,
ինքնին ի չափ հասեալ է, ինքն
իսկ խօսեսցի վասն իւր։

Զայս ասացին ծնողքն նորա,
զի երկնչէին ի Հրեից. քան-
զի ուխտ եդեալ էր Հրէից,
եթէ ոք խոստովանեսցի զնա
Քրիստոս՝ ի բաց կացցէ ի ա-
ղաւղեհնէն. վասն այնորիկ ա-
սացին ծնողքն նորա, եթէ
ինքնին ի չափ հասեալ է, ցնա
իսկ հարցէք։

Դարձեալ կրկին անգամ կոչե-
ցին զայրն՝ որ կոյր էր, և ա-
սեն ցնա. Տո՛ւր փառս Աստու-
ծոյ. մեք գիտեմք՝ զի այրն այն
մեղաւոր է։

Եւ նա ասէ. Թէ մեղաւոր ի-
նչ՝ ես ոչ գիտեմ. բայց զայս
գիտեմ՝ զի կոյր էի և արդ տե-
սանեմ։

Դարձեալ ասեն ցնա. Զի՞նչ
արար քեզ, զիարդ եբաց զաչս
քո։

Պատասխանի ետ նոցա. Ա՛յժմ
ասացի ձեզ՝ և ոչ լուայք. զի՞
կամիք միւսանգամ լսել. մի-
Թէ եւ դուք կամիք աշակեր-
տիլ նմա։

Նզովքս հայհոյեին զնա և ասէ-
ին. Դու լինիր նորա աշակերտ,
մեք Մովսիսի աշակերտք եմք.
մեք գիտեմք՝ զի ընդ Մովսիսի
խօսեցաւ Աստուած, զսա ոչ
գիտեմք ուստի իցէ։

Պատասխանի ետ այրն և ասէ

ցնոսա. Ա՛յդ խակ են սքանչելքը. զի դուք ոչ գիտէք ուստի իցէ, և զիմ գաչս եբաց։ Գիտեմք զի Աստուած մեզաւորաց ոչ լսէ. բայց եթէ աստուածապաշտ որ իցէ, և զկամս նորա առնիցէ՝ նմա լսէ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց որ զաչս կուրի՝ ի ծնէ կոյր ծնեցելոյ. եթէ ոչ Աստուածոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ։ Պատասխանի ետուն և ասեն ցնա. Ի մեղս իակ ծնեալ ես ամենեքին, և դու վարդապետ լինիս մեր. Եւ հանին զնա արտաքս։

Լուաւ Յիսուս եթէ հանին զնա արտաքս, և իբրեւ եգիտ զնա՝ ասէ ցնա. Դու հաւատաս Որդի Աստուծոյ։ Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, ո՞վ է՝ զի հաւատացից ի նա։ Ասէ ցնա Յիսուս. Եւ տեսեր զնա, եւ որ խօսիդ ընդ քեզ՝ նա է։ Եւ նա ասէ. Հաւատամ, Տէր։ Եւ երկիր եպագ նմա։

---

Վերադարձ նախկին առթին։

## ԳԼՈՒԽ Թ. 39։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ասէ Յիսուս. Ի դատաստան ես կին յաշխարհս այս, զի որք ոչն տեսանեն՝ տեսցեն. և որք տեսանեննն՝ կուրասցին։ Լուան ոմանք ի փարիսեցւոցն՝ որք ընդ նմա էին, և ասեն ցնա. Միթէ և մեք կո՞յրք իցեմք։ Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ կոյրք էիք, ոչ էր ձեր մեղք. բայց արդ ասէք՝ եթէ տեսանեմք, եւ մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են։

Ամէն ամէն ասեմ ձեզ. Որ ոչ մտանէ ընդ դուռն ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ ելանէ, նա գողէ և աւազակ։ Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց. նմա դունապանն բանայ, և ոչխարքն ձայնի նորա լսեն. և զիւր զոչխարան կոչէ յանուանէ, և հանէ զնոսա։

Եւ յորժամ զիւրն զամենայն հանիցէ, առաջի նոցա երթայ, եւ ոչխարքն զհետ նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա. զօտարի զհետ ոչ երթիցեն,

այլ փախիցեն ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն օտարաց։

Զայս առակ ասաց Նոցա Յիսուս, և նոքա ոչ գիտէին՝ ե՛թէ զինչ էր՝ որ խօսէրն ընդ նոսա։

Դարձեալ ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, ես եմ դուռն ոչխարաց։

Ամենեքեան՝ որք յառաջ քան զիս եկին՝ գողք էին և աւազակք, այլ ոչ լուան նոցա ոչխարքն։

Ես եմ դուռն, ընդ իս ե՛թէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ և ելցէ, և ճարակ գտցէ։

Գող ոչ գայ՝ ե՛թէ ոչ զի գողասցի և սպանցէ և կորուսցէ. ես եկի զի կեանս ունիցին, և առաւել եւս ունիցին։

---

Վերծերգում Կիւրակէի երկուշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ Ժ԰. 11։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։

Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն՝ զի գայ. թողու զոչխարան և փախչի. և գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ. քանզի վարձկան է, և չէ փոյթ նմա վասն ոչխարացն։

Ես եմ հովիւն քաջ, և ճանաչեմ զիմն և ճանաչիմ յիմոցն։

Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր. և զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց։

Եւ՝ այլ եւս ոչխարք են իմ, որք ոչ են յայսմ գաւթէ, եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լսիցեն, և եղիցին մի հօտ՝ և մի հովիւ։

Վասն այնորիկ սիրէ զիս Հայր իմ, զի ես դնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից զնա։

Ոչ ոք հանէ զնա յինէն. այլ ես դնեմ զնա անձամբ իմով. իշխանութիւն ունիմ դնել զնա, և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս պատուէր առի ի Հօրէ իմմէ։

Դարձեալ հերձուած լինէր ի մէջ Հրեից վասն բանիցս այսոցիկ։

Եւ ասէին բազումք ի նոցանէ. դեւ դոյ ի նմա և մոլեգնի, զի՞ բնաւ լսէք նմա։

Ակնարկ ասէին այսպիսի բանիք ոչ են դիւահարի. միթէ դեւ կարէ՞ զաչս կուրի բանալ։

---

Վ. Եպիփրոպոսմ Նիւթակի երէքշաբթի առաւօտ։

ԳԼՈՒԽ Ժ. 22։

Ի ժամանակի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եղեն յայնժամ նաւակատիքն Երուսաղէմ, եւ ձմեռն էր։ Եւ շրջէր Յիսուս ի տաճարին՝ ի սրահին Սաղոմոնի։ Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն եւ ասեն. Մինչեւ երբ թա՞փես զոգիս մեր, եթէ դու ես Քրիստոսն՝ ասա՛ մեզ համարձակ։ Պատասխանի ետ ցնոսա Յիսուս եւ ասէ. Ասացի ձեզ՝ եւ ոչ հաւատայք ինձ. զգործսն՝ զորս ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն իմ։ Այլ դուք ոչ հաւատայք, զի չէք յոչխարաց անտի իմոց։ Զձայնըս իմ ձայնի իմում լսեն, եւ ես ճանաչեմ զնոսա, եւ զինի իմ գան. եւ ես տամ նոցա կեանս յաւիտենականս, եւ մի՛ կորիցեն ի յաւիտեան, եւ մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց։ Հայր իմ՝ որ ետ ինձ զնոսա, մեծ է քան զամենայն, եւ ոչ ոք կարէ յափշտակել ի ձեռաց Հօր իմոյ։ Ես եւ Հայր իմ՝ միք եմք։ Ա՛յժմ առին հրեայքն՝ զի քարկոծ արասցեն զնա։ Պատասխանի ետ նոցա Յիսուս. բազում գործս բարիս ցուցի ձեզ ի Հօրէ իմմէ, վասն որո՞յ գործոյ ի նոցանէ քարկոծ առնէք զիս։ Պատասխանի ետուն նմա հրեայքն. վասն բարւոք գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ, այլ վասն հայհոյութեան. եւ զի դու մարդ ես, եւ զանձն քո Աստուած առնես։ Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ յօրէնսն ձեր գրեալ է. Ես ասացի թէ աստուածք իցէք. իսկ եթէ զնոսա Աստուածս ասէ՝ առ որս բանն Աստուծոյ եղեւ, եւ չէ մարթի եղծանիլ գրոյն, իսկ զոր Հայր սրբեաց՝ եւ առաքեաց յաշխարհս, դուք ասէք՝ թէ հայհոյես, զի ասացի՝ թէ Որդի Աստուծոյ եմ։ Եթէ ոչ ծործեմ զգործս Հօր իմոյ, մի՛ հաւատայք ինձ. ապա թէ գործեմ, թէ եւ ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք. զի գիտասջիք եւ ծանիջիք՝ եթէ Հայր իս է, եւ ես ի Հայր։

Դարձեալ խնդրեին զնա ուր նիլ, և ել՝ի ձեռաց նոցա։ Եւ գնաց միւսանգամ յայն կոյս Յորդանանու՝ ՚ի տեղին՝ ուր էր Յովհաննէս զառաջինն և մկրտէր, և անդ լինէր։ Եկին բազումք առ նա և ասեն. Զի Յովհաննէս նշան ինչ ոչ արար. բայց զամենայն զոր ասաց Յովհաննէս վասն նորա՝ ճշմարիտ էր. և բազումք հաւատացին ՚ի նա անդ։

---

Վերջերագոյն նախադէպ Ջուխջաթաի աւուն։

ԳԼՈՒԽ ԺԱ. 1։

Վասն փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ՚ի Բեթանիա, ՚ի գեղէ Մարեմայ եւ Մարթայի քեռն նորա։ Այս այն Մարիամ էր՝ որ էօծ զՏէրն իւղով, և ընդհատ զոտս նորա հերով իւրով, որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր։ Առաքեցին առ նա քորքն նորա և ասեն. Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է։ Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ. Այն հիւանդութիւն չէ ՚ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ, զի փառաւորի Որդի Աստուծոյ այնուհետեւ։ Եւ սիրէր Յիսուս զՄարիամ՝ եւ զՄարթա զքոյր նորա՝ եւ զՂազար։ Իբրեւ լուաւ՝ թէ հիւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս։ Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք միւսանգամ ՚ի Հրէաստան։ Ասեն ցնա աշակերտքն. Ռաբբի, այժմ եւս խնդրեին զքեզ Հրեայքն քարկոծ առնել, եւ դարձեալ երթաս անդրէն։ Պատասխանի ետ Յիսուս. Ոչ երկոտասան ժամ է աւուր. եթէ որ գնայ ՚ի տուընջեան՝ ոչ գայթակղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ. ապա թէ որ գնայ գիշերի՝ գայթակղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա։ Զայս իբրեւ ասաց, յետ այսորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ՝ զի զարթուցից զնա։ Ասեն ցնա աշակերտքն. Տէր, եթէ ննջեաց՝ ապա ապրի։ Այլ Յիսուս վասն մահուն նորա ասէր. նոցա այսպէս թուեցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյն ասէր։ Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս

յայտնապէս։ Ղազարոս մե-
ռաւ. և ես ուրախ եմ վասն
ձեր, զի դուք հաւատայջիք
ինձ, զի ես չէի անդ. բայց արդ՝
եկայք երթիցուք առ նա։

Ասէ Թովմաս՝ անուանեալն եր-
կուորեակ՝ ցաշակերտակիցսն.
Ո՛ն, եկայք և մեք՝ զի ընդ նմա
մեռցուք։

Եկն Յիսուս՝ և եգիտ զնա չո-
րեքօրեայ՝ի գերեզմանի։

Եւ էր Բեթանիա մերձ յԵ-
րուսաղէմ իբրեւ ասպարիսօք
հնգետասան. բազումք՝ի Հր-
րեից անտի եկեալ էին առ
Մարթա և Մարիամ, զի մխի-
թարեսցեն զնոսա վասն եղ-
բօրն։

Մարթա իբրեւ լուաւ՝ թէ
Յիսուս գայ, ընդ առաջ գնաց
նորա. բայց Մարիամ նստեր
անդէն՝ի տան։

Ասէ Մարթա ցՅիսուս. Տէր,
եթէ աստ լեալ էիր, եղբայրն
իմ չէր մեռեալ. այլ և արդ գի-
տեմ, եթէ զոր ինչ խնդրես-
ցես յԱստուծոյ՝ տացէ քեզ
Աստուած։

Ասէ ցնա Յիսուս. Յարիցէ եղ-
բայրն քո։

Ասէ ցնա Մարթա. Գիտեմ զի
յարիցէ՝ի յարութեան՝ յա-
ւուրն յետնումն։

Ասէ ցնա Յիսուս. Ես իսկ եմ
յարու թիւն և կեանք. որ հա-
ւատայ յիս, թէպէտ և մեռա-
նի՝ կեցցէ. և ամենայն որ կեն-
դանի է՝ և հաւատայ յիս, մի՛
մեռցի՝ի յաւիտեան. հաւա-
տա՞ց այսմիկ։

Ասէ ցնա. Ա՛յո, Տէր, ես հա-
ւատացի՝ եթէ դու ես Քրիս-
տոսն Որդի Աստուծոյ, որ յաշ-
խարհ գալոց էիր։

Եւ զայս իբրեւ ասաց, գնաց
եւ կոչեաց զՄարիամ զքոյր
իւր լռելեայն՝ և ասէ. Վար-
դապետն եկեալ է եւ կոչէ
զքեզ։

Նա իբրեւ լուաւ, յարեաւ
վազվազակի, և եկն առ նա։
Զեւ եւս էր եկեալ Յիսուս՝ի
գեօղն, այլ էր անդէն՝ի տեղ-
ւոջն՝ ուր ընդառաջ եղեւ նմա
Մարթա։

Իսկ Հրեայքն որք էին ընդ նմա
՝ի տան անդ և մխիթարէին զ-
նա, իբրեւ տեսին զՄարիամ՝
թէ յարեաւ վազվազակի եւ
գնաց, գնացին և նորա զհետ
նորա. համարէին թէ՝ի գե-
րեզմանն երթայ՝ զի լացցէ
անդ։

Իսկ Մարիամ իբրեւ եկն ուր
էրն Յիսուս՝ և տեսս զնա, անկ
առ ոտս նորա և ասէ. Տէր,

եթէ ասա էիր դիպեալ, ոչէր մեռեալ եղբայրն իմ։
Յիսուս իբրեւ ետես զնա լայր, եւ որք ընդ նմայն էին Հրեայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրեւ զայրացեալ, և ասէ. Ո՞ւր եդիք զնա։
Ասեն ցնա. Տէր, եկ և տես։
Եւ արտասուեաց Յիսուս։
Ասէին Հրեայքն. Տես էր, որ չափ սիրէր զնա։
Ոմանք ի նոցանէ ասէին. Ո՞չ կարէր սա, որ եբաց զաչս կուրին, առնել՝ զի եւ սա մի՛ մեռցի։
Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ ի դերեզմանն. և էր այր մի, և վէմ մի եդեալ ի վերայ նորա։
Եւ ասէ Յիսուս. Իբաց արարջիք զվէմդ։
Ասէ ցնա Մարթա՝ քոյր մեռելոյն. Տէր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է։
Ասէ ցնա Յիսուս. Ո՞չ ասացի քեզ՝ եթէ հաւատասցես, տեսցես փառս Աստուծոյ։
Եւ իբրև ի վեր առին զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր ի վեր. և ասէ. Հայր, գոհանամ զքեզ, զի լուար ինձ, և ես գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ. այլ վասն ժողովրդեանս՝ որք շուրջ կան՝ առնեմ, զի հաւատասցեն՝ թէ դու առաքեցեր զիս։
Զայս իբրև ասաց, ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ. Ղազարէ, արի՛ եկ արտաքս։
Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք, և ձեռօքն երիզապղեօք եւ երեսօքն վարշամակապատօք. և ասէ ցնոսա Յիսուս. Լուծէք զդա եւ թողէք երթալ։
Բազումք ի Հրեից՝ որք եկեալ էին առ Մարեմանս, իբրեւ տեսին՝ զոր արարն՝ հաւատացին ի նա։
Եւ ոմանք ի նոցանէ գնացին առ Փարիսեցիս, և պատմեցին նոցա՝ զոր արարն Յիսուս։

---

Վերծանեցաւ Ա. Երեքշաբթի առաւօտ։

## ԳԼՈՒԽ ԺԱ. 47։

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ժողովեցան քահանայապետքն եւ փարիսեցիքն յատեան, եւ ասեն. Զի՞նչ ապրեցուք, զի այրն այն բազում նշանս առնէ. եթէ թողցուք զնա այնպէս, ամենեքին հաւատասցեն ի նա. և գայ

ցեն Հռոմէք՝ եւ բառնայցեն զազգս մեր եւ զտեղի։

Մի ոմն ի նոցանէ՝ անուն Կայիափա, որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա. Դուք ոչ ինչ գիտէք, եւ ոչ բնաւ խորհիլ իսկ, թէ լաւ է մեզ՝ զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս, և մի՛ ամենայն ազգս կորիցէ։

Զայս ոչ յանձնէ ինչ ասայ. այլ զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ՝ եթէ մեռանելոց էր Յիսուս ի վերայ ազգին, և ոչ ի վերայ ազգին միայն, այլ զի եւ զորդիսն Աստուծոյ զբոլոսն ժողովեսցէ ի մի։ Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի սպանցեն զնա։

Եւ Յիսուս այնուհետեւ ոչ եթէ համարձակ շրջէր ի մէջ Հրեից. այլ գնաց անտի յերկիր մի՝ որ մերձ էր յանապատ, ի քաղաք մի՝ որում անուն էր Եփրայիմ, և անդ լինէր աշակերտօքն հանդերձ։

---

Վեցերորդումն ի բակէն Շաբաթի առաւօտն։

ԳԼՈՒԽ ԺԱ. 55.

Ի ժամանակի ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր մերձ զատիկն Հրեից, և բազումք ելին յերուսաղէմ ի գաւառէ անտի յառաջագոյն քան զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց։ Խնդրէին զՅիսուս, և ասէին ընդ միմեանս՝ մինչ կային ի տաճարին. Զիա՞րդ թուի ձեզ՝ եթէ ոչ գայցէ ի տօն այսր։ Պատուէր տուեալ էր քահանայապետին և փարիսեցւոց, զի թէ որ գիտասցէ՝ թէ ուր է, գուշակեսցէ զնմանէ՝ զի կալցին զնա։

---

Իսկ Յիսուս վեց աւուրբք յառաջ քան զզատիկն՝ եկն ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյցն ի մեռելոց։

Եւ արարին անդ նմա ընթրիս, և ի սպասու կայր Մարթա, և Ղազար մի էր ի բազմելոց ընդ նմա։

Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ նարդեան աղնւոյ մե-

ծագնոյ, էօծ զոտան Յիսուսի, և հերով իւրով մաքրէր զոտս նորա, և տուն լի եղեւ ի հոտ իւղոյն։

Այս է մի ոմն յաշակերտաց անտի՝ Յուդա Իսկարիովտացի, որ մատնելոց էր զնա. Ընդէր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր դենարի, եւ տուաւ աղքատաց։

Զայս ասաց՝ ոչ զի զաղքատաց ինչ փոյթ էր նմա, այլ զի գող էր, և զարկղն ինքն ուներ, և որ ինչ անկանէրն՝ նա կրէր։

Այս Յիսուս. Թոյլ տուք զմա, զի յօրն պատանաց իմոց պահեացէ զայդ։

Զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք, զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։

Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում՝ ի Հրէից թէ անդ է՝ եկին, ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի եւ զԼազար տեսցեն, զոր յարոյցն ի մեռելոց։

Խորհուրդ արարին քահանայապետքն՝ զի և զԼազար սպանցեն. քանզի բազումք ի Հրէից երթային և հաւատային ի Յիսուս։

—

Եօթներրորդամ Ապրակէլ աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԲ. 12։

Վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում՝ որ եկեալ էր ի տօնն, իբրեւ լուան թէ գայ Յիսուս Երուսաղէմ, առին ոստս արմաւենեաց՝ եւ ելին ընդ առաջ նորա, աղաղակէին և ասէին. Ովսաննա, Օրհնեալ որ գայ յանուն Տեառն, թագաւորդ Իսրայելի։

Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ ի վերայ նորա, որպէս եւ գրեալ է. Մի երկնչիր, դստեր Սիովնի, ահա՛ թագաւորդ քո գայ՝ նստեալ ի վերայ յաւանակի իշոյ։

Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նորա զառաջինն. այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայնժամ յիշեցին՝ եթէ այն էր՝ որ գրեալն էր վասն նորա, և զայն արարին նմա։

Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ նմա, թէ զԼազար կոչեաց և եհ ի գերեզմանէն, և յարոյց զնա ի մեռելոց. և վասն այնորիկ ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդն, զի լուան՝

եթէ զայն նշանս արարեալ էր Նորա։

Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. Տեսանէ՞ք զի ոչինչ օգտիք, ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի Նորա գնաց։

Էին անդ ոմանք և հեթանոսք յելելոցն անդր, զի երկիրպագանիցեն ի տօնին։

Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ ի Բեթսայիդայ գալիլեացւոցն էր, աղաչէին զնա եւ ասէին. Տէր, կամիմք զՅիսուս տեսանել։

Գայ Փիլիպպոս և ասէ ցԱնդրեաս. Անդրեաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս։

Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա և ասէ. Եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ։

---

Եօթներորդում Վարակէի երկուշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԲ. 24։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հատն ցորենոյ անկանիլ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։

Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա, և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։

Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. եւ ուր եան եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։

---

Եօթներորդում Վարակէի երեքշաբաթի առաւն։

ԳԼՈՒԽ ԺԲ. 27։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Բայց այժմ անձն իմ խռովեալ է. և զինչ ասացից՝ եթէ Հայր ապրեցո՛ զիս ի ժամէ աստի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ես ի ժամս յայս։ Հայր, փառաւորեա՛ զանուն քո։

Եկն բարբառ յերկնից. Եւ փառաւոր արարի, եւ դարձեալ փառաւոր արարից։

Եւ ժողովուրդն՝ որ կայր եւ լսէր, ասէին՝ որոտումն լինիլ կէսքն ասէին, Հրեշտակ խօսեցաւ ընդ նմա։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր։

Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ, այժմիկ իշխան

աշխարհիս այսորիկ՝ ընկեցի արտաքս. և ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ ի՛ս։

Զայս ասէր՝ նշանակեալ՝ թէ որով մահու մեռանելոց իցէ։ Պատասխանի ետ նմա Ժողովուրդն. Մեք լուաք յօրինացն Եղիէ Քրիստոսն յաւիտեանս կայ, և դու զիա՞րդ ասես՝ եթէ պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ. ո՞վ է այն Որդին մարդոյ։

Ասէ ցնոսա Յիսուս. Փոքր միւս եւս ժամանակ լոյս ընդ ձեզ է. գնացէ՛ք մինչդեռ լոյսն ունիք, զի մի՛ խաւար ձեզ հասցէ. զի որ գնայ ի՛ խաւարի, ոչ գիտէ յո՛ երթայ. մինչդեռ լոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէ՛ք ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք։

Զայս խօսեցաւ Յիսուս, եւ չոգաւ թաքեաւ ի նոցանէ։

Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա, և նոքա ոչ հաւատային ի նա. զի լցցի բանն Եսայեայ մարգարէի՝ զոր ասացն. Տէր, ո՞ հաւատաց ի լուր մեր, և բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ։

Վասն այնորիկ ոչ կարէին հաւատալ ի նա, զի միւսանգամ ասէ Եսայի, Թէ կուրացոյց զաչս նոցա, և ապշեցոյց զսիրտս նոցա. զի մի՛ տեսցեն աչօք, և խմացին սրտիւք, և դարձցին և բժշկեցից զնոսա։

Զայս ասաց Եսայի՝ յորժամ ետես զփառսն նորա, եւ խօսեցաւ վասն նորա։

Բայց սակայն եւ յիշխանաց անտի բազումք հաւատացին ի նա. այլ վասն փարիսեցւոցն ոչ յայտնէին, զի մի՛ ի ժողովրդենէն ելանիցեն։

Քանզի սիրեցին զփառս մարդկան՝ առաւել քան զփառսն Աստուծոյ։

---

Եօթներորդում Ավետիք Ջուխչաթլի աւարն։

ԳԼՈՒԽ ԺԲ. 44։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ Յիսուս աղաղակեր եւ ասէր. Որ հաւատայ յի՛ս՝ ոչ հաւատայ յի՛ս, այլ յայն՝ որ առաքեացն զիս. և որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ որ առաքեացն զիս։

Ես լոյս՝ յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յի՛ս՝ ի խաւարի մի՛ մնասցէ։

Եւ եթէ որ լուիցէ բանից իմոց՝ և ոչ պահեսցէ, ես ոչ դատեմ զնա. քանզի ոչ եկի՝ թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ։

Որ անարգէ զնա՝ և ոչ ընդու-
նի զբանս իմ, գոյ՝ որ դատի
զնա. բանն՝ զոր ես խօսեցայ,
նա դատէ զնա յաւուրն յե-
տնում. զի ես յանձնէ իմմէ ոչ
խօսեցայ, այլ որ առաքեացն
զիս Հայր, նա ետ ինձ պա-
տուէր՝ զինչ ասացից և զինչ
խօսեցայց։

Եւ գիտեմ՝ թէ պատուէրն
այն կեանք են յաւիտենականք.
արդ՝ զոր ես խօսիմ, որպէս
ասաց ինձ Հայրն, այնպէս խո-
սիմ։

—

Նօթեներդումն Աբրահէ Հեղշաթեի աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԳ. 1։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յառաջագոյն քան զտօնն
զատկի գիտաց Յիսուս՝
թէ հասեալ է ժամ նորա՝ զի
փոխեսցի յաշխարհէ աստի առ
Հայր. սիրեաց զիւրսն՝ որք յաշ-
խարհի աստ են. խոպառ սի-
րեաց զնոսա։

Եւ՝ի լինիլ ընթրեացն, սատա-
նայի իսկ արկեալ էր՝ի սիրտ՝
զի մատնեսցէ զնա՝ Յուդայ Սի-
մոնի Խակարիովտացւոյ։
Գիտաց Յիսուս՝ զի զամենայն
ինչ ետ Հայր՝ի ձեռս նորա,
և թէ յԱստուծոյ ել՝ և առ
Աստուած երթայ. յառնէ
յընթրեացն անտի, և դնէ զգ-
հանդերձեան, եւ առեալ զեն-
ջակ մի՝ սփածաւ. և ապա ա-
ռեալ ջուր՝ արկ՝ի կոնք, եւ
սկսաւ լուանալ զոտս Աշակեր-
տացն, եւ սրբէր զենջակաւն՝
զոր սփածեալն էր։

Գայ առ Սիմովն Պետրոս. և
նա ասէ ցնա. Տէր, դու զիմ
զոտս լուանաս։

Պատասխանի ետ նմա Յիսուս
և ասէ. Զոր ինչ ես գործեմ,
դու այժմ ոչ գիտես, բայց
ապա գիտասջիր։

Ասէ ցնա Պետրոս. Ոչ լուաս-
ցես զոտս իմ յաւիտեան։
Պատասխանի ետ նմա Յիսուս.
Եթէ ոչ լուացից զքեզ, ոչ
ունիս ընդ իս մասն։

Ասէ ցնա Սիմովն Պետրոս.
Տէր, մի միայն զոտս իմ, այլ և
զձեռս և զգլուխ։

Ասէ ցնա Յիսուս. Լուացեալն
չէ ինչ պիտոյ, բայց զի
զոտն լուանայցէ. քանզի ա-
մենեւին սուրբ է. եւ դուք
սուրբ էք, այլ ոչ ամենեքին։
Զի գիտէր զայն՝ որ մատնե-
լոցն էր զնա, վասն այնորիկ
ասաց՝ թէ ոչ ամենեքին սուրբ
էք։

Եւ յորժամ լուաց զոտս նո-
ցա, էառ զհանդերձան իւր՝ և
դարձեալ բազմեցաւ, և ասէ
ցնոսա. Գիտէ՞ք զինչ արարի զ-
ձեզ։
Դուք կոչէք զիս վարդապետ
եւ Տէր, եւ բարւոք առնէք,
քանզի եմ իսկ։
Իսկ արդ՝ եթէ ես լուացի
զոտս ձեր՝ Տէրս եւ վարդա-
պետս, և դուք պարտիք զմի-
մեանց զոտս լուանալ. զի օրի-
նակ մի ետու ես ձեզ, զի որ-
պէս ես ձեզ արարի, և դուք
առնիջիք։

---

Նօթ Նեղոդոսի Ախթակեի Ուրբաթի աւուրն։

ԳԼՈՒԽ ԺԳ. 16։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ
է ծառայ մեծ քան զտէր
իւր, և ոչ առաքեալ մեծ քան
զայն՝ որ առաքեացն ընդ։
Եթէ զայս գիտէք, երանելի
եւ էք՝ եթէ առնիցէք զայս։
Ոչ վասն ամենեցուն ձեր ա-
սեմ, զի ես գիտեմ՝ զորս ընտ-
րեցի. այլ զի լցցի գիրն, թէ
որ ուտէր ընդ իս հաց՝ արար
ինձ խաբէութիւն։
Յայսմհետէ իսկ ասեմ ձեզ՝
մինչեւ եղեալ, զի յորժամ լի-
նիցի՝ հաւատասջիք թէ Ես եմ։
Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ըն-
դունի՝ զոր ոք ես առաքեցից՝
զիս ընդունի. եւ որ զիս ըն-
դունի՝ ընդունի զայն՝ որ ա-
ռաքեացն զիս։
Զայս իբրեւ ասաց Յիսուս,
խռովեցաւ յոգի իւր, վկայեաց
և ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ,
զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է
զիս։
Հայէին ընդ միմեանս աշա-
կերտքն տարակուսեալք, թէ
զոմմէ՞ ասիցէ։
Եւ էր մի ոմն յաշակերտացն
բազմեալ առ Յիսուսիւ՝ զոր
սիրէրն Յիսուս. ակնարկէ նմա
Սիմոնէն Պետրոս հարցանել՝ ո՞վ
իցէ՝ վասն որոյ ասէն։
Եւ նա անկեալ զանջքն Յի-
սուսի՝ ասէ ցնա. Տէր, ո՞վ է։
Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ. Ա՛յն է՝ որումն ես թա-
ցիկ զպատառն և տայց։
Եւ թացեալ զպատառն՝ տայ
Յուդայի Իսկարիովտացւոյ. և
յետ պատառոյն՝ ապա եմուտ
ի նա սատանայ։
Եւ ասէ ցնա Յիսուս. Արդ
զոր ինչ առնելոց ես՝ արա՛ վաղ-
վաղակի։
Եւ զայս ոչ ոք ի ժամա՛ն բազ-

մականայ անոի՝ Թէ առ ինչ ասայ ցնա . դի ոմանք համարէին՝ Թէ՝ դի զարկդն ունէր Յուդա , ասայ նմա Յիսուս՝ գնեա՛ զինչ որ պիտոյ է մեզ ի տօնիս . եւ կամ՝ դի աղքատաց ինչ տայցէ ։

Իսկ նորա առեալ զպատառն՝ ել արտաքս վաղվաղակի . եւ էր գիշեր ։

---

Եօթներորդում Վարակէի Շաբաթի առաջն ։

ԳԼՈՒԽ ԺԳ ։ 31 ։

Մատենիչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ իբրեւ ել ասէ Յիսուս . Ա՛յժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ , և Աստուած փառաւորեցաւ ի նմա ։

Զի եթէ Աստուած փառաւոր եցաւ ի նմա , և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր . եւ վաղվաղակի փառաւորեսցէ զնա ։

Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս , եւ որպէս ասացի Յուդայեան , Թէ ուր եան երթամ՝ դուք ոչ կարէք գալ , եւ արդ ձեզ ասեմ։

Պատուիրան նոր տամ ձեզ , զի սիրիցէք զիմիմեանս՝ որպէս սիրեցի Ես զձեզ զի և դուք սիրեսջիք զիմիմեանս ։

Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք , եթէ սիրիցէք զիմիմեանս ։

Ասէ ցնա Սիմոն Պետրոս . Տէր, յո՞վ երթաս։

Պատասխանի Ես Յիսուս , Ուր եան երթամ՝ դուս ոչ կարես այժմ գալ զինի իմ, բայց ապա կէսցես զինի իմ։

Ասէ ցնա Պետրոս . Տէր, ընդէր ոչ կարիցեմ գալ այժմ զինի քո . արդէն զանձն իմ իսկ եդից ի վերայ քո ։

Պատասխանի Ես Յիսուս . Զանձն քո դիցե՞ս ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ չեւ իցէ հաւուս խօսեալ, մինչ դուս երիցս ուրասցիս զիս ։

---

Մի խռովեսին սիրտք ձեր . սուլ հաւատացէք յԱստուած , և յիս հաւատացէք ։

Ի տան Հօր իմոյ օթեւանք բազումք են . ապա Թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ , Թէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի ։

Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի , դարձեալ գամ և առնում զձեզ առ իս . զի ուր եան իցեմ , եւ դուք

ընդ իս իցէք. և ուր երթամ՝ գիտիցէք, և զճանապարհն գիտիցէք։

Ասէ ցնա Թովմաս. Տէր, ոչ գիտեմք յո՞ երթաս, և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։

Ասէ ցնա Յիսուս. Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ։

Եթէ զիս գիտէիք, ապա եւ զՀայրն իմ գիտէիք, և այսուհետեւ գիտասջիք զնա։

Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր, ցո՛ց մեզ զՀայր՝ և շատ է մեզ։

Ասէ ցնա Յիսուս. այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, և ո՞չ ծանեար զիս, Փիլիպպո՛ս. որ ետես զիս՝ ետես զՀայրն, և դու զիա՞րդ ասես՝ եթէ ցո՛ց մեզ զՀայր։

Ո՞չ հաւատաս եթէ ես ՚ի Հայր, և Հայր յիս է, զբանս՝ զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն՝ որ յիս բնակեալ է, նա գործէ զգործսն։

Հաւատացէ՛ք ինձ, եթէ ես ՚ի Հայր՝ և Հայր յիս է. ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ։

Ամէն ամէն ասեմ ձեզ. թէ որ հաւատայն յիս, զգործսն՝ զոր ես գործեմ՝ և նա գործեսցէ, և մեծամեծս եւս քան զնոսա գործեսցէ. զի ես առ Հայր երթամ։

Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարիցէ զայն. զի փառաւորեսցի Հայր Որդի. եթէ զոր ինչ խնդրիցէք յինէն՝ արարիցէ զայն։

---

ԳԼՈՒԽ ԺԴ. 15.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք, և ես աղաչեցից զՀայր, եւ այլ միխթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցի ՚ի յաւիտեան. զՀոգին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունիլ. զի ոչ տեսանէ զնա, և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցի՝ և ընդ ձեզ եղիցի։

Ոչ թողից զձեզ որբս, գամ առ ձեզ. փոքր միւս եւս՝ եւ աշխարհս ոչ ևս տեսանէ զիս. բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք։

Յայնմ աւուր գիտասջիք դուք,

զի ես ի Հօր իմմէ՝ և դուք յիս՝ եւ ես ի ձեզ. որ ուն զպատուիրանս իմ՝ եւ պահէ զնոսա, նա է՝ որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա, և երեւեցուցից նմա զիս։

Ասէ ցնա Յուդա՝ ոչ Իսկարիովտացին. Տէր, զի՞ եղեւ՝ զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ եւ ոչ աշխարհի։

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա, եւ առ նա եկեսցուք, եւ օթեւանս առ նմա արասցուք։

Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանն իմ ոչ պահէ, և բանն իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս։

---

ԳԼՈՒԽ ԻԴ. 25.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս եմ. իսկ մխիթարիչն Հոգին Սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ ձեզ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ։

Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր, և մի՛ զանգիտեսցեն։

Լուայք՝ զի ասացի ես ձեզ՝ Թէ երթամ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս, ապա ուրախ լինէաք եր ձեր՝ Թէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս։

Եւ այժմ ասացի ձեզ՝ մինչեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք։

Ոչ եւս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ, եւ յիս ինչ ոչ գտանէ. այլ զի ծանիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զՀայր. և որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ. ծն արի՛ք գընասցո՛ւք աստի։

Ես եմ որթն ճշմարիտ, եւ Հայր իմ մշակ է, ամենայն ուռ՝ որ յիս է՝ և ոչ բերէ պտուղ, կտրէ զնա. եւ ամենայն որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի առաւել եւս պաղաբեր լիցի։ Դուք արդէն իսկ սուրբ էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ։

Կացէ՛ք յիս՝ և ես ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ

բերել յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ յորմէն, նոյնպէս և դուք՝ եթէ ոչ լիս հաստատեալ իցէք։

Ես եմ որթ՝ և դուք ոստ. որ հաստատեալ է յիս՝ և ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել։

Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս, էլ նա արտաքս իբրեւ զոստն՝ և յամաքեցաւ, և ժողովեն զնա և ի հուր արկանեն՝ և այրի։

Եթէ կայցէք յիս՝ և բանք իմ ի ձեզ կացցեն, զոր ինչ կամիցիք՝ խնդրեսջիք, և լինիցի ձեզ։ Յայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք, և եղիջիք իմ աշակերտք։

Որպէս սիրեաց զիս Հայր, և Ես սիրեցի զձեզ. հաստատուն կացէք ի Սէր իմ. եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք ի սէր իմ. որպէս Ես զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, և կամ ի սէր նորա։

Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւնն իմ ի ձեզ լիցէ, և ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի։

Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս՝ որպէս Ես զձեզ սիրեցի։

Մեծ Ես քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ՝ եթէ առնիցէք զոր Ես պատուիրեմ ձեզ. ոչ Ես կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ՝ զինչ գործէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն՝ զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։

Ոչ եթէ դուք ընտրեցիք զիս, այլ Ես ընտրեցի զձեզ. և եդի զձեզ՝ զի դուք երթայցէք Ես պտղաբերք լինիցիք, և պտուղն ձեր կայցէ։

Ես զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զիմեանս։

Եթէ աշխարհ զձեզ ատէ, գիտասջիք զի նախ զիս ատեաց։ Եթէ յաշխարհէ իսկ էիք, աշխարհ զիւրն սիրէր արդեօք. բայց զի չէք յաշխարհէ. այլ Ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատէ զձեզ աշխարհ։

Յիշեցէք զբանն՝ զոր ասացի ձեզ, եթէ ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր. եթէ զիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պա-

հեցին, ապա և զձերն պահեցեն։

Ամէն ընչինս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ. զի ոչ գիտեն զայն՝ որ առաքեացն զիս։

Եմ երթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ չեն պատճառ վասն մեղացն իւրեանց։

Որ զիսատեայ՝ եւ զՀայրն իմ ատեայ։

Եթէ զգործսն չէր գործեալ ի նոսա՝ զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ տեսին և ատեցին՝ և զիս և զՀայր իմ։ այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է, թէ ատեցին զիս տարապարտուց։

Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ, զՀոգին ճշմարտութեան՝ որ ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ. և դուք վկայէք՝ զի ի սկզբանէ ընդ իս էք։

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի գայթակղեսջիք. ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ։

Այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։

Եւ զայն արասցեն ընդ ձեզ. քանզի ոչ ճանեան զՀայր՝ եւ ոչ զիս։

Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յորժամ եկեսցէ ժամանակ՝ յիշիցէք՝ թէ ես ասացի ձեզ։ Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի։

---

ԳԼՈՒԽ ԺԶ. 5։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Բայց արդ՝ երթամ ես առ առաքիչն իմ, և ոչ ոք ի ձէնջ հարցանիցէ ցիս, թէ ո՞ւր երթաս. այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ, տրտմութիւն եղեւ զսիրտս ձեր։

Այլ ես ճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ՝ երթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա երթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ։

Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ՝ վասն մեղացն, եւ վասն արդարութեան, և վասն դատաստանի։

Վասն մեղացն՝ զի ոչ հաւատան ինձ. վասն արդարութեան՝ զի առ Հայր իմ երթամ, և ոչ եւս տեսանէք զիս. վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է։

Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդարտիլ այժմիկ. յորժամ եկեսցէ նա՝ Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ. զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսիցէ՝ խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ։ Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի առնուցու եւ պատմեսցէ ձեզ։ Զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի առնուցու՝ և պատմեսցէ ձեզ։ Փոքր մի՝ և ոչ եւս տեսանէք զիս, և ապա սակաւիկ մի՝ եւ տեսանիցէք զիս. և զի ես երթամ առ Հայր։

Ասեին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս. Զի՞նչ է այս՝ զոր ասէ ցմեզ, թէ փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս. և թէ ես առ Հայր երթամ։ Եւ ասեին. Զի՞նչ իցէ այն փոքր միւս եւան, չգիտեմք զինչ խօսի։ Գիտաց Յիսուս եթէ կամին ցնա հարցանել, եւ ասէ ցնոսա. Վասն այդորիկ խնդրէք ընդ միմեանս, զի ասացի՝ թէ փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս, եւ դարձեալ սակաւիկ միւս եւս՝ և տեսանիցէք զիս։

Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք, և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւնն ձեր յուրախութիւն եղիցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ եւս յիշէ զնեղութիւնն վասն խնդութեան, զի ծնաւ մարդ յաշխարհ։

Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք, այլ դարձեալ տեսից զձեզ, և ուրախ լիցին սիրտք ձեր. և զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ՚ի ձենջ։

Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք։

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի զոր ինչ խնդրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանունն իմ, տացէ ձեզ։ Մինչեւ ցայժմ ոչինչ խնդրեցէք յանուն իմ. խնդրեցէք՝ և առնուցուք, զի ուրախութիւն ձեր լեալ իցէ։

Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ, և եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ եւս առակօք խօսեցայց ընդ ձեզ, այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ։

Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. և ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր. զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սիրեցիք և հաւատացիք՝ թէ ես ԱՒտուծոյ ելի։

Ելի ՚ի Հօրէ՝ և եկի յաշխարհ, դարձեալ թողում զաշխարհ, և երթամ առ Հայր։

Ասեն ցնա աշակերտքն. Ահա արդ յայտնութեամբ խօսիս, և առակ ես ոչ մի ինչ ասես. այժմ գիտեմք՝ եթէ գիտես զամենայն, և ոչինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք՝ եթէ ԱՒտուծոյ ելեր։

Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. Ահա եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է, զի ցրուեսջիք իւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թողուցուք. և ոչ եմ միայն, զի Հայր ընդ իս է։

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի ասա նեղութիւն ունիցիք, այլ քաջալերացարուք՝ զի ես յաղթեցի աշխարհի։

Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս. ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա զՈրդի քո. զի և Որդի քո փառաւորեսցէ զքեզ. որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի՝ զոր ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտենական։

Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, եւ զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս։

Ես զքեզ փառաւորեցի յերկրի, զգործն կատարեցի՝ զոր ետուր ինձ զի արարից. եւ այժմ փառաւորեա զիս, Հայր, առ ՚ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինիլն աշխարհի առ ՚ի քէն։

Յայտնեցի զանուն քո մարդկան, զոր ետուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ ետուր զնոսա, և զբանն քո պահեցին։

Արդ գիտացին՝ եթէ զամենայն ինչ՝ զոր ետուր ինձ, առ ՚ի քէն են. զի զբանն՝ զոր ետուր ինձ՝ ետու նոցա. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ ՚ի քէն ելի. և հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս։

Արդ՝ ես վասն նոցա աղաչեմ, և ոչ վասն աշխարհի աղաչեմ.

այլ ևսան նոցա՝ զորս ետուր ինձ, զի քո են. և որ իմ է, ամենայն քո է. և որ ինչ քո է, այն իմ է, և փառաւորեալ եմ ի նոսա։

Եւ ես ոչ եւս եմ յաշխարհի, և նոքա յաշխարհի են, և ես առ քեզ գամ. Հայր սուրբ, պահեա զնոսա յանուն քո, որով ետուր ինձ. զի եղիցին միաւորպէս և մեք միք եմք։

Մինչ էի՝ յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն քո՝ որով ետուր ինձ. և պահեցի. եւ ոչ ոք ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, զի գիրն լցցի։

Բայց արդ առ քեզ գամ. եւ զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին զուրախութիւն իմ լիով յանձինս իւրեանց։

Ես ետուր նոցա զբանն քո, և աշխարհ ատեաց զնոսա. զի չեն յաշխարհէ, որպէս և ես չեմ յաշխարհէ։

Ոչ զայս աղաչեմ՝ զի բարձցես զնոսա յաշխարհէ, այլ զի պահեցես զնոսա ի չարէ։

Յաշխարհէ ոստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ։

Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է։

Որպէս զիս առաքեցեր յաշխարհս, և ես առաքեցի զնոսա յաշխարհս. և ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին եւ նոքա սրբեալք ճշմարտութեամբ։

Ամենայն ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ եւ վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի իցեն, որպէս դու Հայր յիս՝ և ես ի քեզ, զի և նոքա ի մեզ իցեն. զի եւ աշխարհ հաւատացէ՝ եթէ դու առաքեցեր զիս։

Եւ ես զփառսն զորս ետուր ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս եւ մեք մի եմք. ես ի նոսա, և դու յիս, զի եղիցին կատարեալք ի մի։

Եւ գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս, և սիրեցի զնոսա՝ որպէս դու զիս սիրեցեր։

Հայր, զորս ետուր ինձ, կամիմ՝ զի ուր եան եմ, եւ նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ, զորս ետուր յիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զկինիլն աշխարհի։

Հայր արդար, և աշխարհ ըզքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս։

Եւ ծանուցի նոցա զանուն քո և ծանուցից, զի սէրն՝ զոր սիրեցեր զիս՝ ի նոսա լիցէ, և ես ի նոսա։

Զայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշակերտաւքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրովնի՝ ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր։

---

ԳԼՈՒԽ ԺԸ. Ջ։

*Վասն մատնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Գիտեր եւ Յուդա՝ որ զնա մատնելոց էր՝ զտեղին. զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսուս աշակերտաւքն հանդերձ։

Եւ Յուդայի առեալ ընդ իւր զգունդն, և ի քահանայապետէն և ի փարիսեցւոց սպասաւորս, գայ անդր ջահիւք և լապտերօք և զինուք։

Իսկ Յիսուս իբրեւ եաես զայն ամենայն եկեալ ի վերայ նորա, ել եւ ասէ ցնոսա. Զո՞ խնդրէք։

Պատասխանի ետուն նմա. ԶՅիսուս Նազովրեցի։

Ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ։ Կայր ընդ նոսա և Յուդա՝ որ մատնէրն զնա։

Իբրև ասաց՝ Թէ ես եմ, յետս գնացին և անկան ի վայր։

Դարձեալ հարց զնոսա. Զո՞ խնդրէք։

Նոքա ասեն. ԶՅիսուս Նազովրեցի։

Պատասխանի Յիսուս. Ասացի ձեզ Թէ ես եմ. արդ՝ Եթէ զիս խնդրէք, Թոյլ տուէք գոյս երթալ։

Զի լցցի բանն՝ զոր ասաց, Թէ զորս ետուր ցիս՝ ոչ կորուսի ի նոցանէ և ոչ զոք։

Իսկ Սիմովն Պետրոս՝ քանզի ունէր սուր, ձգեաց զնա և եհար զքահանայապետին ծառայ, և ի բաց առ զունկն նորա զաջոյ. եւ էր անուն ծառային Մաղքոս։

Ասէ Յիսուս ցՊետրոս. Դրկ զսուրդ անգրէն ի պատեան իւր. զբաժակն զոր ետ ինձ Հայր՝ ոչ լմպիցեմ զնա։

Իսկ գունդն և հազարապետն և սպասաւորք Հրէից կալան զՅիսուս և կապեցին։

Եւ առաջին զնա նախ առ Աննա, որ էր աներ Կայիափայի, որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ։

Այս այն Կայիափա էր՝ որ խրատն ետ Հրէից, Եթէ լաւ է

առն միւսմ մեռանիլ ՚ի վե-
րայ ժողովրդեանն։
Եւ երթային զհետ նորա Սիմոն
Պետրոս և միւս աշակերտն։
Եւ աշակերտն այն՝ քանզի ծա-
նօթ էր քահանայապետին՝ և
մուտ ընդ Յիսուսի ՚ի գաւիթ
քահանայապետին։
Եւ Պետրոս կայր առ դրանն
արտաքոյ. ել միւս աշակերտն՝
որ էր ծանօթ քահանայապե-
տին, և ասաց դռնապանն՝ և
եմոյծ ՚ի ներքս զՊետրոս։
Ասե աղջիկն՝ որ դռնապանն
էր՝ Պետրոսի. Միթէ և դու
յաշակերտաց առն այնորիկ
իցես. Եւ նա ասէ. Ոչ եմ։
Կային անդ ծառայքն և ըն-
պաստաւորք, խարոյկ արկեալ՝
քանզի ցուրտ էր, և ջեռնուին.
կայր ընդ նոսա և Պետրոս և
ջեռնոյր։
Եւ քահանայապետն հարց
զՅիսուս վասն աշակերտացն
և վասն վարդապետութեան
նորա։
Պատասխանի ետ նմա Յիսուս.
Ես յայտնապէս խօսեցայ յաշ-
խարհի. ես յամենայն ժամ
ուսուցի ՚ի ժողովրդեանն և
՚ի տաճարի անդ՝ ուր ամենայն
Հրեայքն ժողովեալ էին, և ՚ի
ծածուկ ինչ ոչ խօսեցայ։
Զի՞ հարցանես զիս, հարց զայ-
նոսիկ՝ որք լուանն, եթէ զինչ
խօսեցայ ընդ նոսա. ահաւա-
նիկ նոքա գիտեն զինչ ասա-
յի ես։
Իբրեւ նա զայս ասաց, մի ոմն
՚ի սպասաւորացն՝ որ անդ կայր,
ած ապտակ Յիսուսի և ասէ.
Այդպէ՞ս պատասխանի տաս
քահանայապետիդ։
Եւ Յիսուս ասէ ցնա. Եթէ
չար ինչ խօսեցայ, վկայեա՛
վասն չարին. իսկ եթէ բարի,
ընդէ՞ր հարկանես զիս։
Եւ առաքեաց զնա Աննա կա-
պեալ առ Կայիափա քահա-
նայապետ։
Եւ Սիմոն Պետրոս կայր անդ
և ջեռնոյր. ասեն ցնա. Միթէ
և դու յաշակերտաց անտի նո-
ր՞ա իցես։
Նա ուրացաւ և ասէ, թէ չեմ։
Եւ ասէ մի ոմն ՚ի ծառայից
քահանայապետին՝ ազգական
այնորիկ՝ զորոյ զունկն եհատ
Պետրոս. Ո՞չ ես իսկ տեսի զքեզ
՚ի պարտիզի անդ ընդ նմա։
Դարձեալ ուրացաւ Պետրոս,
և վաղվաղակի հաւ խօսեցաւ։

ԳԼՈՒԽ ԺԸ. 28.

Վ. ման չարչարանաց Յեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ածեն զՅիսուս ՚ի վա-
նացն Կայիափայ յատարա-
նըս դատաւորին, եւ էր այ-
գուց։
Եւ նոքա ոչ մտին յատարանն,
զի մի պղծիցին, այլ զի ու-
տիցեն զզատիկն։
Ել առ նոսա Պիղատոս արտա-
քսս և ասէ. Զի՞նչ չարախօսու-
թիւն մատուցանէք զառնէն
զայնմանէ։
Պատասխանի ետուն և ասեն
ցնա. Եթէ չէր չարագործ այն
այն, ապա ոչ մատնէաք զնա
քեզ։
Ասէ ցնոսա Պիղատոս. Առէ՛ք
զնա դուք, և ըստ ձերոց օրի-
նացն դատեցէ՛ք։
Ասեն ցնա Հրեայքն. Մեզ ոչ
է սպժան սպանանել զոք։
Զի ըզի բանն Յիսուսի զոր
ասաց՝ նշանակեալ թէ որով
մահու մեռանելոց իցէ։
Եմուտ միւսանգամ յատա-
րանն Պիղատոս, կոչեաց զՅի-
սուս, եւ ասէ ցնա. Դո՞ւ ես
Թագաւորն Հրեից։
Պատասխանի ետ Յիսուս, ի
քէն ասես զայդ, եթէ այլք
ասացին քեզ զինէն։
Պատասխանի ետ Պիղատոս.
Միթէ եւ ես Հրեա՞յ իցեմ.
ազգն քո և քահանայապետք
մատնեցին զքեզ ինձ. զինչ
գործ գործեալ ես քո։
Պատասխանի ետ Յիսուս. Իմ
արքայութիւն չէ յայսմ աշ-
խարհի. եթէ յաշխարհէ ա-
տի էր արքայութիւնն իմ՝ ըս-
պասաւորքն իմ մարտնչէին ար-
դեօք՝ զի մի մատնեցայց Հր-
էից. բայց արդ Թագաւո-
րութիւնն իմ չէ աստի։
Ասէ ցնա Պիղատոս. Ապա Թէ
այդպէս իցէ, Թագաւոր ոմն
ես դու։
Պատասխանի ետ Յիսուս. դու
ասես Թէ Թագաւոր իցեմ.
բայց ես յայդ իսկ ծնեալ եմ,
և ՚ի դոյն իսկ եկեալ եմ յաշ-
խարհ, զի վկայեցից ճշմար-
տութեանն. ամենայն որ ՚ի ճշմարտութենէ է, լսէ բար-
բառոյ իմոյ։
Ասէ ցնա Պիղատոս. Զի՞նչ է
ճշմարտութիւն։
Զայս իբրև ասաց, դարձեալ
ել առ Հրեայսն և ասէ ցնոսա.
Ես եւ ոչ մի ինչ պատճառս
գտանեմ ՚ի նմա։
Բայց է ձեր սովորութիւն՝

զի զմի ոք արձակեսիցէ ձեզ ՚ի զատկիս. արդ՝ կամիք զի արձակեսից ձեզ զԹագաւորն Հրէից։

Ազաղակեցին ամենեքեան և ասացին. Մի՛ զդա, այլ զԲարաբբա. եւ էր Բարաբբայն այն աւազակ։

---

ԳԼՈՒԽ ԺԹ. 1։

*Վասն չարչարանաց Յեսուին մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Յայնժամ էառ Պիղատոս զՅիսուս, և գան եհար։ Եւ զինուորացն արարեալ պսակ ՚ի փշոյ՝ եդին ՚ի գլուխ նորա, և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի, և գային առ նա և ասէին. Ո՛ղջ եր, արքայ Հրէից. եւ հանէին նմա ապտակս։

Եւ գարձեալ Պիղատոս արտաքս և ասէ ցնոսա. Ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք՝ թէ ես զնաս ինչ ՚ի նմա ոչ գտանեմ։

Եւ Յիսուս արտաքս, եւ ունէր պսակ ՚ի փշոյ և հանդերձ ծիրանի։

Եւ ասէ ցնոսա. Ահա այրդ ցձեզ։

Իբրեւ տեսին զնա քահանայապետքն եւ սպասաւորք, գոչեցին բարձին եւ ասեն. Ի խաչ հան՝ ՚ի խաչ հան զդա։

Ասէ ցնոսա Պիղատոս. Առէք զդա ՚ի ձեզ, և ձեզէն հանէք ՚ի խաչ. զի ես ՚ի դմա զնաս ինչ ոչ գտանեմ։

Պատասխանի ետուն նմա Հրէայքն. Մեք օրէնս ունիմք, և ըստ օրինացս մերոց պարտի մեռանիլ, զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար։

Իբրեւ լուաւ զբանս զայս Պիղատոս, առաւել եւս երկեաւ, եմուտ գարձեալ անդրէն յպարանան, եւ ասէ ցՅիսուս. Ուսո՞ւր ես դու։

Եւ Յիսուս ոչ ետ նմա պատասխանի։

Ասէ ցնա Պիղատոս. Ընդ իս ոչ խօսիս. ոչ գիտես եմէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ՚ի խաչ, և իշխանութիւն ունիմ, արձակել զքեզ։

Պատասխանի ետ Յիսուս. Ոչ ունէիր դու իշխանութիւն ՚ի վերայ իմ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ՚ի վերուստ. վասն այնորիկ՝ որ մատնեացն զիս քեզ՝ նորա մեծ մեղք են։ Եւ յայնմանէ՝ Պիղատոս խնդրէր արձակել զնա, և Հրէայքն

ագաղակէին եւ ասէին. Եթէ զդա արձակես, չես բարեկամ կայսեր. ամենայն որ որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր։

Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ, եած զՅիսուս արտաքս՝ եւ նստաւ ի վերայ բեմին՝ ի տեղւոջն որ կոչիւր Քարայատակ, և Եբրայեցերէն Կապպաթա։

Էր ուրբաթն զատկի, եւ էր ժամ իբրեւ վեցերորդ, և ասէ ցՀրեայսն. Ահա թագաւորդ ձեր՝ ցձեզ։

Եւ նոքա աղաղակէին. Բարձ՛ ի մէնջ, բարձ՛ ի մէնջ, եւ հան զդա՛ ի խաչ։

Ասէ ցնոսա Պիղատոս. Ես զթագաւորդ ձեր՝ ի խա՞չ հանիցեմ։

Պատասխանի ետուն քահանայապետքն. Չիք մեր թագաւոր՝ բայ՝ ի կայսերէ։

Յայնժամ ետ զնա՝ ի ձեռս նոցա, զի՝ ի խաչ ելանիցէ։

---

ԳԼՈՒԽ ԺԹ. 17։

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելանէր՝ ի տեղին՝ որ անուանէր Գագաթն, և կոչիւր Եբրայեցերէն Գողգոթա. ուր և՝ ի խաչ իսկ հանին զնա, եւ ընդ նմա երկուս եւս այլ՝ աստի և անտի, և՝ ի միջի զՅիսուս։

Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ՝ ի վերայ խաչին. և էր գրեալ Յիսուս Նազովրեցի՝ Թագաւոր Հրէից։

Զայն տախտակ ընթերցան բազումք՝ ի Հրէից, զի մօտ էր՝ ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս. եւ էր գրեալ Եբրայեցերէն, Դաղմատերէն և Յունարէն։

Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. Մի՛ գրեր Թագաւոր Հրէից, այլ Թէ նա ասաց՝ Թագաւոր եմ Հրէից։

Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ գրեցի՝ գրեցի։

Իսկ զինուորքն իբրեւ հանին՝ ի խաչ զՅիսուս, առին զհան-

դերձս նորա եւ արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ զպատմուճանն՝ քանզի էր առանց կարանի՝ ի վերուստ փորանկեալ ամենեւին, ասեն ցմիմեանս. Մի պատառեսցուք զայդ՝ այլ արկցուք վիճակս ի վերայ դորա՝ ում և ելցէ, Չի լցցի գիրն՝ որ ասէ. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս՝ և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակ արկին։

Զինուորքն զայս ինչ գործեցին։

Եւ կային առ խաչին Յիսուսի՝ մայրն նորա, և քոյր մօր նորա Մարիամ Կղէոպասի, և Մարիամ Մագդաղենացի։

Յիսուս իբրեւ ետես զմայրն և զաշակերտն՝ զոր սիրէր՝ զի կայր մօտ, ասէ ցմայրն. Կի՛ն դու, ահա որդի քո։

Ապա ասէ ցաշակերտն. Ահա մայր քո։

Եւ յայնմ ժամանակէ էառ աշակերտն զնա առ իւր։

Ձետ այսորիկ գիտաց Յիսուս, եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն՝ ասէ. Ծարաւի եմ։

Եւ անդ կայր ման ինչ լի քացախով. եւ նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեզուի՝ չուրջ եդեալ զշտիսւոյ զոպասի, մատուցին ի բերան նորա։

Իբրեւ եառ Յիսուս զքացախն հանդերձ լեզուովն՝ ասէ. Ամենայն ինչ կատարեալ է։

Եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին։

Իսկ Հրեայքն՝ քանզի ուրբաթ էր, զի մի՛ անդէն ի խաչին ագանիցին մարմինքն մինչեւ յշաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ, աղաչեցին զՊիղատոս՝ զի խորտակեսցեն զբարձս նոցա, և բարձցին։

Եկին զինուորքն, և զառաջնոյն խորտակեցին զբարձս, նոյնպէս եւ զմիւսոյն՝ որ ընդ նմա ի խաչն էլեալ էր։

Բայց իբրեւ եկին առ Յիսուս, և տեսին զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նորա. այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողն նորա, եւ վաղվաղակի ել արիւն եւ ջուր։

Եւ որ ետես՝ վկայեաց, եւ ճշմարիտ է վկայութիւն նորա. և նա գիտէ՝ եթէ ճշմարիտ ասէ, զի և դուք հաւատասջիք։

Այս եղեւ, զի լցցի գիրն, եթէ ոսկր նորա մի՛ փշրեսցի. եւ դարձեալ միւս գիր ասէ,

եթէ հայեացին ի նա՝ յոր խո-
յեցեալն։

---

ԳԼՈՒԽ ԺԲ. 38։

*Վ. ման Թաղման և յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Յետ այսորիկ աղաչեաց զՊի-
ղատոս Յովսէփ՝ որ Յարի-
մաթեայ էր աշակերտ Յիսուսի
ի ծածուկ վասն ահին Հրեից,
զի բարձցէ զմարմինն Յիսուսի.
և հրամայեաց Պիղատոս. եկն
և եբարձ զնա։
Եկն և Նիկոդեմոս՝ որ եկեալն
էր առ Յիսուս՝ ի գիշերի զա-
ռաջինն, և եբեր զմուռս խառն
ընդ հալուէս՝ իբրեւ լտեբս
հարիւր։
Ա՛ռին զմարմինն Յիսուսի, և
պատեցին կտաւովք եւ խըն-
կովքն հանդերձ, որպէս օրէն
էր Հրեից պատել։
Եւ էր ի տեղւոջն յորում
խաչեցաւ՝ պարտէզ, և ի պար-
տիզի անդ գերեզման նոր,
յորում ոչ ոք երբեք էր ե-
դեալ։
Անդ վասն ուրբաթուն Հրեից,
զի մօտ էր գերեզմանն, եդին
զՅիսուս։

---

Եւ ի միաշաբաթուոջն Մա-
րիամ Մագդաղենացի գայ
առաւօտուն ընդ արշալոյսն
ի գերեզման անդր, և տեսանէ
զվէմն բարձեալ ի դրանց գե-
րեզմանին։
Ա՛պա ընթանայ եւ գայ առ
Սիմովն Պետրոս և առ միւս ա-
շակերտն՝ զոր սիրէրն Յիսուս,
եւ ասէ ցնոսա. Բարձին զՏէր
ի գերեզմանէ անտի, և ոչ
գիտեմ՝ ուր եդին զնա։
Ել Պետրոս և միւս աշակերտն՝
և գային ի գերեզմանն. ընթա-
նային երկոքեան ի միասին։
Եւ միւս աշակերտն յառա-
ջեաց, ընթացաւ վաղագոյն
քան զՊետրոս՝ և եկն նախ ի
գերեզմանն. եւ խոնարհեալ
տեսանէ՝ զի կային անդ կտաւ-
քըն, բայց ի ներքս ոչ եմուտ։
Եկն եւ Սիմովն Պետրոս՝ որ
գայր զկնի նորա, եւ եմուտ
ի գերեզմանն. և տեսանէ զկ-
տաւսն զի կային անդ. եւ
վարշամակն՝ որ էր ի գլուխ
նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն
կայր, այլ ուրոյն ծալեալ ի մի
կողմն։
Յայնժամ եմուտ և միւս աշա-
կերտն, որ եկեալն էր յառաջ
գայն՝ ի գերեզմանն, եւ տես և

Հաւատացայ, զի չեւ եւս գիտէին զգիրս՝ Թէ պարտ է նմա ի մեռելոց յառնել։

Զոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն։

Բայց Մարիամ կայր արտաքոյ դերեզմանին և լայր. և մինչ դեռ լայր՝ խոնարհեցաւ ի դերեզմանն, և տեսանէ երկուս Հրեշտակս ի սպիտակս, զի նըստեալ էին՝ մի ի սնարից և մի յանոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի։

Եւ նոքա ասեն ցնա. Կին դու, զի լաս։

Ասէ ցնոսա. Զի բարձին զՏէրն իմ ի դերեզմանէ աստի՝ և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։

Զայս իբրեւ ասաց, դարձաւ ի Թիկունս կոյս, և տեսանէ զՅիսուս՝ զի կայր. և ոչ գիտեր Թէ Յիսուս իցէ։

Ասէ ցնա Յիսուս. Կին դու, զի լաս, զո՞ խնդրես. Նմա այսպէս Թուեցաւ՝ Թէ պարտիզպանն իցէ ասէ ցնա. Տէր, ե՛ Թէ դու բարձեր զնա, ասա՛ ինձ, ուր եդեր զնա, զի ես առից զնա։

Ասէ ցնա Յիսուս. Մարիամ։ Եւ նա դարձաւ և ասէ ցնա Եբրայեցերէն. Րաբբունի, որ Թարգմանի վարդապետ։

Ասէ ցնա Յիսուս. Մի՛ մերձենար յիս, զի չեւ եւս ելեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ եղբարս իմ, և ասա՛ ցնոսա. Ելանեմ ես առ Հայրն իմ եւ առ Հայր ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր։

Գայ Մարիամ Magdalենացի՛ և պատմէ Աշակերտացն, Թէ ետես նա զՏէր, և զայս ինչ ասաց ցնա։

---

ԳԼՈՒԽ Ի. 19.

Ի յայտնեթեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր երեկոյ ի միաշաբաթուջ աւուրն, և դրօք փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին Հրեից, եկն Յիսուս եւ եկաց ի միջի նոցա, եւ ասէ ցնոսա. Ողջո՛յն ընդ ձեզ։

Իբրեւ զայս ասաց՝ ետ ցոյց նոցա զձեռս և զկողն իւր. և խընդացին աշակերտքն՝ իբրեւ տեսին զՏէր։

Ասէ ցնոսա դարձեալ. Ողջո՛յն ընդ ձեզ. որպէս առաքեաց զիս Հայր իմ, և Ես առաքեմ զձեզ։

Եւ զայս իբրեւ ասաց՝ փչեաց ի նոսա և ասէ. Առէ՛ք զՀոգի

Սուրբ. եթէ ուժեք թողուցուք զմեզ՝ թողեալ լիցի նոցա. եւ եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։

Իսկ Թովմաս մի յերկոտասանից՝ անուանեալն երկուորեակ, ոչ էր ընդ նոսա՝ յորժամ եկն Յիսուս։

Ասէին ցնա այլ աշակերտքն, եթէ տեսաք զՏէր. և նա ասէ ցնոսա. եթէ ոչ տեսից՝ի ձեռս նորա զնշան բեւեռացն, եւ արկից զմատուն իմ՝ի տեղիս բեւեռացն, և մխեցից զձեռս իմ՝ի կողս նորա, ոչ հաւատամ։

—

ԳԼՈՒԽ Ի. 26։

*Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Եւ յետ ութ աւուր դարձեալ էին՝ի ներքոյս աշակերտքն, և Թովմաս ընդ նոսա. գայ Յիսուս դրօքն փակեալովք, և եկաց՝ի մէջ և ասէ. Ողջո՛յն ընդ ձեզ։

Ապա ասէ ցԹովմաս. Բե՛ր ըզմատուն քո և արի զայս, և առ՛ զձեռս իմ. և բե՛ր զձեռն քո՝ և մխեա՛ ի կողս իմ, և մի՛ լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ։

Պատասխանի ետ Թովմաս և ասէ ցնա. Տէ՛ր իմ և Աստուած իմ։

Ասէ ցնա Յիսուս. Այդ զի տեսեր զիս և հաւատացեր, երանի՛ որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատացեն։

Բազում եւ այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտացն իւրոց, որ ոչ է գրեալ՝ի գիրս յայսմիկ. այլ սոյն այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատացէք եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ. եւ զի հաւատայցէք, եւ զկեանս յաւիտենական ընդունիցիք յանունն նորա։

—

ԳԼՈՒԽ ԻԱ. 1։

*Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց՝ առ ծովեզերբն Տիբերեայ. և յայտնեաց այսպէս։

Էին՝ի միասին Սիմովն Պետրոս, և Թովմաս՝ անուանեալն երկուորեակ, և Նաթանայէլ որ՝ի Կանայ Գալիլեացւոց, և որդիքն Զեբեդեայ, եւ այլք յաշակերտաց անտի երկու։

Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս. Երթամ ձուկն որսալ։ Ասեն ցնա. գամք և մեք ընդ քեզ։ Գնացին եւ մտին ի նաւ, եւ յայնմ գիշերի կալան և ոչինչ։ Իբրեւ այգ եղեւ՝ կայր Յիսուս ի եզր ծովուն, բայց ոչ ծանեան աշակերտքն՝ թէ Յիսուս էր։ Ասէ ցնոսա Յիսուս. Մանկտինք, միթէ ուտելիք ինչ ունիք։ Պատասխանի ետուն և ասեն ցնա, Ոչ։ Ասէ ցնոսա Յիսուս. Արկէք յաջակողմն նաւին զուռկանդ, և գտանիցէք։ Արկին, եւ ոչ կարէին ձգել ի բազմութենէ անտի ձկանցն։ Ասէ աշակերտն այն՝ զոր սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս. Տէր է այն։ Սիմոն Պետրոս իբրեւ լուաւ թէ Տէր է, էարկ զիւրեա զգեստսն ածանեալին՝ քանզի մերկ էր, և ընկէց զինքն ի ծովն. և այլ աշակերտքն նաւաւն իսկ գային, քանզի չէին հեռի ի յաւազաքէն, այլ իբրեւ երկերիւր կանգնաւ. քարշէին զգործին հանդերձ ձկամբն։

Իբրեւ ելին ի յամաք, տեսանեն կրակեայզ կայծականց, և ձուկն ի վերայ, և հաց։ Ասէ ցնոսա Յիսուս. Բերէք ի ձկանց այսր՝ զոր դուք կալայք այժմիկ։ Ելաւ Սիմոն Պետրոս, եւ ձգեր զգործին ի յամաք՝ լի մեծամեծ ձկամբք, հարիւր վիսուն և երիւք. և այնչափ ինչ կայր, և ոչ պատառեցաւ գործին։ Ասէ ցնոսա Յիսուս. Եկայք ճաշեցէք։ Եւ ոչ ոք յաշակերտացն իշխեր հարցանել՝ թէ դու ո՞վ ես, զի գիտեին թէ Տէրն է։ Գայ Յիսուս և առնու զՀացն՝ և տայ նոցա, նոյնպէս և զըձուկն։ Զայս երիցս անգամ երեւեցաւ Յիսուս աշակերտացն յարուցեալ ի մեռելոց։

---

*Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմոն Պետրոս Յիսուս. Սիմոն Յովհաննու, սիրե՞ս զիս առաւել քան զդոսա։ Ասէ ցնա. Այ՛, Տէր, և դու գիտես զի սիրեմ զքեզ։

Ասէ ցնա. Արածեա զդառինս իմ։

Դարձեալ ասէ ցնա. Սիմոնին Յովհաննու, սիրե՞ս զիս։

Ասէ ցնա. Ա՛յո՛, Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ։

Ասէ ցնա. Արածեա զոչխարս իմ։

Ասէ ցնա երիցս անգամ. Սիմոնին Յովհաննու, սիրե՞ս զիս։ Տրտմեցաւ Պետրոս՝ զի ասաց ցնա երիցս՝ Թէ սիրես զիս. և ասէ ցնա. Տէր, դու զամենայն գիտես, և դու իսկ գաՀենայն ճանաչես, և եթէ սիրեմ զքեզ։

Ասէ ցնա Յիսուս. Արածեա զոչխարս իմ։

Ամէն ամէն ասեմ քեզ. զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր, եւ երթայիր ո՛ւր և կամէիր. և յորժամ ծերասցիս, ձեռս ի վեր կալցես, և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին՝ ուր ոչն կամիցիս։

Զայս ասաց՝ նշանակեալ Թէ որով մահու փառաւորասցէ զԱստուած. եւ զայս իբրեւ ասաց, ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ։

Դարձաւ Պետրոս՝ եւ տեսանէ զաշակերտն՝ զոր սիրէր Յիսուս. զի երթայր զկնի. որ և անկաւ զլանջսքն Նորա և ասէ. Տէր, ո՞վ է որ մատնելոցն է զքեզ։

Զնա տեսեալ Պետրոսի՝ ասէ ցՅիսուս. Տէր, իսկ սա՝ զի՞ն։

Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիմ զի կացցէ գա՝ մինչեւ ես գամ. քեզ զի՞ վտիտ է, դու զկնի իմ։

Ել ել բանս այս յեղբարս, և համարեցան Թէ աշակերտն այն ոչ մեռանիցի. և ոչ ասաց նմա Յիսուս՝ Եթէ ոչ մեռանիցի, այլ Թէ կամիմ ես՝ Թէ կացցէ գա՝ մինչեւ ես գամ։

Ա՛յս աշակերտ է՝ որ վկայէ վասն այսոցիկ, որ և գրեացն իսկ զայսոսիկ, և գիտեմք՝ Թէ ճշմարիտ է վկայութիւն Նորա։

Բայց է և այլ ինչ բազում՝ զոր արար Յիսուս, որք եթէ գրեալ էին մի ըստ միոջէ, կարծեմ Թէ և ոչ աշխարհս բաւական էր տանիլ զգիրսն՝ որք Թէ գրեալ էին։

# ՅՈՒՅԱԿ ԱԻԵՏԱՐԱՆԱՅ

Ըստ արարողութեանց Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյ։

## ԱԻԵՏԱՐԱՆԻՔ ՀԱՆԳԻՍՏԵԱՆ

### ՄԱՏԹԷՈՍ

| ԵՐԵՍ | | |
|---|---|---|
| 24 | Յայնմ ժամանակի պատասխանի եւ ՅԻսուս. | վերջ. բեռն իմ փոքրագի։ |
| 29 | Ա՛Յ առակ էարկ առ. | » ի շահեմարանս իմ։ |
| 29 | Ա՛Յ առակ էարկ առ. | » ի սկզբանէ աշխարհի։ |
| 30 | Յայնժամ Թողեալ Յիսուս զժողովուրդսն | » ականջս լսելոյ լսիցէ։ |
| 30 | Դարձեալ նման է ար. | » գնոր և գՀին։ |
| 55 | Եւ եղեալ արտաքս Յիսուս. | » ի սպառ՝ նա կեցցէ։ |
| 57 | Արթուն կացէք զի ոչ գիտէք. | » և կրճտել ատամանց։ |

### ՄԱՐԿՈՍ

| | | |
|---|---|---|
| 82 | Եւ ասէ ցնոսա, միթէ գայ. | վերջ. բարձցի ի նմանէ։ |
| 82 | Եւ ասէր այսպէս է Արքայութիւն Աստուծոյ. | » մեհենէր զամենայն։ |
| 107 | Եւ յերանեալն նոցա ի տաճարէ. | » ի սպառ՝ նա կեցցէ։ |
| 109 | Զգայ եղբարք, սկեցէք. | » արթուն կացէք։ |

### ՂՈՒԿԱՍ

| | | |
|---|---|---|
| 161 | Մի երինչիր հօտ փոքրիկ. | վերջ. գայ Որդի մարդոյ։ |
| 162 | Ասէ Պետրոս, Տէր, առ մեզ. | » պահանջեացեն ի նմանէ. |
| 163 | Հաւր եկի արկանել. | » զհետին բնհանն։ |
| 183 | Եւ յասել ամանոց զտաճարէն. | » առաջիք զոգիս ձեր։ |
| 185 | Եւ ասաց առակ ի նոցա. | » լսել ի նմանէ։ |

### ՅՈՎՀԱՆՆԷՍ

| | | |
|---|---|---|
| 209 | Պատասխանի եւ Յիսուս. | վերջ. զառաքիչն նորա։ |
| 210 | Ամէն ամէն ասեմ ձեզ. | » որ առաքեացն զիս։ |
| 227 | Եղեն յայնժամ նորոգաւորիք. | » Հայր յիս, և ես ի Հայր։ |
| 233 | Ամէն ամէն ասեմ ձեզ. | » զնա Հայրն իմ։ |

Յաւգակ Առաջաւորաց պահոց Յոյիանու, յորում աւուր և Տանդիպեցոյն։

### ՄԱՏԹԷՈՍ

| | | |
|---|---|---|
| 26 | Յայնժամ պատասխանի. | վերջ. քան զՅողմամէն է աստ։ |

### ՂՈՒԿԱՍ

| | | |
|---|---|---|
| 157 | Եւ ի գիպանալ. | վերջ. քան զՅոյիան է աստ։ |

Յուցակ ի մեծի պահոց Հանգստեան՝ չարչարանաց։

ՄԱՏԹԷՈՍ

ԵՐԵՍ

67 Եւ ելեալ արտաքս . վերջ. և մայր որդւոցն Զեբեդեայ ։

ՄԱՐԿՈՍ

116 Եւ ունէին պահակ . վերջ. ելեալ էին յերուսաղէմ։

ՂՈՒԿԱՍ

191 Իբրեւ առին գնացին . վերջ. տեսանէին զայն ։

ՑՈՎՀԱՆՆԷՍ

249 Եւ նոքա առեալ տանէին . վերջ. յոր խոցեցին ։

## ԱԻԵՏԱՐԱՆՔ ՏԱՃԱՐԻ

ՄԱՏԹԷՈՍ

55 Եւ ելեալ արտաքս Յիսուս . վերջ. անդ եղիցի՝ լալ և կրճտել ատամանց։

ՄԱՐԿՈՍ

107 Եւ յելանելն նորա ի տաճարէ . վերջ. ասեմ, որթուն կացէք ։

ՂՈՒԿԱՍ

183 Եւ յասել ոմանց զտաճարէն . վերջ. ի տաճարն լսել ի նմանէ ։

ՑՈՎՀԱՆՆԷՍ

227 Եղեն յայնժամ նաւակատիք . վերջ. հաւատացին ի նա անդ ։

## ԱԻԵՏԱՐԱՆՔ ԻՒՂԱԲԵՐԻՑ

ՄԱՏԹԷՈՍ

70 Եւ յերեկոյի շաբաթուն . վերջ. մինչեւ ի կատարած աշխարհի ։

ՄԱՐԿՈՍ

117 Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի . վերջ. ինչ ասացին, զի երկնչէին ։

ՂՈՒԿԱՍ

193 Եւ ահա այր մի անուն Յաղէփ . վերջ. զարմացեալ Թէ զինչ եղեւ ։

ՑՈՎՀԱՆՆԷՍ

251 Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս . վերջ. և զայս ինչ ասաց ցնա ։

Պարձեալ ի մեծի պահոց Իւղաբերից Աւետարանք Թաղման միայն ։

ՄԱՏԹԷՈՍ

69 Եւ իբրեւ երեկոյ եղեւ . վերջ. նստէին հանդէպ գերեզմանին ։

ՄԱՐԿՈՍ

117 Եւ իբրեւ երեկոյ եղեւ . վերջ. զեղջն ուր եդաւ ։

ԵՐԵՍ

ՂՈՒԿԱՍ

193 Եւ ահա այր մի անուն. վերջ. վանն պատուիրանին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

251 Յետ այսորիկ աղաչեաց. վերջ. եդին զՅիսուս։

## ԱԻԵՏԱՐԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

ՄԱՏԹԷՈՍ

17 Եւ մոեալ ի նաւ էանց. վերջ. իշխանութեան մարդկան.
18 Մինչդեռ նա զայն խօսէր. » երկիրն ընդ այն։
25 Եւ գնացեալ անտի Յիսուս. » նորա հետանոսք յուսացին։
25 Յայնժամ մատուցաւ. » ի բանից քոց պարտաւորեսցես։
35 Եւ երթեալ անտի Յիսուս. » ի նմին ժամու։
39 Եւ իբրեւ եկին ի ժողովուրդն. » աղօթիւք և պահովք։
46 Եւ յեղանելն նոցա Յերիքովէ. » և գնացին զհետ նորա։

ՄԱՐԿՈՍ

74 Եւ մոանէն ի կափառնաում. վերջ. զնա թէ Քրիստոս է։
75 Եւ ընդ այգն ընդ առաւօտն. » յամենայն կողմանց։
78 Եւ եմուտ միւսանգամ. » ողջացաւ ձեռն նորա։
83 Եւ եկն յայնկայս ծովուն. » ամենեքին զարմանային։
92 Եւ երթալ միւսանգամ. » համերց խօսիլ։
96 Եւ եկեալ առ աշակերտսն. » պահովք և աղօթիւք։
101 Եւ գան Յերիքով. » զհետ նորա ի ճանապարհին։

ՂՈՒԿԱՍ

133 Եւ էր ի կափառնաում. վերջ. զի գիտէին զնա թէ Քրիստոս է։
135 Եւ եղեւ ի հասանիլն նորա. » կայր յաղօթս։
136 Եւ եղեւ ի միում աւուրց. » տեսաք այսօր նոր նշան։
146 Եւ եղեւ ի միում աւուրց ինքն. » զոր ինչ արար նմա Յիսուս։
147 Եւ իբրեւ գարձաւ. » մի ումեք ասել՝ որ ինչ եղեւն։
151 Եւ եղեւ ի վաղիւն միոչ. » ի ձեր կողմն է։
156 Եւ հանէր գեւ մի հար. » լսեն զբանն Աստուծոյ, և առնեն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

208 Յետ այսորիկ ոմն էր Հրէից. վերջ. հաւատար առնել զանձն Աստուծոյ։
207 Եկին գարձեալ ի կանա. » ի Հրէաստանէ ի Գալիլեա։
223 Եւ մինչդեռ անցանէր. » երկիր եպագ նմա։

Յուցակ Աւետարանաց, որ ի ժամ ս. Պատարագին ընթերցեալ լինին։

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԱԻՈՒՐՆ

2 Եւ Յիսուսի Քրիստոսի Ծնունդն էր. վերջ. զանուն նորա Յիսուս։
233 Բ. աւուրն. Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ. » պատուհասցէ զնա Հայրն իմ։

ԵՐԵՍ

| | | | |
|---|---|---|---|
| 4 Գ. աւուրն. | Եւ իբրեւ գնային նոքա. | վերջ. | Թէ Նազովրեցի կոչեցի։ |
| 123 Գ. | Եւ յամենայն վեցերորդի. | » | Ի նմանէ հրեշտակն։ |
| 123 Ե. | Յարուցեալ Մարիամ յա. | » | ԵՒ գարձաւ ի տուն իւր։ |
| 228 Զ. | Եւ էր սմն հիւանդ Ղա. | » | Նոցա՝ զոր տեսին Յիսուս։ |
| 126 Է. | Եւ եղեւ ընդ աւուրն. | » | Նոցա աեղի յԼիճանին։ |
| 127 Ը. | Եւ իբրեւ լցան աւուրք. | » | Էր գնա յերուսաղէմ։ |

ՋՆՆԻ ՈՒԹՕՐԷԻՑ

| | | | |
|---|---|---|---|
| 200 Ա. Կիր. | Եւ յաւուրն երրորդի հար. | վերջ. | աշակերտքն Նորա։ |
| 201 Ա. Գշ. | Յետ այսորիկ էջ Յիսուս. | » | զոր սասց Յիսուս։ |
| 202 Ա. Ուր. | Եւ իբրեւ էր Յերուսաղէմ. | » | սասցից Հաւատացէք։ |
| 203 Բ. Կիր. | Եւ ոչ ոք էլ յերկինս, եթէ. | » | Աստուծով գործեցան։ |
| 204 Բ. Գշ. | Յետ այսորիկ եկն Յիսուս. | » | Միայ ի վերայ Նորա։ |
| 210 Գ. Ուր. | Եթէ ես վկայեմ վասն ան. | » | բանից Հաւատացէք։ |
| 214 Գ. Կիր. | Այս են կամք Հօր իմոյ, որ. | » | յաւիտենականս։ |
| 214 Գ. Գշ. | Ես եմ Հացն կենդաց. | » | զնա յաւուրն յետնում։ |
| 215 Գ. Ուր. | Հոգին է կենդանարար, մարմ. | » | մի էր յերկրատանիցն։ |

Նոքա՝ ասն Տնդեան սրբոյն Յակոբայ Կարապետին։

| | | | |
|---|---|---|---|
| 124 | Եւ եղիսաբեթի լցան ժամանակք. | վերջ. | Նորա Խորսենէլ։ |

Ապա սրբոյն Պետրոսի Տպրապետին, Վլասոյ եպիսկոպոսին. և Աբիսողոմոյ սարկաւագին։

| | | | |
|---|---|---|---|
| 226 | Ես եմ Հովիւն քաջ. Հովիւ քաջ. | վերջ. | մի հօտ՝ և մի Հովիւ։ |

Ապա սրբոյն Աղոնսի Տգնաւորին։

| | | | |
|---|---|---|---|
| 22 | Որ սիրէ զհայր կամ զմայր. | վերջ. | կորուսցէ զվարձս իւր։ |

Ապա սրբոյն Թէոդոսի Թագաւորին. և Մանկանցն Եփեսոսի։

| | | | |
|---|---|---|---|
| 141 | Եւ եղեւ իբրեւ կատարեաց. | վերջ. | հիւանդ բժշկեալ։ |

Ապա սրբոյն Սիրակոսի և Մարն Յաւդասցի։

| | | | |
|---|---|---|---|
| 151 | Եւ զարմանային ամենեքեան. | վերջ. | ձեզ՝ նա եղիցի մեծ։ |

Ապա սրբոյն Վահանայ Գողթնացւոյն։

| | | | |
|---|---|---|---|
| 150 | Եւ ասէր առ ամենեսին. | վերջ. | զԱբրայաս Թիւն Աստուծոյ։ |

Ապա սրբոց Տգնաւորացն, Տրիմոնի, Պապասայ, Ոնոփրիոսի։

| | | | |
|---|---|---|---|
| 225 | Եւ ասէ Յիսուս. Ի դատաստան եկի. | վերջ. | առաւել եւս ուներին։ |

Ապա սրբոց Տպրապետացն՝ Աթանասի և Սիմոնի։

| | | | |
|---|---|---|---|
| 243 | Զայս խօսեցայ ընդ ձեզ. զի. | վերջ. | դու առաքեցեր զիս։ |

Ապա սրբոց վկայիցն Գորգիսի, Պողիքարպի և Գրիգորիսի։

| | | | |
|---|---|---|---|
| 184 | Բայց յառաջ քան զայս ամենայն. | վերջ. | ատասջիք զոգիս ձեր։ |

Ապա սրբոյն Եւգինեայ կուսին, և Տղն Նորա Փիլիպպոսի, և Մարն Նորա Կղեոպէայ, և երկուց եղբարցն Սերգեայ և Ալիտանի, և երկուց Նեոբինեացն։

| | | | |
|---|---|---|---|
| 161 | Մի երկնչիր Հօտ փոքրիկ. | վերջ. | գայ Որդի մարդոյ։ |

Ապա սրբոյն Գրիգորի ասասածաբանին։

| | | | |
|---|---|---|---|
| 226 | Ես եմ Հովիւն քաջ. Հովիւ քաջ. | վերջ. | մի հօտ՝ և մի Հովիւ։ |

Ապա սրբոց վկայիցն. Եւգինէոսի. Մակարիոսի. Վաղերիսի. Կանդիսեայ և Ալիւդասայ։

| | | | |
|---|---|---|---|
| 21 | Եւ յորժամ հալածիցեն զձեզ. | վերջ. | իմոյ որ յերկինս է։ |

Յաւուրս պատուոյ բարեկենդանի Կիրակին։

| | | | |
|---|---|---|---|
| 212 | Յիսուս իբրեւ գիտաց եթէ գալոց են. | վերջ. | յերկիրն՝ յոր երթային։ |

Քառանդաձայ Գալատեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի Յաճնոյ։

ՅԻԵՍ

128 Եւ երեսային ծնողք նորա. վերջ. յԱստուծոյ և ի մարդկանէ։

Շաբաթ՝ սրբոյն Սարգսի զօրավարին և սրբոյ նորա Մարտիրոսին և չորեքասանն վճռասրացն։

184 Յայնժամ՝ ասէ ցհուսա, յարիցէ. վերջ. ստացիք զգիս ձեր։

213 Կիր. Ի վաղիւ անդր ժողովեսջիք. » այնորիկ որ առաքեացն վիս։

Երկուշաբաթ՝ սրբոց Առաքելոց զօրավարացն։

241 Զայս խօսեցաւ ընդ ձեզ՝ զի մի. վերջ. քանզի ընդ ձեզ էի։

Երեքշաբաթ՝ սրբոց Մարիամայ վկային։

159 Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. վերջ. առաջի Աստուծոյ։

216 Դէ. ցհաս այսորիկ չորքեր ցիսուս ի գալն. » վասն երկիւղին Հրեից։

Հինգշաբաթ՝ սրբոց Սահակայ պատրիարքին մերոյ։

7 Եւ տեսեալ զժողովրդեան վերջ. որք յառաջ քան զձեզ էին։

216 Ուր. Իբրեւ ասեն ընդմիջեցաւ. » մարդ բժշկեցի ի շաբաթու։

Շաբաթ՝ սրբոյն Խահակայ պարթեւի Հայրապետին մերոյ։

226 Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ. վերջ. և եղեցին մի հօտ՝ և մի հովիւ։

218 Կիր. Ի վերջնում աւուր մեծի տօնին. » ի գալիլէէ ոչ յառնէ։

Երկուշաբաթ՝ սրբոցն Մարկոսի եպիսկոպոսին, Պետրոս քահանային, Սիրոցի և Ջենիամինի սարկաւագացն, և սրբոց վկային Աբգարեանի, Ումզադայ և Սայենի։

240 Զայս պատուիրեմ՝ զի սիրեսջիք. վերջ. զայն՝ որ առաքեացն վիս։

Երեքշաբաթ՝ սրբոց Վաչէ և Ստեփանոսի քահանային։

159 Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. վերջ. հայհոյիցէ, մի Թողցի նմա։

220 Դէ. Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա. » զի չեւ ևս հասեալ էր ժամ նորա։

Հինգշաբաթ՝ սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ Հատրո երեսուն և վից վկային։

139 Եւ նա ամբարձ զաչս իւր. վերջ. տուա մարգարէիցն Տարբ նոցա։

220 Ուր. Ասէ դարձեալ ցնոսա ցհուսա. » բազումք հաւատացին ի նա։

Շաբաթ՝ սրբոցն Կոստանդնուպոլսոյ տարբ Յովսէփայ Հայրապետացն։

25 Յայնժամ՝ մատուցաւ առ նա. վերջ. և մի՝ ի հանդիսրեալսն։

Բոն բարեկենդանի Կիրակէ։

10 Զգոյշ լերուք զպղտմութեան. վերջ. անդ և սիրաք ձեր եղկցին։

Շաբաթ՝ ասն է սրբոցն Թէոդորոսի զօրավարին։

20 Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ. վերջ. ի սպառ՝ նա կեցցէ։

Երկրորդ Կիրակէ Մեծի պահոց։

8 Մի համարիք եթէ եկի լուծանել. վերջ. երկիւղաւոր կատարեալ է։

Շաբաթ՝ ասն է սրբոցն Կիրակոսի Երուսաղէմացի Հայրապետին և միւս Կիրակոսի եպիսկոպոսին։

226 Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ. վերջ. և եղեցին մի հօտ՝ և մի հովիւ։

Երրորդ Կիրակէ Մեծի պահոց։

168 Եւ էին մեռք առ նա ամենայն. վերջ. կորսեսեալ էր և գտաւ։

Շաբաթ՝ սրբոյն Յովհաննու Երուսաղէմացի Հայրապետին, և սրբոց Հայրապետացն մերոց՝ Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոմնեցւոյն և Գրիգորի Տաթեւացւոյն։

225 Եւ ասէ ցհուսա, ի գտաւատան. վերջ. և առաւել եւս ուխիցն։

Չորրորդ Կիրակէ Մեծի պահոց։

170 Եւ ասէր առ աշակերտան. վերջ. աք յառնիցէ՝ հաւատացին։

Շաբաթ՝ որոց Մանկանցն քառասնից՝ որք ի Աբբասեայ կատարելոյն։

ԵՐԵՍ

30 Յայնժամ որդայրքն ծագեսցին. վերջ. ի գանձէ իւրմէ զնոր և զհին։

Հինգշաբթի Կիրակէ Մէծի պահոց։

174 Իբրեւ հարցաւ ի փարիսեցւոցն. վերջ. զանձն՝ բարեբարոյի։

Շաբաթ՝ ոմն է որոյն Կրկնօրի Լուսաւորչին մերոյ։

38 Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն. վերջ. եկեալ աքքայաբեմբ իւրով։

Վեցերորդ Կիրակէ Մէծի պահոց։

52 Իակ փարիսեցիքն իբրեւ լուան. վերջ. օրհնեալ եկեալ յանուն Տեառն։

Շաբաթ՝ յիշատակ է Ղազարոս յարեբեանն։

231 Եւ էր մերձ զատիկն Հրէից. վերջ. երթային՝ և հաւատային ի Յիսուս։

Տղակաղարդ Կիրակէ։

46 Եւ յելանելն նորա յԵրիքովէ. վերջ. ի Բեթանիա, և անդ ագաւ։

Աւագ հինգշաբթի։

62 Եւ յառաջնում մեսր բաղարջակէ. վերջ. ի լեառն Ձիթենեաց։

Աւագ շաբաթ։

70 Եւ յերեկոյի շաբաթուն յորում. վերջ. մինչեւ ի կատարած աշխարհի։

## ՁԱՏԻԿ

118 Կիր. Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն. վերջ. ինչ ասացին, զի երկնչէին։

Յաւուր մեռելոցի որ։

193 Բշ. Բայց ի միաշաբաթուն վաղ քաջ. վերջ. զարմացեալ թէ զինչ եղեւ։

194 Գշ. Եւ ահա երկուք ի նոցանէ երթ. » ի բեկանել հացին։

195 Դշ. Մինչդեռ զայն խօսէին. » եցոյց նոցա զձեռան և զոտս։

7 Եշ. Եւ տեսեալ զմոգովբդոն եւ զի » որք յառաջ քան զձեզ էին։

253 Ուր. Յետ այսորիկ դարձեալ յայտ. » յարուցեալ ի մեռելոց։

Շաբաթ՝ յիշատակ է գլխատման որոյն Յովհաննու Մկրտչին։

254 Եւ իբրեւ Հաշէցին՝ ասէ ցՍիմոնէ. վերջ. որք թէ գրեալ էին։

Տան Աւետեաց որոյն էր Մարիամ։

123 Եւ յամենայն վիցերորդի. վերջ. և գնաց ի նմանէ հրեշտակն։

197 Նոր Կիր. Ի սկզբանէ էր բանն. » ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեւն։

198 Բշ. ԶԱստուած ոչ ոք եւտես երբէք. » ուր էրն Յովհաննէս և մկրտէր։

199 Գշ. Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս. » եթէ սա է Որդին Աստուծոյ։

199 Դշ. Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս. » որ Թարգմանի Պետրոս։

200 Եշ. Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել. » ի վերայ Որդւոյ մարդոյ։

200 Ուր. Եւ յաւուրն երրորդի հարսա. » ի նա աշակերտքն նորա։

201 Շբ. Ձեռ այսորիկ էջ Յիսուս ի կափառ. » և բանին, զոր ասաց Յիսուս։

Երրորդ Կիրակէ՝ որ ասի Աչխարհամասին։

202 Եւ իբրեւ էր Հերովդէս ի. վերջ. ասացից՝ հաւատացէք։

203 Բշ. Եւ ոչ ոք եւ երկինս. » նորա թէ Աստուծով գործեցան։

204 Գշ. Ձեռ այսորիկ էին Յիսուս և աշա. » Աստուծոյ միայ ի վերայ նորա։

205 Դշ. Իբրեւ գիտաց Յիսուս. » երկրպագուս իւր խնդրէ։

206 Եշ. Հոգի է Աստուած՝ և երկրպագուսց. » Ճշմարտիւ փրկիչ աշխարհաց։

207 Ուր. Եւ յետ երկուց աւուրց եւ. » ի Հրէաստանէ ի Գալիլեա։

208 Շբ. Ձեռ այսորիկ ասն էր Հրէից. » առնէր զանձն Աստուծոյ։

209 Դ. Կիր. Պատասխանի ետ Յիսուս. » այնորիկ՝ որ առաքեացն վրա։

210 Բ.· Եթէ ես վկայեմ վասն անձին . վերջ· բանից հաւատացէք ։
211 Գ.· Ցետ այսորիկ գնաց Յիսուս . » որ գալոց է յաշխարհ ։
212 Գ.· Յիսուս իբրեւ գիտաց եթէ . » յոր երթային ։
213 Եբ.· Ի վաղիւ անդր ժողովուրդն որ . » որ առաքեացն պիտ ։
214 Ուր· Այս են կամք Հօր իմոյ . » զնա , և մի էր յերկուտասանիցն ։
216 Շբ· Ցետ այսորիկ չքէր Յիսուս . » վասն երկիւղին Հրէից ։

Հինգերորդ Կիւրակէ՝ ասն է Կրեւման սրբոյ Խաչին ։

216 Իբրեւ ասն ընդ միջնեցաւ . վերջ· մարդ բժշկեցի ի շաբաթու ։
217 Բ.· Մի ըստ աչս դատէք . » երթայ , դուք ոչ կարէք գալ ։
218 Գ.· Ի վերջնում աւուր մեծի ասնին . » յայսմ հետէ մի մեպանչեր ։
220 Գ.· Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա . » չէ ես հասեալ էր ժամ նորա ։
220 Եբ.· Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս . » բազումք հաւատացին ի նա ։
221 Ուր· Ես ասեր Յիսուս առ Հրէայսն . » ի տաճարէ անտի ։
223 Շբ· Ես մինչդեռ անցանէր՝ եսես . » և երկիր եպագ նմա ։
225 Զ· կիր· Ես ասէ Յիսուս , ի դատաս . » և առաւել ևս ուխիյին ։
226 Բ.· Ես եմ հովիւն քաջ· հովիւ քաջ . » կարէ զաչս կուրի բանալ ։
227 Գ.· Եղեն յայնժամ նաւակատիքն . » հաւատացին ի նա անդ ։
228 Գ.· Ես էր ոմն հիւանդ Ղազարոս . » նոցա զոր արարն Յիսուս ։

Հինգշաբաթի՝ որ Համբարձմանն Փրկտոսի ի յերկինս ։

71 Իսկ մեհտասան աշակերտքն . վերջ· մինչեւ ի կատարած աշխարհի ։
230 Ուր· Ժողովեցան քահանայապետքն . » աշակերտաքն հանդերձ ։
231 Շբ· Ես էր մերձ զատիկն Հրէից . » և հաւատային ի Յիսուս ։

Նօթեներորդ Կիւրակէ՝ որ ասի երկրորդ Պաղտղտդ ։

232 Ի վաղիւ անդր ժողովուրդ . վերջ· փառաւորեացի Որդի մարդոյ ։
233 Բ.· Ասէն ամէն ասեմ ձեզ , եթէ ոչ . » պատուեսցէ զնա Հայրն իմ ։
233 Գ.· Բայց այժմ անձն իմ խռովեալ է . » քան զիտեան Աստուծոյ ։
234 Գ.· Ես Յիսուս ազաղակէր , և ասէր . » Հայրն՝ այնպէս խօսիմ ։
235 Եբ.· Ցառաջագոյն քան զտօնն զատկի . » և գուք առնիջիք ։
236 Ուր· Ամէն ամէն ասեմ ձեզ . » վաղվաղակի , և էր գիշեր ։
237 Շբ· Ես իբրեւ ել , ասէ Յիսուս . » զի փառաւորեսցի Հայր Որդի ։

Հոգւոյն Սրբոյ գալստեան Կիւրակէ ։

239 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ . վերջ· գնասցուք աստի ։
14 Բ.· Ես իբրեւ կատարեաց . » Մահէս ի վկայութիւն նոցա ։
15 Գ.· Ես մտեալ ի կափառնաում . » մանուկն նորա յաւուր յայնմիկ ։
16 Գ.· Տեսեալ Յիսուսի ժողովուրդս . » հողմք և ծով հնազանդին ամա ։
16 Եբ.· Ես իբրեւ էանց յայնկոյս յերիքրն . » գնասցէ ի ահմմանս նոցա ։
17 Ուր· Ես մտեալ ի նաւ էանց . » իշխանութեան՝ մարդկան ։
4 Շբ· Յայնժամ իբրեւ եսես Հերովդէս . » կամէր մեսիայիլ՝ զի ոչ էին ։

Առաջին Կիւրակէ Յարութեան ։

133 Աղտարեւ ասեմ ձեզ զի բազումք . վերջ· ընդ մէջ նոցա՝ գնայր ։

Երկուշաբաթի՝ Տէն է սրբոյ կուսանացն Հռիփսիմեանց ։

21 Զի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտ . վերջ· որ յերկինս է ։

Երկշաբաթի՝ Սրբոց կաւատացոյն Գալիանեանց։

ԵՐԵՍ

241 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի. վերջ. քանզի ընդ ձեզ էի։
17 Դշ. Եւ անցեալ ընդ այն ցիսուսի. » և ասէ պահեցէն։
Հինգշաբաթի՝ ածն է պրեցն, ցովհաննու Կարապետեն, և Աթանագինէից եպիսկոպոսեն։
22 Իսկ ցովհաննէս իբրեւ լուաւ ի. վերջ. Նա է Եղիա՝ որ գալոցն է։
19 Ոբ. Եւ մինդեռ անցանէր ընդ այն. » դիւաց հանէ զա զգեւս։
Շաբաթի՝ ածն է պրեցն Գրիգորի մերոյ Լուսաւորչին ելանելոյն ի վիրապէն։
44 Յայնժամ պատասխանի եւս Պետրոս. վերջ. Ժառանգեսցէ։
Երկրորդ Կիրակէ՝ գինի Հոգւոյ գալստեան, ածն է կաթողիկէ եկեղեցւոյ։
227 Եղեն յայնժամ նաւակատիքն. վերջ. Ես և Հայր իմ մի եմք։
Երկուշաբաթի՝ պրեց մանկանցն Ռեթզհէմի, և Ակակիոսի վիպին, Մովիմոյ քահանային և Նոգրատիոսի զինուորին։
4 Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս. վերջ. զի ոչ էին։
Երեքշաբաթի՝ սրբոց կաւատացն Կոստեայ և Մատեայ։
233 Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ. վերջ. պատուեսցէ զնա Հայրն իմ։
22 Դշ. Մի համարիք եթէ ևկի արկանել. » ոչ կորուսցէ զվարձս իւր։
Հինգշաբաթի՝ սրբոց իշխանացն Սահակայ և Յովսեփայ, և սրբոց վիպիցն՝ Սարգսի և Բագոսի։
184 Բայց յառաջ քան զայս ամենայն. վերջ. Ձերով առասջիք զոգիս ձեր։
24 Ոբ. Յայնմ ժամանակի պատասխանի. » և բեռն իմ փոքրոգի։
Շաբաթի՝ սրբոյն Մեծին Նեբսիի հայրապետին մերոյ և Թոմայ եպիսկոպոսին։
20 Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ. վերջ. Ի սպառ՝ նա կեցցէ։
Երրորդ Կիրակէ՝ գինի Հոգւոյ գալստեան։
24 Յայնժամ գնաց ցիսուս. վերջ. տէր է շաբաթիս Որդի մարդոյ։
Երկուշաբաթի՝ սրբոյն Եպիփանու կիպրացւոյն, Բաթկոյ հայրապետին և երից աշակերտաց նորին։
89 Եւ նոյնժամայն ձեպեաց. վերջ. զի էր սիրտ նոցա Թմբրեալ։
Երեքշաբաթի՝ սրբոյն Կաւատիդիանոսի Թագաւորին, և մօրն նորա Հելինեայ։
141 Եւ եղեւ իբրեւ կատարեաց. վերջ. զծառայն հիւանդ՝ բժշկեալ։
25 Դշ. Եւ գնացեալ անտի ցիսուս. » իբրեւ դիտաց, մեհենեցաւ անտի։
Հինգշաբաթի՝ սրբոյն Թէոդիանի գաղատացւոյն, և Թաւիէլայ բժշկին և եօթն Կաւատացոյն՝ որք յԱնկիւրիա կատարեցան։
241 Զայս խօսեցայ ընդ ձեզ. վերջ. քանզի ընդ ձեզ էի։
25 Ոբ. Եւ գնացին զհետ նորա. » հեթանոսք յոտսացին։
Շաբաթի՝ ածն է Գիւտ նշխարացն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ։
226 Եա եմ հովիւն քաջ, հովիւ քաջ. վերջ. և եղեցին մի հօտ՝ և մի հովիւ։
Զորրորդ Կիրակէ՝ գինի Հոգւոյ գալստեան։
26 Յայնժամ պատասխանի ետուն նմա. վերջ. և ուգիա այսմիկ չարի։
Երկուշաբաթի՝ սրբոց վիպիցն Աղաթինոսի, Թէոփիլոսի, Անդրեասի և Փաքինոսի։
240 Զայս խօսեցայ ընդ ձեզ. վերջ. իմով յանուն իմ, տացէ ձեզ։
Երեքշաբաթի՝ ածն է սրբոյն Գանիէլի մարգարէին, և երից մանկանցն Ագրաբայ, Մխաքայ և Աբեդնագովի։
56 Յայնժամ մատնեացեն զձեզ. վերջ. որ ընթեռնուն ի միտ առցէ։
27 Դշ. Յաւուր յայնմիկ ելեալ ցիսուս. » և էր որ երեսնեալ։
Հինգշաբաթի՝ սրբոց Թադդմանդացոյն մերոյ՝ Խահակայ և Մեսրոպայ։
161 Մի երինչիր հօտ փոքրիկ. վերջ. ոչ կարծիցէք գայ Որդի մարդոյ։
28 Ոբ. Բայց ձեր եթանի է աշացդ. » որ վաճառեն, և է՝ որ երեսուն։

Շաբաթ՝ սրբոյն Ցոգաւոյ Թագաւորին Սերոյ և Աշխէն տիկնոջն և Խոսրովիդխոյն ։

ԵՐԵՍ

156 Եւ հանէր գեւ մի համր . վերջ. ոչ ժողովէ ընդ իս , ցրուէ ։

Հինգշբթոյզ Կիւրակի՝ դիմի Հոգւոյ գալստեան . ասն սրբուհւոյ Աստուածածնի Տիկ գոհանն ։

29 Ա.ՀԼ առակ էարկ առ նոսա՝ և ասէ . վերջ. ժողովեցէք ի շտեմարանս իմ ։

Երկուշաբաթ՝ սրբոյն Կալինաբատասի և քառասուն և հինգ վկայիցն , և Պանկրատոսի քահանային ։

108 Եւ զձեզ իակ մանանեացն յատեանս . վերջ. ի սպառ՝ նա կեցցէ ։

Երեքշաբաթ՝ ասն է սրբոյն Զաքարիայ մարգարէին ։

54 Վասն այգոյրիկ ահաւասիկ . վերջ. օրհնեալ եկեալ յանուն Տեառն ։

29 Դէ. Ա.ՀԼ առակ էարկ առ նոսա . » լալ՝ և կրճտել ատամանց ։

Հինգշաբաթ՝ ասն է սրբոյն Եղիսէի մարգարէին ։

133 Արդարեւ ասեմ ձեզ , զի բազում . վերջ. ընդ մէջ նոցա՝ գնայր ։

30 Ուր . Յայնժամ արդարքն ծագեսցին . » ի գանձէ իւրմէ զնար և զհին ։

Շաբաթ՝ սրբոց երկոտասան առաքելոցն Քրիստոսի , և սրբոյն Պողոսի երեքտասանեւրորդ առաքելոյն ։

7 Եւ տեսեալ զժողովուրդսն . վերջ. զի նոցա է արքայութիւն երկնից ։

Վեցերորդ Կիւրակէ՝ դիմի Հոգւոյ գալստեան ։

32 Եւ իբրեւ լուաւ Յիսուս՝ գնաց . վերջ. Թող զնանայս և մնիկտիս ։

33 Բէ. Եւ ասիպետց վաղվաղակի . » Միանգամ մերձեցանն՝ փրկեցան ։

34 Դէ. Յայնժամ մնտեան առ Յիսուս . » ձեռօք ուտել՝ ոչ պղծէ զմարդ ։

35 Դէ. Եւ ելեալ անտի Յիսուս գնաց . » դուստր նորա՝ ի նմին ժամու ։

35 Եէ. Եւ գնացեալ անտի Յիսուս . » Թող զնանայս և զմանկտիս ։

36 Ուր . Իբրեւ արձակեաց զժողովուրդսն . » և սադուկեցւոց ։

Շաբաթ՝ յիշատակ է Տապանակին Հնոյ և ասն նորա Ս . եկեղեցւոյ ։

8 Մի համարիք եթէ եկի լուծանել . վերջ. յարքայութիւն երկնից ։

ՎԱՐԴԱՎԱՌԻ ԿԻՐԱԿԷ

37 Եւ ելեալ Յիսուս ի կողմանս . վերջ. Յոհաննու Մկրտչի ասաց ցնոսա ։

197 Բ . առուր . ի սկզբանէ էր Բանն . » ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն ։

150 Գ . » Բայց արդարեւ ասեմ . » յորոց տեսինն ։

39 Դէ. Եւ մինչդեռ ջողէին նոքա . » մեծ յարքայութեան երկնից ։

Հինգշաբաթ՝ ասն է Լեւսեայ մարգարէին ։

132 Եւ գարձաւ Յիսուս զօրու . վերջ. ելանէին ի բերանոյ նորա ։

40 Ուր . Եւ կոչեաց առ ինքն Յիսուս . » և անկանիլ ի գետնէն հրոյն ։

Շաբաթ՝ ասն է Ս . Թադէոսի առաքելոյն և Պանդխոյ կուսին ։

148 Եւ կոչեցեալ զերկոտասան առաս . վերջ. ընդ ամենայն տեղիս ։

Երկրորդ Կիւրակէ՝ դիմի Վարդավառին ։

41 Զգաշ լերուք մի արհամարհիցէք . վերջ. ի փոքրկանցս յայտացանէ ։

Երկուշաբաթ՝ սրբոյն Պապրիանոսի եպիսկոպոսին և Թէ . վկայիցն , և սրբոյ կատանայն՝ Յուսթինէայ , Եւփեմէայ և Քրիստինէայ ։

168 Եւ էին մերձ առ նա ամենայն . վերջ. որ ապաշխարիցէ ։

Երեքշաբաթ՝ սրբոյն Աթանագինէայ եպիսկոպոսին , և սան աշակերտացն և հինգ վկայիցն ։

241 Զայս խօսեցայ ընդ ձեզ . վերջ. եթէ դուս առաքեցեր զիս ։

41 Դէ. Եթէ մեղիցէ քէզ եղբայր քո . » յեօթանասնեկին եօթն ։

Հինգշաբաթ՝ սրբոց Նախահայրն , Ադամայ , Աբելի , Սեթայ , Նոեմայ . . . ։

182 Պատասխանի եւս նոցա Յիսուս . վերջ. Հարցանել զնա և ոչինչ ։

42 Ուր . Վասն այսորիկ նմանեցայ . » սրտից ձերոց զանցացանս նոցա ։

Շաբաթ՝ սրբոց սրգւոց և Թառանցն սրբոյն Գրի. լու. մե. Աբիս. Վր. Յաւակ. . . . .

ԵՐԵՍ

157 Եւ ի դիպանալ ի վերայ նորա ժո. վերջ. քան զՅովհան է ատտ։

Երրորդ Կիրակէ՝ զԳի Վարգավառն։

43 Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն. վերջ. որ կարող է տանել՝ տարցի։

Երկուշաբաթի՝ սրբոց Մակաբայեցւոցն։ Եղիազարու քահա. և Շամուէլայ և Ի. սրգ. . . . .

8 Մի՛ համարիք եթէ եկի լուծանել. վերջ. յարքայութիւն երկնից։

Երեքշաբաթի՝ սրբոց երկոտասան մարգարէիցն։ Ովսեայ. Ամոսայ. Միքի. . . . .

165 Ի նմին աւուր մատեան ոմանք. վերջ. եկեալ յանուն Տեառն։

43 Դշ. Յայնժամ մատուցան առ նա. » ամենայն ինչ զօրաւոր։

Հինգշաբաթի՝ սրբոցն Սոփոնիայ և երից դասերացն. Պետրոսի. Էլպիսի և Ագապի։

159 Զի՞նչ ոչինչ է՛ ի ծածուկ՝ որ ոչ յայտ. վերջ. մի թողցի նմա։

75 Ուր. Եւ ընդ այգն ընդ առաւօտն. » առ նա յամենայն կողմանց։

Իսկ ի բաբկենդանի Շաբաթ օրն՝ միշտ ասե է նիւթս. սուրբ Ժողս. Բձ Հոյակ. . . .

153 Որ ձեզ լսէ, ինձ լսէ. վերջ. ձեր գրեալ են յերկինս։

Ի Կիրակէին՝ որ է բաբկենդան սուրբ Առաւաւածնի պահոց։

76 Եւ մտեալ դարձեալ ի կափառնա. վերջ. ինչ երբէք ոչ տեսաք։

77 Բշ. պահոց. Եւ էլ դարձեալ ի ծո. » պահեցողն յաւուրն յայնմիկ։

78 Դշ. Եւ եղեւ նմա ի շաբաթու ան. » և ողջացաւ ձեռն նորա։

78 Դշ. Եւ ելեալ արտաքս վաղվաղակի. » յայտնի առնիցեն զնա։

79 Եշ. Գան ի տուն, և գայ միւսան. » Թէ այս պիղծ գոյ ի նմա։

80 Ուր. Գան եղբարքն և մայր նորա. » վաթսուն և ընդ միոյ հարիւր։

Շաբաթ՝ ասե է Շողա. սրբոյ Էջմի. լսա տես սրբոյն Գրիգորի միոյ Լուսաւորչին։

37 Եւ ելեալ Յիսուս ի կողմանս. վերջ. եղիցի արձակեալ յերկինս։

Սուրբ Առաւաւածնի Վերափոխման Կիրակէ։

126 Եւ եղեւ ընդ աւուրսն. վերջ. ոչ գոյր նոցա տեղի յԱրկեվանին։

123 Բ. աւուր. Յարուցեալ Մարիամ յա. » և գաձաւ ի տուն իւր։

Եւ այսպէս երից անգամ կրկնեա զերիս պահակեսս՝ որ լինի ինն օր։

126 Գ. աւուր. Եւ եղեւ ընդ աւուրսն. վերջ. ոչ գոյր նոցա տեղի յԱրկեվանին։

Իսկ՝ զԳի ինն աւուրց Վերափոխման Ս. Առաւաւածնին՝ յերեքշաբաթի աւուրն, ասե է Յովակիմայ և Աննայի Տնոցդ Ս. Առաւաւածնին, և կանանց Իւղաբերից։

2 Արդ՝ ամենայն ազգք յԱբրահամէ. վերջ. իւր ի մեղաց իւրեանց։

81 Դշ. Եւ իբրեւ եղեւ առանձինն հար. » և ընդ միոյ հարիւր։

Հինգշաբաթի՝ սրբոյն Երեմիայ մարգարէին։

4 Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս. վերջ. ոչ կամէր միմիարիւ՝ զի ոչ էին։

82 Ուր. Եւ ասէր՝ այսպէս է արքայութիւն. » իւրոց մեհենէր զամենայն։

Շաբաթի՝ սրբոց Առաքելոցն։ Թովմայի, Յակոբոյ և Շմաւոնի։

253 Իակ Թովմաս մի յերկոտասանիցն. վերջ. ընդունիցիք յանուն նորա։

Երրորդ Կիրակէ զԳի Ս. Առաւաւածնին ասե Գիւտի գօտւոյ սրբոյն Ս. Առաւաւածնին։

83 Եւ ասէ ցնոսա յաւուր յայնմիկ. վերջ. և ծով հնազանդին սմա։

Երկուշաբաթի՝ ասե է սրբոյն Առաքեալսն Ներնեսի, և սրբոց վկայիցն, Գահսպետեայ՝ Վամիգոսի՝ Տուդիկոսի և Ռաթիկոսի։

7 Եւ տեսեալ զժողովուրդսն. վերջ. որք յառաջ քան զձեզ էին։

Երեքշաբաթի՝ սրբոց Մար. Եղէ. Եղբի, և Յաթաթիսի հօրն Յովհաննու. Միքայէլ։

54 Վասն այդորիկ ահաւասիկ. վերջ. օրհնեալ եկեալ յանուն Տեառն։

89 Դշ. Եւ նայն ժամայն ձեպեաց. վերջ. միանգամ մերձեցանն՝ փրկեցան։

Հինգշաբաթի՝ ոտն է Յովհաննու Կարապետին՝ և Յորոյ պրպտին։

31 Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս. վերջ. և եկեալ պատմեցին ցիւսւսի։
91 Ուր. Եւ անտի յարուցեալ՝ եկն. » զի անկեալ դնէր ի մահիճս։

Շաբաթի՝ ոտն է Նիկիոյ սուրբ Ժողովոյն. ՅՃԼ Հայրապետացն։

239 Զայս խօսեցայ ընդ ձեզ. վերջ. ճն, արիք գնասցուք ատոի.

Զորդոյ Կիւրակէ՝ զնի սուրբ Աստուածածնին։

88 Ժողովեցան առաքեալքն առ Յի. վերջ. իբրեւ աբք հինգ հազար։

Երկուշաբաթի՝ պրպտի Անդրէի զօրավարին և Բանակի Նարին. Կալինիկոսի և Դամետեայ վկային։

22 Որ սիրէ զՏայր կամ զմայր. վերջ. ձեզ՝ ոչ կարուսցէ զվարձս իւր։

Երեքշաբաթի՝ պրպտի Ագրիպիանի, և Ննոյ Նոցա Անաստասյ. Թէոդոտոսի և Եղեւթերեայ վկային։

241 Զայս խօսեցայ ընդ ձեզ զի մի. վերջ. քանզի ընդ ձեզ էի։
85 Դշ. Մինչդեռ նա զայն խօսէր. » և ասաց տալ նմա ուտել։

Հինգշաբաթի՝ պրպտի Աբրահամու և Խոսենայ. և անարձաթի բժշկին Կոզմայի և Դամիանոսի. և Աստուածատրոյ վկային։

161 Մի երկնչիր Հօտ փոքրիկ. վերջ. կարծիցէք՝ գայ Որդի մարդոյ.
86 Ուր. Եւ էլ անտի եկն ի. » վասն անհաւատութեանց նոցա։

Շաբաթի՝ ոտն է սուրբ Աստուածածնի ծննդեանն ի ՅԱննայէ. և կամ Նիկիոյ սուրբ Ժողովոյն։
(Զի յայս շաբաթի օր, յայոց երկուց ոտից մինն ոտն ի Նարիկ, ըստ ցուցման տաբեգրին։)

Իսկ ի Բարեկենդանի Կիւրակէին։

92 Եւ էլեալ միւսանգամ ի սահմանս. վերջ. և համերց խօսիլ։
92 Բշ. պահոց. Յաւուրսն յայնոսիկ. » և արձակեաց զնոսս։
93 Դշ. Եւ նայն ժամայն մտեալ ի նաւ. » իսկ զերծող ոչ իմանայք։
93 Դշ. Գան ի Բեթսայիդա. և ածեն. » մի ուժեք ասիցես ի չինին։
96 Եշ. Եւ եկեալ առ աշակերտսն. » յարոյց զնա. և կանգնեցաւ։
97 Ուր. Պատասխանի եւս նմա Յովհան. » արարէք ընդ միմեանս։

Շաբաթի՝ ոտն է պրպտ նկուզեցւոյ ի Կաւսկասիա պրպտ Խաչին։

227 Եղեն յայնժամ նաւատակաւք. վերջ. հաւատացին ի նա անդ։

Սրբոյ Խաչի վերացման Կիւրակէ։

203 Եւ ոչ օք էլ յերկինս. վերջ. Նորա Թէ Աստուծով գործեցան։

Երկուշաբաթի՝ ոտն է Խաչի։

204 Ցետ այսորիկ եկն Ցիսուս. վերջ. Աստուծոյ Միայ ի վերայ Նորա։
201 Դշ. ոտն է եկեղեցւոյ. Ցետ այսորիկ. » բանին, զոր ասաց Ցիսուս։
37 Դշ. ոտն է եկե. Եւ էլեալ Ցիսուս. » եղիցի արձակեալ յերկինս։
47 Եշ. ոտն է եկե. Եւ համուռ Ցիսուս. » ի Բեթանիա, և անդ ագաւ։
249 Ուր. ոտն է Խաչի. Յայնժամ էտ. » զոր ինչ գրեցի՝ գրեցի։
218 Շր. ոտն է Խաչի. Ի վերջնում աւուր. » ի գալիլէէ ոչ յառնէ։

Երկրորդ Կիւրակէ՝ զնի սրբոյ Խաչին յարութեան։

98 Եւ անտի յարուցեալ գայ. վերջ. եղիցի առն այլում՝ շնայ։

Երկուշաբաթի՝ ոտն է պրպտի, Մամասայ և Փիլեթոմինի, և Միմեոնի Անապհեցւոյն։

184 Բայց յառաջ քան. վերջ. ձերով սուասքիք զոգիս ձեր։

Երեքշաբաթի՝ պրպտ կուսանացն Փիփռոնեայ և Մարիանեայ. և Շուշանայ գաւեղն մեծին Վարդանայ։

139 Եւ նա ամբարձ զաչս իւր. վերջ. մարգարէիցն Տարք Լրեանց։
99 Դշ. Եւ ընդ ելանելն Նորա անտի. » յարքայութիւն Աստուծոյ։

Հինգշաբաթ՝ սրբոց Հայրապետացն. Բարեզամոս, Անթիմոսի և Երանոսի։

ԵՐԵՍ

226 Եա եմ Հովիւն քաջ. Հովիւ քաջ. վերջ. եղիցին մի հօտ՝ և մի Հովիւ։
100 Ուր. Սկսաւ ասել ցնա Պետրոս. » և յերիր աւուր յարիցէ։

Շաբաթ՝ սրբոյն Գէորգայ դրամարբեր. և Ագաթոսի. և Խառնեանի երգեցողին։

159 Զի ոչինչ է ի ծածուկ. վերջ. առաջի Հրեշտակաց Աստուծոյ։

Երրորդ կիրակէ՝ զԹի սրբոյ Թաւրէն. ասէ է վարգապետ սրբոյ Թաւրէն։

57 Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ. վերջ. բայց միայն Հայր։

Երկուշաբաթ՝ սրբոյն Դանէլի Դիվնեցւոյն. և սրբոց վկային Վաթէոսի և Վաթէուհւոյն։

165 Եւ ջրէիր ընդ քաղաքս և ընդ գիւ. վերջ. առաջինք, սրբ լինիցին յետինք։

Երեքշաբաթ՝ սրբոյն Եւստաթէոսի, և ընկնի նորա թէսիիտառի. և երկու սրբուցն. և սրբոց կուսանացն՝ Եմմելեայ և Նէթառիելայ։

7 Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի. վերջ. սրբ յառաջ քան զձեզ էին։
101 Դշ. Եւ երթային առ նովաւ ցակով. » փրկուիս փոխանակ բազմաց։

Հինգշաբաթ՝ սրբոց իշխանացն Սահակայ և Շամտաղայ։

241 Զայս խօսեցայ ընդ ձեզ զի մի. վերջ. քանզի ընդ ձեզ էի։
103 Ուր. Գան յԵրուսաղէմ. և մտեալ. » Թողեք ձեզ գյանցանս ձեր։

Շաբաթ՝ սրբոց ՀԸ աշակերտացն Քրիստոսի։

153 Ցեւս այսորիկ երեւեցայց Ցէր. վերջ. ձեր արքայութիւն Աստուծոյ։

Չորրորդ կիրակէ՝ զԹի սրբոյ Խաչին։

104 Գան միւսանգամ յԵրուսաղէմ. վերջ. իշխանութեամբ առնեմ զայս։

Երկուշաբաթ՝ սրբոյն փոկասու Հայրապետին. և Երանոսի հետեւողին առաքելոյն։

89 Եւ նայն ժամայն ձեպեաց զաշտ. վերջ. մերձեցանն՝ փրկեցան։

Երեքշաբաթ՝ սրբոց կուսանացն Թեկղէ, Վառվառեայ և Պետրոնեայ։

161 Մի երկնչիր Հօտ փոքրիկ. վերջ. կարծիցէք՝ գայ Որդի մարդոյ։
104 Դշ. Եւ սկսաւ խօսիլ ընդ նոսա ա. » և Թողին զնա՝ և գնացին։

Հինգշաբաթ՝ սրբոյն Պանդալէոնի բժշկին, Երեղեայ քահանային և Եւպրաքսեայ կուսին։

19 Եւ ջրէիր ցիսուս ընդ ամենայն քա. վերջ. զամենայն հիւանդութիւնս։
105 Ուր. Գան առ նա սադուկեցիքն. » որ իշխէր ինչ հարցանել ցնա։

Շաբաթ՝ սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրովբայ, Եղիշէի, Մով...

13 Մի տայք զսրբութիւն՝ շանց. վերջ. իսկ են օրհնէքն և մարգարէք։

Հինգերորդ կիրակէ զերի սրբոյ Խաչին։

107 Պատասխանի եւս ցիսուս և ասէ. վերջ. հարկ գոյիւ շահ զկեանս իւր։

Երկուշաբաթ՝ Գիւտի նշխարաց սրբոյն Գրիգորիսի Կաթուղիկոսին և սրբոց Հայոց Թարգմանչաց, Վաթոսի և Թովմասեա, Անանիի և Արտենեայ և Ի խո...

154 Ի նմին ժամու ցնծացաւ ցիսուս. վերջ. լսել զոր լսէքդ, և ոչ լուան։

Երեքշաբաթ՝ սրբոց առաքելոցն Անդրէասի, Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպոսի...

148 Եւ կոչեցեալ զերկոտասան առաք. վերջ. և բժշկէին ընդ ամենայն տեղիս։
108 Դշ. Եւ յորժամ տեսանիցէք. » ասացի ձեզ զամենայն։

Հինգշաբաթ՝ սրբոյն Դանիէլեան Արհազագ. և սրբոց առաքե. Ցխոն. և Ցիսոսի.

153 Ցեւս այսորիկ երեւեցայց Ցէր. վերջ. արժանի է մշակն վարձու իւրոյ։
109 Ուր. Ա՛յլ յաւուրան յայնմիկ. » ասեմ, արձուն կացէք։

Շաբաթ՝ ասէ է սրբոյ Աբեւագարձացն՝ Մատթէոսի. Մարկոսի. Ղուկասու. և Յովհաննու.

138 Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց. վերջ. և բժշկէր զամենեսին։

Վ. ԿԵՂԵՐԿԵԱՑ ՎԱԽԱԿԻ՝ ՂԻՆԻ ՊԲԵՑ ԽՈՍԻՆ։

ԵՐԵՍ

132 Եւ դարձաւ Յիսուս զօրսւԹեամբ . վերջ. արա՛ և աստ ՚ի քում գաւառի։

Երկուշաբաթի՝ պբեցն Պաւնկիա , Տարսւս . որ հաւատաց խաչելութեանն Քրիստոսի և Յոսէ . . . .

68 Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց . վերջ. Նաւսէին Հանդիպ գերեզմանին։

Երեքշաբաթի՝ պբեցն Թէոդիանի քահա . և Զինո . և Յինո . և Մա . Դոքսի և Ռա . . . .

21 Մի այսուհետեւս երկնչիցիք ՚ի նոցա . վերջ. Հօր իմոյ՝ որ յերկինս է։

133 Դւ. Եւ էլ ՚ի կախաւնաւսմ ՚ի քա . » դնէր ձեռս՝ և բժշկէր զնոսա։

Հինգշաբաթի՝ պբեց Թաբիթեանցն . և պբեց վկայիցն Աղաքսէոյ և Քրիստափորի և երկուց կանանցն Կալինիկեայ և Ակիւլինեայ։

240 Զայս խօսեցայ ընդ ձեզ . վերջ. յանուն իմ. տացէ ձեզ։

136 Ուր . Եւ եղեւ ՚ի միւսմ աւուրց . » Թէ տեսաք այսօր նոր նշան։

Շաբաթի՝ ածն է պբեց երկաստանից վարդապետացն , Ռեթէոսի , Դիմնէոսի . . . .

243 Զայս խօսեցայ ընդ ձեզ զի ընդ իս . վերջ. եթէ դու առաքեցեր զիս։

Եօթներորդ կիւրակէ , Խաչ գիւտ է։

57 Զի որպէս փայլակին՝ որ ելանէ . վերջ. ոչ Որդի՝ բայց միայն Հայր։

Երկուշաբաթի՝ պբեցն Աննաստասի քահանային , և վկայից , Թէոդորիանոյ , և . . . .

44 Ցայնժամ պատասխանի ետ Պետ . վերջ. յաւիտենական ժառանգեսցէ։

Երեքշաբաթի՝ պբեց Հիպոլիքեանցն . որք ՚ի Սամաւագ կատարեցան։

154 Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս . վերջ. և լսել զոր լսէքդ , և ոչ լուան։

143 Դւ. Աղաչէր զնա սմն ՚ի փարիսեց . » լեցին քեզ մեզք քո։

Հինգշաբաթի՝ պբեցն Սիւնհանոսի սերաս . և Բաբէ . Ծերոն , և Հի աշա . Նի . . .

241 Զայս խօսեցայ ընդ ձեզ . վերջ. ձեզ , քանզի ընդ ձեզ էի։

144 Ուր . Եւ ՚ի ժողովել բազմաւ ժողս . » զի որք մոռանեն՝ զոյս տեսցեն։

Շաբաթի՝ պբեցն Յովհաննու ասկերեցոյն հայրապետին։

240 Զայս պատուիրեմ , զի սիրեսջիք . վերջ. Թէ առեցին զիս տարապարտուց։

Ուրբաթերորդ կիւրակէ՝ ղինի պբոց խաչին։

145 Զնիք ինչ ծածուկ՝ որ ոչ . վերջ. բանն Աստուծոյ լսեն և առնեն։

Երկուշաբաթի՝ պբոց Սահմանաի հռոմմայ հայրապետին , և քահա . և սպիս . և Ժողովդոց։

226 Ես եմ հովիւն քաջ , հովիւ քաջ . վերջ. և եղիցին մի հօտ՝ և մի հովիւ։

Երեքշաբաթի՝ պբեցն Ակիսիմեայ եպիսկոպոսին և Յով . քահա . Ա.ի . սարկա . և Պղա . վկային։

150 Եւ ասէր առ ամենեսին . վերջ. զարքայութիւն Աստուծոյ։

146 Դւ. Եւ եղեւ ՚ի միւսմ աւուրց ինքն . » և հնազանդին սմա։

Հինգշաբաթի՝ պբոց Տպրապետացն Մարտինոսի , Աղէք . և Պօղոսի խա . . .

7 Եւ ջղջէր Յիսուս ընդ ամենայն կողմ . վերջ. և բժշկեաց զնոսա։

147 Ուր . Եւ իբրեւ դարձաւ անդրէն . » էրթ ՚ի խալազութիւն։

Շաբաթի՝ ածն է պբոց Հրէշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զօրաց։

41 Զգաշ լերուք՝ մի արհամարհիցէք . վերջ. մի ՚ի փոքրիկացս յայսոցանէ։

Իննեներորդ կիւրակէ՝ ղինի պբոց խաչին։

148 Եւ մինդեւ նա խօսէր , գայ սմն . վերջ. մի ուժիք ասել՝ որ ինչ եղեւն։

Երկուշաբաթի՝ պբեցն Մելխաի Անտիպաս հայրապետին , եւ Մինաս էկոպ . . .

150 Եւ ասէր առ ամենեսին . վերջ. զարքայութիւն Աստուծոյ։

Երեքշաբաթի՝ պբեցն Դեմետրեայ վկային և Բասիլիսկոսի քահանային։

108 Եւ զձեզ իսկ ժամանեսցեն . վերջ. Համբերեսցէն ՚ի սպառ՝ նա կեցցէ։

149 Դւ. Դարձան առաքեալքն , և պատ . » երկատասան սակառի։

Հինգշաբաթի՝ պրպտի Գաբրիաս, Յովնանաս և Աբիբոս սարկաւագին։

ԵՐԵՍ

44 Յայնժամ պատասխանի եւ Պետ. վերջ. յաւիտենականս ժառանգեսցէ։
151 Ուր. եւ եղեւ ի վաղիւն մինչ իջանէին. » ի վերայ մեծամեծացն Աստուծոյ։

Շաբաթի՝ պրպտ առաքելոյն Անդրէի և Փիլիպպոսի։

199 Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս. վերջ. ի վերայ Որդւոյ մարդոյ։

Տաճարապետ Սիրակի՝ զԻի պրպտ խաչին։

151 Եւ ի զարմանալ ամենեցուն ի վերայ. վերջ. Թշնամի, ի ձեր կողմն է։

Շաբաթի՝ ծն է ամենայն պրպտ Հնոց և Նորոց, Յայտից և Անյայտից։

159 Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. վերջ. առաքի հրեշտակաց Աստուծոյ։

Մեսրոպաստեղրապետ Սիրակի։

155 Եւ եղեւ ի տեղւոջ ուրեք կալ յա. վերջ. որք խնդրեն ի նմանէ։

Երկուշաբաթի պահոց։

156 Եւ հանէր գեւ մի համր. վերջ. որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ։
157 Գոչ. Եւ եղեւ մինդեռ իսօսէր զայս. » քան զՅովհան է ասու։
158 Դոչ. Ոչ ուրուք լուցեալ զերթագ. » և զայնոյ ոչ անցանել։
159 Եշ. Վասն այնորիկ համաստուխիւնն. » զի չարաիսօսեացեն զմնանէ։
159 Ուր. Որովք ի կուտիլ բիւրաւորաց. » զինչ պարտ իցէ խօսիլ։

Շաբաթի՝ ծն է պրպտն Գրիգորի աքանչելագործին, Հիւրոյպոլի Նոյրապետին, և Մխիթարայ եպիսկոպոսին։

226 Ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ. վերջ. և եղիցին մի հօտ՝ և մի հովիւ։

Առաջին Սիրակի Յիսնակի։

160 Աւե մի ի ժողովրդենէն ցնա. վերջ. և այն ամենայն յաւելցի ձեզ։

Երկուշաբաթի՝ պրպտ կաւանացն Յուլիանէայ և Վասիլիսէայ։

144 Եւ եղեւ յետ այնորիկ. վերջ. պաշտեին զնա յընչից իւրեանց։

Երեքշաբաթի՝ պրպտն Ղազնկիանոսի քահանային, և պրպտն Տարագրոսի, Պօղբոսի, Անդրեասեան, և Ընէսիմոսի՝ և այլոց աշակերտացն Պօղոսի։

138 Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց զաշա. վերջ. արքայութիւն Աստուծոյ։
162 Դոչ. Աւե Պետրոս, Տ՛ը, առ մեզ. » եւս պահանջեացեն ի նմանէ։

Հինգշաբաթի՝ պրպտն Կղեմայ Հայրապետին, Բագարատայ, և Տաճատենայ եպիսկոպոսին։

148 Եւ կոչեցեալ զերկոտասան. վերջ. և բժշկէին ընդ ամենայն տեղիս։
163 Ուր. Հուր եկի արկանել յերկիր. » հաստուցանիցես գյեսուին բնիսն։

Շաբաթի՝ պրպտ առաքելոց և առաջին լուսաւորչին մերոյ, Թադէոսի և Բագրատունեաց։

19 Եւ չքէր ցիսուս ընդ ամենայն քա. վերջ. մերձեալ արքայութիւն երկնից։

Երկրորդ Սիրակի Յիսնակի։

163 Եկին ամանք ի նմին ժամանակի. վերջ. ոչ չամէ եւս, հատցես զդա։

Երկուշաբաթի՝ պրպտն Գենադիոսի եպիսկոպոսին, և Մխիթարեանց զինաւորին։

184 Բայց յառաջ քան զայս ամենայն. վերջ. ձերով ստացիք զոգիս ձեր։

Երեքշաբաթի՝ պրպտն Յակոբայ և Իսաւափատայ։

159 Զի ոչ ինչ է ի ծածուկ որ ոչ յայտ. վերջ. առաքի հրեշտակաց Աստուծոյ։
164 Դոչ. Եւ ուսուցանէր ի միւսմ ժողս. » գործէին ի նմանէ։

Հինգշաբաթի՝ պրպտ հարցն եգիպտացւոց, Պօղոսի, Պօղոյ, Մակարայ, Նւագ....

22 Որ սիրէ զհոգի կամ զմայր առաս. վերջ. ոչ կորուսցէ զվարձս իւր։
166 Ուր. Եւ եղեւ ի ժամանել նորա. » զանձն, բարձրացայն։

Շաբաթ՝ սրբոյն Հիպոլիտոսի զվեանացւոց սքանչելագործ հայրապետին։

ԵՐԵՒ

226 Եա եմ՝ հովիւն քաջ, հովիւ քաջ. վերջ. և ելիցին մի հօտ՝ և մի հովիւ։

Երրորդ Կիւրակէ Յիսնակին. Բազկինդան առաջ Յակոբայ պահոցն։

167 Աահ և ցկաշխատեցին, յորժամ. վերջ. Ճաշակեսցէ յընտրեաց իմոց։

Երկուշաբաթի՝ ածն է սրբոյն Մինասայ, երիցկնեայ և Գրագրի, և կամաւոր աղքատացն Յահաննու և Աւետիսեան։

22 Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել. վերջ. ոչ կարէ զվարձս իւր։

Երեքշաբաթի՝ սրբոյն Կուառնելիոսի Հարիւրապետին, և Շմաւոնի ապգակա . . . ։

86 Եւ հրջէր շուրջ զգաւառաքն. վերջ. Հիւանդս, և բժշկէին զնոսա։

168 Դէ. Եւ երթային ընդ նմա ժողո. » ոչ կարէ իմ աշակերտ լինիլ։

Հինգշաբաթի՝ սրբոյն Եւստաթեայ, Օգոնեայ, Եւգինեայ, Ովէս . . . ։

7 Եւ տեսեալ զժողովուրդսն՝ եղ. վերջ՝ որք յառաջ քան զձեզ էին։

168 Ոբ. Եւ էին մերձ առ Նա ամենայն. » չիցէ պիտոյ ապաշխարութիւն։

Շաբաթ՝ ածն է սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին, Մարագէի Ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին։

225 Եւ ասէ Յիսուս, Ի դատաստան եկի. վերջ. և առաւել եւս ունիցին։

Չորրորդ Կիւրակէ Յիսնակին։

172 Ասաց և առ աշակերտսն իւր. վերջ. պարտէաքն առնել՝ արարաք։

Երկուշաբաթի՝ ածն է սրբոյ հայրապետացն Իգնատիոսի և Ագդէի, և Մարութեայի եպիսկոպոսին։

97 Եկն Ի կափառնաում. վերջ. այլ զայն՝ որ առաքեացն զնա։

Երեքշաբաթի՝ սրբոյն Թէոդոտոսի եպիսկոպոսի, և Թէոդիտոսի վկային, և շրջից զնուաստքն՝ Բասաի, Եւսեբէ, Եւտիգի և Բասիլիդեայ։

21 Զի ոչ ինչ է Ի ծածուկ. վերջ. առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է։

173 Դէ. Եւ եղեւ մինչ երթայր Նա Յերու. » զի հաւատք քո կեցուցին զքեզ։

Հինգշաբաթի՝ սրբոյ կուանդայի Մինդոսի և Դամիանի, և Գղէրիկոսի քահանային, և երկուց բիւրուցն, որք այրեցան յեկեղեցին Նիկոմիդացւոց։

240 Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք. վերջ. առեցին զնա տարապարտուց։

175 Ոբ. Ասաց և առակ Ի նոցա. » արգելօք հաւատս յերկրի։

Շաբաթ՝ ածն է Նահապետ և անդրանիկ թագաւորին Ժերմ սրբոյն Աբգարու։

141 Եւ եղեւ իբրեւ կատարեաց. վերջ. զծառայն հիւանդ՝ բժշկեալ։

Հինգերորդ Կիւրակէ Յիսնակին։

175 Ասաց և առ ամենս պանծացեալսն. վերջ. զանձն՝ բարձրացի։

Երկուշաբաթի՝ սրբոյն Աբրահամեան և Խորենայ, և անարձամի բժշկացն Կոզմայի և Դամիանոսի։

161 Մի երկնչիր հօտ փոքրիկ. վերջ. կարծիցէք՝ գայ Որդի մարդոյ։

Երեքշաբաթի՝ սրբոյ Աստուածասիրի վկային։

20 Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ. վերջ. Ի սպառ՝ նա կեցցէ։

Առաջին ածն՝ սրբոյն Դատէի մարգարէին և Յակովբայ առաքելոյն։

52 Եւ Ի ժողովել փարիսեցւոցն. վերջ. օրէ հալցանել զնա և ոչ ինչ։

Երկրորդ ածն՝ սրբոյն Առեփանոսի նախավկային, և առաջին Մարտիրոսին։

233 Ամէն ամէն ասեմ ձեզ. վերջ. պատուեսցէ զնա Հայրն իմ։

Երրորդ ածն՝ սրբոյ Առաքելոյն Պետրոսի և Պօղոսի։

254 Եւ իբրեւ Ճաշեցին՝ ասէ Յիսմոնի. վերջ. փոյթ է՝ դու ևկ վկեսի իմ։

Զորրորդ տան՝ Ոգւոյն պատմեն , սրբոցն Յակովբայ առաքելոյն և Յովհաննու աւետարանչին ։

ԵՐԵՍ

255 Դարձաւ Պետրոս՝ և տեսանէ . վերջ . զգիրան՝ որք Թէ գրեալ էին ։
176 Դէշ . եւ եհարց զնա սմն իշխան և ասէ . » Հնարաւորք են Յաւուրց ։
177 Ուր . եւ մտեալ շրջէր ընդ երիքով . » և կեցուցանել զկուրս աչացն ։
178 Կիր . Աստ , այր սմն աղնուական . » յառաջ՝ ելանել Յերուսաղէմ ։

Յառաջնում առաւ պահոց՝ Մինդեան և Յայտնութեանն Փրկաւոյ ։

180 Եւ եղեւ ի միում աւուրցն . վերջ . իշխանու Թեամբ առնեմ զայս ։

Յերկրորդում առաւ պահոց ։

181 Սկսաւ ասել առ ժողովուրդն . վերջ . վերայ անկցի՝ հասեսցէ զնա ։

Յերրորդում առաւ պահոց ։

183 Աստ և առ նոստ , զնաքդ . վերջ . զկեանս իւր՝ զոր ունէր , էարկ ։

Ի շրջորդում առաւ պահոց ։

184 Ահա յորժամ տեսանիցէք . վերջ . և բանք իմ ոչ անցանիցեն ։

Ի հինգերորդում առաւ պահոց ։

185 Զգոյշ լերուք անձանց . վերջ . ի տաճարն՝ լսել ի նմանէ ։

Ի պահոց Շաբաթ օրն՝ ասե է սրբոցն Բարսղ հայրապետին , և ելոյծ նորին Գրիգորի Նիւսացւոյն ։
Մեղեսատան հռոմէ հայրապետին , և Աբբայ Եփեմի Խաբեն Աստուց ։

226 Ես եմ հովիւն քաջ , հովիւ քաջ . վերջ . և եղիցին մի հօտ՝ և մի հովիւ ։

Ի Նիւթակէին՝ որ ի Յայտնութեան պահոցն հանգիպիլ ։

187 Եւ եղեւ հակառակութիւն ի մէջ . վերջ . զերկուսեան ազգն խորտակել ։

Աստուածայայտնութեան Շրջագալութեին ։

3 Եւ ի ծնանիլն Յիսուսի ի Բեթղեհէմ . վերջ . գնացին յաշխարհն իւրեանց ։

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ք Ա Ն Դ Ա Ս Տ Ա Ն Ի

### Մ Ա Տ Թ Է Ո Ս

57 Զի որպէս փայլակն՝ որ ելանէ . վերջ . և բանք իմ մի անցցեն ։
68 Եւ հանեալ զնա ի խաչ . » ի ձայն մեծ՝ և արձակեաց զոգին ։
68 Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց . » հանդէպ գերեզմանին ։

### Մ Ա Ր Կ Ո Ս

116 Եւ ածեն զնա ի Գողգոթա . վերջ . զձայն մեծ՝ և եհան զոգի ։

### Ղ Ո Ւ Կ Ա Ս

192 Ձեռն և այլ երկուս չարագործս . վերջ . խբրեւ ասաց՝ եհան զոգի ։

### Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս

203 Եւ ոչ ոք ել յերկինս . վերջ . Թէ Աստուածոյ գործեցան ։
249 Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա » զոր ինչ գրեալ գրեցի ։
250 Եւ կային առ խաչին Յիսուսի մայր . » գգլուխն՝ աւանդեաց զոգին ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ